Աշխատանքի շուկայի դրական զարգացումները շարունակվել են նաև 2024 թվականին: Տնտեսական բարձր ակտիվության պայմաններում հունվար-ապրիլին վարձու աշխատողների թիվը և աշխատավարձերն աճել են: Պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թիվը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել է 3.8%-ով՝ կազմելով 45,411 մարդ, իսկ վարձու աշխատողների թիվն աճել 5.1%-ով՝ կազմելով 739,478 մարդ: Վարձու աշխատողների թվի աճին հիմնականում նպաստել են առևտրի, կրթության, շինարարության, կացության և հանրային սննդի կազմակերպման ոլորտներում աշխատողների թվի աճը: Վարձու աշխատողների աճին հիմնականում նպաստել են տնտեսության դրական զարգացումները, ԼՂ բնակչության որոշ մասի ՀՀ աշխատանքի շուկայում ընդգրկումը, ինչպես նաև սեզոնային աշխատողների (հիմնականում շինարարության ոլորտում) արտերկրում գործունեության իրականացման փոխարեն ՀՀ-ում գործունեություն իրականացնելու նախընտրությունը:

2024 թվականի տնտեսական աճի պայմաններում աշխատանքի շուկայում կդրսևորվեն դրական զարգացումներ: Այս պայմաններում ակնկալվում է զբաղվածության աճ և գործազրկության նվազում:

Գծապատկեր 1.20. *Գործազրկություն և զբաղվածություն*



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ

Գծապատկեր 1.21. *Աշխատուժի մասնակցության մակարդակ և աշխատավարձ*



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ

2021-2023 թվականներին տնտեսական աճն ուղեկցվել է միջին աշխատավարձերի աճով: Վերջին երեք տարիներին գրանցվել է անվանական աշխատավարձերի միջինում 12.6% աճ, իսկ իրական աշխատավարձերը միջինում աճել են 6.4%-ով:

2024 թվականի հունվար-ապրիլին միջին ամսական անվանական աշխատավարձը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 7.8%-ով՝ կազմելով 280,435 դրամ: Ընդ որում՝ սպառողական գների ինդեքսի 0.7% անկման պարագայում իրական աշխատավարձն աճել է 8.6%-ով: Աշխատավարձի աճին հիմնականում նպաստել են մեծածախ և մանրածախ առևտրի, կրթության, ֆինանսական և ապահովագրական գործունեության, մշակող արդյունաբերության և շինարարության ոլորտների աշխատավարձերի աճը: Միջին ամսական

անվանական աշխատավարձը պետական հատվածում աճել է 11.2%-ով՝ կազմելով 210,151 դրամ, իսկ ոչ պետականում՝ 6.6%-ով և կազմել՝ 309,014 դրամ:

1.3.3. ՀՀ վճարային հաշվեկշիռ, արտահանում և ներմուծում

2021-2023թթ. վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի պակասուրդը նախորդ երեք տարիների որոշակի վատթարացումից հետո բարելավվել է ՝ միջինում կազմելով ՀՆԱ-ի 1.8%-ը: Նշված տարիներին համավարակի և Արցախյան պատերազմի շոկերից հետո 2021թ. ՀՀ տնտեսության վերականգման և 2022թ. ռուս-ուկրաինական հակամարտության և ՌԴ-ի նկատմամբ կիրառվող աննախադեպ պատժամիջոցների հետևանքով ՀՀ-ից դեպի Ռուսաստան արտահանման պահանջարկի ավելացման, զբոսաշրջության զգալի ավելացման պայմաններում ընթացիկ հաշիվը բնութագրվել է ապրանքների և ծառայությունների հաշվեկշռի բարելավմամբ: **2023 թվականին ընթացիկ հաշվի պակասուրդը նախորդ տարվա համեմատ վատթարացել է՝ կազմելով ՀՆԱ-ի 2.3%-ը:** Ընթացիկ հաշվի վատթարացումը հիմնականում պայմանավորված է դրամական փոխանցումների (հատկապես՝ ՌԴ-ից) նվազմամբ, ինչպես նաև առևտրային հաշվեկշռի վատթարացմամբ: Դոլարային արտահայտությամբ ապրանքների և ծառայությունների բացասական հաշվեկշիռը կազմել է ՀՆԱ-ի 0.8%-ը՝ նախորդ տարվա համեմատ բարելավվելով 0.1 տոկոսային կետով, ինչը հիմնականում պայմանավորված է ծառայությունների հաշվեկշռի՝ ՀՆԱ-ում 0.7 տոկոսային կետով բարելավմամբ: Տնտեսություն ներհոսող դրամական զուտ փոխանցումները 2023 թվականին նվազել են շուրջ 32.4%-ով՝ պայմանավորված ինչպես ներհոսքի նվազմամբ (հատկապես՝ ՌԴ-ից), այնպես էլ դեպի այլ երկրներ արտահոսքի ավելացմամբ: Նշված զարգացումների արդյունքում 2023 թվականին նախորդ տարվա համեմատ ՀՆԱ-ում ընթացիկ հաշվի պակասուրդը վատթարացել է 2.6 տոկոսային կետով՝ գտնվելով երկարաժամկետ կայուն մակարդակից ցածր դիրքում:

2024 թվականի առաջին հինգ ամիսներին ապրանքների գծով արտաքին առևտրի բացասական մնացորդը, պայմանավորված ներմուծման մեծ ծավալներով, նախորդ տարվա նկատմամբ վատթարացել է: Միաժամանակ, նշված ժամանակահատվածում ՀՀ այցելած զբոսաշրջիկների թվաքանակը նվազել է, մինչդեռ ՀՀ-ից մեկնած զբոսաշրջիկների թվաքանակը աճել՝ թողնելով բացասական ազդեցություն ծառայությունների հաշվեկշռի վրա: ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված առևտրային և ոչ առևտրային բնույթի զուտ դրամական փոխանցումները նույնպես նվազել են:

Գծապատկեր 1.22. *Ընթացիկ հաշվի և դրա բաղադրատարրերի դինամիկան, % ՀՆԱ-ում*



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ հաշվարկներ

Գծապատկեր 1.23. *Ապրանքների արտահանման, ներմուծման և առևտրային հաշվի դինամիկան, մլն ԱՄՆ դոլար*



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ հաշվարկներ

Գծապատկեր 1.24. *Ծառայությունների արտահանում, ներմուծում և հաշվեկշռի դինամիկան, մլն ԱՄՆ դոլար*



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ հաշվարկներ

Գծապատկեր 1.25. *Զուտ դրամական փոխանցումների դինամիկան, մլն ԱՄՆ դոլար*



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ հաշվարկներ

<u>Կանխատեսում:</u> Պայմանավորված առևտրային հաշվեկշռի վատթարացմամբ, ինչպես նաև ընթացիկ հաշվին ծառայությունների հաշվեկշռի դրական նպաստման որոշակի նվազմամբ՝ 2024թ. ընթացիկ հաշվի պակասուրդը կվատթարանա՝ հասնելով ՀՆԱ-ում 3.2% մակարդակի: Միջնաժամկետում, 2022-2023թթ. առաջացած դրական գործոնների ազդեցությունների աստիճանական չեզոքացման (մասնավորապես, վերաարտահանման գործոնի չեզոքացման, ՌԴ-ից զբոսաշրջիկների հոսքերի կայունացման) պայմաններում ընթացիկ հաշվի պակասուրդը կխորանա՝ մոտենալով իր երկարաժամկետ հավասարակշիռ մակարդակին:

<u>Արտահանում:</u> 2021-2023թթ. միջինում արձանագրվել է ապրանքների և ծառայությունների դոլարային արտահանման 58% աճ: Արտահանումը 2021թ.-ից սկսել է վերականգնվել՝ պայմանավորված համավարակի դեմ պայքարի սահմանափակումների թուլացմամբ, արտաքին պահանջարկի վերականգմամբ: 2022-23թթ արձանագրվել են ապրանքների և ծառայությունների բարձր աճի տեմպեր: Ապրանքների արտահանումը 2022-2023թթ. միջինում աճել է 62.9%-ով, որը հիմնականում պայմանավորվել է արտաքին որոշ շուկաներում (հատկապես՝ ՌԴ-ում և ԱՄԷ-ում) ՀՀ ապրանքների նկատմամբ պահանջարկի ավելացմամբ և

վերաարտահանմամբ: Իսկ 2022-23թթ. ծառայությունների արտահանումը միջինում աճել է 90.3%-ով՝ հիմնականում պայմանավորված ՀՀ այցելած զբոսաշրջիկների թվաքանակի կտրուկ աճով, որին մեծ նպաստում է ունեցել ռուս-ուկրաինական հակամարտության արդյունքում ռուս զբոսաշրջիկների թվաքանակի կտրուկ աճը: Ընդ որում, հատկանշական է այն հանգամանքը, որ 2023թ. ՀՀ այցելած զբոսաշրջիկների թվաքանակը հատել է 2019 թվականի նախահամավարակային ժամանակաշրջանի մակարդակը, սակայն այն տեղի է ունեցել միայն ՌԴ-ից զբոսաշրջիկների աճի հաշվին: Ծառայությունների արտահանման աճին դրական նպաստում է ունեցել նաև հեռահաղորդակցության, համակարգչային և տեղեկատվական ծառայությունների արտահանումը:

2024թ. հունվար-մայիս ամիսներին արձանագրվել է ապրանքների արտահանման 2.5 անգամ աճ՝ հիմնականում պայմանավորված վերոնշյալ գործոններով: Սակայն մայիս ամսին արձանագրվել է արտահանման աճի տեմպի զգալի դանդաղում՝ պայմանավորված ոսկու վերաարտահանման ծավալների կտրուկ կրճատմամբ:

Գծապատկեր 1.26. *2024թ. ապրանքների արտահանման միտումները, %*



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ և ՀՀ ՖՆ հաշվարկներ:

2024 թվականի առաջին հինգ ամիսներին ՀՀ այցելած զբոսաշրջիկների թվաքանակը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է, իսկ ՀՀ-ից մեկնած զբոսաշրջիկների թվաքանակն ավելացել է: 2024 թվականի առաջին հինգ ամիսներին ՀՀ այցելած զբոսաշրջիկների թվաքանակը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել է 4.9% (շուրջ 39 հազար մարդով), որին ՌԴ զբոսաշրջիկների (շուրջ 322 հազար մարդ) նպաստումը կազմել է շուրջ 11.7%-ային կետ: Ընդ որում, աճել է այլ երկրներից ժամանած զբոսաշրջիկների, մասնավորապես, Հնդկաստանից ժամանածների թվաքանակը (2.3 անգամ): ՀՀ այցելած այլ երկրներից (առանց ՌԴ) զբոսաշրջիկների թվաքանակը հատել է 2019 թվականի նախահամավարակային ժամանակաշրջանի մակարդակը:

<u>Կանխատեսում:</u> Փաստացի և կանխատեսվող հորիզոնում վերաարտահանման գործոնի բացառման պայմաններում թե՛ 2024թ., և թե՛ միջնաժամկետում սպասվում են միջինում 5%-ը գերազանցող արտահանման աճեր: Սակայն, պայմանավորված որոշ ապրանքների վերաարտահանման գործոնների (հատկապես՝ ավտոմեքենաների և ոսկու), ինչպես նաև զբոսաշրջային հոսքերի որոշակի թուլացմամբ՝ 2024թ. սպասվում է չափավոր՝ շուրջ 3.2% արտահանման աճ: Միջնաժամկետում, ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով 2022-2023թթ. առաջացած դրական գործոնների թուլացման, մասնավորապես վերաարտահանման գործոնի չեզոքացման պայմաններում՝ 2025-2026թթ. համար կանխատեսվում է արտահանման

անկում՝ 2025թ. անկումը կկազմի շուրջ 17.1%, իսկ 2026թ.-ին՝ շուրջ 1.3%: 2027թ.-ին արտահանումը կսկսի աճել՝ շուրջ 2.9%-ով:

<u>Ներմուծում:</u> 2021-2023թթ. միջինում արձանագրվել է ապրանքների և ծառայությունների ներմուծման դոլարային 43% աճ: 2021թ. ապրանքների և ծառայությունների ներմուծման աճերը համավարակի հետևանքով կրած անկումից հետո սկսել են վերականգնվել, իսկ 2022-2023թթ. գրանցել բարձր աճ՝ պայմանավորված ներքին պահանջարկով, բարձր տնտեսական ակտիվությամբ և վերաարտահանման նպատակով իրականացված ներմուծմամբ: Նշված ժամանակահատվածում ծառայությունների ներմուծման աճի բարձր տեմպերը հիմնականում պայմանավորված են համավարակի հետ կապված սահմանափակումների վերացմամբ և տնտեսական բարձր ակտիվությանը համահունչ բնակչության տնօրինվող եկամտի ավելացմամբ՝ պայմանավորված զբոսաշրջային ծառայությունների նկատմամբ ստեղծված պահանջարկով:

2023թ. արձանագրվել է ապրանքների և ծառայությունների ներմուծման բարձր երկնիշ աճ (41.6%): Ապրանքների ներմուծման բարձր աճը պայմանավորվել է բարձր տնտեսական ակտիվությամբ, պահանջարկի բարձր աճով և վերաարտահանման հնարավորությունների մեծացման պայմաններում ներմուծվող ապրանքների նկատմամբ բարձր պահանջարկով: Ծառայությունների ներմուծման աճը 2023թ. կազմել է 25.3% և հիմնականում պայմանավորվել է զբոսաշրջության աճով:

2024 թվականի առաջին հինգ ամիսներին արձանագրվել է ներմուծման երկնիշ աճ՝ պայմանավորված բարձր տնտեսական ակտիվությամբ և վերաարտահանման նպատակով իրականացված ներմուծմամբ: 2024 թվականի առաջին հինգ ամիսներին դոլարային արտահայտությամբ ապրանքների ներմուծման ծավալը աճել է 2.0 անգամ՝ կազմելով 9275.5 մլն դոլար: Հատկանշական է, որ մայիս ամսին արձանագրվել է ներմուծման աճի տեմպի կտրուկ դանդաղում՝ պայմանավորված ոսկու ներմուծման ծավալների կտրուկ փոքրացմամբ:

Գծապատկեր 1.27. *2024թ. ապրանքների ներմուծման միտումները, %*



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ և ՀՀ ՖՆ հաշվարկներ:

<u>Կանխատեսում:</u> Փաստացի և կանխատեսվող հորիզոնում վերաարտահանման գործոնի ազդեցության բացառման պայմաններում 2024թ. և միջնաժամկետում սպասվում են ներքին պահանջարկին և տնտեսական ակտիվությանը համահունչ ներմուծման աճեր: Իսկ ընդհանուր առմամբ, սպասվող տնտեսական աճի և ապրանքների ու ծառայությունների նկատմամբ ներքին պահանջարկի աճով, ինչպես նաև վերաարտահանման գործոնների թուլացմամբ պայմանավորված 2024թ. սպասվում է շուրջ 5.6% ներմուծման աճ: 2025թ.

վերաարտահանման գործոնի զգալի չեզոքացման արդյունքում կարձանագրվի ներմուծման շուրջ 14.4% անկում: 2026-2027թթ. պայմանավորված ներքին պահանջարկի աճով, ինչպես նաև ՀՀ կառավարության կողմից նախատեսվող պետական ներդրումների իրականացման և մասնավոր ներդրումների խթանման միջոցառումների ազդեցությամբ պայմանավորված ներմուծման աճը միջինում կկազմի մոտ 3.1%: Նման չափավոր աճը պայմանավորված է վերաարտահանման գործոնի չեզոքացմամբ:

1.3.4. Արժութային շուկա և փոխարժեքներ

<u>Ֆիզիկական անձանց փոխանցումներ:</u> Դեպի ՀՀ ֆիզիկական անձանց զուտ փոխանցումները 2021-2023թթ. հասել են աննախադեպ մեծ ծավալների, պայմանավորված ՌԴ-ից մեծ ներհոսքով: 2021թ. մինչև 2023թ. առաջին եռամսյակ ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած և ՀՀ-ից արտերկիր կատարված առևտրային և ոչ առևտրային նպատակով զուտ փոխանցումները աճել են բարձր տեմպով: Սակայն 2023 թվականի երկրորդ եռամսյակից մինչ տարեվերջ սկսել են նվազել արագացող տեմպով: 2023թ. զուտ փոխանցումները հասել են 1.7 մլրդ դոլարի՝ 2022թ. համեմատ նվազելով 36%-ով: Ընդ որում՝ ՌԴ-ից զուտ փոխանցումները 2023թ. կազմել են 3.3 մլրդ դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով շուրջ 5.1%՝ հիմնականում պայմանավորված առաջին եռամսյակի աճով: Արդյունքում, 2023թ. ՀՀ-ում արտարժույթի ծավալները նվազել են՝ դեռևս մնալով բարձր մակարդակի վրա:

Դեպի ՀՀ ֆիզիկական անձանց փոխանցումները 2024թ. առաջին եռամսյակում շարունակում են մնալ բարձր մակարդակում, սակայն նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ սկսել են նվազել: Չնայած 2024թ. առաջին եռամսյակում ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած և ՀՀ-ից արտերկիր կատարված առևտրային և ոչ առևտրային նպատակով զուտ փոխանցումների ծավալները սկսել են կրճատվել նախորդ տարում արձանագրված բարձր ծավալների նկատմամբ՝ այնուամենայնիվ շարունակում են մնալ էական բարձր մակարդակում պատմական ծավալների նկատմամբ՝ պահպանելով ՀՀ-ում արտարժույթի բարձր առաջարկը:

***Գծապատկեր 1.28**. ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր կատարված զուտ փոխանցումներ, մլն ԱՄՆ դոլար*



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, ՀՀ ՖՆ հաշվարկներ

<u>Արժութային շուկա:</u> 2021-2023թթ. ՀՀ արժութային շուկայի շրջանառության ծավալները եղել են աննախադեպ բարձր մակարդակում: Արժութային շուկայի նման մեծ շրջանառությունը պայմանավորված է 2022թ. սկիզբ առած ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով ՀՀ ներհոսած ռուբլու մեծ ծավալներով, որն առաջացրել է դոլարի և եվրոյի նկատմամբ մեծ պահանջարկ: Այս մասին են փաստում 2022թ. երկրորդ եռամսյակից ՀՀ ներբանկային շուկայում ռուբլու զուտ առքի աննախադեպ բարձր ծավալները, որին զուգընթաց կտրուկ ավելացել են դոլարի և եվրոյի զուտ վաճառքի ծավալները: Այս ժամանակահատվածում ՀՀ ԿԲ-ն արժութային շուկայում իրականացրել է միջամտություններ՝ ավելորդ տատանողականությունը չեզոքացնելու նպատակով:

2024թ. հունվար-մայիս ամիսներին ՀՀ արժութային շուկայի շրջանառության ծավալները շարունակել են պահպանվել բարձր մակարդակում: 2024 թվականի հունվար-ապրիլ ամիսներին արտարժույթի ներբանկային վաճառքը գերազանցել է առքի ծավալները՝ պայմանավորված դոլարի և եվրոյի վաճառքի ծավալների աճով: Մայիսին առքի ծավալները գերազանցել են վաճառքի ծավալները՝ պայմանավորված եվրոյի և ռուբլու ձեռքբերումներով: 2024 թվականի ապրիլին ՀՀ ԿԲ-ն իրականացրել է 20 մլն դոլարի արտարժույթի առք:

Գծապատկեր 1.29. *ՀՀ արժութային (ներբանկային) շուկայի շրջանառության փվյալներն ըստ դրամային համարժեքների, զուտ մլրդ դրամ*



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, ՀՀ ՖՆ հաշվարկներ

Գծապատկեր 1.30. *Փոխարժեք և ԿԲ արձագանք*



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, ՀՀ ՖՆ հաշվարկներ

<u>Երկկողմանի փոխարժեքներ:</u> 2021-2023թթ. ՀՀ դրամն ԱՄՆ դոլարի, եվրոյի և ռուբլու նկատմամբ միջինում դրսևորել է արժևորման վարքագիծ՝ հիմնականում պայմանավորված 2022թ. արտարժույթի աննախադեպ մեծ ներհոսքով: ՀՀ փոխարժեքի շուկայում 2021-ից մինչև 2022թ. տարեվերջ արձանագրվել է ՀՀ դրամի արժևորում դոլարի և եվրոյի նկատմամբ, այնուհետև, 2023թ. տարեսկզբից եվրոն և դոլարը դրսևորել են հարաբերական կայուն վարքագիծ: Դոլարի համար 2023թ.-ին գրանցվել է արժևորման առավելագույն 385.8 արժեք օգոստոսի 23-ին: Միջին փոխարժեքը կազմել է 392.5 դրամ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց՝ նախորդ տարվա միջին փոխարժեքի՝ 435.7-ի նկատմամբ արժևորվելով 11%-ով: Եվրոյի նկատմամբ ՀՀ դրամը արժևորվել է 8.5%-ով, արժևորման առավելագույն 410 դրամ մեկ եվրոյի դիմաց արժեքին հասնելով 2023թ. սեպտեմբերի 27-ին: ՀՀ դրամը ՌԴ ռուբլու նկատմամբ 2022թ. մարտին կտրուկ արժևորվել է՝ պայմանավորված ռուս-ուկրաինական հակամարտությամբ, ապա սկսել է կրկին արժեզրկվել մինչև հունիս, այնուհետև՝ նորից մտել արժևորման փուլ մինչև սեպտեմբեր,

այնուհետև դրսևորել թույլ տատանողականությամբ կայուն վարքագիծ: Տարեվերջին 2022թ. համեմատ արժևորումը կազմել է 39.4 տոկոս:

2024թ. հունվար-մայիս ամիսներին ՀՀ դրամը արժեզրկվել է դոլարի և եվրոյի նկատմամբ, իսկ ռուբլու նկատմամբ շարունակել է թույլ արժևորվել, բայց ավելի դանդաղ տեմպերով: ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ ՀՀ դրամը 2024թ. հունվար-մայիս ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արժեզրկվել է համապատասխանաբար՝ 1.8%, 1.9%-ով, իսկ ռուբլու նկատմամբ՝ արժևորվել 18.6%-ով:

ՀՀ արտաքին առևտրի տեսանկյունից առավել կարևոր արժույթներից բաղկացած զամբյուղի նկատմամբ ՀՀ ազգային արժույթն իրական արտահայտությամբ 2021-2023թթ. միջինում արժևորվել է 24.1%-ով: Իրական արդյունավետ փոխարժեքի արժևորման տեմպը 2024թ. հունվարին կտրուկ դանդաղել է և պահպանել այդ միտումը:

2024թ. սկզբից դրամը ՀՀ հիմնական գործընկեր երկրների արժույթների նկատմամբ դրսևորել է արդյունավետ փոխարժեքի արժևորման տեմպի դանդաղման վարքագիծ. հունվար-ապրիլ ամիսներին ՀՀ դրամի իրական արդյունավետ փոխարժեքի արժևորումը կազմել է 6.7%, իսկ անվանականը՝ 15.1%, ինչը բացասաբար է անդրադառնում արտահանման մրցունակության վրա:

***Գծապատկեր 1.31. ՀՀ** դրամի անվանական փոխարժեքի դինամիկան հիմնական արժույթների նկատմամբ (աճ՝ դրամի արժևորում)*



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, ՀՀ ՖՆ հաշվարկներ

***Գծապատկեր 1.32.** ՀՀ իրական և անվանական արդյունավետ փոխարժեքների կուտակային տ/տ աճերի դինամիկան (աճ՝ արժևորում)*



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, ՀՀ ՖՆ հաշվարկներ

1.3.5. Գնաճ և դրամավարկային քաղաքականություն

2021-2022 թթ. գնաճի տեմպերը զգալիորեն արագացել են ինչպես առաջարկի, այնպես էլ պահանջարկի գործոնների արդյունքում, ինչին ԿԲ-ը արձագանքել է քաղաքականության դիրքի խստացմամբ, իսկ 2023թ.-ի ընթացքում, այդ գործոնների հիմնական մասին չեզոքացման, ինչպես նաև ՀՀ դրամի արժևորման հետ կտրուկ դանդաղել, ապա՝ վերածվել գնանկումային միտումների: 2021թ. առաջարկի (միջազգային ապրանքահումքային շուկաներում դրսևորված գների աճ, բեռնափոխադրումների սակագների աճ, տարվա առաջին կեսին նախորդ համադրելի ժամանակահատվածի համեմատ ՀՀ դրամի արժեզրկված դիրք) և պահանջարկի (մասնավոր սպառման աճ, գնաճային սպասումների ավելացում) գործոնները հանգեցրել են միջին գնաճի արագացմանը մինչև 7.2%՝ նախորդող տարվա 1.2% ցուցանիշի դիմաց: Արձագանքելով ձևավորվող գնանկումային ճնշումներին, ԿԲ-ը զսպող քաղաքականություն է սկսել իրականացնել 2020թ. դեկտեմբերից, մինչև 2021թ.-ի վերջ վերաֆինանսավորման տոկոսադրույքը բարձրացնելով 3.5 տոկոսային կետով: 2022 թ. տարեսկզբին արդեն դիտվել է 12-ամսյա գնաճի տեմպերի դանդաղման գործընթաց, մինչդեռ մարտ ամսից սկսած, պայմանավորված նախ ռուս-ուկրաինական հակամարտության սրման

արդյունքում միջազգային ապրանքահումքային շուկաներում դիտված գների կտրուկ աճով և ՀՀ դրամի փոխարժեքի կարճատև արժեզրկմամբ, ապա՝ համախառն պահանջարկի զգալի աճով (այդ թվում՝ օտարերկրյա այցելուների կտրուկ ավելացմամբ պայմանավորված), 12-ամսյա գնաճը նորից արագացել է՝ հունիսին հասնելով մինչև 10.3%: Այս պայմաններում ԿԲ-ը շարունակել է բարձրացնել տոկոսադրույքը՝ 2022թ.-ի վերջին հասցնելով այն 10.75%-ի, ինչի արդյունքում քաղաքականության կոշտացման ամբողջ շրջափուլում տոկոսադրույքը բարձրացվել է 6.5%-ային կետով: 2023թ.-ին, պայմանավորված արտաքին հատվածից և աշխատաշուկայից փոխանցվող գնաճային ճնշումների թուլացմամբ, իսկ տարեվերջին՝ գնանկումային ազդեցություններով, գնաճային սպասումների նվազմամբ, ինչպես նաև իրականացված հետևողական զսպող դրամավարկային քաղաքականության ազդեցությամբ գնաճի տեմպերը զգալիորեն դանդաղել են, ապա՝ փոխարինվել գնանկումային միտումներով, ինչի արդյունքում 12 ամսյա գնաճը դեկտեմբերին կազմել է -0.6%, իսկ միջին գնաճը 2.0%:

2024թ. հունվար-մայիս ամիսներին գրանցվել են գնանկումային միտումներ, որի պայմաններում ԿԲ-ը նվազեցրել է քաղաքականության տոկոսադրույքը 1%-ային կետով մինչև 8.25%: Գնանկումային միջավայրը ձևավորվել է համաշխարհային տնտեսությունից փոխանցվող գնաճային ճնշումների զգալի թուլացման, փոխարժեքի արժևորման, ինչպես նաև 2020-2022 թթ. իրականացված հետևողական զսպող դրամավարկային քաղաքականության լագային ազդեցությամբ: Արդյունքում 12 ամսյա գնաճը մայիսին կազմել է 0.3%, միջին գնաճը հունվար-մայիս ամիսներին կազմել է -0.8%:

Գծապատկեր 1.33. *Գնաճի տեմպերը և ԿԲ տոկոսադրույքը ըստ ամիսների, 2021-2024թ. մայիս, %*



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ

Դրամավարկային քաղաքականության փոխանցումային մեխանիզմը ինչպես քաղաքականության խստացման, այնպես էլ մեղմացման շրջափուլերում համեմատաբար արդյունավետ է գործել պետական պարտատոմսերի, և պակաս արդյունավետ՝ վարկերի և ավանդների շուկաներում՝ այդ թվում պայմանավորված նաև դեպի ՀՀ բանկային համակարգ տեղի ունեցած լրացուցիչ ներհոսքերով: Ինչպես 2020թ. դեկտեմբերից մինչև 2022թ. վերջ ԿԲ կողմից վերաֆինանսավորման տոկոսադրույքի բարձրացման, այնպես էլ 2023թ. կեսից դրա նվազեցման փուլերում ֆինանսական շուկաներում վարկերի և ավանդների տոկոսադրույքներն անհամաչափորեն են ճշգրտվել միջբանկային ռեպոյի և կարճաժամկետ

պետական պարտատոմսերի շուկաների համեմատ, որոնք սովորաբար զգայուն են դրամավարկային քաղաքականության որոշումների նկատմամբ: Ավելին, տոկոսադրույքների բարձրացման շրջափուլում դեպի բանկային համակարգ ֆինանսական հոսքերը դեպի ներքև ճնշումներ են առաջացրել ավանդների տոկոսադրույքների համար, իսկ հիփոթեքային վարկերի նկատմամբ բարձր պահանջարկը երկու շրջափուլերում էլ դեպի վերև ճնշում է առաջացրել հիփոթեքային վարկերի տոկոսադրույքների համար:

Գծապատկեր 1.34. *Գնաճի նպաստումները խոշոր ապրանքախմբերով, ըստ եռամսյակների, տոկոսային կետ*



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ և ՀՀ ՖՆ հաշվարկներ

<u>Կանխատեսում</u>: 2024թ.-ին ինչպես միջին, այնպես էլ 12 ամսյա գնաճը ցածր կլինեն նպատակային ցուցանիշից և միջնաժամկետում կկայունանան նպատակային 4% ցուցանիշի շուրջ: Մշտադիտարկելով տնտեսության զարգացման սցենարները, ԿԲ-ը պատրաստ է ձեռնարկել համարժեք գործողություններ՝ միջնաժամկետ հորիզոնում գնաճի 4% մակարդակի և գների կայունության նպատակի ապահովման համար[13]:

[13] https://www.cba.am/AM/News/Pages/news_11062024_01.aspx#sthash.c7caMicL.dpbs

Գծապատկեր 1.35. *Դրամավարկային քաղաքականության ազդեցությունները ֆինանսական շուկայում և գնաճի կանխատեսումները*



1.4. ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՔՈՒՄ ԸՆԿԱԾ ԵՆԹԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2025-2027թթ. ՄԺԾԾ մակրոտնտեսական շրջանակի կանխատեսումներն իրականացվել են ՀՀ ՖՆ կողմից՝ կիրառելով տնտեսաչափական մոդելներ, և առանձին շոկերի և հարկաբյուջետային միջոցառումների ազդեցությունների գնահատման համար՝ ՀՀ ՖՆ Արարատ հարկաբյուջետային ռազմավարության դինամիկ ստոխաստիկ ընդհանուր հավասարակշռության (Ararat Fiscal Strategy Model) մոդելը[14], որոնց համար տեղեկատվական հիմք են հանդիսացել 2024թ. ապրիլ ամսվա դրությամբ հասանելի ներքին և արտաքին ընթացիկ տնտեսական և ֆինանսական զարգացումները, ինչպես նաև ՀՀ գործընկեր երկրների տնտեսական զարգացումների և հումքային ապրանքների համաշխարհային գների միջազգային կառույցների կողմից արված կանխատեսումները: Մասնավորապես՝

1. Արտաքին գործոններ.

- 2023թ. դրսևորված աշխարհաքաղաքական անորոշությունների և շարունակվող զսպող դրամավարկային քաղաքականության պայմաններում 2024թ. ապրիլ ամսվա ԱՄՀ կանխատեսումների համաձայն 2024թ. սպասվում է ԵԳ և ԱՄՆ տնտեսական աճերի արագացում (համապատասխանաբար՝ 0.8% և 2.7%), իսկ Չինաստանում սպասվում է ներուժային տնտեսական աճից ավելի ցածր՝ 4.6% տնտեսական աճ: Ըստ ԱՄՀ կանխատեսումների 2024թ. ՌԴ-ում սպասվում է 3.2% տնտեսական աճ: Հատկանշական է, որ ԱՄՀ ՀՀ հիմնական գործընկեր երկրների 2024թ. տնտեսական աճերի վերջին կանխատեսումները հունվար ամսվա կանխատեսումների համեմատ դեպի վերև վերանայվել են

[14] ՀՀ ֆինանսների նախարարության Արարատ հարկաբյուջետային ռազմավարության դինամիկ ստոխաստիկ ընդհանուր հավասարակշռության մոդելը մշակվել է 2018-2020 թվականների ընթացքում՝ ԱՄՀ կողմից տրամադրված տեխնիկական աջակցության շրջանակներում: Առավել մանրամասն տե՛ս ՀՀ կառավարության 2021 թվականի բյուջետային ուղերձ, Երևան 2020, էջ՝ 84, ներդիր 2: Մոդելը և կիրառությունները նկարագրող ամբողջական աշխատանքային փաստաթուղթը տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.imf.org/en/Publications/WP/Issues/2022/06/10/The-Ararat-Fiscal-Strategy-Model-A-Structural-Framework-for-Fiscal-Policy-Analysis-in-519522:

ՌԴ-ի և ԱՄՆ-ի աճերի կանխատեսումները՝ պայմանավորված սպասվածից առավել դրական ընթացիկ զարգացումներով:

- ՀՀ գործընկեր երկրների տնտեսությունների համար 2025թ. և միջնաժամկետում կանխատեսվում է իրենց նախաճգնաժամային ներուժային աճերից ցածր տնտեսական աճեր: Հատկանշական է այն փաստը, որ Չինաստանի համար սպասվում է պատմական միջին աճից ավելի քան երկու անգամ դանդաղ տնտեսական աճի տեմպ:

- 2024թ. նավթի բորսային գինը կնվազի, իսկ պղնձինը՝ կաճի: Ըստ «Բլումբերգ» միջազգային հեղինակավոր կազմակերպության կանխատեսումների 2024թ. նավթի միջազգային գները կնվազեն 3.2%-ով, իսկ պղնձինը կաճեն 1%-ով: 2025թ. նավթի և պղնձի գները կնվազեն համապատասխանաբար՝ 5.5% և 1%-ով:

- Ենթադրվում է, որ ՀՀ ծառայությունների արտահանման տեմպը զգալի դանդաղելու է՝ պայմանավորված ռուս զբոսաշրջիկների ներհոսքի նվազմամբ:

- 2024թ. սպասվում է դրամական փոխանցումների շուրջ 2.7% աճ, որին հիմնականում նպաստելու են ԱՄՆ-ից և այլ երկրներից դեպի Հայաստան դրամական փոխանցումների ավելացումը: Կանխատեսումների համաձայն 2025-2027թթ. դրամական փոխանցումները միջինում կաճեն շուրջ 3.5%-ով:

- ՌԴ դեմ կիրառված պատժամիջոցների արդյունքում ՌԴ-ից դեպի Հայաստան տեղափոխված SS ոլորտի ընկերությունների և աշխատակիցների որոշ մասը 2024թ. ընթացքում և միջնաժամկետում կմնան Հայաստանում:

2. Կառուցվածքային բարեփոխումներ.

- Կառուցվածքային բարեփոխումների ազդեցության չափի գնահատման համար հիմք է հանդիսացել աշխարհի 90 երկրների պանելային տվյալների հիման վրա Արժույթի միջազգային հիմնադրամի կատարած գնահատականները, որոնք հուշում են, որ կառուցվածքային բարեփոխումների (աշխատանքի շուկա, ֆինանսական համակարգ, կապիտալի հաշվի բացություն, արտաքին առևտրի բացություն, ապրանքային շուկաներ և պետական կառավարում) էական ջանքը կարող է 6 տարում ՀՆԱ-ի շուրջ 7% աճ ապահովել[15]: Համադրելով ԱՄՀ գնահատականներում կիրառված կառուցվածքային բարեփոխումների ուղղությունները, և ՀՀ կառավարության ծրագրով ուղենշված՝ գործարար միջավայրը և պետական կառավարման արդյունավետությունը բարելավող միջոցառումները, ՀՀ համար կառուցվածքային բարեփոխումների հնարավոր ազդեցությունը գնահատվել է տարեկան 0.5%-ային կետ միջնաժամկետ հատվածի համար:

3. Տնտեսության ներուժ և պարբերաշրջաններ.

- 2022-2023թ. դրական զարգացումների պայմաններում ՀՀ տնտեսությունը գտնվել է ներուժային մակարդակից ավելի բարձր դիրքում՝ մտնելով տնտեսական պարբերաշրջանի վերելքի փուլ: Կանխատեսված տնտեսական զարգացումների պայմաններում 2024թ. ավարտին դրական ճեղքը աստիճանաբար կփոքրանա և միջնաժամկետ հատվածում տնտեսությունը

[15] (տե՛ս IMF (2019). WEO October 2019, Chapter 3: Reigniting Growth in Emerging Market and Low-Income Economies: What Role for Structural Reforms? https://www.imf.org/en/Publications/WEO/Issues/2019/10/01/world-economic-outlook-october-2019):

կմոտենա իր ներուժային մակարդակին: Հատկանշական է, որ վերջին տարիների դրական զարգացումները, մասնավորապես, դեպի ՀՀ զբոսաշրջային մեծ հոսքերը, SS ոլորտի ընկերությունների և աշխատակիցների ՀՀ տեղափոխվելը, զբաղվածների թվաքանակի ավելացումը, ինչպես նաև պետական կապիտալ ծախսերի դերի շարունակական բարձրացումը հանգեցրել են տնտեսության ներուժի և ներուժային աճի բարձրացման: Այժմ, ըստ գնահատումների ներուժային տնտեսական աճը 4-4.5% միջակայքից աճել է՝ հասնելով 5-5.5% միջակայք. այս հանգամանքն իր դրական ազդեցությունը կթողնի միջնաժամկետ հատվածում:

4. **Հարկաբյուջետային քաղաքականություն.**

- Միջնաժամկետ հատվածում հարկաբյուջետային քաղաքականությունն ուղղված կլինի կառուցվածքային բարեփոխումների սահուն ընթացքը երաշխավորելու և ֆիզիկական ու մարդկային կապիտալում ներդրումների մակարդակի էական բարձրացման միջոցով տնտեսության դիմակայունության ամրապնդմանն ու աճի ներուժի բարձրացմանը: Ընդ որում, այն իրականացվում է նշված բարեփոխումների համար միջնաժամկետի սկզբում «առաջ ընկած» ռեսուրսների ձևավորման ճանապարհով, ինչի արդյունքում բյուջեի պակասուրդը 2024-2025 թթ.-ին կաճի՝ հանգեցնելով կառավարության պարտքի բեռի որոշակի մեծացմանը, որից հետո տեղի կունենա հարկաբյուջետային կոնսոլիդացիա, որով պարտքի բեռը 2026-2027 թվականներին կկայունանա 55%-ի մակարդակում: Ընդ որում, տնտեսական աճի՝ իր ներուժային մակարդակին մոտենալու պայմաններում հարկաբյուջետային քաղաքականությունը ամբողջական պահանջարկի վրա կունենա չեզոք ազդեցություն: Միաժամանակ, հարկաբյուջետային քաղաքականության համար առաջնահերթ է առկա ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործումը և հնարավոր ռիսկերի կառավարման կարողությունների ձևավորումը, ինչը, աճի ներուժի բարձրացման հետ, պետք է երաշխավորի հարկաբյուջետային կայունությունը երկարաժամկետում:

- Միջնաժամկետում հարկային վարչարարության բարելավման, ստվերի դեմ պայքարի, ինչպես նաև հարկային քաղաքականության միջոցառումների արդյունքում ակնկալվում է ապահովել հարկեր/ՀՆԱ հարաբերակցության շարունակական բարելավում՝ 2024թ. 0.5, իսկ միջնաժամկետում միջինում 0.6 տոկոսային կետով՝ 2027թ. հասցնելով 26.2%-ի:

- Միջնաժամկետ հարկաբյուջետային շրջանակում ընթացիկ ծախսերը կայունանում են իրենց վերջին տարիների միջին մակարդակների մոտ՝ ուղենիշ վերցնելով հարկաբյուջետային կանոնի տրամաբանությունից, իսկ կապիտալ ծախսերը՝ պատմական մակարդակներից զգալիորեն բարձր մակարդակում՝ տնտեսական և անվտանգային ենթակառուցվածքների ամրապնդման համար: Կապիտալ ծախսերի կշիռը ՀՆԱ-ում 2025թ. կհասնի 7.0%-ի, 2026-ին՝ 7.1%, իսկ 2027-ին կկազմի 6.4%, իսկ ընթացիկ ծախսերը 2025թ-ին կկազմելն 24.4%, այնուհետև կայունանալով 23.9% մակարդակում:

5. Գնաճ և դրամավարկային քաղաքականություն.

- 2024թ.-ին ինչպես միջին, այնպես էլ 12 ամսյա գնաճը ցածր կլինեն նպատակային ցուցանիշից և միջնաժամկետում կկայունանան նպատակային 4% ցուցանիշի շուրջ:
- Մշտադիտարկելով տնտեսության զարգացման սցենարները, ԿԲ-ը պատրաստ է ձեռնարկել համարժեք գործողություններ՝ միջնաժամկետ հորիզոնում գնաճի 4% մակարդակի և գների կայունության նպատակի ապահովման համար:

1.5. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԸ

Կանխատեսման առկա ռիսկերը պայմանավորվում են ինչպես արտաքին, այնպես էլ ներքին տնտեսական գործոններով, որոնք կարող են հանգեցնել ինչպես տնտեսական աճի տեմպերի ավելացմանը, այնպես էլ նվազմանը՝ ներկայացված կենտրոնական կանխատեսումների համեմատ: Ռիսկերի տեղի ունենալու դեպքում շեղումներ կարձանագրվեն սույն փաստաթղթի 1.4 բաժնում ներկայացված ենթադրություններից՝ հանգեցնելով մակրոտնտեսական կանխատեսումներից շեղումների և դրա հետևանքով էլ հարկաբյուջետային շրջանակի ցուցանիշների շեղման այս ՄԺԾԾ շրջանակից:

COVID-19 համավարակի հետևանքները դեռ չհաղթահարած տարածաշրջանը բախվեց ռուս-ուկրաինական հակամարտության առաջացրած աշխարհաքաղաքական և տնտեսական մարտահրավերներին, ինչի բացասական հետևանքներն արդեն տեսանելի են ոչ միայն տարածաշրջանում, այլ նաև ամբողջ աշխարհում, այդ թվում՝ ՀՀ համար Ռուսաստանից հետո երկրորդ ամենամեծ առևտրային գործընկեր՝ Եվրագոտու երկրներում: Ռուս-ուկրաինական հակամարտությունը և Ռուսաստանի դեմ կիրառված աննախադեպ պատժամիջոցները աշխարհում ստեղծել են նոր իրականություն, որի պայմաններում ինչպես աշխարհի և ՀՀ գործընկեր երկրների, այնպես էլ ՀՀ տնտեսական աճի կանխատեսումները իրենց մեջ կրում են մեծ անորոշություն:

Վերոնշյալ իրողությունների պայմաններում տնտեսական աճի կանխատեսումների շուրջ ինչպես կարճաժամկետում, այնպես էլ միջնաժամկետում առկա են անորոշություններ:

1.5.1. ՀՀ տնտեսական աճի դեպի ներքև ուղղությամբ ռիսկեր

Արտաքին միջավայրից բխող դեպի ներքև ռիսկերը պայմանավորված են՝

- Ռուս-ուկրաինական պատերազմի արդյունքում առաջացած դրական գործոնների (ՌԴ-ից զբոսաշրջային հոսքերի, դրամական փոխանցումների, SS ոլորտի ընկերությունների և աշխատակիցների դեպի ՀՀ տեղափոխման) չեզոքացմամբ և հոսքերի հետշրջմամբ,
- ՌԴ-ում ՀՀ ապրանքների արտահանման՝ վերջին տարիների վերափոխումների արդյունքում ընդլայնված շուկայի նեղացմամբ,
- ՀՀ ապրանքների արտահանման մատակարարումների լոգիստիկ խնդիրների խորացմամբ,
- Աշխարհաքաղաքական իրավիճակով, այդ թվում՝ տարածաշրջանային ռազմական հակամարտությունների առկայությամբ,
- Տարածաշրջանային հակամարտությունների (մերձավորարևելյան և ռուս-ուկրաինական հակամարտություններ) արդյունքում պարենային և ոչ պարենային ապրանքների գների աճով,
- Աշխարհում գնաճի սպասվածից ավելի դանդաղ նվազմամբ և դրամավարկային պայմանների սպասվածից առավել խստացման արդյունքում տնտեսական աճերի դանդաղմամբ, զարգացած երկրներում տոկոսադրույքների սպասվածից առավել բարձրացման պայմաններում ՀՀ-ից կապիտալի զուտ արտահոսքի և մասնավոր հատվածի և կառավարության արտաքին պարտքով պակասուրդների ֆինանսավորման թանկացմամբ:
- Չինաստանի տնտեսական աճի հետագա դանդաղմամբ:

Ներքին միջավայրից բխող դեպի ներքև ռիսկերը պայմանավորված են՝

- Պետական կապիտալ ծախսերի հնարավոր թերակատարմամբ,
- Սոթքի հանքավայրի շահագործման անհնարինության հետ կապված տնտեսական ակտիվության դանդաղմամբ,

- Ամուլսարի շահագործման հնարավոր հետաձգմամբ կամ սպասվածից ավելի քիչ հանքարդյունահանմամբ,
- ՀՀ կառավարության կառուցվածքային բարեփոխումների և արտահանման ու ներդրումների խթանման քաղաքականության ակնկալվող արդյունքների սպասվածից ավելի ուշ արտահայտմամբ,
- Լեռնային Ղարաբաղից ՀՀ բռնի տեղահանված անձանց ՀՀ տնտեսական գործընթացներում սպասվածից ավելի արագ ինտեգրմամբ,
- Բնակլիմայական անբարենպաստ պայմանների շարունակական դրսևորման հետևանքով գյուղատնտեսության ճյուղում հնարավոր բացասական զարգացումներով:
- Հորդառատ անձրևների հետևանքով Լոռու և Տավուշի մարզերում տեղի ունեցած ջրհեղեղի առաջացրած տնտեսական վնասներով և դրանց ուշ հաղթահարմամբ պայմանավորված՝ այդ մարզերում տնտեսական ակտիվության նվազմամբ:

1.5.2. Տնտեսական աճի դեպի վերև ուղղությամբ ռիսկեր

Արտաքին գործոններից բխող դեպի վերև ռիսկերը պայմանավորված են՝

- Գլոբալ և տարածաշրջանային տնտեսական և աշխարհաքաղաքական վերափոխումների արդյունքում Հայաստանը՝ որպես առևտրային, լոգիստիկ և ֆինանսական հանգույց ծառայելու հնարավորությամբ,
- Ռուսաստանից դեպի Հայաստան կապիտալի և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ընկերությունների նոր ներհոսքով:

Ներքին միջավայրից բխող դեպի վերև ռիսկերը պայմանավորված են՝

- Ավելի բարձր կայուն տնտեսական աճին հասնելու համար անհրաժեշտ լրացուցիչ ջանքերի, մասնավորապես, մարդկային և ֆիզիկական կապիտալում ներդրումների, ինչպես նաև մասնավոր ներդրումների, զբաղվածության, արտահանման խթանմանը և տնտեսության արտադրողականության բարձրացմանն ուղղված միջոցառումների սպասվածից առավել արագ և արդյունավետ իրականացմամբ,
- «Ենթակառուցվածքներ ներդրումների դիմաց» ծրագրի հետ կապված ՊՄԳ շրջանակներում ավելի մեծ թվով ներդրումային ծրագրերի իրականացմամբ,
- Թեղուտի հանքավայրի հնարավոր շահագործումից բխող տնտեսական ակտիվության արագացմամբ,
- Լեռնային Ղարաբաղից ՀՀ բռնի տեղահանված անձանց ՀՀ տնտեսական գործընթացներում սպասվածից ավելի արագ ինտեգրմամբ,

Գծապատկեր 1.36. *Իրական ՀՆԱ-ի աճի կանխատեսման հավանականությունների բաշխումը (Fan Chart)*



Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ գնահատումներ և կանխատեսումներ

Աղյուսակ 1.3. *Իրական ՀՆԱ-ի աճի կանխատեսման հավանականությունների բաշխումը*[16]

Տնտեսական աճի միջակայքը, %	Տնտեսական աճի՝ տվյալ միջակայքում ձևավորվելու հավանականությունը, %			
	2024	**2025**	**2026**	**2027**
1-3	0.18	0.16	0.16	0.17
3-5	0.28	0.24	0.24	0.24
5-7	**0.29**	**0.26**	**0.25**	**0.25**
7-9	0.13	0.16	0.16	0.15

Ինչպես երևում է Գծապատկեր 1.29-ից, իրական ՀՆԱ-ի տարեկան աճի կենտրոնական կանխատեսումներից շեղման ռիսկերը դեպի ներքև են: 2024-2027թթ. տնտեսական աճի ձևավորման ամենաբարձր հավանականությունը գտնվում է կենտրոնական կանխատեսումները պարունակող համապատասխան միջակայքում (Գծապատկեր 1.29-ում այն մուգ կարմիր է, իսկ Աղյուսակ 1.3-ում՝ հոծ նշումով), իսկ դեպի ներքև ռիսկերը ավելի բարձր են:

1.6. ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ ՆԱԽՈՐԴ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ

Աղյուսակ 1.4. ՀՆԱ-ի կանխատեսումները

Ցուցանիշներ	**Ծրագիր**	**2023**	**2024**	**2025**	**2026**	**2027**
		փաստ/կանխ.*	*կանխ.*	*կանխ.*	*կանխ.*	*կանխ.*
Անվանական ՀՆԱ, մլրդ դրամ	*2025-2027 ՄԺԾԾ*	*9,505*	*10,235*	*11,197*	*12,309*	*13,505*
	2024 Պետական բյուջե	*9,450*	*10378*	-	-	-
	2024-2026 ՄԺԾԾ	*9,533*	*10459*	*11628*	*12940*	-
	2025-2027 ՄԺԾԾ	*8.7*	*6.3*	*5.8*	*5.7*	*5.5*
	2024 Պետական բյուջե	*7.4*	*5.6*	-	-	-

[16] Աղյուսակի 1-ին սյունը իրենից ներկայացնում է տնտեսական աճի հնարավոր միջակայքերը, իսկ 2-ից 5-րդ սյուները՝ համապատասխան միջակայքերում միջնաժամկետում տնտեսական աճի գտնվելու հավանականությունները: Աղյուսակում ներկայացվել են տնտեսական աճի ամենահավանական միջակայքերը, որոնք միասին ծածկում են բաշխման ընդհանուր հավանականության շուրջ 83%-ը, այսինքն՝ հավանականությունը, որ տնտեսական աճը կգտնվի 1.0%-ից 9.0% միջակայքում, կազմում է մոտ 83%:

Տնտեսական (իրական ՀՆԱ-ի) աճ, %	*2024-2026 ՄԺԾԾ*	*6.0*	*5.5*	*5.4*	*5.4*	-
ՀՆԱ-ի դեֆլյատորի աճ, %	*2025-2027 ՄԺԾԾ*	*2.9*	*1.3*	*3.4*	*4.0*	*4.0*
	2024 Պետական բյուջե	*3.5*	*4.0*	-	-	-
	2024-2026 ՄԺԾԾ	*4.8*	*4.0*	*4.0*	*4.0*	-

** 2025-2027 ՄԺԾԾ համար 2023թ. ցուցանիշները փաստացի են*

Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ կանխատեսումներ

Աղյուսակ 1.5. Ընթացիկ հաշվի կանխատեսումները

Ցուցանիշներ	**Ծրագիր**	**2023**	**2024**	**2025**	**2026**	**2027**
		փաստ կանխ.*	*կանխ.*	*կանխ.*	*կանխ.*	*կանխ.*
Ընթացիկ հաշիվ, մլն ԱՄՆ դոլար	*2025-2027 ՄԺԾԾ*	-510.1	-742.8	-870.9	-1,206.8	-1,425.9
	2024 Պետական բյուջե	-965.8	-1,232.1			
	2024-2026 ՄԺԾԾ	-596.1	-832.3	-1,093.6	-1,377.0	-
Ընթացիկ հաշիվ, %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*2025-2027 ՄԺԾԾ*	-2.1	-3.0	-3.4	-4.4	-4.9
	2024 Պետական բյուջե	-4.0	-4.8	-	-	-
	2024-2026 ՄԺԾԾ	-2.7	-3.5	-4.2	-4.9	-

** 2025-2027 ՄԺԾԾ համար 2023թ. ցուցանիշները փաստացի են*

Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ կանխատեսումներ

ԳԼՈՒԽ 2. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ

2.1. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿ

- 2020-2021 թվականներին կորոնավիրուսի համավարակի և 44-օրյա պատերազմի հետևանքներին հակազդելու համար հարկաբյուջետային կանոնների «բացառիկ դեպքի» կարգավորումների ներքո իրականացված հակապարբերաշրջանային խթանող քաղաքականության արդյունքում գրանցված պարտքի բեռի աճից հետո 2022-2023 թվականներին հարկաբյուջետային քաղաքականությունը ոչ միայն վերադարձել է բնականոն իրավիճակների տրամաբանությանը, այլև հնարավոր է եղել կտրուկ կրճատել բյուջեի պակասուրդը և կառավարության պարտքի մակարդակը՝ հասցնելով վերջինս պարտքի կայունության տեսակետից անվտանգ համարվող 40-50%-ի միջակայք: Միաժամանակ, կառավարությունը սկսել է ձևավորված հարկաբյուջետային տարածքն օգտագործել տնտեսական ներուժի բարձրացմանը, այդ թվում՝ կառուցվածքային բարեփոխումներին, ֆիզիկական և մարդկային կապիտալին ուղղվող ծախսերի դերի բարձրացման համար, այդպիսով ամրապնդելով նաև երկարաժամկետ հարկաբյուջետային կայունությունը: 2024 թվականին հարկաբյուջետային քաղաքականությունը ուղղված է հարկաբյուջետային կանոններին համապատասխանության և կառավարության պարտքի բեռը 50%-ի շրջանակներում պահպանելու ճանապարհով հարկաբյուջետային կայունության երաշխավորմանը, կապիտալ ծախսերի մակարդակի շարունակվող բարելավման՝ հասցնելով այն ՀՆԱ 6.5%-ի, ինչպես նաև ծախսերի արդյունավետության շարունակական բարձրացմանը:

- Միջնաժամկետ հատվածում հարկաբյուջետային քաղաքականությունն ուղղված կլինի կառուցվածքային բարեփոխումների սահուն ընթացքը երաշխավորելու և ֆիզիկական ու մարդկային կապիտալում ներդրումների մակարդակի էական բարձրացման միջոցով տնտեսության դիմակայունության ամրապնդմանն ու աճի ներուժի բարձրացմանը: Ընդ որում, այն իրականացվում է նշված բարեփոխումների համար միջնաժամկետի սկզբում «առաջ ընկած» ռեսուրսների ձևավորման ճանապարհով, ինչի արդյունքում բյուջեի պակասուրդը 2024-2025 թթ.-ին կաճի՝ հանգեցնելով կառավարության պարտքի բեռի որոշակի մեծացմանը, որից հետո տեղի կունենա հարկաբյուջետային կոնսոլիդացիա, որով պարտքի բեռը 2026-2027 թվականներին կկայունանա 55%-ի մակարդակում: Ընդ որում, տնտեսական աճի՝ իր ներուժային մակարդակին մոտենալու պայմաններում հարկաբյուջետային քաղաքականությունը ամբողջական պահանջարկի վրա կունենա չեզոք ազդեցություն: Միաժամանակ հարկաբյուջետային քաղաքականության համար առաջնահերթ է առկա ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործումը և հնարավոր ռիսկերի կառավարման կարողությունների ձևավորումը, ինչը, աճի ներուժի բարձրացման հետ, պետք է երաշխավորի հարկաբյուջետային կայունությունը երկարաժամկետում:

- Միջնաժամկետում հարկային վարչարարության բարելավման, ստվերի դեմ պայքարի, ինչպես նաև հարկային քաղաքականության միջոցառումների արդյունքում ակնկալվում է ապահովել հարկեր/ՀՆԱ հարաբերակցության շարունակական բարելավում՝ 2024թ. 0.5, իսկ միջնաժամկետում միջինում 0.6 տոկոսային կետով՝ 2027թ. հասցնելով 26.2%-ի:

- Միջնաժամկետ հարկաբյուջետային շրջանակում ընթացիկ ծախսերը կայունանում են իրենց վերջին տարիների միջին մակարդակների մոտ՝ ուղենիշ վերցնելով հարկաբյուջետային կանոնի տրամաբանությունից, իսկ կապիտալ ծախսերը՝ պատմական մակարդակներից զգալիորեն բարձր մակարդակում՝ տնտեսական և անվտանգային ենթակառուցվածքների ամրապնդման համար: Կապիտալ ծախսերի կշիռը ՀՆԱ-ում 2025թ. կհասնի 7.0%-ի, 2026-ին 7.1%, իսկ 2027-ին կկազմի 6.4%, իսկ ընթացիկ ծախսերը 2025թ-ին կկազմեն 24.4%, այնուհետև կայունանալով 23.9% մակարդակում:

- 2025-2027 թթ. ՄԺԾԾ հարկաբյուջետային շրջանակի հիմնական ռիսկերը վերաբերում են մակրոտնտեսական անբարենպաստ զարգացումներին, հարկային եկամուտներ/ՀՆԱ ցուցանիշի թիրախավորված բարելավումների ոչ ամբողջական ապահովմանը, միջազգային ֆինանսական շուկաների իրավիճակի վատթարացմանը և ՀՀ կառավարության փոխառության հնարավորությունների սահմանափակմանը, լրացուցիչ ծախսային կարիքների առաջացմանը, և ծախսերի թերակատարմանը և ավելի թույլ խթանող ազդակի ձևավորմանը: Սցենարային վերլուծության միջոցով նշված ռիսկերին տրվել է քանակական արտահայտություն, և դրանց կառավարման համար ձեռնարկվել են համարժեք միջոցառումներ՝ գանձապետական կայունացման հաշվում առնվազն ՀՆԱ 1% չափով «իրացվելիության բարձիկի» ստեղծման ճանապարհով: Միաժամանակ, տարբեր ռիսկերի առարկայացման պարագայում կառավարությունը կկիրառի հասանելի գործիքները եկամտային ներուժի բարձրացման նպատակով (այդ թվում՝ հարկային վարչարարության լրացուցիչ գործիքների կիրառում), կճշգրտվեն ծախսային առաջնահերթություններն ու շրջանակը, իսկ հարկաբյուջետային կայունության ռիսկերի առարկայացման դեպքում՝ կվերանայվի նաև հարկաբյուջետային շրջանակը: Բացի այդ, առաջացող ռիսկերին դիմագրավելու տեսակետից յուրաքանչյուր տարվա պետական բյուջեում կնախատեսվեն լրացուցիչ «բարձիկներ» պահուստային ֆոնդերում:

Աղյուսակ 2.1. 2025-2027թթ. ՄԺԾԾ (ներառյալ 2025թ. պետական բյուջեի) հարկաբյուջետային շրջանակ, մլրդ դրամ

	2021	2022	2023	2024	2025	2026	2027
մլրդ դրամ	Փաստացի			Սպասում	Բյուջե	ՄԺԾԾ 2025-2027	
1	2	3	4	5	6	7	8
Պետական բյուջեի եկամուտներ	**1,706.6**	**2,099.6**	**2,410.7**	**2,634.7**	**2,897.6**	**3,258.2**	**3,614.1**
Հարկային եկամուտներ և տուրքեր	1,609.6	1,962.5	2,273.9	2,496.9	2,812.3	3,182.0	3,541.2
Պետական բյուջեի ծախսեր	**2,027.0**	**2,279.1**	**2,599.6**	**3,117.6**	**3,513.4**	**3,812.1**	**4,086.8**
Ընթացիկ ծախսեր	1,810.7	1,898.7	2,127.0	2,451.2	2,728.5	2,938.2	3,228.1
Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	216.3	380.4	472.6	666.4	784.9	873.9	858.6
Պետական բյուջեի պակասուրդ	**-320.5**	**-179.5**	**-188.9**	**-482.9**	**-615.8**	**-553.9**	**-472.7**
Կառավարության պարտք	**4209.8**	**3969.7**	**4571.9**	**5,173.0**	**6,017.5**	**6,774.8**	**7,421.6**
կշիռը ՀՆԱ-ում, %							
Պետական բյուջեի եկամուտներ	**24.4**	**24.7**	**25.4**	**25.7**	**25.9**	**26.5**	**26.8**
Հարկային եկամուտներ և տուրքեր	23.0	23.1	23.9	24.4	25.1	25.9	26.2
Պետական բյուջեի ծախսեր	**29.0**	**26.8**	**27.3**	**30.5**	**31.4**	**31.0**	**30.3**
Ընթացիկ ծախսեր	25.9	22.3	22.4	23.9	24.4	23.9	23.9
Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	3.1	4.5	5.0	6.5	7.0	7.1	6.4
Պետական բյուջեի պակասուրդ	**-4.6**	**-2.1**	**-2.0**	**-4.7**	**-5.5**	**-4.5**	**-3.5**
Կառավարության պարտք	**60.2**	**46.7**	**48.1**	**50.5**	**53.7**	**55.0**	**55.0**

2.2. ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՀՀ կառավարության հարկաբյուջետային քաղաքականության առաջնահերթությունները և նպատակները արտացոլված են ՀՀ կառավարության ծրագրում ու ըստ անհրաժեշտության առանձին կարգավորումներով սահմանված են նաև ՀՀ օրենսդրությամբ՝

Տնտեսական աճի մոդել: ՀՀ տնտեսական աճի և, ըստ այդմ, հնարավորությունների ընդլայնումը պայմանավորված է լինելու միջազգային մրցունակության աճով: Իսկ միջազգային մրցունակության աճն ապահովելու նպատակով ՀՀ կառավարությունը նպատակադրել է զարգացնել այնպիսի տնտեսություն, որը մի կողմից աշխարհին կառաջարկի տեխնոլոգիական

և նորարարական արտադրանք, իսկ մյուս կողմից իր մեծ թափով կառուցվող և արդիականացվող ենթակառուցվածքներով զգալիորեն կնպաստի տարածաշրջանի՝ առևտրային ու մարդկային հոսքեր սպասարկելու կարողությունների բարձրացմանը: Այս տեսանկյունից ՀՀ կառավարությունը գիտելիքն ու նորարարությունը հռչակել է որպես տնտեսական զարգացման հիմնական շարժիչ ուժ:

Հարկային քաղաքականություն: Հարկային քաղաքականությունը ուղղվում է տնտեսության ներդրումային գրավչության բարձրացմանն ու տնտեսական ակտիվության մակարդակի բարելավմանը՝ դրանով իսկ ստեղծելով կայուն նախադրյալներ՝ արտահանման և երկարաժամկետ տնտեսական աճի, հանրային բարիքի վերաբաշխման և հարկաբյուջետային կայունության ամրապնդման համար: Այս նպատակների իրականացման ուղղությամբ հարկային օրենսդրության բարելավման միջոցով կարևորվելու է ներդրողների համար արդար, ընկալելի և կանխատեսելի միջավայրի ձևավորումը: ՀՀ կառավարությունը հարկային քաղաքականության միջոցառումներով, հարկային վարչարարության արդյունավետության բարձրացման և ստվերային տնտեսության կրճատման ճանապարհով նախատեսում է միջնաժամկետ հորիզոնում ապահովել հարկեր/ՀՆԱ ցուցանիշի շարունակական աճ՝ 2026 թ. հարկեր/ՀՆԱ ցուցանիշը հասցնելով առնվազն 25 տոկոսի[17]: Ընդ որում, սույն Ծրագրում 2026թ.-ի համար նախանշված հարկեր/ՀՆԱ ցուցանիշը գերազանցում է ՀՀ կառավարության ծրագրով սահմանված 25% թիրախը՝ կազմելով 25.9%: :

Ծախսային քաղաքականություն: Ծախսային քաղաքականության արդյունավետության բարձրացման տեսանկյունից կարևորվում է հանրային ֆինանսների նպատակային, խնայողաբար և արդյունավետ օգտագործումը: Ծախսերի նպատակայնության բարձրացման առումով անցում է կատարվելու ռազմավարական պլանավորման, իսկ ծախսային ծրագրերի արդյունավետության և օգտավետության բարձրացման նպատակով ներդրվելու է բյուջետային ծրագրերի գնահատման կանոնավոր գործընթաց: Ծախսային քաղաքականությունը կրթության, առողջապահության և սոցիալական պաշտպանության լրացուցիչ նախաձեռնություններով և համակարգային բարեփոխումներով ուղղված է լինելու մարդկային կապիտալի առավել արդյունավետ զարգացմանը և իրացմանը, իսկ պետական ենթակառուցվածքներում (մասնավորապես՝ կրթական և նախակրթական հաստատություններ, ճանապարհներ, ջրամբարներ և այլն) ներդրումներ իրականացնելու միջոցով ֆիզիկական կապիտալի կուտակմանը: Ծախսային քաղաքականությունը միտված է լինելու նաև պաշտպանական համակարգի ամրապնդմանը՝ բարձրացնելով երկրի դիմադրողականությունը հնարավոր ռիսկերի հանդեպ: Արդյունքում բյուջեի ծախսերի կառուցվածքում միջնաժամկետում կավելանան մարդկային կապիտալին, ենթակառուցվածքներին, և պաշտպանությանն ուղղվող ծախսերի դերը, ինչը կխթանի տնտեսության ներուժը, արտադրողականությունը, դիմադրողականությունը, ներառական աճը և տարածքային հավասարաչափ զարգացումը՝ հիմքեր ստեղծելով որդեգրած տնտեսական զարգացման մոդելի կայացման համար:

[17] Նշված թիրախին հասնելուն ուղղված քաղաքականության սկզբունքներն ու միջոցառումները ձևակերպվել են ՀՀ վարչապետի՝ 2022 թ. օգոստոսի 12-ի ընդունված «2022-2025 թվականների հարկային եկամուտների կառավարման ծրագիրը հաստատելու մասին» որոշմամբ, որով, որպես նշված թիրախին հասնելու ուղղություններ են նախատեսվել հարկային վարչարարության կատարելագործումը և դրա արդյունքում՝ հարկերի վճարման համապատասխանության բարելավումը, հարկման բազաների ընդլայնումը, այդ թվում՝ որոշ արտոնություններ կրճատելու արդյունքում, հարկային որոշ դրույքաչափերի կամ գործունեության առանձին տեսակների մասով հարկային բեռի բարձրացումը, հարկերի կամ պարտադիր վճարների թվաքանակի վերանայումը: Հարկային վարչարարության սկզբունքներն ու միջոցառումները իրենց հերթին սահմանվում են ՀՀ ՊԵԿ զարգացման և վարչարարության բարելավման ռազմավարական ծրագրով, որը պարբերաբար թարմացվում է:

<u>Հարկաբյուջետային կանոններ</u>: ՀՀ հարկաբյուջետային կանոնների համակարգին համահունչ[18] միջնաժամկետում պետական բյուջեի ծախսերի աճը համահունչ կլինի եկամուտ գեներացնելու կարողություններին և պարտքի բեռը կպահպանվի ՀՀ տնտեսության համար ապահով մակարդակում, իսկ պարտքի երկարաժամկետ կայունությունը կերաշխավորվի կառավարության ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռված աճով, որը կխթանի տնտեսության ներուժը: Դրա ապահովման համար հարկաբյուջետային քաղաքականության հիմքում լինելու են հետևյալ սկզբունքները.

- **<u>Հարկաբյուջետային կայունության պահպանում պարտքի բեռի պահպանմամբ կառավարելի մակարդակում:</u>** Միջնաժամկետ հատվածում, հաշվի առնելով կառուցվածքային բարեփոխումների սահուն ընթացքը երաշխավորելու, ֆիզիկական ու մարդկային կապիտալի մեջ անհրաժեշտ ծավալի ներդրումներ իրականացնելու և անհետաձգելի այլ կարիքների համար ձևավորվող ֆինանսավորման պահանջի բավարարման անհրաժեշտությունը, բյուջեի պակասուրդի մակարդակը կբարձրանա միջնաժամկետի սկզբում և կնվազի մինչև պարտքը կայունացնող մակարդակի վերջում, ինչի արդյունքում կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը կաճի և կկայունանա 55%-ի մակարդակում: Պարտքի բեռի կայունացումը նման մակարդակում որոշակիորեն կպահպանի հարկաբյուջետային տարածքը՝ հնարավոր ցնցումները կլանելու համար, իսկ տնտեսական ներուժի խթանման արդյունքում երկարաժամկետում նվազող վարքագիծ կունենա:

- **<u>Տնտեսության ներուժի բարձրացում՝ ծախսերի կառուցվածքում էլ ավելի բարձրացնելով կապիտալ ծախսերի դերը:</u>** 2022թ.-ից հարկաբյուջետային քաղաքականությունը վերադարձել է պետական ֆինանսների «ոսկե կանոնի» ամբողջական պահպանմանը, ինչը կամրապնդվի նաև միջնաժամկետում: Այդ համատեքստում կապահովվի պետական կապիտալ ծախսերի դերի շարունակական բարձրացում՝ թույլ տալով խթանել երկարաժամկետ տնտեսական աճը և ՀՆԱ աճի հաշվին երկարաժամկետ հեռանկարում ապահովել պետական պարտքի կայունությունը:

- **<u>Տնտեսական պարբերաշրջանին համարժեք հարկաբյուջետային քաղաքականության իրականացում:</u>** Մակրոտնտեսական կայունությանը և կայուն տնտեսական աճի ապահովմանը նպաստելու նպատակով հարկաբյուջետային քաղաքականությունը զսպող դիրք է ունեցել տնտեսական վերելքի փուլում, և տնտեսական պարբերաշրջանի կայունացման հետ աստիճանաբար չեզոք դիրք կունենա միջնաժամկետ հատվածում:

- **<u>Հարկաբյուջետային «բարձիկների» ձևավորում:</u>** Տնտեսական պարբերաշրջանի վերելքի փուլում զսպող հարկաբյուջետային քաղաքականությունը հնարավորություն է տվել ապահովել էական «հարկաբյուջետային տարածք»՝ ինչպես ֆիզիկական ու մարդկային կապիտալում ներդնելու և կառուցվածքային բարեփոխումներին օժանդակելու, այնպես էլ հնարավոր ցնցումները կլանելու համար: Վերջինս, զուգակցվելով ներքին և միջազգային ֆինանսական շուկաներին մշտական հասանելիության երաշխավորմամբ, ձևավորում է կարևոր «հարկաբյուջետային բարձիկ» ռիսկերի հնարավոր առարկայացմանը դիմագրավելու համար: Միաժամանակ, կառավարությունը, գործող կարգավորումների համաձայն, իրացվելիության անհրաժեշտ մակարդակ երաշխավորելու համար գանձապետական կայունացման հաշվում կապահովի առնվազն ՀՆԱ 1%-ի չափով միջոցներ:

[18] Տե՛ս «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 8.2, 8.3 և 8.4 մասերը, «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերը, ինչպես նաև ՀՀ կառավարության՝ 2018 թ. օգոստոսի 23-ի N 942-Ն որոշումը:

2.3. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ

Վերջին երեք տարիների զարգացումներ

2020-2021 թվականներին կորոնավիրուսի համավարակի և 44-օրյա պատերազմի հետևանքներին հակազդելու համար հարկաբյուջետային կանոնների «բացառիկ դեպքի» կարգավորումների ներքո իրականացվել է հակապարբերաշրջանային խթանող քաղաքականություն՝ հակազդելով բացասական տնտեսական շոկերի ազդեցությանը և նպաստելով տնտեսության վերականգմանը: Տնտեսական ցնցումների հաղթահարումից հետո հարկաբյուջետային քաղաքականության առաջնահերթություն է դարձել բնականոն իրավիճակների համար նախատեսված հարկաբյուջետային կանոններին համապատասխանության վերականգնումն ու տնտեսական ցնցումների արդյունքում բարձրացած պակասուրդի և պարտքի մակարդակների կրճատումը՝ զուգահեռ հարկային քաղաքականության և վարչարարության բարեփոխումների միջոցով ընդլայնելով եկամտային կարողությունը: Արդյունքում 2022-2023 թվականներին հնարավոր է դարձել վերականգնել հարկաբյուջետային քաղաքականության բնականոն իրավիճակների տրամաբանությունը՝ կառավարության պարտքի բեռը նվազեցնելով պարտքի կայունության տեսակետից անվտանգ համարվող 40-50%-ի միջակայք: Միաժամանակ, կառավարությունը սկսել է ձևավորված հարկաբյուջետային տարածքն օգտագործել տնտեսական ներուժի բարձրացմանը, այդ թվում՝ կառուցվածքային բարեփոխումներին, ֆիզիկական և մարդկային կապիտալին ուղղվող ծախսերի դերի բարձրացման համար, այդպիսով ամրապնդելով նաև երկարաժամկետ հարկաբյուջետային կայունությունը:

Պետական բյուջեի եկամուտները: 2021-2023 թվականներին պետական բյուջեի եկամուտների կշիռը ՀՆԱ-ում պահպանվել է նույն մակարդակներում, սակայն անվանական արտահայտությամբ աճը կազմել է 826.6 մլրդ դրամ: Մինչդեռ հարկային եկամուտների կշիռը ՀՆԱ-ում աճել է 1%-ային կետով, իսկ անվանական արտահայտությամբ աճը կազմել է 836.7 մլրդ դրամ: Հարկային եկամուտների աճը պայմանավորվել է տնտեսական աճին զուգահեռ հարկման բազաների ընդլայնմամբ, հարկային վարչարարության բարելավմամբ և դրա հետևանքով հարկային ճեղքի փոքրացմամբ, ինչպես նաև տնտեսության կառուցվածքային փոփոխություններով ի օգուտ հարկունակ ոլորտների:

Պետական բյուջեի ծախսերը: 2021-2023 թթ. ՀՀ պետական բյուջեի ծախսերի կշիռը ՀՆԱ-ում նվազել է 3.8%-ային կետով, մինչդեռ ծախսերի ծավալն աճել է 653 մլրդ դրամով: Ընդ որում, ընթացիկ ծախսերի կշիռը ՀՆԱ-ում նվազել է 5.2%-ային կետով (բացարձակ ծավալի աճը՝ 406.6 մլրդ դրամ), մինչդեռ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների կշիռը ՀՆԱ-ում աճել է 1.3%-ային կետով (բացարձակ ծավալի աճ՝ 246.4 մլրդ դրամ): Նշված ժամանակահատվածում ՀՆԱ-ում ծախսերի կշռի նվազումը պայմանավորված է 2020թ.-ին հակապարբերաշրջանային հարկաբյուջետային քաղաքականության պայմաններում ծախսերի մակարդակի զգալի աճով, և հաջորդ տարիներին, հարկաբյուջետային կանոնների տրամաբանությանը համահունչ, իրականացված հարկաբյուջետային կոնսոլիդացիայով և ընթացիկ ծախսերի առավել զսպված վարքագծով: Միաժամանակ, քննարկվող ժամանակահատվածում տեսանելի է ծախսերի կառուցվածքի զգալի փոփոխությունը ի օգուտ կապիտալ ծախսերի, որոնց դեպքում, համահունչ ենթակառուցվածքային ներդրումների դերի

մեծացման նպատակադրմանը, գրանցվել են ինչպես ծրագրային մակարդակների բարձրացումներ, այնպես էլ կատարողականի բարելավումներ:

<u>Պետական բյուջեի պակասուրդը, պարտքը և հարկաբյուջետային ազդակը:</u> 2021-2023 թթ. պետական բյուջեի պակասուրդ/ՀՆԱ ցուցանիշը զգալիորեն կրճատվել է՝ 2020թ. 5.4% ցուցանիշի դիմաց 2023թ.-ին կազմելով 2% (բացարձակ ծավալով պակասուրդը նվազել է 145.1 մլրդ դրամով): Պակասուրդի մակարդակի նվազման պայմաններում հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը ամբողջական պահանջարկի վրա զսպող է եղել՝ ինչպես եկամուտների, այնպես էլ ծախսերի մասով:

Ընդ որում, եթե 2021թ.-ին զսպող հարկաբյուջետային քաղաքականության ուղղությունը պայմանավորված էր հարկաբյուջետային կոնսոլիդացիա իրականացնելու և բնականոն իրավիճակների համար նախատեսված հարկաբյուջետային կանոններին համապատասխանության աստիճանական վերականգման նպատակադրմամբ, 2022-2023 թվականներին, ներուժայինից բարձր տնտեսական աճի պայմաններում, զսպող քաղաքականությունը անհրաժեշտ է դարձել նաև տնտեսական պարբերաշրջանը կայունացնելու տրամաբանությամբ:

2021-2023 թթ. զսպող հարկաբյուջետային քաղաքականության ու բյուջեի պակասուրդի կրճատման, ՀՆԱ աճի բարձր տեմպի և փոխարժեքի արժևորման պայմաններում կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը 2020թ. 63.5% մակարդակից նվազել է 48.1%-ի 2023թ.-ին՝ ընդհանուր առմամբ 15.4%-ային կետով:

<u>2024թ. ընթացիկ զարգացումներ</u>

Հունվար-մայիս ամիսներին արձանագրվել է պետական բյուջեի և՛ եկամուտների և՛ ծախսերի թերակատարում, ինչի արդյունքում ձևավորվել է պետական բյուջեի զրոյական հաշվեկշիռ՝ պլանավորված պակասուրդի փոխարեն:

<u>Պետական բյուջեի եկամուտները:</u> 2024թ. հինգ ամիսներին ՀՀ պետական բյուջեի եկամուտներում արձանագրվել է աճի տեմպի դանդաղում՝ պայմանավորված հարկման բազաների ավելի թույլ աճով:

2024թ. հունվար-մայիս ամիսների արդյունքներով ՀՀ պետական բյուջեի ընդհանուր եկամուտները կազմել են 1,029.0 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 5.1%-ով, իսկ հարկերը և տուրքերը կազմել են 984.1 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 5.1%-ով: Նկատելի է, որ նախորդ տարվա համեմատությամբ հարկային եկամուտների աճի տեմպը դանդաղել է, ինչը պայմանավորված է հարկման բազաների՝ մասնավորապես հարկունակ սպառման, ներմուծման և կազմակերպությունների շահույթների աճի տեմպերի որոշակի դանդաղմամբ: Ընդ որում, դանդաղմանը նպաստել է նաև ընթացիկ ամիսներում ձևավորված գնանկումային միջավայրը:

<u>Պետական բյուջեի ծախսերը:</u> 2024 թ. հինգ ամիսներին պետական բյուջեի ծախսերը աճել են բարձր տեմպերով, սակայն ծրագրվածի համեմատ արձանագրվել են որոշակի թերակատարումներ: Պետական բյուջեի ծախսերը կազմել են 1,029.1 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 17.2%-ով: Նույն ժամանակահատվածում ընթացիկ ծախսերը կազմել են 912.0 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 15.8%-ով:

Գծապատկեր 2.2. Պետական բյուջեի հարկային եկամուտները և դրանց աճի տեմպը 2023-2024 թթ., կուտակային



Գծապատկեր 2.3. Պետական բյուջեի ծախսերի աճը և դրան նպաստումները 2023-2024 թթ. ըստ ամիսների



Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ

Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները կազմել են 117.1 մլրդ դրամ, որում ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը (կապիտալ ծախսեր) կազմել են 123.8 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճելով 33.5%-ով:

<u>Պետական բյուջեի պակասուրդը (հավելուրդը):</u> Վերոնշյալ զարգացումների արդյունքում պետական բյուջեի ծախսերն ու եկամուտները գրեթե հաշվեկշռված են եղել: 2024 թ. առաջին հինգ ամիսներին ձևավորվել է պետական բյուջեի 0.1 մլրդ դրամ պակասուրդ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 100.7 մլրդ դրամ հավելուրդի դիմաց:

Կարճաժամկետ և միջնաժամկետ կանխատեսումներ

2024 թվականին հարկաբյուջետային քաղաքականությունը թիրախավորում է էականորեն մեծացնել կապիտալ ծախսերի կշիռը ՀՆԱ-ում՝ հասցնելով 6.5%-ի, բարձրացնել ծախսերի արդյունավետությունը և պահպանել պետական պարտքի կայունությունը: 2024թ. հարկաբյուջետային քաղաքականությունը իրականացվում է բնականոն իրավիճակների համար սահմանված ծախսային կանոնների ներքո, ընդ որում՝ հաշվի առնելով նախորդ տարիներին 50%-ից ցածր մակարդակում ձևավորված կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը, հարկաբյուջետային կանոնները վերաբերում են միայն «ոսկե կանոնների» պահպանմանը: Միաժամանակ, կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը կպահպանվի 50%-ի շրջանակներում:

2024թ.-ին հարկային վարչարարության բարելավման և օրենսդրության փոփոխությունների արդյունքում եկամուտները ՀՆԱ-ի նկատմամբ կբարելավվեն շուրջ 0.5 տոկոսային կետով՝ կազմելով 24.4% կամ 2,496.9 մլրդ դրամ: 2024թ.-ի պետական բյուջեի ընդհանուր ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ կավելանա շուրջ 3.1 տոկոսային կետով՝ կազմելով 30.5%: Ընդհանուր ծախսերում ընթացիկ ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ կավելանան 1.6 տոկոսային կետով, իսկ

կապիտալ ծախսերը կավելանան 1.5 տոկոսային կետով: Ծախսերի ծավալը նախորդ տարվա համեմատ կաճի շուրջ 19.9%-ով՝ կազմելով 3,117.6 մլրդ դրամ: 2024 թվականին, ընթացիկ և կապիտալ ծախսերի ավելացման հաշվին պետական բյուջեի պակասուրդը կավելանա՝ կազմելով ՀՆԱ-ի 4.7%-ը:

Արդյունքում, պետական բյուջեի պակասուրդը կկազմի 482.9 մլրդ դրամ՝ 2023թ. նկատմամբ ավելանալով շուրջ 294.0 մլրդ դրամով, կամ ՀՆԱ-ի շուրջ 2.7 տոկոսային կետով: Այնուամենայնիվ, պետք է հաշվի առնել, որ 2024թ. ծախսերում ներառված են նաև Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված բնակչության աջակցության միջոցառումների համար նախատեսված ծախսերը (որոնք հարկաբյուջետային տեսանկյունից համադրելի են նախկինում պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներում արտացոլվող Լեռնային Ղարաբաղին ուղղվող միջպետական վարկին), հետևաբար պետական բյուջեի ծախսերի և պակասուրդի աճն իրականում ավելի չափավոր է:

Վերոնշյալ սպասումների պայմաններում հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը ինչպես 2024թ.-ին, այնպես էլ միջնաժամկետ հատվածում մոտ կլինի չեզոքի՝ հաշվի առնելով տնտեսական աճի կայունացումը ներուժային մակարդակի շուրջ:

Միջնաժամկետում հարկային վարչարարության բարելավման, ստվերի դեմ պայքարի, ինչպես նաև հարկային քաղաքականության միջոցառումների արդյունքում ակնկալվում է ապահովել հարկեր/ՀՆԱ հարաբերակցության շարունակական բարելավում տարեկան միջինում 0.6%-ային կետով՝ 2027թ.-ին հասցնելով 26.2%-ի: Ակնկալվում է, որ հարկային եկամուտների բարելավումը կապահովվի բոլոր հիմնական հարկատեսակների գծով՝ բխելով ինչպես հարկման բազաների, այնպես էլ օրենսդրության և վարչարարության միջոցառումների ազդեցությունից: Հարկային վարչարարության մասնակցությունը յուրաքանչյուր տարվա հարկեր/ՀՆԱ բարելավմանը կկազմի 0.5%-ային կետ, իսկ հարկային քաղաքականության բարեփոխումները սպասվում է, որ 2024-2026 թվականներին կունենա միջինում 0.25%-ային կետ դրական ազդեցություն:

Աղյուսակ 2.2. Հարկային եկամուտների կանխատեսումներն ըստ առանձին հարկատեսակների[19]

	Մլրդ դրամ					% ՀՆԱ-ում				
	2023	**2024**	**2025**	**2026**	**2027**	**2023**	**2024**	**2025**	**2026**	**2027**
Ընդամենը հարկեր և տուրքեր	2273.9	2496.9	2812.3	3182.0	3541.2	23.9	24.4	25.1	25.9	26.2
Ավելացված արժեքի հարկ	767.2	849.8	950.3	1059.2	1177.4	8.1	8.3	8.5	8.6	8.7
Եկամտային հարկ	606.5	653.2	748.2	843.7	946.7	6.4	6.4	6.7	6.9	7.0
Սոցիալական վճարումներ	90.3	101.5	114.0	128.2	143.6	0.9	1.0	1.0	1.0	1.1
Շահութահարկ	321.5	335.5	372.5	411.7	454.4	3.4	3.3	3.3	3.3	3.4
Ակցիզային հարկ	149.4	171.4	194.2	222.1	245.9	1.6	1.7	1.7	1.8	1.8
Մաքսատուրք	75.3	80.1	85.8	91.6	97.0	0.8	0.8	0.8	0.7	0.7
Շրջանառության հարկ	52.2	56.3	75.8	107.2	129.0	0.5	0.5	0.7	0.9	1.0
Այլ հարկեր	211.5	249.1	271.6	318.3	347.1	2.2	2.4	2.4	2.6	2.6

[19]Առանձին հարկատեսակների գծով ներկայացված են ուղենշային կանխատեսումները (հիմնված մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումների վրա), որոնք պլանային ցուցանիշներ չեն հանդիսանում:

Միջնաժամկետ հատվածում ընթացիկ ծախսերը կայունանում են իրենց վերջին տարիների միջին մակարդակների մոտ՝ պահպանվելով հարկաբյուջետային կանոնի սահմաններում, իսկ կապիտալ ծախսերը՝ պատմական մակարդակներից զգալիորեն բարձր մակարդակում՝ տնտեսական և անվտանգային ենթակառուցվածքների ամրապնդման համար: ՄԺԾԾ հարկաբյուջետային շրջանակը կառուցվել է պետական բյուջեի կապիտալ ծախսերի համար «առաջ բերված» հնարավորություններ ձևավորելու տրամաբանությամբ, որի ազդեցությունն իր վրա կրում է պետական բյուջեի պակասուրդը, որը աճում է 5.5%-ի 2025թ.-ին, այնուհետև նվազելով մինչև պարտքի բեռը կայուն պահող՝ 3.5% մակարդակի: Արդյունքում կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը աճում է, ապա միջնաժամկետի վերջում կայունանում 55% մակարդակում: Միջնաժամկետ հատվածում պարտքի բեռի աճին նպաստող հիմնական գործոնները պարտքի իրական տոկոսադրույքի աճը և առաջնային պակասուրդն են, իսկ տնտեսական աճը պարտքի նվազեցման ուղղությամբ է ներգործում:

Գծապատկեր 2.2. Պետական բյուջեի եկամուտները, ծախսերը և հաշվեկշիռը (մլրդ դրամով) և պետական բյուջեի պակասուրդի մակարդակները (կշիռը ՀՆԱ-ում, %)





Միջնաժամկետ հատվածում ևս հարկաբյուջետային քաղաքականությունը կունենա հիմնականում չեզոքին մոտ ազդեցություն ամբողջական պահանջարկի վրա՝ եկամուտների զսպող, և ծախսերի խթանող ազդեցություններով, որն աստիճանաբար զրոյանում է միջնաժամկետի վերջում արտացոլելով պակասուրդի աստիճանական ճշգրտման ազդեցությունը:

Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ

Գծապատկեր 2.3. Հարկաբյուջետային ազդակը[20]



Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ գնահատականներ

Միջնաժամկետ հարկաբյուջետային շրջանակն ամրապնդում է «ոսկե կանոնների» տրամաբանությունը: Մասնավորապես, ընդհանուր ծախսերում կապիտալ ծախսերի մասնաբաժնի մեծացման արդյունքում կապիտալ ծախսերի ծավալը միջնաժամկետ ժամանակահատվածում զգալիորեն կգերազանցի պետական բյուջեի պակասուրդի մեծությանը, իսկ հարկեր/ՀՆԱ հարաբերակցության բարելավման և ընթացիկ ծախսերի աճի պայմաններում կանխատեսվող հորիզոնի վերջում հարկային եկամուտներ/ՀՆԱ-ն կգերազանցի ընթացիկ ծախսերի մակարդակը շուրջ 2.3 տոկոսային կետով:

Գծապատկեր 2.4. Ոսկե կանոններից շեղումը 2021թ. և վերադարձը դրանց պահպանմանը միջնաժամկետում



Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ

[20] Հարկաբյուջետային ազդակի հաշվարկներում օգտագործված եկամուտների և ծախսերի ցուցանիշներում կատարվել են անհրաժեշտ ճշգրտումներ՝ արտացոլելու կառավարության կողմից իրականացված այն բոլոր գործառնությունները, որոնք չեն ներառվել ծախսերում, սակայն կարող են ազդեցություն ունեցած լինել ամբողջական պահանջարկի վրա, կամ հակառակը:

Գծապատկեր 2.5. ՀՀ կառավարության պարտքի դինամիկան և այն պայմանավորող գործոնները[21]



Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ

2.4. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐ

Հարկաբյուջետային կանխատեսումները հիմնված են մի շարք ենթադրությունների և հիմնական դատողությունների վրա, որոնց համար օգտագործվել է տվյալ պահի դրությամբ առկա և հասանելի ամբողջ տեղեկատվությունը: Ինչպես ցանկացած կանխատեսում, հարկաբյուջետային կանխատեսումները նույնպես պարունակում են ռիսկեր կապված նրա հետ, որ փաստացի իրադարձությունները կարող են տարբերվել սպասումներից: 2025-2027 թթ. ՄԺԾԾ հիմնական մակրոտնտեսական հարկաբյուջետային ռիսկերը հետևյալն են.

- **Ներքին կամ արտաքին ցնցումների ներքո մակրոտնտեսական անբարենպաստ զարգացումների ռիսկ:** «1.5. Մակրոտնտեսական կանխատեսումների ռիսկերը» բաժնում քննարկված՝ արտաքին կամ ներքին միջավայրից բխող ռիսկերը, ինչպես օրինակ ռուս-ուկրաինական պատերազմի արդյունքում առաջացած դրական գործոնների չեզոքացումը և մարդկանց ու կապիտալի գրանցված հոսքերի հետշրջումը, տարածաշրջանային և աշխարհաքաղաքական լարվածությունների սրման պայմաններում ներմուծվող ռազմավարական ապրանքների գների հնարավոր բարձրացումը, ՀՀ ապրանքների արտահանման մատակարարումների լոգիստիկ խնդիրների խորացումը բացասաբար կանդրադառնան ֆինանսավորման պահանջի վրա՝ մի կողմից հանգեցնելով սպասվածից փոքր հարկման բազաների ձևավորման, մյուս կողմից՝ ծախսային ճնշումների մեծացման:
- **Հարկեր/ՀՆԱ ցուցանիշի՝ հարկային վարչարարության ազդեցությամբ սպասվողից ավելի դանդաղ բարելավման ռիսկ:** Միջնաժամկետ հատվածի համար պլանավորված՝ միջինում 0.6%-ային կետով հարկեր/ՀՆԱ բարելավումներում հարկային վարչարարության մասնակցությունը 0.5%-ային կետ է, իսկ տարբերությունը ձևավորվում է հարկային

[21] ՀՀ կառավարության պարտքի բեռի փոփոխության տրոհումը ըստ գործոնների հաշվարկվել է բաց տնտեսությունում «պարտքի շարժման» բանաձևի օգնությամբ, որտեղ պարտքի փոփոխությունը ֆունկցիա է տնտեսական աճից, բյուջեի առաջնային հաշվեկշռից, փոխարժեքից, իրական տոկոսադրույքից և պարտք առաջացնող այլ հոսքերից (ՀՀ համար՝ զուտ վարկավորում պետական բյուջեից): Հաշվարկման ընթացքում այս գործոններով չբացատրված պարտքի փոփոխության չափը արտացոլվում է որպես «մնացորդ», և, կարող է բնութագրել քրոս (արժույթների միմյանց նկատմամբ) փոխարժեքների փոփոխությամբ պայմանավորված վերագնահատման ազդեցությունները:

օրենսդրության բարեփոխումների, տնտեսության կառուցվածքի փոփոխության և տնտեսական պարբերաշրջանի ազդեցության ներքո: Ընդ որում, հարկային վարչարարության արդյունքում հարկեր/ՀՆԱ բարելավումները պետք է տեղի ունենան հարկային վարչարարության առկա ճեղքի նվազեցման հաշվին, որի վրա հարկային վարչարարության միջոցառումների ազդեցությունը ոչ գծային է: Հարկային վարչարարության ազդեցությամբ հարկեր/ՀՆԱ ցուցանիշի բարելավման ռիսկը ներառվել է հարկային «2025-2027 թվականների ՄԺԾԾ հարկային եկամուտների վրա մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսվածից շեղման ռիսկերի ազդեցության քանակական գնահատումը» բաժնում քանակական տեսքի բերված հարկաբյուջետային ռիսկերի շրջանակում:

- **Միջազգային ֆինանսական շուկաների անկայունության և ֆինանսավորման պայմանների վատթարացման ռիսկ:** Զարգացած երկրներում տոկոսադրույքների սպասվող նվազեցման փոխարեն դրանց բարձր մակարդակի պահպանումը կամ հետագա աճը, ցածր եկամտային և զարգացող երկրներում պարտքային հիմնախնդիրների սրումը, համաշխարհային ֆինանսական շուկայում այլ ռիսկերի առարկայացումը կարող է վատթարացնել միջազգային ֆինանսական շուկաներից փոխառությունների պայմանները ՀՀ կառավարության համար և դժվարացնել բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը: Պարտքի կայունության և պարտքի կառավարման ռազմավարության իրականացման համար նման ռիսկերի շրջանակն արտացոլված է համապատասխան բաժիններում:
- **Լրացուցիչ ֆինանսավորման պահանջ առաջացնող այլ ներքին ռիսկեր:** Նման ռիսկերի շարքում են Լոռու և Տավուշի մարզերում տեղի ունեցած ջրհեղեղի հետևանքների հաղթահարման համար ֆինանսավորման կարիքը, Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց՝ ՀՀ տնտեսության ինտեգրման դանդաղումը և աջակցության ծրագրերի երկարաձգումը, տարածաշրջանային անվտանգային միջավայրի վատթարացման պայմաններում անվտանգությանն ու պաշտպանությանն ուղղվող միջոցների ծավալի աճի լրացուցիչ կարիքի առաջացումը, ՀՀ դրամի արժևորման արդյունքում արտահանելի հատվածի համար տնտեսական աջակցության լրացուցիչ ծրագրերի իրականացումը և այլ հնարավոր ծախսային ճնշումները:
- **Ծախսերի թերակատարում և ավելի թույլ խթանող ազդակի ձևավորում**: 2025-2027թթ. ՄԺԾԾ հարկաբյուջետային սցենարում նախատեսվել է կապիտալ ծախսերի զգալի աճ՝ 2026 թվականին հասցնելով դրանց մակարդակը ՀՆԱ-ի 7.1%-ի: Սակայն հաշվի առնելով նախորդ տարիների փաստացի կատարողականները (չնայած այն հանգամանքին, որ առկա է եղել կատարողականների բարելավման միտում), առկա է ծրագրավորված ցուցանիշների թերակատարման ռիսկ, ինչը կարող է բացասական ազդեցություն ունենալ ինչպես ամբողջական պահանջարկի և ընթացիկ տնտեսական ցուցանիշների վրա, այնպես էլ ունենալ երկարաժամկետ ազդեցություններ տնտեսության ներուժի վրա:

Հարկաբյուջետային շրջանակի հնարավոր փոփոխությունները մակրոտնտեսական կանխատեսումների շեղումների դեպքում և սթրես թեստերի ներքո[22].

- **Հարկային եկամուտներ:** Միջնաժամկետ հորիզոնում ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների վրա գնահատված է մակրոտնտեսական ցուցանիշների՝ իրական ՀՆԱ-ի աճի, գնաճի, փոխարժեքի տատանողականության և ներմուծման ռիսկերի շեղման ամփոփ

[22] Այս հատվածում նկարագրված ռիսկերի առավել մանրամասն վերլուծությունը ներկայացված է այս փաստաթղթի ՄԱՍ IV-ի «Պետական բյուջեի վրա մակրոտնտեսական կանխատեսված ցուցանիշներից շեղման ռիսկերի ազդեցության քանակական գնահատում» և «ՀՀ կառավարության պարտքի կայունության վերլուծություն» բաժիններում:

գնահատականը, ինչպես նաև հարկային եկամուտների վարչարարության բարելավման ռիսկեր: Հարկային եկամուտների վրա ազդող վերոնշյալ ռիսկերի միաժամանակյա ի հայտ գալու պարագայում հարկային եկամուտների ծրագրված մակարդակից շեղումը կկազմի շուրջ 115.8 մլրդ ՀՀ դրամ 2025 թ., 160.0 մլրդ ՀՀ դրամ 2026 թ. և 182.4 մլրդ ՀՀ դրամ 2027 թ.:

- **Պետական բյուջեի ծախսեր:** Կանխատեսումներում մեծ ուշադրություն է դարձվում նաև պետական բյուջեի ծախսերի պլանավորված մակարդակների ապահովումը խաթարող ռիսկերին, որոնք կարող են հանգեցնել լրացուցիչ ֆինանսավորման պահանջի առաջացման: ՀՀ պետական բյուջեի ծախսերի վրա գնահատված է մակրոտնտեսական ցուցանիշների՝ իրական ՀՆԱ-ի աճի, գնաճի, փոխարժեքի տատանողականության և ներմուծման, կանխատեսումներից շեղման, ինչպես նաև՝ հարկային քաղաքականության և վարչարարության պլանավորված ուղեգծից ավելի դանդաղ իրականացման ռիսկերի ամփոփ գնահատականը: Նշված ռիսկերի միաժամանակյա ի հայտ գալու պարագայում 2025-2027 թթ. լրացուցիչ ֆինանսավորման պահանջը կկազմի շուրջ 124.5–201 մլրդ ՀՀ դրամ կամ ՀՆԱ-ի 1.1-1.5%-ը:
- **ՀՀ կառավարության պարտք:** Միջնաժամկետ հատվածի համար նախանշած՝ պարտքի կայուն և կառավարելի մակարդակի պահպանման հարկաբյուջետային սցենարի վրա հիմնված պարտքի ռիսկերի գնահատումը ցույց է տվել, որ ինչպես ՀՀ կառավարության պարտքի, այնպես էլ պարտքի սպասարկման ռիսկերը գնահատվում են ցածր, թեպետ նաև տեսանելի է, որ նոր հնարավոր շոկերը (հատկապես՝ մի քանի շոկերի համադրությունը) կարող են վտանգել պարտքի կայունությունը: Բացի այդ, պարտքի կառուցվածքը, չնայած վերջին տարիներին դիտված զգալի բարելավմանը, շարունակում է պարտքի պորտֆելի համար միջին կամ բարձր խոցելիություն ազդանշել, իսկ պարտք ձևավորող գործոնների պատմական տատանողականությունը՝ պատմությունից պրոյեկտվող բարձր անորոշություն ապագայի համար: Միաժամանակ, մակրոտնտեսական ենթադրություններից շեղումների ռիսկերը գնահատելու համար իրականացվել է սցենարային վերլուծություն, որը ցույց է տվել, որ սույն փաստաթղթում քննարկվող մակրոտնտեսական և հարկաբյուջետային ռիսկերի նյութականացման որոշակի սցենարների դեպքում պարտքի հետագիծը (ի վերջո, նաև մակարդակը) անկայուն կդառնա:

Ամփոփելով հարկաբյուջետային ռիսկերի նկարագրությունը կարող ենք նշել, որ 2025-2027 թթ. ՄԺԾԾ հարկաբյուջետային շրջանակի հիմնական ռիսկերը վերաբերում են մակրոտնտեսական անբարենպաստ զարգացումներին, հարկային եկամուտներ/ՀՆԱ ցուցանիշի թիրախավորված բարելավումների ոչ ամբողջական ապահովմանը, միջազգային ֆինանսական շուկաների իրավիճակի վատթարացմանը և ՀՀ կառավարության փոխառության հնարավորությունների սահմանափակմանը, լրացուցիչ ծախսային կարիքների առաջացմանը, ծախսերի թերակատարմանը և ավելի թույլ խթանող ազդակի ձևավորմանը: Սցենարային վերլուծության միջոցով նշված ռիսկերին տրվել է քանակական արտահայտություն, և դրանց կառավարման համար ձեռնարկվել են համարժեք միջոցառումներ՝ գանձապետական կայունացման հաշվում առնվազն ՀՆԱ 1% չափով «իրացվելիության բարձիկի» ստեղծման ճանապարհով: Միաժամանակ, տարբեր ռիսկերի առարկայացման պարագայում կառավարությունը կկիրառի հասանելի գործիքները եկամտային ներուժի բարձրացման նպատակով (այդ թվում՝ հարկային վարչարարության լրացուցիչ գործիքների կիրառում), կճշգրտվեն ծախսային առաջնահերթություններն ու շրջանակը, իսկ հարկաբյուջետային կայունության ռիսկերի առարկայացման դեպքում՝ կվերանայվի հարկաբյուջետային շրջանակը: Բացի այդ, առաջացող ռիսկերին դիմագրավելու տեսակետից յուրաքանչյուր տարվա պետական բյուջեում կնախատեսվեն լրացուցիչ «բարձիկներ» պահուստային ֆոնդերում:

2.5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԻՆ

ՀՀ հարկաբյուջետային կանոնների ներկա համակարգը գործարկվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2017 թ. դեկտեմբերի 20-ին «ՀՀ բյուջետային համակարգի մասին» և «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարող օրենքների, ինչպես նաև են ՀՀ Կառավարության՝ 2018 թ. օգոստոսի 23-ի N 942-Ն որոշման ընդունմամբ: Կանոնների համակարգը ներառում է ծախսային կանոններ, որոնք ուժի մեջ են մտնում պարտքի սահմանված շեմերը գերազանցելիս: Մասնավորապես.

- Երբ ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը գերազանցում է 40%-ը, պետական բյուջեի կապիտալ ծախսերը չպետք է փոքր լինեն բյուջեի պակասուրդից:
- ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ 50-60% միջակայքում ընթացիկ առաջնային ծախսերի աճի տեմպը սահմանափակվում է նախորդ 7 տարիների ՀՆԱ-ների միջին աճով, ինչպես նաև հաջորդ տարում կազմվող պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրում ՀՀ կառավարությունը ներկայացնում է միջոցառումների ծրագիր՝ համախառն ներքին արդյունքի նկատմամբ ՀՀ կառավարության պարտքի մակարդակի կանխատեսվող հետագիծը 5 տարիների ընթացքում 50 տոկոսից նվազեցնելու համար:
- Երբ ՀՀ կառավարության պարտքը գերազանցում է ՀՆԱ 60%-ը, ընթացիկ առաջնային ծախսերի աճի տեմպը սահմանափակվում է նախորդ 7 տարիների ՀՆԱ-ների միջին աճից 0.5 տոկոսային կետով նվազեցված ցուցանիշով, ընթացիկ ծախսերը սահմանափակվում են հարկերի և տուրքերի մեծությամբ, ինչպես նաև ՀՀ կառավարությունը Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային ու տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովների քննարկմանը ներկայացնում է միջոցառումների ծրագիր՝ ՀՆԱ նկատմամբ ՀՀ կառավարության պարտքի մակարդակի կանխատեսվող հետագիծը 5 տարիների ընթացքում 60 տոկոսից նվազեցնելու համար:
- Ներկայացված սահմանափակումները չեն գործում ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված բացառիկ դեպքերում՝ ելնելով խոշորածավալ տարերային և տեխնածին աղետների, պատերազմական գործողությունների, տնտեսությունը խաղաղ ժամանակաշրջանից պատերազմական ժամանակաշրջանի փոխադրման, տնտեսական ցնցման հանգամանքներով պայմանավորված բացասական տնտեսական զարգացումների պարագայում:

2021-2023 թվականներին հարկաբյուջետային քաղաքականությունը աստիճանաբար վերադարձել է բնականոն իրավիճակների համար գործող կանոններին համապատասխանության տիրույթ՝ COVID-19 համավարակի և 44-օրյա պատերազմի տնտեսական և հարկաբյուջետային հետևանքների ազդեցությամբ «բացառիկ դեպքի» կարգավորումների ակտիվացումից հետո: Ընդ որում, 2021թ.-ին, այդ հետևանքների ոչ ամբողջական հաղթահարման պայմաններում «բացառիկ դեպքի» կարգավորումները պահպանվել են, սակայն կառավարությունը կրճատել է կանոններից շեղման չափերը: 2022 թ.-ին արդեն կապիտալ ծախսերի կանոնին համապատասխանությունը վերականգնվել է, և պետական բյուջեի կապիտալ ծախսերը գերազանցել են պետական բյուջեի պակասուրդը շուրջ 201 մլրդ դրամով, իսկ ընթացիկ առաջնային ծախսերի շեղման չափը կանոնից կրճատվել է 30

մլրդ դրամի: 2023 թվականին պետական բյուջեի կապիտալ ծախսերը գերազանցել են պետական բյուջեի պակասուրդը շուրջ 283.7 մլրդ դրամով, իսկ ընթացիկ առաջնային ծախսերի շեղման չափը կանոնից կազմել է 42.6 մլրդ դրամ: Կարևոր է նշել, որ ընթացիկ ծախսերի մասով շեղումները գրանցվել են տարվա ընթացքում պետական բյուջեի եկամուտների պլանի բարձրացման պայմաններում՝ համապատասխան տարիների պետական բյուջեի մասին օրենքի դրույթներին (ինչը թույլ է տալիս ավելացնել ծախսերը հարկային եկամուտների ավելացման պարագայում), բացի այդ՝ պլանավորված մակարդակից ծախսերի ավելացումները հիմնականում միանգամյա ծախսերի բնույթ են կրել և չեն ենթադրել երկարաժամկետ ծախսային պարտավորությունների բեռի ավելացում (օրինակ՝ ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց սոցիալական կարիքների ուղղությամբ կատարված ծախսերը), ինչի արդյունքում հաշվարկված շեղումը գնահատվում է որպես երկարաժամկետ ճնշումներ չառաջացնող և հարկաբյուջետային կայունության տեսակետից վտանգներ չի ստեղծում:

Միաժամանակ, կառավարությունը վերականգնել է համապատասխանությունը նաև պարտքի կանոնին, հաշվի առնելով, որ 2022թ.-ի վերջի դրությամբ ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է 46.7%, իսկ 2023թ.-ի վերջին՝ 48.1%՝ ցածր լինելով 50%-ի շեմից՝ այդպիսով ոչ միայն ապահովելով ՀՀ կառավարության պարտքի նվազեցման 2022-2026թթ. վերանայված ծրագրի թիրախը, այլ նաև նվազեցնելով պարտքը դեպի ապահով մակարդակներ:

2024թ. և միջնաժամկետ հատվածի համար 2022-2023թթ. կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշի համար գրանցված 50%-ից ցածր ցուցանիշները ձևավորել են հարկաբյուջետային տարածք ընթացիկ ծախսերի համար, որը, պարտքի բեռի կանխատեսվող աճի հետ արդեն կանոնով է սահմանափակվում 2026թ-ից: Կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշի նվազումը հարկաբյուջետային քաղաքականությունը տեղափոխել է կանոններով սահմանափակման առավել մեղմ ռեժիմների՝ թույլ տալով վարել առավել ճկուն հարկաբյուջետային քաղաքականություն ընթացիկ ծախսերի մասով, սակայն պահպանելով «ոսկե կանոններին» համապատասխանությունը: Այնուամենայնիվ, ընթացիկ ծախսերի հետագա աճը միջնաժամկետի վերջում սահմանափակվում է հարկաբյուջետային կանոնով՝ հաշվի առնելով պարտքի բեռի կանխատեսվող աճը և զսպելով ապագայում եկամուտ գեներացնելու կարողություններին պարտավորությունների (ընթացիկ ծախսերի գծով ստանձնվող օրենսդրական պարտավորությունների և պարտքային պարտավորությունների ձևով) առաջանցիկ ավելացումը: Արդյունքում ընթացիկ ծախսերի համար ևս միջնաժամկետի սկզբում ձևավորվում են «առաջ բերված» լրացուցիչ հնարավորություններ, որոնք նախ և առաջ կծառայեն անհետաձգելի ծախսային կարիքների ֆինանսավորմանը:

Աղյուսակ 2.2. Փաստացի և ծրագրավորված հարկաբյուջետային քաղաքականության համապատասխանությունը հարկաբյուջետային կանոններին

Կանոնի ցուցանիշ	Ուղենիշային ցուցանիշ	2023		2024		2025		2026		2027	
		Սահմ.	Փաստ.	Սահմ.	Դլան	Սահմ.	Դլան	Սահմ.	Դլան	Սահմ.	Դլան
Պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր	>/= պետական բյուջեի պակասուրդ, մլրդ դրամ	274.0	472.6	482.9	666.4	615.8	784.9	553.9	873.9	472.7	858.6
Պետական բյուջեի ընթացիկ առաջնային ծախսերի աճի տեմպ	</= նախորդ 7 տարիների անվանական ՀՆԱ աճի միջին տեմպ, %	5.1	5.9	-	13.9	-	14.1	9.4	8.7	9.7	9.4
Պետական բյուջեի ընթացիկ ծախսեր	</= հարկային եկամուտների և տուրքերի ծավալ, մլրդ դրամ	2235.0	2127.0	-	2451.2	-	2728.5	-	2938.2	-	3228.1
Կառավարության պարտք/ՀՆԱ, %		48.1		50.5		53.7		55.0		55.0	

«-»-ը նշանակում է, որ պետական պարտքի առկա չափի դեպքում կիրառելի չէ

2.6. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ[23]

Աղյուսակ 2.3. Պետական բյուջեի եկամուտների կանխատեսումների համեմատական աղյուսակը, մլրդ դրամ

Ընդունման տարին	Ծրագիր	2023	2024	2025	2026	2027
-	Փաստացի	2,410.7				
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*24.11%*				
2022	ՄԺԾԾ 2023-2025	2,305.7	2,609.6	2,940.6		
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*25.47%*	*25.81%*	*26.15%*		
	2023թ. Պետական բյուջե	2,353.9				
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*25.26%*				
2023	ՄԺԾԾ 2024-2026	2,385.7	2,671.1	2,986.4	3,367.4	
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*25.02%*	*25.18%*	*25.30%*	*25.63%*	
	2024թ. Պետական բյուջե	2,408.1	2,663.1			
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*25.48%*	*25.30%*			
2024	ՄԺԾԾ 2025-2027		2,634.7	2,897.6	3,258.2	3,614.1
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ		*25.74%*	*25.88%*	*26.47%*	*26.76%*

Աղյուսակ 2.4. Պետական բյուջեի հարկային եկամուտների կանխատեսումների համեմատական աղյուսակը, մլրդ դրամ

Ընդունման տարին	Ծրագիր	2023	2024	2025	2026	2027
-	Փաստացի	2,273.9				
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*23.92%*				
2022	ՄԺԾԾ 2023-2025	2,228.3	2,539.0	2,874.4		
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*24.57%*	*25.11%*	*25.55%*		
	2023թ. Պետական բյուջե	2,255.6				
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*24.21%*				
2023	ՄԺԾԾ 2024-2026	2,287.4	2,573.1	2,896.9	3,281.2	
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*23.99%*	*24.26%*	*24.54%*	*24.98%*	
	2024թ. Պետական բյուջե	2,277.8	2,553.1			
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*24.10%*	*24.3%*			

[23] Պետական բյուջեի եկամուտների և պետական բյուջեի ծախսերի կազմում նախորդ տարիների կանխատեսումներում համադրելիության նպատակով ներառված է հիպոթեկային վարկի տոկոսագումարների դիմաց եկամտային հարկի վերադարձը՝ ինչպես կանխատեսվող, այնպես էլ՝ համեմատվող ժամանակահատվածների ցուցանիշների համար: Միաժամանակ, 2024-2026թթ. ՄԺԾԾ և 2024թ. պետական բյուջեի ցուցանիշները ճշգրտվել են պահուստային ֆոնդի չափով, բացի այդ՝ փաստացի ցուցանիշները, 2023-2025 թթ. և 2024-2026 թթ. ՄԺԾԾ-ները և 2023 թ. պետական բյուջեի ցուցանիշները ճշգրտվել են ԼՂ զուտ վարկավորման չափով:

2024	ՄԺԾԾ 2025-2027		2,496.9	2,812.3	3,182.0	3,541.2
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ		*24.39%*	*25.12%*	*25.85%*	*26.22%*

Աղյուսակ 2.5. Պետական բյուջեի ծախսերի կանխատեսումների համեմատական աղյուսակը, մլրդ դրամ

Ընդունման տարին	Ծրագիր	2023	2024	2025	2026	2027
-	Փաստացի	2,599.6				
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*27.35%*				
2022	ՄԺԾԾ 2023-2025	2,597.9	2,882.9	3,223.0		
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*28.67%*	*28.51%*	*28.65%*		
	2023թ. Պետական բյուջե	2,642.9				
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*28.36%*				
2023	ՄԺԾԾ 2024-2026	2,659.6	2,973.6	3,306.1	3,701.9	
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*27.9%*	*28.0%*	*28.0%*	*28.2%*	
	2024թ. Պետական բյուջե	2,653.4	3,146.0			
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*28.1%*	*29.9%*			
2024	ՄԺԾԾ 2025-2027		3,117.6	3,513.4	3,812.1	4,086.8
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ		*30.5%*	*31.4%*	*31.0%*	*30.3%*

Աղյուսակ 2.6. Պետական բյուջեի ընթացիկ ծախսերի կանխատեսումների համեմատական աղյուսակը, մլրդ դրամ

Ընդունման տարին	Ծրագիր	2023	2024	2025	2026	2027
-	Փաստացի	2,127.0				
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*22.38%*				
2022	ՄԺԾԾ 2023-2025	2,082.6	2,293.2	2,512.2		
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*22.97%*	*22.71%*	*22.35%*		
	2023թ. Պետական բյուջե	2,095.2				
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*22.48%*				
2023	ՄԺԾԾ 2024-2026	2,095.3	2,308.3	2,537.2	2,839.1	
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*21.98%*	*21.76%*	*21.49%*	*21.61%*	
	2024թ. Պետական բյուջե	2,091.3	2,450.7			
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*22.13%*	*23.3%*			
2024	ՄԺԾԾ 2025-2027		2,451.2	2,728.5	2,938.2	3,228.1
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ		*23.95%*	*24.37%*	*23.87%*	*23.90%*

Աղյուսակ 2.7. Պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների գծով զուտ ծախսերի կանխատեսումների համեմատական աղյուսակը, մլրդ դրամ

Ընդունման տարին	Ծրագիր	2023	2024	2025	2026	2027
-	Փաստացի	472.6				
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*4.97%*				
2022	ՄԺԾԾ 2023-2025	515.3	589.7	710.8		
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*5.70%*	*5.80%*	*6.30%*		
	2023թ. Պետական բյուջե	547.7				
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*5.88%*				
2023	ՄԺԾԾ 2024-2026	564.3	665.3	768.9	862.9	
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*5.9%*	*6.3%*	*6.5%*	*6.6%*	
	2024թ. Պետական բյուջե	562.1	695.3			
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*6.0%*	*6.6%*			
2024	ՄԺԾԾ 2025-2027		666.4	784.9	873.9	858.6
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ		*6.5%*	*7.0%*	*7.1%*	*6.4%*

Աղյուսակ 2.8. Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման կանխատեսումների համեմատական աղյուսակը, մլրդ դրամ

Ընդունման տարին	Ծրագիր	2023	2024	2025	2026	2027
-	Փաստացի	339.9				
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*3.6%*				
2022	ՄԺԾԾ 2023-2025	436.2	417.3	426.4		
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*4.79%*	*4.12%*	*3.78%*		
	2023թ. Պետական բյուջե	424.9				
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*4.56%*				
2023	ՄԺԾԾ 2024-2026	409.9	446.5	463.7	478.5	
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*4.30%*	*4.21%*	*3.93%*	*3.64%*	
	2024թ. Պետական բյուջե	381.3	482.9			
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	*4.04%*	*4.59%*			
2024	ՄԺԾԾ 2025-2027		482.9	615.8	553.9	472.7
	%-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ		*4.72%*	*5.50%*	*4.50%*	*3.50%*

ԳԼՈՒԽ 3. ՀՀ 2025–2027ԹԹ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

3.1. ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2025-2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ՄԺԾԾ առանցքային հարցերից են պետական եկամուտների վարչարարության ուղղությունները և դրանց կանխատեսելիությունը միջնաժամկետ հեռանկարում: Պետական ծախսերը ներքին ֆինանսական ռեսուրսներով ապահովելու պահանջը, ինչպես և նախորդ տարիներին, կառավարության հիմնական խնդիրն է, որի լուծումը ՀՀ կառավարությանը հնարավորություն է ընձեռում ի հաշիվ սեփական ռեսուրսների իրականացնել արդյունավետ ծախսային քաղաքականություն: Այս թիրախի հասանելիության տեսանկյունից առավել ընդգծվում է հարկային եկամուտների դերը:

Միջնաժամկետ հատվածում հարկային եկամուտների չափը մեծապես կախվածության մեջ կլինի մի կողմից մակրոտնտեսական զարգացումների կանխատեսվող և արձանագրվելիք միտումների համապատասխանությունից, իսկ մյուս կողմից՝ հարկ վճարողների վարքագծից ու ՀՀ կառավարության վարչարարական միջոցառումների և օրենսդրական փոփոխությունների իրականացման արդյունավետությունից:

Հարկային եկամուտների վարչարարության հիմնական նպատակները.

Պետության հարկային և մաքսային համակարգի արդյունավետությունն ուղղակիորեն կախված է հարկային և մաքսային վարչարարության արդյունավետ մեթոդների, գործիքների, հմուտ և բանիմաց կադրային ռեսուրսների առկայությունից, ինչպես նաև տնտեսական զարգացումներին և օրենսդրական փոփոխություններին համահունչ ճկուն, արագ արձագանքող մեխանիզմների ու մոտեցումների կիրառումից:

Հարկային և մաքսային համակարգի հարկաբյուջետային գործառույթն առանցքային նշանակություն ունի տնտեսության զարգացման համար, որի արդյունավետ իրականացումն առավել հրատապ է դառնում հատկապես տնտեսական ու գործարար միջավայրի փոփոխությունների, ինչպես նաև արտակարգ իրավիճակների պայմաններում: ՀՀ կառավարության գործունեության ծրագրով, ինչպես նաև ՀՀ կառավարության այլ ռազմավարական փաստաթղթերով սահմանված՝ հարկային ու մաքսային վարչարարության բարելավման ուղենիշների իրագործման նպատակով ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 1830-Լ որոշմամբ հաստատվել է ՀՀ ՊԵԿ զարգացման և վարչարարության բարելավման ռազմավարական ծրագիրը: Ռազմավարական ծրագրով ՊԵԿ կողմից իրականացվող բարեփոխումներն ուղղված են հարկային ու մաքսային վարչարարության պարզեցմանը, դրա արդյունավետության բարձրացմանը, իրավախախտումների կանխարգելմանը, ենթակառուցվածքների արդիականացմանը, հարկ վճարողներին թվային տեխնոլոգիաների վրա հիմնված սպասարկման ծառայությունների տրամադրմանը, հարկ վճարող-ՊԵԿ համագործակցության և վստահության ամրապնդմանը՝ նպատակ ունենալով հասարակության մեջ արմատավորել կամավոր հարկային կարգապահությունը: Միաժամանակ, տնտեսական և գործարար միջավայրում շարունակական փոփոխություններն անհրաժեշտություն են ստեղծում կանխատեսել նոր մարտահրավերները, սահմանել նոր

ռազմավարական նպատակներ և համապատասխան քայլեր ձեռնարկել դրանք իրագործելու համար: Այդ տեսանկյունից ՊԵԿ ռազմավարությունը պարբերաբար ուսումնասիրվում է՝ ՀՀ կառավարության կողմից սահմանված բարեփոխումների առաջնահերթություններին ու ժամանակի առաջ քաշած պահանջներին համապատասխանեցնելու նպատակով:

Միջնաժամկետ հատվածում մասնավորապես, կարևորվելու են եկամուտների վարչարարության հետևյալ ուղղությունները.

1. Հարկային ծառայության մասով ապահովել ՀՀ պետական բյուջեի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների հավաքագրումը՝ թվայնացված ու բարձրորակ ծառայությունների մատուցմամբ, հասցեական ու «անտեսանելի» վարչարարությամբ հարկային կարգապահության բարելավման միջոցով,

2. Մաքսային ծառայության մասով ապահովել տնտեսական անվտանգությունը, աջակցել ՀՀ տնտեսության կայուն զարգացմանը՝ արտաքին առևտրաշրջանառության խթանման, մաքսային վարչարարության կատարելագործման, թվայնացված ու բարձրորակ ծառայությունների մատուցման և մաքսային հսկողության արդյունավետության բարձրացման միջոցով:

ՀՀ ՊԵԿ տեսլականը թվային, արդյունավետ ու վստահելի հարկային և մաքսային մարմինների ձևավորումն է, որոնք

1. իրականացնում են «անտեսանելի», բայց արդյունավետ հարկային և մաքսային վարչարարություն,
2. մատուցում են միջազգայնորեն մրցունակ ու բարձրորակ ծառայություններ,
3. տեխնոլոգիական լուծումների և կառավարման նորարարական մոդելների կիրառմամբ շարունակաբար կատարելագործում են կարողություններն ու կառավարման մեխանիզմները:

Հարկային և մաքսային մարմինների ռազմավարական նպատակներ են.

1. Կառավարման համակարգերի կատարելագործումը, հարկ վճարողներին թվայնացված ծառայությունների մատուցումը: Այս նպատակի իրագործման արդյունքում կներդրվեն հարկ վճարողներին ժամանակակից տեխնոլոգիաների վրա հիմնված ծառայությունների մատուցման գործիքներ, այլ պետական մարմինների և ՊԵԿ միջև տեղեկատվության փոխանակման էլեկտրոնային համակարգեր, որոնք կհանգեցնեն ծախսվող ռեսուրսների խնայմանը, կապահովվի ՊԵԿ ցանցի հեռահար լիարժեք սպասարկումը և հարկային/մաքսային տեղեկատվական շտեմարանների արդյունավետ շահագործումը,
2. Վարչարարության արդյունավետության բարձրացումը, եկամուտների ավելացումը և ստվերի կրճատումը: Այս նպատակի իրագործման արդյունքում միջազգային լավագույն փորձին համահունչ կներդրվեն և կկատարելագործվեն ռիսկերի կառավարման ինքնաշխատ մեխանիզմները, կապահովվի վարչարարական գործիքների թիրախավորված կիրառում, իրական ռիսկային հարկ վճարողների բացահայտում, վերջիններիս կարգապահության բարելավմանն ուղղված վարչարարության իրականացում, ինչպես նաև օրինապահ հարկ վճարողների նկատմամբ մեղմ (աննկատ) և գործընկերային վարչարարություն,
3. Առկա ենթակառուցվածքների արդիականացումը, ինչպես նաև ժամանակակից նոր ենթակառուցվածքների կառուցումը, որի արդյունքում հարկային և մաքսային ընթացակարգերը կլինեն ավտոմատացված գրեթե բոլոր (հիմնական) գործընթացների մասով, կներդրվեն արդյունավետ մեխանիզմներ ԵԱՏՄ շրջանակներում տեղեկատվության փոխանակման և

համագործակցության ապահովման, ինչպես նաև սահմանահատման գործընթացի առավել արագ կազմակերպման համար,

4. Հանրության հետ երկխոսության կառուցողական մթնոլորտի ձևավորումը, ինչպես նաև հարկային և մաքսային վարչարարության մասնակիցների միջև փոխհարաբերությունների բարելավումը, որը կնպաստի ՊԵԿ գործունեության նկատմամբ հանրության վստահության բարձրացմանը և կարգապահության բարելավմանը: Նշվածին հասնելու համար պետք է ընդլայնել հասարակության հետ հետադարձ կապի հնարավորությունները՝ ապահովելով արդյունավետ հարթակ հարկ վճարողների և ՊԵԿ փոխգործակցության համար,

5. Մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի բարելավումը: Այս նպատակի իրագործման արդյունքում կապահովվի մրցունակ կադրային քաղաքականության իրականացում, որը համապատասխանում և նպաստում է սահմանված գործառութային նպատակների արդյունավետ իրագործմանը: Կիրականացվի ներքին կանոնակարգերի վերանայում՝ նպաստելով որակյալ կադրերի ներգրավմանը, մասնագիտական զարգացմանը և առաջխաղացմանը, ինչպես նաև կատարողականի գնահատման հիման վրա աշխատանքի համարժեք վարձատրությանը:

3.2. ՀՀ 2025-2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ

ՀՀ 2025-2027 թվականների պետական բյուջեների եկամուտները կանխատեսվել են համապատասխանաբար՝ 2,897.6, 3,258.2 և 3,614.1 մլրդ դրամի չափով: Եկամուտների տարեկան ծրագրային ծավալները կապահովվեն հիմնականում ի հաշիվ հարկային եկամուտների:

Աղյուսակ 3.2.1. 2021-2027թթ փաստացի և ծրագրված եկամուտները, մլրդ դրամ

Եկամտատեսակ	Փաստ			Բյուջե	ՄԺԾԾ		
	2021	2022	2023	2024	2025	2026	2027
Պետական բյուջեի եկամուտներ	1,683.9	2,063.1	2,358.8	2,723.6	2,897.6	3,258.2	3,614.1
ՀՆԱ-ի նկատմամբ (%)	24.1	24.3	24.8	25.9	25.9	26.5	26.8
1. Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	1,586.9	1,926.0	2,221.9	2,613.6	2,812.3	3,182.0	3,541.2
ՀՆԱ-ի նկատմամբ (%)	22.7	22.7	23.4	24.9	25.1	25.9	26.2
Ընդհանուրի նկատմամբ (%)	94.2	93.4	94.2	96.0	97.1	97.7	98.0
2. Այլ եկամուտներ	84.6	122.1	123.7	87.7	64.7	65.7	66.8
ՀՆԱ-ի նկատմամբ (%)	1.2	1.4	1.3	0.8	0.6	0.5	0.5
Ընդհանուրի նկատմամբ (%)	5.0	5.9	5.2	3.2	2.2	2.0	1.8
3. Պաշտոնական դրամաշնորհներ	12.4	15.0	13.1	22.3	20.6	10.6	6.0
ՀՆԱ-ի նկատմամբ (%)	0.2	0.2	0.1	0.2	0.2	0.1	0.0
Ընդհանուրի նկատմամբ (%)	0.7	0.7	0.6	0.8	0.7	0.3	0.2

ՀՀ 2025-2027 թվականների պետական բյուջեների եկամուտները ծրագրելիս օգտագործվել են այն մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումները, որոնք էական ազդեցություն ունեն առանձին եկամտատեսակների բազայի ձևավորման կամ հաշվարկման վրա: Առանձին դեպքերում հաշվի են առնվել նաև պայմանագրային հարաբերություններով կարգավորվող ցուցանիշները:

Հարկային եկամուտների գծով 2025-2027թթ. բյուջետային մուտքերը ծրագրվել են հարկային եկամուտներ/ՀՆԱ ցուցանիշի տարեկան միջինը 0.6 տոկոսային կետ աճ ապահովելու սկզբունքի հիման վրա: Հաշվարկներում լրացուցիչ ենթադրվել է, որ հարկային եկամուտներ/ՀՆԱ ցուցանիշի սպասողական մակարդակը ապահովելու համար բավարար հիմքեր կստեղծեն առկա օրենսդրական նախադրյալները, կիրառվելիք վարչարարական միջոցառումները, ինչպես նաև մակրոտնտեսական զարգացումները:

Նշվածով պայմանավորված 2025-2027թթ. հարկային եկամուտների աճերը կկազմեն 2025թ.՝ 198.7 մլրդ դրամ, 2026թ.՝ 369.7 մլրդ դրամ և 2027թ.՝ 359.2 մլրդ դրամ:

Ըստ թիրախային (բարձր) տնտեսական աճի սցենարի[24] ՀՀ կառավարությունը 2024 թվականին և միջնաժամկետ հատվածում նպատակադրում է տարեկան միջինում առնվազն 5.7% տնտեսական աճի պայմաններում ապահովել հարկեր/ՀՆԱ հարաբերակցության տարեկան միջինը 0.6 տոկոսային կետով աճ՝ 2027թ. հասցնելով այն 26.2%-ի:

Գծապատկեր 3.2.1. ՀՀ 2021-2027թթ. հարկային եկամուտները մլրդ դրամով և կշիռը ՀՆԱ-ի նկատմամբ



Պաշտոնական դրամաշնորհները 2025-2027թթ. համար ծրագրվել են՝ հաշվի առնելով առկա պայմանագրերը և դոնորների հետ ձեռքբերված նախնական համաձայնությունները: Նպատակային դրամաշնորհները 2025-2027թթ. համար ծրագրվել են համապատասխանաբար 20.6 մլրդ դրամի, 10.6 մլրդ դրամի և 6 մլրդ դրամի չափով:

[24] Թիրախային (բարձր) տնտեսական աճի սցենարը նկարագրված է Գլուխ 1-ի 1.3-ի կետի, 1.3.1 ենթակետում:

Այլ եկամուտները 2025-2027թթ. համար ծրագրվել են համապատասխանաբար 64.7 մլրդ դրամի, 65.7 մլրդ դրամի և 66.8 մլրդ դրամի չափով, հաշվի առնելով գանձման համար պատասխանատու պետական կառավարման մարմինների կողմից ՀՀ 2025 թվականի բյուջետային գործընթացի շրջանակում համապատասխան հայտերով ներկայացված կանխատեսումները, կատարված օրենսդրական փոփոխությունները, ինչպես նաև առանձին եկամտատեսակների գծով նախորդ տարիներին արձանագրված միտումները:

Այլ եկամուտների ՄԺԾԾ կանխատեսումների ընդհանուր պատկերն ըստ եկամտի հիմնական աղբյուրների հետևյալն է.

Աղյուսակ 3.2.3 Այլ եկամուտների կազմում հաշվառվող եկամտատեսակների գծով ՀՀ 2025-2027թթ. ՄԺԾԾ շրջանակներում կատարված կանխատեսումները, մլրդ դրամ

Այլ եկամուտներ	Փաստ			Բյուջե	ՄԺԾԾ		
	2021թ.	2022թ.	2023թ.	2024թ.	2025թ.	2026թ.	2027թ.
Ընդամենը, այդ թվում՝	84.6	122.1	123.7	87.7	64.7	65.7	66.8
1. Պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալությունից եկամուտներ	1.2	3.8	3.6	5.1	5.2	7.6	9.5
2. Տոկոսավճարների և շահաբաժինների տեսքով ստացվող եկամուտներ	30.3	40.0	52.3	22.3	3.8	4.0	4.1
3.Պետության տված վարկերի օգտագործման դիմաց վճարներ	11.6	11.7	12.4	13.0	11.5	9.5	8.1
4. Իրավախախտումների համար գործադիր, դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից մուտքեր	16.4	19.5	25.1	21.4	22.7	22.5	22.6
5. Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից եկամուտներ, որից՝	21.3	22.7	24.3	21.1	19.8	20.3	20.8
6. Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված՝ պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտներ	3.8	24.4	6.0	4.7	1.7	1.8	1.8

ԳԼՈՒԽ 4. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿ

4.1. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԴԵՖԻՑԻՏԸ

Պետական բյուջեի ձևավորումը առաջիկա տարիներին շարունակելու է ընթանալ բյուջետային եկամուտների նկատմամբ ծախսերի գերազանցմամբ, ընդ որում՝ բյուջետային դեֆիցիտի ֆինանսավորման համար միջոցների ներգրավումն իրականացվելու է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին աղբյուրներից:

Ստորև ներկայացվում են ՀՀ 2025-2027 թվականների պետական բյուջեների դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները (տես Աղյուսակ 4.1.1):

Աղյուսակ 4.1.1. ՀՀ 2021-2027 թթ պետական բյուջեների դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները, մլրդ դրամ

Ցուցանիշ	Փաստ			Բյուջե	ՄԺԾԾ		
	2021	2022	2023	2024	2025	2026	2027
Պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները	320.5	179.5	188.9	482,9	615.8	553.9	472.7
1. Ներքին աղբյուրներ	101.2	288.1	412.3	351,2	253.1	244.5	253.1 97.5
2. Արտաքին աղբյուրներ	219.3	(108.6)	(223.5)	131,7	362.7	305.4	375.2

244.5

Պետական բյուջեի դեֆիցիտի հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ 2025-2027 թվականին կկայունանա և ՀՆԱ-ի 5.5%-ից կհասնի 3.5%-ի:

Աղյուսակ 4.1.2. Ընդհանուր և առաջնային դեֆիցիտները 2025-2027թթ (% ՀՆԱ-ի նկատմամբ)

Ցուցանիշ	ՄԺԾԾ		
	2025	2026	2027
Ընդհանուր դեֆիցիտ (ընդհանուր եկամուտների և ծախսերի տարբերությունը)	(5.5)	(4.5)	(3.5)
Առաջնային դեֆիցիտ (ընդհանուր եկամուտների և ծախսերի (առանց տոկոսավճարների) տարբերությունը)	(2)	(0.9)	0.2

4.2. 2024-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ՝ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ

Միջնաժամկետ հատվածում ընդհանուր ծախսային շրջանակները նախորդ հաստատված 2024-2026թթ ՄԺԾԾ ընդհանուր ծախսային շրջանակների համեմատ բարձր են:

Գծապատկեր 4.2.1. *Միջնաժամկետ ծախսերի շրջանակների համեմատականը*



ՀՀ 2025-2027 թվականների պետական բյուջեների ծախսերի շրջանակներն ըստ ոլորտների բնութագրվում են ստորև ներկայացված ցուցանիշներով (աղյուսակ 4.2.1):

Աղյուսակ 4.2.1 ՀՀ 2021-2027թթ պետական բյուջեների ծախսերը՝ ըստ ոլորտների, մլրդ դրամ

Ցուցանիշ	Փաստ			Բյուջե	ՄԺԾԾ		
	2021	2022	2023	2024	2025	2026	2027
Ընդամենը	2,004.3	2,242.6	2,547.6	3,206.5	3,513.4	3,812.1	4,086.8
ՀՆԱ-ի նկատմամբ (%)	28.7	26.4	26.8	30.5	31.4	31.0	30.3
1. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ և պահուստային ֆոնդեր	381.0	407.4	522.5	834.7	805.3	965.0	1,071.6
ՀՆԱ-ի նկատմամբ (%)	5.5	4.8	5.5	7.9	7.2	7.8	7.9
Ընդհանուր ծախսերում (%)	19.0	18.2	20.5	26.0	22.9	25.3	26.2
2. Պաշտպանություն, հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	496.0	677.3	733.4	780.5	911.5	880.1	896.1
ՀՆԱ-ի նկատմամբ (%)	7.1	8.0	7.7	7.4	8.1	7.1	6.6
Ընդհանուր ծախսերում (%)	24.7	30.2	28.8	24.3	25.9	23.1	21.9
3. Տնտեսական ոլորտ	167.3	192.1	217.8	296.0	303.2	349.6	387.8
ՀՆԱ-ի նկատմամբ (%)	2.4	2.3	2.3	2.8	2.7	2.8	2.9
Ընդհանուր ծախսերում (%)	8.3	8.6	8.5	9.2	8.6	9.2	9.5
4. Սոցիալական ոլորտ	960.0	965.8	1,073.9	1,295.3	1,493.5	1,617.5	1,731.2
ՀՆԱ-ի նկատմամբ (%)	13.7	11.4	11.3	12.3	13.3	13.1	12.8
Ընդհանուր ծախսերում (%)	47.9	43.1	42.2	40.4	42.5	42.4	42.4

***Գծապատկեր* 4.2.2** ՀՀ 2021-2027թթ. թվականների ոլորտային ծախսերի մասնաբաժինը ընդհանուր ծախսերում



Աղյուսակ 4.2.1 2021-2027թթ **ս**ոցիալական ոլորտի բյուջետային ծախսերը, մլրդ դրամ

Ցուցանիշ	Փաստ			Բյուջե	ՄԺԾԾ		
	2021	2022	2023	2024	2025	2026	2027
Սոցիալական ոլորտ ընդամենը	960	965.8	1,073.9	1,295.3	1,493.5	1,617.5	1,731.2
ՀՆԱ-ի նկատմամբ (%)	11.8	11.4	11.3	12.3	13.3	13.1	12.8
Ընդհանուր ծախսերում (%)	42.6	43.1	42.2	40.4	42.5	42.4	42.4
1. Կրթություն	149.1	165.4	183.6	289.7	316.0	318.4	318.4
ՀՆԱ-ի նկատմամբ (%)	2.3	1,9	1.9	2.8	2.8	2.6	2.4
Ընդհանուր ծախսերում (%)	7.4	7.4	7.2	9.0	9.0	8.4	7.8
2. Սոցիալական պաշտպանություն	620	614.5	705.8	794.5	913.0	974.8	1,059.5
ՀՆԱ-ի նկատմամբ (%)	8.9	7.3	7.4	7.6	8.2	7.9	7.8
Ընդհանուր ծախսերում (%)	30.9	27.4	27.7	24.8	26.0	25.6	25.9
3. Առողջապահություն	160.5	142.2	141.3	169.9	220.1	285.5	296.3
ՀՆԱ-ի նկատմամբ (%)	2.3	1.9	1.5	1.6	2.0	2.3	2.2
Ընդհանուր ծախսերում (%)	8.0	7.1	5.5	5.3	6.3	7.5	7.2
4. Հանգիստ, մշակույթ և կրոն	30.4	43.9	43.3	41.2	44.4	38.7	57.1
ՀՆԱ-ի նկատմամբ (%)	0.4	0.5	0.5	0.4	0.4	0.3	0.4
Ընդհանուր ծախսերում (%)	1.5	1.9	1.7	1.3	1.3	1.0	1.4

Միջնաժամկետ կտրվածքում կրթության ոլորտին հատկացվող միջոցները նախատեսվում է ուղղել կրթության առանձին տեսակների՝ նախադպրոցական, միջնակարգ, նախնական, միջին մասնագիտական, բարձրագույն, հետբուհական կրթությանը տրամադրվող ծախսերի ֆինանսավորմանը:

Առողջապահության ոլորտի ֆինանսավորման համար նախատեսվել է 2025-2027թթ համապատասխանաբար՝ 220.1, 285.5 և 296.3 մլրդ. դրամ: Հաշվի առնելով առողջապահության համակարգի համաշխարհային արդի մարտահրավերները՝ միջնաժամկետ հատվածում ոլորտի լրացուցիչ ծախսերն ուղղվելու են հիմնականում առողջության համապարփակ ապահովագրության համակարգի ներդրմանը՝ համապատասխանաբար 76.0, 145.4 և 156.4 մլրդ դրամ:

Սոցիալական պաշտպանության ոլորտի ֆինանսավորումը 2025-2027թթ միջնաժամկետ կտրվածքում նկատելիորեն աճել է՝ կազմելով 913.0, 974.8 և 1,059.5 մլրդ. դրամ:

Սոցիալական պաշտպանության ոլորտի հատկացվող միջոցներից (միջինում 42%) ուղղվելու են տարեցներին և հաշմանդամներին աջակցության տրամադրմանը, մնացած (միջինում 58%) միջոցները՝ սոցիալական հատուկ արտոնությունների, բնակարանային ապահովման, ընտանեկան նպաստների տրամադրման և այլ սոցիալական ծառայությունների ապահովմանը:

Աղյուսակ 4.2.2 Տնտեսական ոլորտի 2025-2027թթ բյուջետային ծախսերը, մլրդ դրամ

Ցուցանիշներ	Փաստ			Բյուջե	ՄԺԾԾ		
	2021	2022	2023	2024	2025	2026	2027
Տնտեսական ոլորտ ընդամենը	167.3	192.1	217.8	296.0	303.2	349.6	387.8
ՀՆԱ-ի նկատմամբ (%)	2.4	2.3	2.3	2.8	2.7	2.8	2.9
Ընդհանուր ծախսերում (%)	8.3	8.6	8.5	9.2	8.6	9.2	9.5
1. Տնտեսական հարաբերություններ	151.8	175.8	199.2	266.0	272.1	327.1	356.8
ՀՆԱ-ի նկատմամբ (%)	2.2	2.1	2.1	2.5	2.4	2.7	2.6
Ընդհանուր ծախսերում (%)	7.6	7.8	7.8	8.3	7.7	8.6	8.7
2. Շրջակա միջավայրի պաշտպանություն	6.0	6.8	7.7	11.0	14.9	16.3	24.9
ՀՆԱ-ի նկատմամբ (%)	0.1	8.0	0.1	0.1	0.1	0.1	0.2
Ընդհանուր ծախսերում (%)	0.3	0.3	0.3	0.3	0.4	0.4	0.6
3. Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ	9.5	9.5	10.9	19.0	16.2	6.1	6.1
ՀՆԱ-ի նկատմամբ (%)	0.1	0.1	0.1	0.2	0.1	0.05	0.05
Ընդհանուր ծախսերում (%)	0.5	0.4	0.4	0.6	0.5	0.2	0.2

Տնտեսության ճյուղերի 2025-2027 թվականների ծախսերը նպատակաուղղված են լինելու ենթակառուցվածքների, տնտեսության իրական հատվածի, բարձր տեխնոլոգիական արդյունաբերական, ինչպես նաև բնապահպանական բարձր չափանիշներին համապատասխանող՝ արտահանմանը միտված մրցունակ և ներառական տնտեսության կառուցմանն ուղղված ծրագրերի իրականացմանը:

2025-2027թթ. ժամանակահատվածում պետական բյուջեների ծախսերի ընդհանուր ծավալը որոշ կախվածության մեջ կլինի նաև արտաքին հոսքերից:

Աղյուսակ 4.2.3 Արտաքին աղբյուրներից 2021-2027թթ միջոցների (վարկերի և պաշտոնական դրամաշնորհներ) հաշվին ֆինանսավորվող ծախսերը, մլրդ դրամ

Ցուցանիշներ	Փաստ			Բյուջե	ՄԺԾԾ		
	2021	2022	2023	2024	2025	2026	2027
Արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորվող ծախսերի ծավալը (մլն դրամ)	81.1	57.1	65.1	101.2	228.8	248.2	311.1
ՀՆԱ-ի նկատմամբ (%)	1.2	0.7	0.7	1.0	2.0	2.0	2.3
Ընդհանուր ծախսերում (%)	4.0	2.5	2.6	3.2	6.5	6.5	7.6
1. Վարկային ծրագրերի և միջոցառումներ	73.6	46.9	56.2	86.5	214.2	238.5	305.1
ՀՆԱ-ի նկատմամբ (%)	1.1	0.6	0.6	0.8	1.9	1.9	2.3
Ընդհանուր ծախսերում (%)	3.7	2.1	2.2	2.7	6.1	6.3	7.5
2. Դրամաշնորհային ծրագրերի և միջոցառումներ	7.6	10.2	8.9	14.7	14.6	9.7	6.0
ՀՆԱ-ի նկատմամբ (%)	0.1	0.1	0.1	0.1	0.1	0.1	0.04
Ընդհանուր ծախսերում (%)	0.4	0.5	0.3	0.5	0.4	0.3	0.1

Արտաքին աղբյուրներից վարկերի և պաշտոնական դրամաշնորհների տեսքով ստացվելիք միջոցների հաշվին կանխատեսվող 2025-2027 թվականների ծախսերի միջին տարեկան տեսակարար կշիռը բյուջետային ծախսերի ամբողջ ծավալում կազմում է 6.9 % և ՀՆԱ-ի նկատմամբ՝ 2.1%:

4.3. ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԾԱԽՍԵՐՆ ԸՍՏ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

2025-2027թթ. ժամանակահատվածում պետական բյուջեի ընթացիկ ծախսերի հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ կտատանվի 24.4%-ից 23.9%-ի միջակայքում: Նույն ժամանակահատվածում ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի հարաբերակցությունները ՀՆԱ-ի նկատմամբ կտատանվի 7.0%-ից 6.4%-ի միջակայքում:

Աղյուսակ 4.3.1 2021-2027թթ. ընթացիկ և ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը և հարաբերակցության միտումները, մլրդ դրամ

Ցուցանիշներ	Փաստ			Բյուջե	ՄԺԾԾ		
	2021	2022	2023	2024	2025	2026	2027
Ընդամենը ծախսեր	2,004	2,243	2,548	3,207	3,513	3,812	4,087
1. Ընթացիկ ծախսեր	1,788	1,862	2,075	2,511	2,729	2,938	3,228
ՀՆԱ-ի նկատմամբ (%)	25.6	21.9	21.8	23.9	24.4	23.9	23.9
2.Ոչ ֆինանսական ակտիվների գծով գործառնությունները[25]	216	380	473	695	785	874	859
ՀՆԱ-ի նկատմամբ (%)	3.1	4.5	5.0	6.6	7.0	7.1	6.4

[25] ոչ ֆինանսական ակտիվների գծով 2025-2027թթ. ծախսերում ներառված են նաև ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերը, յուրաքանչյուր տարի նախատեսվել է 15 մլրդ դրամ:

Գծապատկեր 4.3.1. 2021-2027թթ. ընթացիկ և ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի փոփոխության և հարաբերակցության միտումները, մլրդ դրամ



2025-2027թթ. ծախսերի ընդհանուր ծավալի միջին տարեկանի շուրջ 77.9%-ը կկազմեն **ընթացիկ ծախսերը**, (2024թ. այդ ցուցանիշը ծրագրվել է 78.3%):

Դիտարկվող ժամանակահատվածում ընթացիկ ծախսերն ուղղված կլինեն ծառայությունների մատուցման, տրանսֆերտների տրամադրման, ֆինանսավորման ծախսերի իրականացման և հանրության կողմից անմիջականորեն օգտագործվող ակտիվների հետ կապված միջոցառումներին:

2025-2027թթ. ընթացիկ ծախսերի ֆինանսավորման ըստ տնտեսագիտական դասակարգման կառուցվածքի ծախսերի հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ ներկայացված է ստորև:

Գծապատկեր 4.3.2. 2021-2027թթ. ընթացիկ ծախսերի ֆինանսավորման ըստ տնտեսագիտական դասակարգման կառուցվածքի ծախսերի հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ, %



Միջնաժամկետ հատվածում՝

- պետական բյուջեից աշխատավարձերին ուղղվող ծախսերը կկազմեն համապատասխանաբար՝ 255.4, 263.3 և 270.7 մլրդ դրամ,
- տոկոսավճարների գծով ծախսերը կկազմեն համապատասխանաբար՝ 393.6, 440.5 և 494.1 մլրդ դրամ,
- պետական բյուջեից կազմակերպություններին նախատեսվում է տրամադրել համապատասխանաբար՝ 191.6, 187.1 և 185.9 մլրդ դրամի սուբսիդիաներ,
- սոցիալական նպաստների և կենսաթոշակների վճարների գծով պետական բյուջեի ծախսերը կկազմեն համապատասխանաբար՝ 1,007.6, 1,085.0 և 1,165.6 մլրդ դրամ,
- պետական բյուջեից նախատեսվում է տրամադրել դրամաշնորհներ համապատասխանաբար՝ 346.7, 341.7 և 384.9 մլրդ դրամ,
- պետական բյուջեից ծառայությունների և ապրանքների ձեռքբերման գծով նախատեսվում է համապատասխանաբար՝ 232.9, 302.2 և 316.6 մլրդ դրամ:

2025-2027թթ. միջնաժամկետ ժամանակահատվածում «Սահմանամերձ համայնքների սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի կիրարկմամբ պայմանավորված նախատեսվել

է պետական աջակցություն տրամադրել սահմանամերձ համայնքներին՝ յուրաքանչյուր տարվա համար շուրջ 1.0 մլրդ դրամի չափով:

Աղյուսակ 4.3.2 2021-2027թթ. ընթացիկ ծախսերի ֆինանսավորման կառուցվածը ըստ տնտեսագիտական դասակարգման, մլրդ դրամ

Ցուցանիշներ	Փաստ			Բյուջե	ՄԺԾԾ		
	2021	2022	2023	2024	2025	2026	2027
Ընթացիկ ծախսեր	1,788.0	1,862.2	2,075.1	2,511.2	2,728.5	2,938.2	3,228.1
1. Աշխատանքի վարձատրություն	181.4	194.1	218.0	240.5	255.4	263.3	270.7
2. Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	198.5	205.3	191.1	203.8	232.9	302.2	316.6
3. Տոկոսավճարներ	180.8	198.3	253.4	345.1	393.6	440.5	494.1
4. Սուբսիդիաներ	136.8	150.5	164.0	184.9	191.6	187.1	185.9
5. Դրամաշնորհներ	204.7	238.6	281.0	293.3	346.7	341.7	384.9
6. Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	621.2	613.1	710.2	878.5	1,007.6	1,085.0	1,165.6
7. Այլ ծախսեր	264.6	262.4	257.2	365.0	300.6	318.3	410.3

Միջնաժամկետ հատվածում ծախսերի ընդհանուր ծավալի միջին տարեկանի շուրջ 22.5%-ը կկազմեն **ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը**: Միջնաժամկետ հատվածում ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ֆինանսավորման կառուցվածքում արձանագրվում է արտաքին աղբյուրների ծավալի ավելացում:

Գծապատկեր 4.3.3. 2021-2027թթ. ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի[26] ֆինանսավորման կառուցվածքը, մլրդ դրամ



Ընդ որում, միջնաժամկետ հատվածում ընդհանուր ծավալի կանխատեսվող 2,562.5 մլրդ դրամ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի շուրջ 33.7%-ը (863.0 մլրդ դրամ) նախատեսվում է ֆինանսավորել արտաքին աղբյուրների, իսկ 66.3%-ը (1,699.5 մլրդ դրամ)՝ ներքին աղբյուրների հաշվին: Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի իրականացման գերակայությունները հանդիսանալու են ինչպես ենթակառուցվածքային, այնպես էլ սոցիալական և անվտանգության ոլորտներում ներդրումները:

[26] Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերում ներառված չեն ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերը:

Աղյուսակ 4.3.3 2021-2027թթ. ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի[27] կառուցվածը ըստ արտաքին և ներքին աղբյուրների, մլրդ դրամ

Ցուցանիշներ	2021թ.	2022թ.	2023թ.	2024թ.	2025 թ.	2026 թ.	2027 թ.
Ընդամենը	***215.9***	***351.9***	***494.3***	***710.0***	***799.9***	***888.9***	***873.6***
-արտաքին աղբյուրներ	*82.9*	*130.4*	*76.2*	*121.9*	*244.6*	*281.4*	*337.0*
- ներքին աղբյուրներ	133.0	221.6	*418.1*	*588.1*	*555.3*	*607.5*	*536.6*
Տրանսպորտ, այդ թվում	**58.8**	**99.5**	**96.5**	**114.6**	**136.4**	**174.3**	**211.0**
-արտաքին աղբյուրներ	24.7	52.4	27.0	43.1	66.0	93.7	127.9
- ներքին աղբյուրներ	34.1	47.1	69.5	71.5	70.4	80.6	83.1
Էներգետիկա, այդ թվում	**1.2**	**1.1**	**1.1**	**3.9**	**2.2**	**3.3**	**3.5**
-արտաքին աղբյուրներ	1.2	1.1	1.8	3.9	2.2	3.3	3.5
- ներքին աղբյուրներ	0.0	0.0	0.4	0.0	0.0	0.0	0.0
Շրջակա միջավայր և գյուղատնտեսություն	**7.3**	**5.8**	**2.7**	**1.2**	**2.3**	**2.8**	**2.9**
-արտաքին աղբյուրներ	6.8	5.2	0.5	0.0	0.0	0.0	0.0
- ներքին աղբյուրներ	0.5	0.6	2.2	1.2	2.3	2.8	2.9
Ջրային տնտեսություն	**20.2**	**34.7**	**17.8**	**31.5**	**35.9**	**49.6**	**40.6**
-արտաքին աղբյուրներ	18.5	25.5	13.1	23.5	24.9	32.1	17.1
- ներքին աղբյուրներ	1.7	9.2	4.7	8.0	11.0	17.5	23.6
Առողջապահություն	**1.0**	**7.2**	**7.5**	**11.1**	**13.8**	**10.0**	**8.8**
-արտաքին աղբյուրներ	1.0	7.2	3.0	0.0	0.0	0.0	0.0
- ներքին աղբյուրներ	0.0	0.0	4.5	11.1	13.8	10.0	8.8
Կրթություն, գիտություն մշակույթ և սպորտ	**10.0**	**33.3**	**29.6**	**128.9**	**125.6**	**133.6**	**184.6**
-արտաքին աղբյուրներ	8.5	9.0	14.2	14.2	11.6	8.9	8.3
- ներքին աղբյուրներ	1.4	24.4	15.4	114.7	114.0	124.7	176.3
Սոցիալական	**2.5**	**2.9**	**1.4**	**1.9**	**1.4**	**1.4**	**2.7**
-արտաքին աղբյուրներ	1.2	2.6	1.3	0.8	0.0	0.0	0.0
- ներքին աղբյուրներ	1.3	0.3	0.1	1.1	1.4	1.4	2.7
Ուժային	**88.7**	**131.3**	**296.1**	**297.3**	**417.2**	**357.6**	**344.2**
-արտաքին աղբյուրներ	0.0	0.0	0.0	0.0	116.2	116.4	139.7
- ներքին աղբյուրներ	88.7	131.3	296.1	297.3	301.0	241.2	204.5
Այլ	**26.3**	**36.1**	**40.6**	**119.6**	**65.0**	**156.2**	**75.2**
-արտաքին աղբյուրներ	21.1	27.4	15.3	36.4	23.6	27.0	40.5
- ներքին աղբյուրներ	5.2	8.7	25.3	83.2	41.4	129.2	34.7

[27] Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերում ներառված չեն ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերը:

4.4. 2024-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԸ

Միջնաժամկետ հատվածում պետական բյուջեից նախատեսվում է տրամադրել հատկացումներ ՀՀ համայնքներին, մասնավորապես 2025 թվականին՝ շուրջ 176.2 մլրդ դրամ կամ ընդհանուր բյուջետային ծախսերի 5.0 և ՀՆԱ-ի 1.6 տոկոսը, 2026 թվականին՝ 189.9 մլրդ դրամ կամ ընդհանուր բյուջետային ծախսերի 5.0 և ՀՆԱ-ի 1.5 տոկոսը, իսկ 2027 թվականին 203.7 մլրդ դրամ կամ ընդհանուր բյուջետային ծախսերի 5.0 և ՀՆԱ-ի 1.5 տոկոսը: Համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով դոտացիաների տրամադրման նպատակով 2025 թվականին նախատեսվում է տրամադրել շուրջ 98.2 մլրդ դրամ կամ ընդհանուր բյուջետային ծախսերի 2.8 և ՀՆԱ-ի 0.9 տոկոսը, 2026 թվականին՝ 109.2 մլրդ դրամ կամ ընդհանուր բյուջետային ծախսերի 2.9 և ՀՆԱ-ի 0.9 տոկոսը, իսկ 2027 թվականին 119.7 մլրդ դրամ կամ ընդհանուր բյուջետային ծախսերի 2.9 և ՀՆԱ-ի 0.9 տոկոսը:

Միջնաժամկետ ժամանակահատվածում նախատեսվել է համայնքներին տրամադրել սուբվենցիաներ՝ 2025 թվականին՝ շուրջ 26.5 մլրդ կամ ընդհանուր բյուջետային ծախսերի 0.8 տոկոսը, 2026 թվականին՝ 22.4 մլրդ կամ ընդհանուր բյուջետային ծախսերի 0.6 տոկոսը և 2027 թվականին՝ 25.5 մլրդ կամ ընդհանուր բյուջետային ծախսերի 0.6 տոկոսը: Միջնաժամկետ ժամանակահատվածում նախատեսվում է պատվիրակված լիազորությունների ֆինանսավորման գծով համայնքներին տրամադրել՝ 2025 թվականին շուրջ 51.5 մլրդ կամ ընդհանուր բյուջետային ծախսերի 1.5 տոկոսը, 2026 թվականին՝ 58.3 մլրդ կամ ընդհանուր բյուջետային ծախսերի 1.5 տոկոսը և 2027 թվականին 58.5 մլրդ դրամ կամ ընդհանուր բյուջետային ծախսերի 1.5 տոկոսը:

Աղյուսակ 4.4.1 ՀՀ պետական բյուջեից ՀՀ համայնքների բյուջեներին տրվող հատկացումները, մլրդ դրամ

Ցուցանիշներ	Փաստ	Բյուջե	ՄԺԾԾ		
	2023թ.	2024թ.	2025թ.	2026թ.	2027թ.
ԸՆԴԱՄԵՆԸ	151.9	159.6	176.2	189.9	203.7
Ֆինանսական համահարթեցման դոտացիաներ	69.8	85.3	98.2	109.2	119.7
Այլ ընթացիկ դրամաշնորհներ համայնքներին	0.2	5.7	0.0	0.0	0.0
Սուբվենցիաներ համայնքներին	39.5	25.3	26.5	22.4	25.5
ընթացիկ սուբվենցիաներ	*7.7*	*1.0*	*1.0*	*1.0*	*1.0*
կապիտալ սուբվենցիաներ	*31.8*	*24.3*	*25.5*	*21.4*	*24.5*
Պատվիրակված լիազորությունների ֆինանսավորում	42.5	43.3	51.5	58.3	58.5

ՄԱՍ II. ԾԱԽՍԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ 2024-2026ԹԹ. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ծախսային քաղաքականության ռազմավարությունը շարադրող մասում ընդհանուր գծերով ներկայացվում են 2025-2027թթ. ժամանակահատվածում պետական բյուջեի ծախսերի ըստ բնագավառների քաղաքականության գերակայությունները: Այս գերակայությունները բխում են ՀՀ կառավարության ընդհանուր ռազմավարական գերակայությունների համատեքստից (ՀՀ կառավարության ծրագիր, տարբեր ոլորտներում ՀՀ կառավարության կողմից ընդունված մի շարք միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրեր և այլն) և պետք է ծառայեն որպես հիմք՝ ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի նախագծի մշակման համար:

Ինչպես արդեն վերը նշվել է ՀՀ կառավարությունն առաջիկա տարիների համար առավել կարևորում է պետական բյուջեի հիմնական ծախսային հետևյալ գերակայությունները.

- սոցիալական ոլորտի առանձին ճյուղերում (մասնավորապես՝ կրթություն, առողջապահություն, սոցիալական պաշտպանություն), ինչպես նաև պետական կառավարման բնագավառներում պետական մարմինների գործունեության արդյունավետության, նպատակաուղղվածության և հասցեականության մակարդակի բարձրացման, նրանց կողմից հանրությանը մատուցվող ծառայությունները բնակչության համար ավելի մատչելի դարձնելու նպատակով իրականացվող բարեփոխումների ֆինանսական ապահովում,
- հանրապետության տարածքային ամբողջականությունը, տարածաշրջանում կայունությունը և անվտանգությունը պահպանելու նպատակով պաշտպանության և ազգային անվտանգության կառույցների կենսագործունեության համար անհրաժեշտ ֆինանսական ապահովում,
- տնտեսության առանձին ոլորտներում (մասնավորապես՝ գյուղատնտեսություն, ջրային տնտեսություն, ճանապարհային տնտեսություն և էներգետիկա) ենթակառուցվածքների վերականգնման և զարգացման ծրագրերի իրականացում:

1. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ

Կրթության ոլորտ

Կրթությունը մարդու հիմնարար իրավունք է, և պետության պարտավորությունն է ապահովել համընդհանուր հավասարապես հասանելի, ներառական և որակյալ կրթություն: Կրթության ոլորտը կարևոր դերակատարություն ունի ինչպես անհատի կայացման, այնպես էլ հասարակության սոցիալական և տնտեսական զարգացման բոլոր ոլորտներում: Դրանով է պայմանավորված, որ այն դասվում է ՀՀ կառավարության ծրագրի գերակայությունների շարքում: ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N1363-Ա որոշման 4.3-րդ կետի համաձայն՝ ՀՀ կառավարության համար գերակա խնդիր է կրթության զարգացումը, ինչի շնորհիվ է միայն հնարավոր հասնել կայուն ու ներառական զարգացման և համընդհանուր բարեկեցության:

2022 թվականին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին» ՀՕ-441-Ն օրենքով սահմանվում են ոլորտի զարգացման տեսլականը և վերջնական նպատակը, ռազմավարական ուղղությունները, 2030 թվականի արդյունքային շրջանակը: Կրթության

ոլորտի զարգացման ռազմավարական նպատակն է՝ ձևավորել ազգային և համամարդկային արժեքների վրա հիմնված, Հայաստանի Հանրապետության զարգացմանը միտված արդյունավետ և միջազգայնորեն մրցունակ կրթական համակարգ, որը յուրաքանչյուրին կյանքի բոլոր փուլերում հնարավորություն կտա ստանալու իր կարիքներին և ընդունակություններին համապատասխան որակյալ կրթություն:

Կրթության ոլորտի գլխավոր հիմնախնդիրն է միջազգայնորեն ընդունված չափանիշներին համապատասխան որակի ապահովումը: Այս տեսանկյունից ոլորտային քաղաքականությունը ներառում է 3 հիմնական ուղղություններ.

- դասավանդող անձնակազմի, մասնավորապես՝ ուսուցիչների, մասնագիտական որակական բարելավումը,
- կրթական ծրագրերի բովանդակային արդիականացումն ու համապատասխանեցումը աշխատաշուկայի և տնտեսության զարգացող պահանջներին: Հանրակրթության ոլորտում կներդրվեն նոր առարկայական չափորոշիչները, ուսումնական պլանը և առարկայական ծրագրերը՝ նպատակ ունենալով խթանել սովորողների քննական մտածողությունը, նորարարությունը, վերլուծական և ստեղծագործական հմտությունները: Առանձնակի ուշադրություն կհատկացվի ԲՏՃՄ առարկաների և օտար լեզուների դասավանդմանը, քաղաքացիական, ֆինանսական և ձեռնարկատիրական կրթությանը: Մասնագիտական կրթության ոլորտում կմշակվեն և կներդրվեն տնտեսության ժամանակակից պահանջներից բխող նոր մասնագիտությունների կրթական ծրագրեր՝ մեծացնելով շրջանավարտների մրցունակությունն աշխատաշուկայում, բարձրագույն կրթության ծրագրերում կխթանվի գիտահետազոտական աշխատանքների իրականացումը,
- ուսումնական հաստատությունների արդիական նյութատեխնիկական հենքի ապահովումը և սովորողակենտրոն միջավայրի ստեղծումը: Կշարունակվեն նախադպրոցական, դպրոցական և մասնագիտական ուսումնական հաստատությունների շենքերի վերանորոգումն ու կառուցումը: Միաժամանակ, հաստատությունները կապահովվեն ժամանակակից ուսումնական գույքով և սարքավորումներով:

Կրթության ոլորտի հաջորդ կարևոր խնդիրն է մատչելիության ապահովումը, որի ուղղությամբ նախատեսվում են իրականացնել հետևյալը.

- կընդլայնվի նախադպրոցական ծառայությունների մատուցման շրջանակը, համայնքներին ցուցաբերվող նպատակային օժանդակության շնորհիվ կմեծանա երեխաների ընդգրկվածությունը, պետությունը կապահովի սոցիալապես խոցելի խավերի երեխաների ընդգրկվածությունը նախադպրոցական ուսումնական հաստատություններում,
- համընդհանուր ներառական կրթությունը կներդրվի նախադպրոցական կրթության ոլորտում, կիրականացվեն ոլորտի աշխատակազմի վերապատրաստումներ,

մասնագիտական կրթության գծով հատկացվող միջոցները կուղղվեն խոցելի խմբերի երիտասարդների ընդգրկվածության մեծացմանը: Կընդլայնվի մասնագիտական կրթության՝ պետական բյուջեից ֆինանսավորվող տեղերի թիվը, կընդլայնվեն ուսման վարձի զեղչային համակարգից օգտվող շահառուների խմբերը:

Կրթության ոլորտը ներառում է նախադպրոցական, միջնակարգ, նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական, բարձրագույն և հետբուհական կրթության հիմնական և լրացուցիչ կրթական ծրագրերը, արտադպրոցական դաստիարակությունը, ինչպես

նաև տարբեր աստիճանների կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների համակարգը: Կրթության ոլորտը հատվում է Հայաստանի Հանրապետության գրեթե բոլոր այլ ոլորտների հետ, քանի որ հանդիսանում է ցանկացած ոլորտի զարգացումն ապահովող հիմնասյուներից մեկը: Այլ ոլորտներին առնչությունն արտահայտվում է հիմնականում աշխատաշուկայի համար մասնագետների պատրաստման, լրացուցիչ և շարունակական կրթության համակարգում տարբեր բնագավառների ընդգրկմամբ:

«Հանրակրթություն» ծրագրի գլխավոր նպատակն է՝ ապահովել դպրոցահասակ երեխաների պարտադիր կրթության՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքը՝ օրենսդրությամբ սահմանված չափորոշիչների և ծրագրերի շրջանակում: Ծրագրի թիրախներից մեկը միջնաժամկետ հատվածում առկա բնակչության գծով սովորողների համախառն ընդգրկվածության 100% ցուցանիշի ապահովումն է: «Նախադպրոցական կրթություն» ծրագրի գծով թիրախ է սահմանվել նախադպրոցական հաստատություններում 3-5 տարեկան երեխաների համախառն ընդգրկվածությունը, որը նախատեսվում է 64.3%-ից 2027 թվականին հասցնել 85%-ի: Ծրագրերում ներառված են նաև քաղաքականության միջոցառումներ՝ միտված սովորողներին մատուցվող ծառայությունների որակի և մատչելիության ապահովմանը, ինչպես նաև հավասար մեկնարկային պայմաններ ստեղծելու համար հանրակրթական դպրոցների հենքի վրա ստեղծված նախադպրոցական ծառայությունների ֆինանսավորմանը:

«Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն» ծրագրի նպատակն է՝ հիմնական կրթությունից հետո ապահովել 12-ամյա պարտադիր կրթության պահանջն այն շրջանավարտների համար, որոնք չեն հավակնում բարձրագույն կրթության և նախընտրում են մասնագիտական որակավորումը, ինչպես նաև հիմնական և միջնակարգ կրթությունից հետո երեխաներին և երիտասարդներին պատրաստելու ինքնուրույն աշխատանքային գործունեության: Ծրագրի հիմնական թիրախներն են՝ աշխատաշուկայի պահանջներից ելնելով նոր մասնագիտությունների ներդրումը, հաստատությունների և դրանցում իրականացվող ծրագրերի տեղաբաշխման ռացիոնալացումը, հիմնական և միջնակարգ դպրոցների շրջանավարտների թվում՝ նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ ընդունվածների թվաքանակի ավելացումը, մանկավարժների մասնագիտական զարգացման, ատեստավորման և վարձատրության փոխկապակցված մեխանիզմի ներդնումը:

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն» ծրագրի գլխավոր նպատակն է՝ ապահովել մատչելի, որակյալ և մրցունակ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն: Միաժամանակ խրախուսվելու է խոցելի խմբերի համար բարձրագույն կրթության մատչելիությունը և աջակցությունը լավագույն առաջադիմություն ցուցաբերող ուսանողներին: Ոլորտում կշարունակվեն եվրոպական բարձրագույն կրթական տարածքի ամբողջական ինտեգրմանն ուղղված բարեփոխումները: Բուհերի մրցունակությունը բարձրացնելու նպատակով անցում է կատարվելու արդյունքային ցուցանիշների հիմքով բուհերի ֆինանսավորմանը:

«Արտադպրոցական դաստիարակություն» ծրագրի հիմնական նպատակն է՝ նպաստել հանրակրթական ուսուցման համակարգում ընդգրկված երեխաների հոգևոր և գեղագիտական, ֆիզիկական, ստեղծագործական կարողությունների զարգացմանը, հայրենասիրական դաստիարակությանը, բնապահպանական, կիրառական և հումանիտար գիտելիքների կատարելագործմանը: Նախատեսվում է միջնաժամկետ կտրվածքում արտադպրոցական դաստիարակության ծրագրերում 6-18 տարեկան երեխաների ընդգրկվածության մակարդակը

հասցնել 36.2%-ի, այդ թվում, գյուղաբնակ, մասնավորապես՝ սահմանապահ բնակավայրերի երեխաներինը՝ 22.0%-ի:

«Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում» ծրագրի նպատակն է առնվազն 300 դպրոցի և 500 մանկապարտեզի կառուցման, վերակառուցման, հիմնանորոգման ծրագրերի իրականացում ՀՀ պետական բյուջեի միջոցների շրջանակներում:

Գիտության ոլորտ

ՀՀ գիտության ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակներն են գիտության կայուն զարգացման ապահովումը, գիտության ֆինանսավորման արդյունավետության բարձրացումը և կատարողականի վրա հիմնված ֆինանսավորման մեխանիզմների ներդրումը, միջազգայնորեն մրցունակ հիմնարար ուսումնասիրությունների, տնտեսության պահանջներից բխող կիրառական հետազոտությունների, ինչպես նաև երկակի նշանակություն ունեցող գիտելիքների ձեռքբերմանն ուղղված գիտահետազոտական աշխատանքների խթանումը, գիտական կադրերի վերարտադրության արդյունավետ համակարգի ներդրումը, գիտության ենթակառուցվածքների արդիականացումը, կրթություն-գիտություն կապի ամրապնդումը, գիտական արդյունքի առևտրայնացումը, միջազգային գիտական համագործակցության զարգացումը, մտավոր սեփականության արդյունավետ պաշտպանությունը, գիտության ֆինանսավորման բյուջետային և արտաբյուջետային միջոցների ավելացումը:

Այդ նպատակների ձեռքբերման ուղղությամբ 2025-2027 թվականներին իրականացվելու են հետևյալ միջոցառումները՝

- գիտական կենտրոնները ժամանակակից սարքավորումներով վերազինման ու համատեղ օգտագործման գիտական սարքավորումների կենտրոնների ստեղծում,
- գիտական կենտրոնների վերանորոգում,
- հետազոտության բնագավառով մոտ փոքր գիտական կազմակերպությունները խոշոր գիտական կենտրոններում միավորելուն ուղղված պետական ծրագրերի իրականացում,
- տնտեսության պահանջներից բխող հետազոտությունների պատվերների ձևավորման մեխանիզմների մշակում և ներդրում,
- ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցությանն ուղղված ծրագրերի իրականացում,
- հետդոկտորական հետազոտությունների ծրագրերի իրականացում,
- արտերկրի լավագույն գիտական կենտրոններում գիտական կազմակերպությունների աշխատակիցների մասնագիտական վերապատրաստման և որակավորման բարձրացման միջին և երկարաժամկետ ծրագրերի իրականացում,
- երկակի նշանակության ծրագրերի իրականացում,
- ինտեգրման կամ հեռավար ղեկավարվող լաբորատորիաների ստեղծում,
- հասարակական, հայագիտության և հումանիտար գիտությունների բնագավառների հետազոտությունների աջակցությանն ուղղված ծրագրերի իրականացում,

- գերակա ուղղություններով հետազոտությունների աջակցությանն ուղղված ծրագրերի իրականացում,
- հետազոտությունների միջազգային չափանիշների սահմանում և կատարողականի գնահատման մեխանիզմների մշակում և ներդրում,
- աշխարհի առավել զարգացած պետությունների և դրանց գերատեսչությունների կամ միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության զարգացման մակարդակի բարձրացում:

Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների բյուջետային ծրագրի շրջանակներում ընդգրկված միջոցառումները միտված են գիտության ոլորտի զարգացմանը, բարեփոխումների իրականացմանը, հանրապետության գիտական ու գիտատեխնիկական ներուժի զարգացմանը: Զարգացած գիտական համակարգը պետք է լինի Հայաստանի Հանրապետության այցեքարտերից մեկը միջազգային հարաբերություններում և գլոբալ արժեքային շղթաներում և հանդիսանա արտաքին հարաբերությունների կարևորագույն բաղադրիչներից:

Գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրերում ընդգրկված գիտական կադրերի աշխատավարձի աստիճանական ավելացումը կնպաստի գիտության ոլորտը երիտասարդ կադրերով համալրելու խնդրի լուծմանը, գիտական կադրերի սոցիալ-տնտեսական և աշխատանքային պայմանների բարելավմանը, գիտության և տեխնիկայի բնագավառի բարձր որակավորում ունեցող կադրերի թվաքանակի կայուն աճին և գիտական ներուժի արդյունավետ նպատակային վերարտադրության ապահովմանը:

Մշակույթի ոլորտ

ՀՀ կառավարության վարած մշակութային քաղաքականությանը համապատասխան մշակույթի ոլորտում իրականացվող ծրագրերը միտված են մշակութային ժառանգության պահպանությանը և տարածմանը, մշակութային և ստեղծարար ոլորտների խթանմանը և երկրի կայուն զարգացման գործընթացներում վերջիններիս դերի ընդլայնմանը, մշակույթի և ժամանակակից արվեստի հասանելիությանը և սոցիալական ներառականությանը, բարեկեցիկ հասարակության ձևավորմանը, հայկական մշակույթի միջազգային ինտեգրմանը և միջազգային շուկաներում մրցունակության ապահովմանը:

Ոլորտում իրականացվող ծրագրերը բխում են ՀՀ կառավարության 18 օգոստոսի 2021 թվականի N 1363-Ա որոշմամբ հաստատված՝ ՀՀ կառավարության ծրագրի «4.9. Մշակույթ» բաժնում ամրագրված ուղղություններից, ՀՀ կառավարության 09 նոյեմբերի 2023 թվականի N 1951-Լ որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության մշակույթի պահպանության, զարգացման և հանրահռչակման 2023-2027 թվականների ռազմավարությունից, ինչպես նաև ՀՀ 2050 վերափոխման ռազմավարությունից:

Մշակութային ժառանգության ծրագրի նպատակն է ապահովել մշակութային ժառանգության պահպանումը, օգտագործումը, համալրումը և հանրահռչակումը: Ծրագրի շրջանակում կշարունակվեն աշխատանքներն ուղղված ՀՀ տարածքում և արտերկրում գտնվող մշակութային արժեքների և պատմամշակութային հուշարձանների հաշվառմանն ու գիտական ուսումնասիրությունների իրականացմանը, վավերագրմանը, մշակութային ժառանգության (նյութական և ոչ նյութական) պահպանմանը, դրանց նպատակային օգտագործմանն ու հանրահռչակմանը, թանգարանային ծառայությունների մատուցմանը և ցուցահանդեսների կազմակերպմանը:

Գրահրատարակչության և գրադարանների ծրագրի նպատակն է նպաստել գրականության հրատարակմանը, տարածմանը և հանրահռչակմանը: Ծրագրի շրջանակում կշարունակվեն աշխատանքներն ուղղված գրականության զարգացմանն ու տարածմանը, տպագիր արտադրանքի միջոցով հոգևոր-մշակութային ժառանգության փոխանցմանը, ՀՀ տարածքում բնակվող ազգային փոքրամասնություններին (մամուլ, գրականություն) աջակցմանը՝ պահպանելու իրենց լեզուն, գրականությունը, ավանդույթները, մշակույթը, գրական, մշակութային, ազգային փոքրամասնությունների համար լույս տեսնող լրատվամիջոցների և պարբերականների գործունեության շարունակականությանը, գրքի միջազգային ցուցահանդեսներին մեր երկրի մասնակցությանը, հանրապետական գրական ծրագրերի կազմակերպմանը, ստեղծագործողների և մշակութային հետազոտողների աշխատանքների խթանմանը, գրադարանների գրքային հավաքածուների համալրմանն ու պահպանմանը, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ գրավոր ժառանգության (անձեռնմխելի հավաքածուներ) թվայնացմանը, տեղեկատվական շտեմարանների շարունակական զարգացմանը:

Կինեմատոգրաֆիայի ծրագրի նպատակն է աջակցել կինոարվեստի և կինոարտադրության զարգացմանը, հայկական ավանդույթների շարունակականության ապահովմանը և կինոարվեստի հանրահռչակմանը: Ծրագրի շրջանակում իրականացվող գործընթացները նպատակաուղղված կլինեն խաղարկային, մուլտիպլիկացիոն և վավերագրական կինոնկարների արտադրության աջակցմանը, կինո-ֆոտո-ֆոնո հավաքածուի պահպանմանը, կինոարվեստի հանրահռչակմանը, տարածմանը, հայկական կինոյի ավանդույթների շարունակականության ապահովմանը, միջազգային համագործակցության ընդլայնմանը:

Արվեստների ծրագրի նպատակն է նպաստել ազգային հենքի վրա ժամանակակից թատերարվեստի, երաժշտարվեստի, կերպարվեստի և պարարվեստի զարգացմանը և հանրահռչակմանը: Ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումները նպատակաուղղված կլինեն ժամանակակից արվեստի ոլորտների /թատերարվեստ, երաժշտարվեստ, կերպարվեստ, պարարվեստ/ զարգացմանը և հանրահռչակմանը, անհատի և հանրության հոգևոր-մշակութային առաջընթացի գործում մշակույթի ռազմավարական դերակատարման բարձրացմանը, ստեղծագործական և գեղարվեստական բարձր նշաձողի պահպանմամբ և հանրության տարբեր շերտերի մշակութային պահանջարկին համապատասխան մշակութային արտադրանքի և ծառայությունների մատուցման գործընթացի ապահովմանը, մշակութային ենթակառուցվածքների արդիականացմանը, մշակութային ծառայությունների որակի բարելավմանն ու մատչելիության ապահովմանը, ստեղծագործական ներուժ ունեցող անհատների դրսևորմանը և նրանց գործունեության համար բարենպաստ դաշտի ստեղծմանը, երիտասարդ ստեղծագործողներին միջազգային մշակութային գործընթացներին ինտեգրման աջակցմանը:

Մարզերի մշակութային զարգացման ծրագրի նպատակն է նպաստել մարզերում մշակութային կյանքի և մշակութաստեղծ գործունեության ակտիվացմանը: Ծրագրի շրջանակներում իրականացվող գործընթացներն ուղղված կլինեն մարզերում մշակութային կյանքի ակտիվացմանը, համայնքներում մշակույթի հասանելիության և մշակութային կյանքին մարզային բնակչության ընդգրկվածության ընդլայնմանը, մշակութային միջոցառումների կազմակերպմանն ու իրականացմանը, համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպմանը:

Սպորտի ոլորտ

Սպորտի ոլորտում պետական քաղաքականությունն ուղղված է բնակչության շրջանում առողջ ապրելակերպի և ակտիվ հանգստի արմատավորմանը, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցով բնակչության առողջության ամրապնդմանը: ՀՀ կառավարությունը խրախուսում է նաև մարզական բարձր արդյունքները միջազգային մրցասպարեզներում, աջակցում է մարզական ֆեդերացիաների գործունեությանը:

Ոլորտում իրականացվող ծրագրերը բխում են ՀՀ կառավարության 18 օգոստոսի 2021 թվականի N 1363-Ա որոշմամբ հաստատված՝ ՀՀ կառավարության ծրագրի «4.8. Սպորտ» բաժնում ամրագրված ուղղություններից, ՀՀ կառավարության 07 դեկտեմբերի 2023 թվականի N 2145-Լ որոշմամբ հաստատված՝ Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտների 2024-2030 թվականների զարգացման ռազմավարությունից, ինչպես նաև ՀՀ 2050 վերափոխման ռազմավարությունից:

Մասսայական սպորտ ծրագրի նպատակն է ապահովել բնակչության շրջանում առողջ ապրելակերպի արմատավորումը, անհատի բազմակողմանի ու ներդաշնակ զարգացման գործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացումը: Ծրագրի շրջանակներում միջնաժամկետ հատվածում կիրականացվեն զանգվածային ֆիզկուլտուրային-առողջարարական՝ համայնքային, տարածաշրջանային, մարզային և հանրապետական միջոցառումներ, հաշմանդամություն ունեցող անձանց շրջանում ֆիզկուլտուրային-առողջարարական աշխատանքներ, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, առողջ ապրելակերպի արմատավորման քարոզչությանն ուղղված համալիր միջոցառումներ և ծրագրեր, բնակչության՝ ֆիզիկական դաստիարակության անընդհատությանը, հայրենիքի պաշտպանությանը պատրաստ երիտասարդության դաստիարակությանը նպաստող միջոցառումներ: Ֆիզիկական կուլտուրայի արմատավորման նպատակով կշարունակվեն կառուցվել և հիմնանորոգվել մարզական օբյեկտներ, ինչպես նաև կբարելավվեն համայնքային մարզական հաստատությունների շենքային պայմանները:

Մեծ նվաճումների սպորտ ծրագրի նպատակն է նպաստել Հայաստանում մեծ սպորտի շարունակական զարգացմանը և միջազգային հարթակներում ՀՀ դիրքի բարելավմանը: Ծրագրի շրջանակներում մարզական ֆեդերացիաներին կշարունակվի տրամադրել աջակցություն ՀՀ առաջնություններին և միջազգային մարզական միջոցառումներին ՀՀ հավաքական թիմերի մասնակցության նպատակով, ինչպես նաև կշարունակվի աջակցության տրամադրումը հայ մարզիկներին՝ նվաճումներ արձանագրած մարզիկների և վերջիններիս մարզիչների և բժիշկների նյութական խրախուսումները:

Երիտասարդության ոլորտ

Երիտասարդական պետական քաղաքականությունն ուղղված է երիտասարդության մասնակցության, սոցիալականացման և ինքնաիրացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը, երիտասարդության ներուժի ներգրավմանն ու դրա զարգացմանը՝ նպաստելով Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ամրապնդմանը, սոցիալ-տնտեսական ու մշակութային զարգացմանը:

Երիտասարդության ծրագրի նպատակն է նպաստել սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքին երիտասարդների լիարժեք ներգրավմանը և նրանց ստեղծագործական ներուժի ամբողջական դրսևորմանը: Միջնաժամկետ հատվածում երիտասարդական պետական քաղաքականության հիմնական թիրախներն են տարբեր ծրագրերի և

միջոցառումների միջոցով ընդլայնել երիտասարդների մասնակցությունը հասարակական կյանքին, խթանել երիտասարդության շրջանում առողջ ապրելակերպը, հոգևոր-մշակութային, հայրենասիրական դաստիարակությունը, մեծացնել երիտասարդների զբաղվածության հնարավորությունները:

2. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Առողջապահության ոլորտը՝ որպես սոցիալական կարևոր ոլորտ հանդիսանում է ՀՀ պետական քաղաքականության գերակա ուղղություններից մեկը: Միջնաժամկետ հատվածում առողջապահության ոլորտում պետության քաղաքականությունն ուղղված է լինելու անհատի և հանրային առողջության պահպանմանն ու բարելավմանն՝ ապահովելով հասանելի, արդիական, բարձր որակի առողջապահական ծառայությունների մատուցումը: Քաղաքացիների համար առողջապահական ծառայությունների հասանելիությունն ու մատչելիությունն ապահովելու նպատակով քննարկվում է 2025 թվականին առողջության համապարփակ ապահովագրության համակարգն աստիճանաբար ներդնելու հարցը, որն ուղղված է լինելու առողջապահական ծառայություններ ստանալու պահին քաղաքացու համար զգալի ծախսերի նվազեցմանը: Այդ նպատակով առողջապահության ոլորտի ծախսերը միջնաժամկետ հատվածում գրեթե կկրկնապատկվեն՝ 2027թ հասնելով շուրջ 296.3 մլրդ դրամի՝ 2023թ. 169.9 մլրդ դրամի դիմաց:

Պետական առողջապահական ծախսերի նպատակայնության հետևողական բարձրացման, շարունակական բարելավման շնորհիվ առողջապահական համակարգի շահառուն ստիպված չի լինի հավելյալ վճարել պետության կողմից անվճար և արտոնյալ պայմաններով մատուցվող ծառայությունների համար և կստանա որակյալ բժշկական օգնություն և ծառայություններ: Անվճար բժշկական օգնությունը պետք է տրամադրվի միայն սոցիալական արդարության սկզբունքի հիման վրա: Միաժամանակ պետությունը պետք է կանգնած լինի անհետաձգելի բժշկական օգնության կարիք ունեցող ցանկացած մարդու կողքին:

Ոլորտային քաղաքականության հիմնական թիրախներն ու նպատակային ծրագրերն են.

- Բնակչության առողջության առաջնային պահպանում
- Սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի անձանց բժշկական օգնություն
- Վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների բժշկական օգնության ապահովում
- Մոր և մանկան առողջության պահպանում
- Հանրային առողջության պահպանում

Բնակչության առողջության առաջնային պահպանումը միջնաժամկետ հեռանկարում շարունակելու է մնալ ռազմավարական կարևոր ուղղություն: Միջնաժամկետ հատվածում շարունակականորեն ապահովելով առաջնային օղակի դերի բարձրացումը և մատուցվող ծառայությունների որակի բարելավումը՝ ապահովվելու է որակյալ և մատչելի առաջնային բուժօգնություն, ինչպես նաև սոցիալական արդարության և հավասարության սկզբունքներ հանրապետության ողջ բնակչության համար՝ անկախ սեռից ու տարիքից:

Բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց անվճար կամ արտոնյալ պայմաններով հիվանդանոցային/մասնագիտացված անհրաժեշտ բժշկական օգնության և սպասարկման ապահովումը շարունակելու է մնալ ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում:

Վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելումը ռազմավարական մեկ այլ կարևոր նպատակ է, որի շրջանակներում ապահովվելու է առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների վաղ հայտնաբերման, ախտորոշման ու կանխարգելման ճանապարհով բնակչության առողջության հիմնական ցուցանիշների բարելավումը և այդ հիվանդությունների բարդությունների, հաշմանդամության և մահացության ցուցանիշների կրճատումը, ինչպես նաև վարակիչ հիվանդություններով հիվանդացության նվազեցումը, կառավարելի վարակիչ հիվանդություններից մահվան դեպքերի կանխումը և վարակիչ հիվանդությունների նկատմամբ բնակչության անընկալության ապահովումը:

Առողջապահության ոլորտի հիմնական խնդիրներից է հանրապետությունում ուռուցքաբանական ծառայությունների շարունակական բարելավումը: Ուռուցքաբանական վիրահատությունների գների վերանայման, ճառագայթային բուժման դեպքերի, քիմիաթերապիայի դեղերի ցանկի ընդլայնման և պետության կողմից երաշխավորված անվճար պալիատիվ ծառայության ներդրման միջոցով ուռուցքաբանական հիվանդություններով հիվանդ քաղաքացիներին մատուցվելու են որակյալ բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ:

Նոր տեխնոլոգիաների կիրառմամբ կշարունակվեն իրականացվել մարդու օրգանների (երիկամ և լյարդ) և ոսկրածուծի/ցողունային բջիջների փոխպատվաստման ծառայությունների մատուցումը, որոնք կբարելավեն քրոնիկ երիկամային և լյարդային անբավարարությամբ ու արյան չարորակ հիվանդություններով տառապող անձանց կյանքի որակը և տևողությունը:

Մոր և մանկան առողջությունը շարունակելու է առանցքային դեր խաղալ պետական քաղաքականության մեջ: Հղիների նախածննդյան և ծննդյան որակյալ բուժօգնության տրամադրման, կանանց, հղիների և նորածինների լայնածավալ սքրինինգային ծրագրերի, կանանց համար մեծ ռիսկ ներկայացնող հիվանդությունների դեպքերի վաղ հայտնաբերման ու կանխարգելման, երեխաների պատվաստումներում ընդգրկվածության մեծացման արդյունքում ակնկալվում է զգալի կրճատել մանկական և մայրական մահացության ցուցանիշները, սկրինինգային ծրագրերի իրականացումը, ծննդօգնության և վերարտադրողական առողջության ծառայությունների անհրաժեշտ ծավալների ու մատչելիության ապահովումը՝ ուղղված մայրական, շուրջծննդյան (պերինատալ) հիվանդացության ու մահացության ցուցանիշների նվազեցմանը, ինչպես նաև կանանց վերարտադրողական առողջության բարելավմանը:

Մինչև 2030 թվականը նախատեսվում է վերջ դնել ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի, մալարիայի և անտեսված արևադարձային հիվանդությունների համաճարակներին և ավելի արդյունավետ պայքարել հեպատիտի, ջրի միջոցով փոխանցվող հիվանդությունների և այլ վարակիչ հիվանդությունների դեմ:

Օժանդակող հարակից ծառայությունների միջոցով շարունակվելու է իրականացվել իրավապահ մարմինների և (կամ) ուժային կառույցների համապատասխան որոշումների հիման վրա դատաբժշկական փորձաքննությունները պարզելու համար՝ առողջությանը պատճառված վնասի աստիճանը, մահվան պատճառը և վաղեմությունը (ժամկետը), մարմնական վնասվածքների առկայությունը, բնույթը, առաջացման մեխանիզմը և վաղեմությունը, թունավորումների առկայությունը:

3. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Սոցիալական պաշտպանությունը պատմականորեն հանդիսացել և շարունակում է հանդես գալ որպես պետական քաղաքականության գերակա ուղղություններից մեկը: Սոցիալական պաշտպանության ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակն է երկրում աղքատության մակարդակի էական կրճատումը, ժողովրդագրական իրավիճակի բարելավումն և ՀՀ բնակչության առանձին խմբերի համար սոցիալական երաշխիքների ապահովումը: Վերոհիշյալ նպատակին հասնելու համար սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվում է լայնածավալ պետական միջամտություն:

Միջնաժամկետ հատվածում սոցիալական պաշտպանության ոլորտի պետական քաղաքականության հիմնական թիրախներն են.

- Ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանն ուղղված ծրագրերը, որոնց նպատակը սոցիալապես անապահով ընտանիքների և առանձին խմբերի ներկայացուցիչների թիրախային դրամական աջակցության տրամադրումն է: Ներդրվելու է ընտանիքների անապահովության գնահատման նոր համակարգ:

- ժողովրդագրական իրավիճակի բարելավում: Այդ նպատակով նախատեսվում է կյանքի կոչել ծնելիության խրախուսման, երիտասարդ և երեխաներ ունեցող ընտանիքների աջակցության ծրագրեր, իրագործել միջոցառումներ, որոնց արդյունքում ակնկալվում է, որ ծնելիության գումարային գործակիցը 1.55-ից կբարձրանա 1.65-ի: Կշարունակվի երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության պետական աջակցության ծրագրերը, որի ժամկետը երկարաձգվել է մինչև 2026 թվականը:

- Նախատեսվում է 2025 թվականից ներդնել առողջության համապարփակ ապահովագրության համակարգը՝ միջնաժամկետ ժամանակահատվածում աստիճանաբար համակարգում ներառելով տարբեր սոցիալական խմբերի:

- Կշարունակվի անկանխիկ եղանակով վճարումներից կենսաթոշակառուներին հետվճարի տրամադրումը՝ 2026 թվականից ավելացնելով հետվճարի չափը:

- Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրացում՝ հնարավորինս բացառելով խտրականության դրսևորումը նրանց հանդեպ: Այդ նպատակով միջոցառումներն ուղղված կլինեն հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող ծառայությունների հասցեականության և արդյունավետության բարձրացմանը:

- Խրախուսել մասնավոր կազմակերպությունների մուտքը սոցիալական ծառայությունների մատուցման ոլորտ՝ ձևավորել մրցակցային միջավայր, ներդնել ֆինանսավորման այլընտրանքային մոդելներ, խթանել սոցիալական ծառայությունների բազմազանությունը:

- Բնակչության աղքատ խավի շրջանում կրթության և աշխատանքի քաջալերում, գործարարությունը խթանող ծրագրերի իրականացում, զբաղվածության կարգավորման ծրագրերի հասցեականության բարձրացում, աշխատաշուկայում երիտասարդների, հաշմանդամություն ունեցող անձանց, կանանց մրցունակության բարձրացմանն ուղղված ծրագրերի իրականացում, գործազրկության մակարդակի նվազում: Զբաղվածության բյուջետային ծրագրի շրջանակներում առաջնահերթության կարգով կիրականացվեն զբաղվածության ապահովման միջոցառումներ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց համար՝ պատերազմի մասնակիցների, 2020 թվականի պատերազմական գործողությունների արդյունքում և 2023 թվականից Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված

գործազուրկների, նպաստառու ընտանիքների գործազուրկների, ինչպես նաև այլ խմբերի համար: Նպաստառու ընտանիքների գործազուրկների և կյանքի դժվարին իրավիճակում հայտնված այլ անձանց համար կիրականացվեն նաև ժամանակավոր զբաղվածության ապահովմանն ուղղված, ինչպես նաև Կառավարության ծրագրից և զբաղվածության ներկայում մշակվող ռազմավարությունից բխող այլ միջոցառումներ:

- Կշարունակվեն բնակարանային ապահովման ծրագրերը՝ այդ թվում նաև Լեռնային Ղարաբաղից առանձին շրջաններից տեղահանված ընտանիքների, սահմանամերձ բնակավայրերում ընտանիքների բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության տրամադրումը:

- Կիրականացվի նաև Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածներին օժանդակելու համար աջակցության ծրագրեր, որոնց հիմնական նպատակն է տեղահանված անձանց սոցիալական և տնտեսական ներառումը՝ Հայաստանի Հանրապետությունում երկարաժամկետ բնակության համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու միջոցով:

- Հետևողականորեն կանխարգելել երեխաների մուտքը մանկատներ, ապահովել նրանց ընտանիք վերադարձը, ինչպես նաև սահուն կերպով կազմակերպել մանկատնից դուրս եկող երիտասարդների անկախ կյանքի կազմակերպման գործընթացը:

- Խնամքի ծառայությունների գծով. շահառուներին մատուցվող խնամքի ծառայությունների շարունակականության ապահովումը՝ խրախուսելով ծառայությունների պատվիրակումը մրցութային եղանակով ընտրված կազմակերպություններին, շահառուներին մատուցվող ծառայությունների որակի բարելավումը և խնամքի ծառայությունների ապաինստիտուցիոնալացման գործընթացի համատեքստում այլընտրանքային ծառայությունների ընդլայնումը՝ ներգրավելով համայնքի ներուժը:

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ

Շրջակա միջավայրի պետական քաղաքականությունն ուղղված է շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների համալիր պահպանությանը, բարելավմանը, վերականգնմանը և ողջամիտ օգտագործմանը՝ հավասարակշռելով այն սոցիալական արդարության և տնտեսական արդյունավետության հետ:

Շրջակա միջավայրի կառավարման հիմնական խնդիրն է նվազագույնի հասցնել շրջակա միջավայրի՝ օդի, կլիմայի, ջրի, հողերի, բուսական և կենդանական աշխարհի վրա վնասակար ազդեցությունները, բացառել բնական ռեսուրսների գերշահագործումը և ապօրինի օգտագործումը, ապահովել կանխարգելման միջոցառումների իրականացումը: Ելնելով նշվածից՝ շրջակա միջավայրի կառավարման առաջնահերթ ուղղություններն են՝

- ջրային ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացումը և ջրախնայող ժամանակակից մեթոդների կիրառումը՝ բացառելով ռեսուրսի գերշահագործումը.

- Սևանա լճի էկոլոգիական հավասարակշռության վերականգնումը և պահպանությունը, Արարատյան արտեզյան ավազանի և գետային էկոհամակարգերի պահպանությունը և կառավարումը,

- անտառների կայուն կառավարումը, անտառածածկ տարածքների ընդլայնումը, անտառավերականգնումը և անտառապատումը, դրանց իրականացմանն ուղղված կարողությունների շարունակական զարգացումը,
- կլիմայի փոփոխության հետևանքով առաջացող խնդիրների մեղմման և կանխարգելման, ինչպես նաև հարմարվողականության գործողությունների իրականացումը՝ համաձայն միջազգային համաձայնագրերով ստանձնած պարտավորությունների,
- բնության հատուկ պահպանվող տարածքների հզորացումը, հարակից բնակավայրերի կարողությունների զարգացումը,
- կենսաբազմազանության պահպանությունը և կենսաանվտանգության ապահովումը,
- շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական գործընթացի արդյունավետ իրականացումը,
- կանաչ տնտեսության և կայուն զարգացման երկարաժամկետ նպատակի խթանմանն ուղղված քաղաքականության մշակումն ու իրականացումը,
- շրջակա միջավայրի կառավարման ոլորտում գործող միջազգային կառույցների հետ շարունակական համագործակցության ապահովումը, մասնակցությունը նոր նախաձեռնություններին,
- շրջակա միջավայրի կառավարման տնտեսական մեխանիզմների և լծակների ճկուն համակարգի ներդրմանը, միջազգային կառույցների հետ համատեղ ֆինանսավորման նորարարական մեխանիզմների (ներառյալ բնապահպանական ծրագրերով պարտավորությունների հաշվանցման մեխանիզմի) մշակման և ներդրմանն ուղղված աշխատանքների իրականացում,
- բնապահպանական օրենսդրության ներդաշնակեցումը ՀՀ-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի դիրեկտիվներին և այդ համատեքստում միջազգային համագործակցության ընդլայնումը՝ ճանապարհային քարտեզով նախանշված գործողությունների իրականացման արդյունավետության բարձրացման նպատակով,
- անտառներում և բնության հատուկ պահպանվող տարածքներում էկոտուրիզմի զարգացումը,
- էկոլոգիական իրազեկման, էկոկրթության, մշակույթի, դաստիարակության լայնածավալ միջոցառումների իրականացումը, էկոլոգիական գիտության դերի բարձրացումը:

Վերոհիշյալ ուղղությունները (թիրախները) բխում են ՀՀ կառավարության 18 օգոստոսի 2021 թվականի N 1363-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 4.10 կետում (Շրջակա միջավայրի պահպանություն) ամրագրված առաջնահերթ ուղղություններից:

5. ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարությունը նպատակադրվել է Հայաստանը դարձնել բարձր տեխնոլոգիական, արդյունաբերական երկիր:

ՀՀ կառավարությունը ռազմարդյունաբերական համալիրի զարգացումը սահմանում է որպես զինված ուժերի մարտունակության ապահովման և բարձրացման, տնտեսական աճի, գիտական և տեխնոլոգիական առաջընթացի առանցքային գործոններից մեկը:

Բարձր տեխնոլոգիաների և ռազմարդյունաբերության զարգացման համար անհրաժեշտ միջոցառումների շրջանակներում նախատեսվում է.

- Նպաստել ԲՈՒՀ-մասնավոր հատված համագործակցությանը: Արդյունքում նախատեսվում է աջակցել Հայաստանի Հանրապետությունում բարձր տեխնոլոգիական և տեղեկատվական համայնքի զարգացմանը, ինչպես նաև աշխարհում Հայաստանի, որպես գիտելիքահեն տնտեսություն ունեցող երկրի, առաջատար դիրքի ձևավորմանը:

- Ապակենտրոնացնել ԲՏ ոլորտում վերապատրաստված մասնագետների խտացումը մայրաքաղաքում՝ նպաստելով Երևանի ու մարզերի միջև առկա սոցիալ-տնտեսական անհամամասնությունների կրճատմանը: Կադրերի վերապատրաստման համապատասխան ծրագրի իրականացմամբ սկսնակ մասնագետներին տեխնոլոգիական ոլորտում պրակտիկա անցնելու հնարավորություն ընձեռել:

- Զարգացնել բարձր տեխնոլոգիական ոլորտի համար անհրաժեշտ էկոհամակարգը ներառյալ թիրախավորված գիտահետազոտական աշխատանքների, ստեղծագործական խմբերի, նորաստեղծ ընկերությունների ֆինանսավորումը, ինչպես նաև միջազգային հայտնի աքսելերացիոն ծրագրերին մասնակցելու համար տրամադրվող աջակցության ապահովումը:

- Հայկական Սփյուռքի ներգրավվածությունն ապահովելու նպատակով նախատեսվում է տարբեր ձևաչափերով շարունակական համագործակցության հարթակ ստեղծել հայկական ընկերությունների, կազմակերպությունների և անհատների միջև, որի շնորհիվ հնարավորություն կստեղծվի օգտագործել ինչպես սփյուռքի մասնագիտական ներուժն ու կարողությունները, այնպես էլ ունեցած հնարավորություններն ու կապերը:

- Միասնական թվային միջավայրի ձևավորում՝ թվային համակարգերի ներդրման և կայքերի արդիականացման միջոցով:

- Ռազմարդյունաբերության զարգացման ուղղությամբ շարունակվում է ավելացնել նոր տեխնոլոգիական ուղղություններով գիտահետազոտական աշխատանքների ֆինանսավորումը, ինչպես նաև ապահովել արտադրական կարողությունների զարգացումը:

Ոլորտի հիմնական թիրախներն են.

- Տնտեսության միջնաժամկետ և երկարաժամկետ կայուն աճի շարժիչ ուժը պետք է հանդիսանա նորարարությունը և առաջադեմ տեխնոլոգիաների ստեղծումն ու կիրառումը: Միաժամանակ Հայաստանի զարգացման հենասյունը կրթված, ստեղծագործ և ազատ քաղաքացին է, ուստի գիտելիքահենք տնտեսության զարգացման համար անհրաժեշտ է խրախուսել նորարարությունը և նախաձեռնողականությունը:

- Ապահովել տեխնոլոգիական ընկերությունների կողմից ստեղծված բարձրորակ կրթական ծրագրերի լայն կիրառումը ԲՈՒՀ-երում, ինչպես նաև Հայաստանի տարբեր քաղաքներում գտնվող տեխնոլոգիական կենտրոններում և կրթական այլ հաստատություններում

- Խրախուսել գիտության և մասնավոր հատվածի միջև համագործակցությունը, գիտական հետազոտությունների արդյունքների առևտրայնացումը՝ դրամաշնորհային ծրագրերի իրագործման և ներդրողների ներգրավման միջոցով:

- Ստարտափ էկոհամակարգի զարգացման և միջազգային շուկաներում հայկական ընկերությունների առաջխաղացման և ամրապնդման նպատակով օժանդակել ընկերություններին մասնակցել միջազգային հեղինակավոր աքսելերացիոն կազմակերպությունների ուսուցողական ծրագրերին:

- Աջակցել միջազգային շուկաներում հայկական բարձր տեխնոլոգիական ընկերությունների, նրանց ստեղծած արտադրանքի և ծառայությունների պատշաճ ներկայացմանը և միջազգային G2G (կառավարություն-կառավարության) և B2B (բիզնես-բիզնես) համագործակցության պլատֆորմների զարգացմանը:

- ՀՀ մարզերի համահարթ զարգացման նպատակով խթանել մարզերում ժամանակակից հագեցած տեխնոլոգիական կենտրոնների արդյունավետ գործունեությունը:

- Տրամադրել պետական աջակցություն տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործունեություն իրականացնող առևտրային կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին:

6. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը մշակում և իրականացնում է՝ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների գործունեության արդյունավետության բարձրացման, բնակչության տեղաշարժերի ընթացքում առաջացող իրավահարաբերությունների կարգավորման և պետական գույքի կառավարման արդյունավետության բարձրացման ոլորտներում պետական քաղաքականությունը: Մասնավորապես նախանշվել են ոլորտի հետևյալ հիմնական թիրախները.

- Երկրի ճանապարհատրանսպորտային ենթակառուցվածքների գործունեության արդյունավետության բարձրացումը, ինչպես նաև տնտեսության և ազգաբնակչության պահանջների բավարարման որակի բարձրացման միջոցով՝ անվտանգ և արդյունավետ տրանսպորտային ծառայությունների ապահովումը: Այս ուղղությամբ կշարունակվեն ՀՀ կառավարության ծրագրով նախատեսված նպատակների և այլ ռազմավարական ուղենիշների և թիրախների ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացումը: Մասնավորապես կշարունակվեն ռազմավարական նշանակություն ունեցող Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի, Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման ծրագրի շրջանակներում Դիլիջանի և Պուշկինի թունելների նախագծման և վերանորոգման աշխատանքները: Կմեկնարկեն ռազմավարական նշանակություն ունեցող Սիսիան-Քաջարան ճանապարհի, Քաջարանի թունելի և Գյումրի շրջանցիկ ճանապարհի կառուցմանն ուղղվող աշխատանքները: Ներքին աղբյուրների հաշվին կիրականացվեն ավտոմոբիլային ճանապարհների և տրանսպորտային օբյեկտների կառուցման/հիմնանորոգման աշխատանքները, ավտոմոբիլային ճանապարհների և դրանց վրա գտնվող կառույցների պահպանվածությունը: 2025թ. նախատեսվում է իրականացնել 390 կմ, 2026թ.՝ 430 կմ և 2027թ. 435 կմ երկարությամբ միջպետական, հանրապետական և մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների հիմնանորոգման և միջին նորոգման աշխատանքներ:

- Քաղաքային ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ նախատեսվում է իրականացնել Երևանի մետրոպոլիտենի նորոգման, Երևան քաղաքի Աջափնյակ թաղամասում

մետրոպոլիտենի կայարանի կառուցման, ինչպես նաև Երևան քաղաքի Իսակով-Արշակունյաց ճանապարհի կառուցմանն ուղղվող աշխատանքները:

- ՀՀ կառավարության կողմից կշարունակվի համաֆինանսավորման սկզբունքով համայնքներին սուբվենցիոն ծրագրերի իրականացման համար միջոցների հատկացման գործընթացը: Միաժամանակ որպես փորձնական միջոցառում նախատեսվում են ՀՀ պետական բյուջեից մասնակցային բյուջետավորման ընթացակարգով ձևավորված ծրագրերի/միջոցառումների իրականացման նպատակով հատկացումներ համայնքներին:

- ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի 1363-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի (2021-2026թթ.) 3.4 կետով սահմանված է, որ ՀՀ կառավարության կողմից խթանվելու է էներգաարդյունավետության և էներգախնայողության միջոցառումների լայնածավալ իրականացումը տնտեսության բոլոր ճյուղերում: Հիշյալ դրույթն ամրագրված է նաև ՀՀ էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրում (մինչև 2040 թվականը), «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում և Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի 2022-2030 թվականների ծրագրում: Կայուն էներգետիկայի զարգացումը՝ էներգախնայողության, վերականգնվող էներգիայի, ինչպես նաև էներգետիկ անվտանգության ցուցանիշներին համապատասխան՝ Հայաստանի էներգետիկ անկախություն ապահովելու նպատակադրմամբ: Պետական քաղաքականությունն էներգետիկայի ոլորտում ուղղված է լինելու երկրի էներգետիկ անկախության ապահովմանն ու անվտանգության բարձրացմանը, տարածաշրջանային ինտեգրման գործընթացի ապահովմանը, էներգետիկ ոլորտի կայուն զարգացմանը՝ հենվելով տեղական առաջնային (վերականգնվող) էներգապաշարների լիիրավ և արդյունավետ օգտագործման, ատոմային էներգետիկայի հետագա զարգացման, էներգակիրների մատակարարման տարատեսականացման և էներգաարդյունավետ ու նոր տեխնոլոգիաների ներդրման վրա: Կշարունակվեն ՀՀ կառավարության 15.04.2022թ. N 520–Լ որոշմամբ նախատեսված բնակարանների և անհատական բնակելի տների էներգաարդյունավետ վերանորոգման աշխատանքների պետական աջակցության ծրագիրը, որով կսուբսիդավորվեն շուրջ 12000 շահառուներ: Կմեկնարկեն Հայկական ատոմային էլեկտրակայանի թիվ 2 էներգաբլոկի շահագործման 2026-2030թթ կրկնակի երկարաձգման աշխատանքները:

- Պետական քաղաքականությունը հանքարդյունաբերության ոլորտում ուղղված է թափանցիկության, հանրության առջև բարձր հաշվետվողականության ապահովմանը: Բնական պաշարների արդյունավետ և թափանցիկ կառավարման դեպքում երկիրը կարող է ստանալ տնտեսական արդյունքներ, որոնք կօգնեն ապահովել տնտեսական աճ:

- Ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ոլորտում առկա խնդիրների լուծումը, մասնավորապես՝ խմելու ջրի որակի բարձրացումը, յուրաքանչյուր սոցիալական խմբի և շահառուի համար ծառայությունների հասանելիության ապահովումը, սպառողներին մատուցվող ծառայությունների որակի շարունակական բարելավումը և պահանջների բավարարումը:

- ՀՀ կառավարության կողմից կշարունակվի ոռոգման ոլորտում առկա խնդիրների լուծումը և վիճակի բարելավման նպատակով անհրաժեշտ օրենսդրական և կառուցվածքային բարեփոխումների նախապատրաստումը և իրականացումը: Մասնավորապես. կշարունակվի ոռոգման ջրի կայուն մատակարարումը, ջրամբարաշինության ծրագրերի նախապատրաստումը և իրականացումը: Այդ ուղղությամբ 2025թ-ին նախատեսվում է իրականացնել թվով 9 փոքր և

միջին ջրամբարների տեխնիկատնտեսական ուսումնասիրությունների և դրանց արդյունքներով նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերումը, կտրվի թվով 3 ջրամբարների կառուցման աշխատանքների մեկնարկը, 2026-2027թթ-ին՝ թվով 6 ջրամբարների շինարարության շարունակականության ապահովումը: Բացի այդ, գործուն միջոցներ կձեռնարկվեն ոռոգման համակարգերի սպասարկման տարածքում ընդգրկված և լրացուցիչ ոռոգելի հողերի ջրամատակարարման համար անհրաժեշտ ջրի քանակի ապահովման այլ հնարավորությունների ստեղծման (ինքնահոս համակարգերի, օրվա կարգավորման ջրավազանների նախագծում, վերակառուցում և շինարարություն), ինչպես նաև գործող ջրամբարների պատշաճ շահագործման ուղղությամբ:

- ՀՀ կառավարությունը կշարունակի կոլեկտորադրենաժային ծառայությունների մատուցումը՝ խոնավ (գերխոնավ) գյուղատնտեսական հողատարածքների մելիորատիվ վիճակի բարելավման աշխատանքների իրականացումը, «Արփա-Սևան» թունելի անվտանգ շահագործման շարունակականության ապահովումը, հեղեղման ռիսկի նախնական գնահատման իրականացում, հեղեղումների վտանգի, ռիսկի և կառավարման քարտեզների ու պլանների կազմում:
- ՀՀ կառավարության որդեգրած քաղաքականության ներքո կշարունակվի նաև պետական գույքի կառավարման ապահովումը, պետական գույքի մասնավորեցման, օտարման գործընթացներում հրապարակայնության և թափանցիկության ապահովումը, վաճառքի կազմակերպման ժամանակակից ձևերի և մեթոդների կիրառումը, վարձակալության գործընթացի մեկ միասնական կանոնակարգով և մոտեցմամբ իրականացումը, վարչարարության պարզեցումը և կրճատումը, ինչպես նաև անհատույց օգտագործման տրամադրման գործընթացում մրցակցային դաշտի ապահովումը:

7. ԷԿՈՆՈՄԻԿԱ

Առաջիկա տարիների տնտեսական զարգացման քաղաքականության հիմնական նպատակն է լինելու տնտեսական աճի շարունակական ապահովումը (առնվազն տարեկան 7%, իսկ բարենպաստ արտաքին միջավայրի դեպքում՝ 9% տնտեսական աճ) Հայաստանի քաղաքացիների բարեկեցության շարունակական բարձրացումը՝ վերջիններիս տնտեսական կյանքում առավել ներառականության ապահովմամբ՝ զուգակցելով այն քաղաքացիների աշխատանքային եկամուտների բարձրացմամբ և ունակությունների ու հնարավորությունների կիրառման համար բարենպաստ պայմանների ստեղծմամբ:

Տնտեսական քաղաքականությունը միտված է լինելու նաև տնտեսության ոլորտներում արտադրողականության աճի ապահովմանը՝ տնտեսության տեխնոլոգիական մոդեռնիզացիայի և թվային տնտեսության ձևավորման, ինչպես նաև գործարար միջավայրի շարունակական բարելավման ու այդ ենթատեքստում՝ օրենսդրական դաշտի շարունակական կատարելագործման գործիքակազմի կիրառմամբ:

Տնտեսական քաղաքականության վերջնարդյունքների ապահովումը հիմնված է լինելու վերջիններիս իրականացմանն ուղղված ռազմավարական փաստաթղթերով նախատեսված միջոցառումների և գործիքակազմի ամբողջական կիրառման վրա, ինչը նպատակաուղղված է լինելու ինչպես օտարերկրյա, այնպես էլ՝ մասնավոր ներդրումների խրախուսմանը, գործարար միջավայրի ու ձեռներեցության զարգացմանը, զբոսաշրջության և զբոսաշրջային ինդուստրիայի

զարգացմանը, արդյունաբերության, գյուղատնտեսության, ինչպես նաև ծառայությունների ոլորտի դիվերսիֆիկացմանն ու զարգացմանը:

Շարունակական և կարևորագույն ուղղություններից մեկն է հանդիսանալու արտաքին տնտեսական գործունեության զարգացումը, ինչին միտված է լինելու արտահանման խրախուսմանն ու դիվերսիֆիկացմանը (թե՛ ապրանքների և թե՛ նոր շուկաների գրավման) քաղաքականությունը՝ նպատակադրելով ապահովել արտահանման առնվազն 60-70% աճ:

Արդյունաբերության մրցունակության աճի առաջնային աղբյուր է դիտարկվում արտադրողականության աճը և միջազգային մրցունակության բարձրացումը՝ տեխնոլոգիաների վերազինման, գիտելիքի կլանման, արտահանման կարողությունների զարգացման, լոգիստիկ խնդիրների մեղմման, և՛ ներքին, և՛ միջազգային թիրախային շուկաների մուտքի, և՛ տեղեկատվության հասանելիության ապահովման միջոցով:

Ռազմավարական փաստաթղթերով նախատեսված գործողությունները միտված են լինելու հնարավորություն ընձեռելու Հայաստանի Հանրապետությունում արտադրվող ապրանքները (ծառայությունները), մտավոր գործունեության արդյունքներն արտահանել օտարերկրյա պետությունների շուկաներ՝ ստեղծելով առավել բարենպաստ պայմաններ արտաքին տնտեսական գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների համար, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության համար ռազմավարական ոլորտներում տնտեսական աճի ներառականության համար ապահովել քաղաքացիների մասնագիտական կարողությունների ու հմտությունների զարգացումը և աշխատուժի հմտությունների մակարդակի բարձրացումը:

Միջնաժամկետ հատվածում նախատեսվում է հետևյալը.

Դեղագործական արդյունաբերության ոլորտի՝

- արտադրության ծավալները 2027 թվականին հասցնել 40 մլրդ դրամի,
- արտահանման ծավալները՝ 25 միլիարդ դրամի,
- աշխատողների թվաքանակը՝ 1500 մարդու:

Հայաստանի տնտեսության մրցունակության բարձրացման և կայուն զարգացման ապահովման կարևորագույն մասն են կազմելու ՓՄՁ սուբյեկտները: Միջնաժամկետ հատվածում նախատեսվում է ՓՄՁ սուբյեկտների մասնաբաժինը ՀՆԱ-ում հասցնել 55%-ի, իսկ տնտեսվարողների մոտ արտադրողականությունը բարձրացնել՝ հասցնելով 12$ ՀՆԱ/ժամ*մարդ-ի: Հայաստանի Հանրապետությունում ձեռներեցության ոլորտի ուժեղացման, կազմակերպությունների մրցունակության աճի, ներքին և միջազգային թիրախային շուկաներում ներկայացվածության բարձրացման նպատակով՝ նախատեսվում է նպաստել ՓՄՁ սուբյեկտների ձեռնարկատիրական հմտությունների զարգացմանը, հովանոցային երաշխիքի ներդրմանը, ֆինանսական միջոցների հասանելիության ապահովմանը՝ առանձնապես շեշտադրելով նորարար և աճի ներուժ ունեցող ՓՄՁ սուբյեկտներին:

Տնտեսական զարգացման շարժիչը լինելու են նորարարությունը և ստեղծագործելու ձիրքը, գործարար նախաձեռնողականությունը, արդյունավետություն փնտրող ներդրումները և տեխնոլոգիական տարածումը՝ այդպիսով ընդլայնելով հնարավորի սահմանները:

Որակի ենթակառուցվածքի բարելավումը իրականացվելու է տեխնիկական կանոնակարգման օբյեկտ հանդիսացող արտադրանքների բացակայող փորձարկման լաբորատորիաների հիմնման, ստուգաչափման և տրամաչափարկման լաբորատորիաների հիմնման և

արդիականացման, միջազգային չափանիշներին համապատասխան արդյունաբերական չափագիտական կարողությունների ստեղծմամբ (ազգային էտալոններ, լաբորատորիաներ)՝ վերջնարդյունքում ունենալով միջազգայնորեն ճանաչելի համակարգ:

Զբոսաշրջության՝ որպես տնտեսության գերակա ճյուղի պետական քաղաքականությունը ուղղված է լինելու կայուն, համաչափ և ներառական տարածքային տնտեսական զարգացմանը, ազգային եկամտի ավելացմանը, բնակչության կենսամակարդակի բարձրացմանը, աշխատատեղերի ստեղծմանը, Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի զբաղեցրած տեղի և հասանելիության բարձրացմանը, Հայաստանի Հանրապետության հեղինակության ամրապնդմանը՝ ներկայացնելով հայկական զբոսաշրջային արդյունքը թե՛ չորս հիմնական՝ մշակութային, գաստրո (խոհանոց և գինի), բնահենք և արկածային (ներառյալ՝ ձմեռային), թե՛ զարգացման ներուժ ունեցող ուղղություններով, Հայաստանի դիրքավորմանը որպես որակյալ զբոսաշրջային ծառայություններ առաջարկող երկրի:

Տնտեսական քաղաքականությունը միտված է լինելու գյուղատնտեսության ինտենսիվացմանը, հողային և ջրային ռեսուրսների արդյունավետ և խնայողաբար օգտագործմանը, մասնավորապես ոռոգման կաթիլային համակարգերի ընդլայնմանը և հողերի որակի շարունակական բարելավմանը:

Կարևորագույն թիրախներն են լինելու պարենային անվտանգության մակարդակի բարձրացումը, անասնապահության և բուսաբուծության զարգացումը:

Գյուղատնտեսության ինտենսիվ զարգացման նպատակով շեշտադրվելու է գյուղատնտեսության ոլորտում նոր, ժամանակակից տեխնոլոգիաների ներդրումն ու տեխնոլոգիական լուծումների կիրառումը: Կարևորվելու են գյուղատնտեսական արտադրանքի իրացման ու արտահանման խթանումը, ամբողջ արժեշղթայում գյուղացիական տնտեսությունների և կոոպերատիվների, գյուղատնտեսական մթերք վերամշակողների գործունեության և վերջիններիս եկամուտների ավելացմանն ուղղված միջոցառումների մշակումն ու իրականացումը:

Նշված քաղաքականության իրագործման արդյունքում նախատեսվում է ավելացնել ինտենսիվ այգիների տարածքները, շարունակել սուբսիդավորել գյուղատնտեսական մշակաբույսերի ապահովագրավճարների 50-60%-ը, հանրապետությունում առկա տեխնիկայի հավաքակազմը յուրաքանչյուր տարի թարմացնել շուրջ 500 միավոր նոր գյուղատնտեսական տեխնիկայի տարբեր տեսակներով և շուրջ 250 միավոր ագրոպարենային ոլորտի նոր սարքավորումներով, գյուղատնտեսական հումքի մթերման գործընթացին աջակցության արդյունքում առաջիկա 5 տարիներին հումքի մթերման և թողարկվող արտադրանքի ծավալներն ավելացնել մինչև 50%-ով կամ տարեկան շուրջ 10%-ով, գինեգործական արտադրանքի ճանաչելիության բարձրացման միջոցառումների միջոցով արտահանման ծավալները տարեկան ավելացնել 20%-ով, աջակցել գյուղատնտեսական նշանակության հողերի կոնսոլիդացմանն ու անասնաբուծության ճյուղում իրականացվող ներդրումային ծրագրերին՝ արդյունքում նվազեցնել հողերի չօգտագործման մակարդակը և նպաստել հանրապետությունում առնվազն 5 խոշոր և արդիական անասնաբուծական համալիրների ստեղծմանը:

Հայաստանի Հանրապետության ագրարային հատվածում պետական քաղաքականությունն առաջիկա տարիներին նպատակաուղղված է լինելու ճյուղի և նրան սպասարկող ոլորտների գործունեության արդյունավետության բարձրացմանը, ժամանակակից պահանջներին համապատասխան ոռոգման զարգացմանը՝ վերացնելով ջրի պահուստավորման, ոռոգման ենթակառուցվածքների, հողերի կոնսոլիդացիայի, ուսուցողական ծառայությունների ու վարկերի

հասանելիության հետ կապված ոլորտային խոչընդոտները, ինչպես նաև կլիմայադիմակայուն ակտիվների և ծառայությունների բազմազանության, խոցելի տեղական համայնքների արժեշղթայի ներառականության ավելացմանը: Այս ամենի հիման վրա ստեղծվելու են հատուկ պայմաններ, որոնք նպաստելու են գյուղատնտեսության հետագա զարգացմանը և ընդլայնված վերարտադրության կազմակերպմանը, գյուղացիական տնտեսությունների իրական եկամուտների ավելացմանը, հանրապետության պարենային ապահովության և պարենային անվտանգության մակարդակի բարձրացմանը:

8. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ՄԺԾԾ ժամանակահատվածում արդարադատության ոլորտում շարունակաբար իրականացվելու է պետական քաղաքականությունը, մասնավորապես՝ հարկադիր կատարման, քրեակատարողական, պրոբացիայի, սնանկության, փաստաբանության, հաշտարարության, նոտարական գործունեության, քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման, իրավաբանական անձանց պետական գրանցման և հաշվառման, անհատ ձեռնարկատերերի հաշվառման, զանգվածային լրատվության միջոցների հաշվառման, անձնական տվյալների պաշտպանության, շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման, իրավական փորձաքննության, միջազգային իրավական փոխօգնության, հակակոռուպցիոն և պետական ծառայությունների մատուցման միասնական գրասենյակների գործունեության ոլորտներում:

Մասնավորապես, միջնաժամկետ հատվածում դատահիրավական ոլորտում աշխատանքներն ուղղված են լինելու Սահմանադրական բարեփոխումների անցկացմանը, դատական իշխանության անկախության և անաչառության ամրապնդմանը, դատավորի թեկնածուի հավակնորդների բարեվարքության ստուգմանը, դատարանների շենքերի և նյութատեխնիկական պայմանների բարելավմանը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների միասնական հարթակի ապահովմանը, սնանկության համակարգի արդյունավետության բարձրացմանը, վեճերի լուծման այլընտրանքային եղանակների զարգացմանը, Էլեկտրոնային արդարադատության միասնական համակարգի ներդրմանը:

Հակակոռուպցիոն բնագավառում իրականացվելու են կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման մեխանիզմների բարեփոխումներ, հանրային իրազեկման ծրագրերի շարունակական իրականացում, Հակակոռուպցիոն և վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանների գործունության ապահովում:

Մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում իրականացվելու են մասնավորապես՝ Մարդու իրավունքների պաշտպանվածության և մարդու ազատ ստեղծագործելու, արժանապատիվ ու երջանիկ ապրելու համար նպաստավոր պայմանների ստեղծում, բոլորի՝ օրենքի առջև հավասարության երաշխավորում, խտրականության դրսևորումների կանխում, ինչպես նաև հավասար իրավունքների իրագործում Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների առավել արդյունավետ պաշտպանություն, օրենսդրական երաշխիքների ամրագրում, անվճար իրավաբանական օգնության տրամադրման շրջանակների ընդլայնում:

Քրեակատարողական և պրոբացիայի համակարգում իրավիճակը բարելավելու, ինչպես նաև քրեական պատիժների նպատակային իրագործումն առավել արդյունավետ դարձնելու համար

թիրախավորվել են հետևյալ առանցքային նպատակները՝ միջազգային չափանիշներին համահունչ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության մեխանիզմների կատարելագործումը, ազատությունից զրկված անձանց պահման պայմանների բարելավումը, ազատությունից զրկված անչափահաս անձանց պահման պայմանների բարելավումը, ազատությունից զրկված և հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի պայմանների ապահովումը, դատապարտյալների և պրոբացիայի շահառուների վերասոցիալականացումը, քրեակատարողական հիմնարկների օպտիմալացումն ու արդիականացումը, քրեակատարողական ծառայության և քրեակատարողական հիմնարկների կառավարման մոդելի և կադրային քաղաքականության կատարելագործումը, կոռուպցիայի հաղթահարումը, պրոբացիայի ծառայության գործունեության արդյունավետության բարձրացումը:

9. ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արտաքին գործերի նախարարությունը մշակում և իրականացնում է արտաքին գործերի, դիվանագիտական ծառայության, միջազգային հարաբերություններում Հայաստանի Հանրապետության տեսակետների ներկայացման և հետաքրքրությունների առաջմղման, օտարերկրյա պետությունների հետ դիվանագիտական և հյուպատոսական հարաբերությունների իրականացման՝ այդ թվում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության, օտարերկրյա պետություններում, միջազգային կազմակերպություններում ներգրավման միջոցով Հայաստանի Հանրապետության առաջնահերթությունների սպասարկման, Հայաստանի Հանրապետության միջազգային իրավապայմանագրային հարաբերությունների, Հայաստանի Հանրապետության պետական արարողակարգային միջոցառումների ապահովման, պետական մարմիններին իրենց գործունեության համար արտաքին քաղաքականության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովման և վերապատրաստման ոլորտներում Կառավարության քաղաքականությունը:

Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունն ուղղված է Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության ու պետական շահերի պաշտպանությանը, Հայաստանի Հանրապետության շուրջ անվտանգային միջավայրի ձևավորմանը, տարածաշրջանային խաղաղության և կայունության հաստատմանը, գործընկերների հետ համագործակցության խթանմանը և հարաբերությունների կարգավորմանը, ԼՂ-ից բռնի տեղահանված հայ բնակչության իրավունքների պաշտպանությանը, երկկողմ և բազմակողմ միջազգային հարթակներում գործունեության ծավալմանը, օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և իրավաբանական անձանց շահերի պաշտպանության ապահովմանը, միջազգային և տարածաշրջանային գործընթացներին Հայաստանի ներգրավվածության ավելացմանը, միջազգային կազմակերպություններում արտաքին քաղաքական, անվտանգային, սոցիալ-տնտեսական, մշակութային և այլ ոլորտներին առնչվող Հայաստանի Հանրապետության հետաքրքրությունների առաջմղմանը: Տվյալ թիրախները արտացոլում են 2021-2026թթ. «Հայաստանի Հանրապետության Կառավարության Ծրագրի» 1.2.1 և 1.2.2 կետերում նշված դրույթները:

10. ՖԻՆԱՆՍՆԵՐ

Առաջիկա տարիներին ֆինանսների ոլորտում հիմնական նպատակը լինելու է ՀՀ կառավարության միասնական պետական քաղաքականության ապահովումը, պետական ֆինանսների և պետական պարտքի արդյունավետ կառավարումը, հարկաբյուջետային քաղաքականության մշակումը և իրականացման ապահովումը, ներառյալ՝ բյուջետային գործընթացի կառավարումը, պետական գնումների արդյունավետության բարձրացմանն ուղղված շարունակական բարեփոխումների իրականացումը:

Ոլորտի խնդիրների և կանոնադրական գործառույթների համակարգված իրագործումը նախատեսվում է ապահովել հետևյալ ծախսային ծրագրերով.

«Պետական պարտքի կառավարում» ծրագրի նպատակն է ՀՀ կառավարության ֆինանսական կարիքների բավարարման մշտական հնարավորության ապահովումը՝ երկարաժամկետ հատվածում նվազեցնելով պարտքի սպասարկման մեծությունը: Ծրագրի վերջնական արդյունքն է ՀՀ կառավարության պարտքի օպտիմալ կառուցվածքի ձևավորումը՝ հաշվի առնելով պոտենցիալ ռիսկերը:

«Հանրային հատվածի ֆինանսական ոլորտի մասնագետների վերապատրաստում» ծրագրի նպատակն է հանրային հատվածի ֆինանսական ոլորտի մասնագետների աշխատանքի արդյունավետության բարելավումը, հանրային ֆինանսների կառավարման նոր գիտելիքների և փորձի յուրացումը: Նախատեսվում է, որ ծրագրի շրջանակներում շարունակական վերապատրաստում կանցնեն և արդյունքում կապահովվի որակավորված ներքին աուդիտորների, ֆինանսական և ծրագրային մասնագետների, ինչպես նաև գնումների համակարգողների ամբողջական ընդգրկվածություն համապատասխան վերապատրաստման միջոցառումներում:

«Հանրային ֆինանսների կառավարման բնագավառում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ» ծրագրի նպատակն է հարկաբյուջետային քաղաքականության մշակումը և իրականացման ապահովումը, հանրային ֆինանսների արդյունավետ կառավարումը:

«Գնումների գործընթացի կարգավորում և համակարգում» ծրագրի նպատակն է հանրային միջոցների ծախսման արդյունավետության բարձրացումը և կոռուպցիոն ռիսկերի նվազեցումը:

11. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Պաշտպանության ոլորտն իր մեջ ընդգրկում է ՀՀ զինված ուժերի ռազմավարական ծավալումն ապահովող մարտական պատրաստականության պահպանման, արտաքին թշնամուց ՀՀ պետական սահմանների պաշտպանության ապահովման, արդիական պահանջներին համապատասխանող ճկուն և ժամանակակից ռազմական առողջապահական համակարգի ապահովման, զինված ուժերի պատրաստության մակարդակի բարձրացման, միջազգային կայուն և բազմակողմ ռազմաքաղաքական հարաբերությունների ամրապնդման շրջանակներում իրականացվող միջոցառումները (հույժ գաղտնի):

12. ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությունը պետության և հասարակության այնպիսի կացություն է, երբ ապահովված է անձի, հասարակության և պետության անվտանգությունը, երկրի տարածքային ամբողջականությունը, ինքնիշխանությունը, սահմանադրական կարգը, տնտեսության բնականոն զարգացումը, հասարակության նյութական և հոգևոր արժեքների, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, շրջակա միջավայրի պաշտպանությունը ներքին և արտաքին սպառնալիքներից:

Հայաստանի Հանրապետության արտաքին և ներքին անվտանգության ապահովման կարևորագույն նախապայմանն անվտանգության միջավայրի համակողմանի գնահատման հիման վրա արտաքին, ներքին և պաշտպանական քաղաքականության ճկուն գործիքակազմի ձևավորումն է, ինչը հնարավորություն կտա ՀՀ կառավարության քաղաքական առաջնահերթությունները կյանքի կոչելու համար ստեղծել կայուն և կանխատեսելի մթնոլորտ, իսկ արտաքին անվտանգության ապահովման երաշխիքների համար՝ բավարար կարողություններ: ՀՀ կառավարության առաջնահերթությունների թվում են Հայաստանի Հանրապետության ռազմավարական նշանակության օբյեկտների և ենթակառուցվածքների անվտանգության ապահովումը, անվտանգության մակարդակի բարձրացմանն ուղղված խնդիրների և դրանցից բխող միջոցառումների իրականացումը:

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության նպատակներն են հետախուզական գործունեությունը, հակահետախուզական գործունեությունը, ռազմական հակահետախուզական գործունեությունը, պետական սահմանի պահպանությունը և պայքարը հանցագործությունների դեմ: Այս առումով վերջնական արդյունքներն են ՀՀ ազգային անվտանգության սպառնալիքների մասին տեղեկությունների ստացումը և կանխարգելիչ միջոցառումների անցկացումը, օտարերկրյա պետությունների հատուկ ծառայությունների և այլ կազմակերպությունների, ինչպես նաև առանձին անձանց հետախուզական գործունեության բացահայտումը, կանխումը և խափանումը, օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ հանցագործությունների բացահայտումը, կանխումը և խափանումը, ՀՀ պետական սահմանի անձեռնմխելիության ապահովումը, սահմանափակումների կանխումը և խափանումը:

13. ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀՀ պետական պահպանության ծառայությունը գործում է ՀՀ օրենսդրական դաշտի պահանջների սահմաններում, ինչպես նաև 2003 թվականի դեկտեմբերի 3-ին ընդունված «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքով իրականացնում է՝ օրինականության, մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, պատիվն ու արժանապատվությունը հարգելու, մարդասիրության, անընդհատության, քաղաքական չեզոքության, կենտրոնացված ղեկավարման, գործունեության բացահայտ և գաղտնի մեթոդների ու միջոցների կիրառման համակցության սկզբունքները:

ՀՀ պետական պահպանության ծառայության նպատակները և թիրախները շարունակում են մնալ՝ պետական պահպանության օբյեկտների անվտանգության ապահովումը և այդ նպատակով իրականացվելիք միջոցառումների համալիր կազմակերպումը, պահպանվող օբյեկտներին սպառնացող վտանգների կանխատեսումն ու կանխարգելումը, ինչպես նաև բոլոր տեսակի իրավախախտումների բացառումը:

14. ԱՐՏԱՔԻՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆ

ՀՀ արտաքին հետախուզության ծառայությունն իրականացնում է ՀՀ կենսական շահերին առնչվող տեղեկատվության ստացման և մշակման, ինչպես նաև ՀՀ արտաքին քաղաքականության, ռազմաքաղաքական, տնտեսական, գիտատեխնիկական, շրջակա միջավայրի պահպանության ու կենսական այլ ոլորտներում պետական քաղաքականության իրականացման աջակցություն:

ՄԺԾԾ ժամանակահատվածում արտաքին հետախուզության ծառայության գործունեությունն ուղղված է լինելու Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրով Արտաքին հետախուզության ծառայության մասով սահմանված ՀՀ արտաքին հետախուզության ծառայության ստեղծմանը, արտաքին հետախուզական գործունեության ապահովմանը:

ՀՀ արտաքին հետախուզության ծառայության առաքելությունն է արտաքին քաղաքականության, ռազմաքաղաքական, տնտեսական, գիտատեխնիկական, շրջակա միջավայրի պահպանության և կենսական այլ ոլորտներում պետական քաղաքականության աջակցումը:

Ոլորտային քաղաքականության թիրախների ապահովման նպատակով ՄԺԾԾ ժամանակահատվածում հիմնական ծախսային գերակայություններն են՝ արտաքին սպառնալիքներից անձի, հասարակության և պետության պաշտպանությունը, ՀՀ կենսական շահերին առնչվող տեղեկատվության ստացումը և մշակումը, որն ուղղված է ՀՀ արտաքին քաղաքականության, ռազմաքաղաքական, տնտեսական, գիտատեխնիկական, շրջակա միջավայրի պահպանության ու կենսական այլ ոլորտներում պետական քաղաքականության իրականացման աջակցությանը, արտաքին հետախուզության ծառայության տեխնիկական հագեցվածության, արտաքին հետախուզության ծառայության տրանսպորտային սարքավորումներով հագեցվածության և արտաքին հետախուզության ծառայության շենքային պայմանների ապահովմանը:

15. ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ներքին գործերի նախարարությունը, վերջնական կազմավորումից հետո, իր մեջ ներառում է երեք խոշոր ծառայություն՝ ոստիկանություն, փրկարար ծառայություն, միգրացիայի և քաղաքացիության ծառայություն:

ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության կարևորագույն հայեցակարգային խնդիրը, ոստիկանությունում մեկնարկած բարեփոխումների նպատակը ժամանակակից մարտահրավերներին դիմակայող, մասնագիտացված ու տեխնիկապես հագեցած, բարեվարք և հարգանքի արժանի ոստիկանության վերափոխումն ու ժողովրդավարական իրավակարգին բնորոշ նոր ոստիկանի կերպարի ստեղծումն է:

Նշված նպատակադրումների իրականացմանն ուղղված միջոցառումները, որոնք ներառված են ոստիկանության բարեփոխումների ռազմավարությունում և Կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրում, հանդիսանալու են ոստիկանության գործունեության ոլորտում առաջիկա տարիներին նախատեսվող բոլոր բարեփոխումների հիմքը:

Ներքին գործերի նախարարության վերջնական ձևավորումից հետո նախատեսվում է Ոստիկանության զորքերն ապառազմականացնել և վերակազմակերպել ոստիկանության գվարդիայի: Ոստիկանության գվարդիայի կառուցվածքում նախատեսվում է ներառել ներկայիս ոստիկանության զորքերը, ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունը, ճանապարհային ոստիկանության ուղեկցող ստորաբաժանումը, ոստիկանության տարբեր ստորաբաժանումներում գործող հատուկ նշանակության ստորաբաժանումները, ինչպես նաև քրեական վարույթին ներգրավված անձանց պաշտպանության ստորաբաժանումները:

Նոր մոդելի պայմաններում նախատեսվում է օրենսդրորեն ոստիկանության գվարդիային վերապահել գործունեության հետևյալ ուղղությունները՝

1) հասարակական կարգի պահպանությունը և հասարակական անվտանգության ապահովումը,

2) Ոստիկանության կողմից պետական պահպանության ենթակա պետական մարմինների և կազմակերպությունների շենքերի ու շինությունների, կարևորագույն նշանակության օբյեկտների, ինչպես նաև հատուկ բեռների տեղափոխման անվտանգության ապահովումը,

3) հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովմանն աջակցելը,

4) քրեական վարույթն իրականացնող մարմիններին օժանդակելը,

5) ռազմական դրության իրավական ռեժիմի և արտակարգ դրության իրավական ռեժիմի ապահովմանը, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանությանը մասնակցելը:

Սկզբունքորեն վերաիմաստավորվելու է Ոստիկանության տարածքային մարմինների կազմակերպական ձևն ու գործառույթները, որը միտված է լինելու ինչպես ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների բացահայտման արդյունավետության բարձրացմանը, այնպես էլ այդ մարմինների գործունեությունը առավելապես հանցագործությունների կանխարգելմանը նպատակաուղղելուն:

ՀՀ ներքին գործերի նախարարության ձևավորմամբ պայմանավորված՝ ներկայումս ընթանում է ՆԳՆ կրթահամալիրի և Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի միավորման գործընթաց: Մշակվում է միասնական կրթահամալիրի ձևավորման հայեցակարգ, որի նպատակն է ստեղծվելիք կրթահամալիրի կրթական ծրագրերի իրականացումը նպատակաուղղել ոստիկանության գվարդիայի, պարեկային ծառայության, քրեական ոստիկանության, համայնքային ոստիկանության, փրկարար ծառայության և ճգնաժամային կառավարման կենտրոնի կադրային պահանջարկը բավարարելուն, սկսած նշված համակարգեր առաջին անգամ ծառայության անցնելուց, մինչև ծառայողների մասնագիտական պատրաստվածության բարձրացում:

Փրկարար ծառայության հիմնական նպատակներն են.

- մասնագիտացված փրկարարական ուժերի կարողությունների զարգացում, պատրաստականության բարձրացում, ժամանակակից վարժահրապարակի կառուցում, փրկարարական ծառայողների վերապատրաստում, գիտելիքների և հմտությունների կատարելագործում.
- քաղաքացիական պաշտպանության հենակետերի միջոցով ՀՀ սահմանամերձ և բարձր լեռնային համայնքներում փրկարարական և հրդեհաշիջման աշխատանքների իրականացում, բնակչության

պաշտպանության, ռազմավարական նշանակության օբյեկտների և ենթակառուցվածքների անվտանգության ապահովում.

- աղետների վաղ ազդարարման համակարգի զարգացում, օրենսդրական դաշտի կատարելագործում, հավաստի օպերատիվ տեղեկատվության տրամադրման հնարավորություն, մարդկային կորուստների և տնտեսական վնասների նվազեցում.
- զանգերի միասնական կառավարման կենտրոնի հիմնման, ահազանգման մեկ միասնական հեռախոսահամարի ներդրման հետ կապված աշխատանքների իրականացում, «911» դիսպետչերական ծառայության զարգացում՝ ծառայության մատուցումը հնարավորինս մոտեցնելով միջազգային չափանիշներին.
- արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման ընթացքում ճգնաժամային կառավարման համակարգի կատարելագործում:
- սեյսմիկ պաշտպանության ոլորտում սեյսմիկ վտանգի գնահատման հուսալիությունը բարձրացնելու նպատակով սեյսմիկ պաշտպանության ազգային դիտացանցի արդիականացում և թվայնացում:
- տեխնիկական անվտանգության ոլորտում՝ արտադրական վտանգավոր օբյեկտների շահագործմամբ պայմանավորված տեխնածին վթարների, դրանց հետևանքով հասարակությանը և տնտեսությանը պատճառվող վնասների ռիսկերի նվազեցում:
- ՀՀ կառավարության կողմից հաստատված պետական պահուստի համակարգի զարգացման և բարեփոխումների հայեցակարգի դրույթների իրականացում, նյութական արժեքների կուտակում, թարմացում, փոխարինում և պահպանում: Այս ոլորտում նոր քաղաքականության մշակում՝ ընդգրկելով մասնավոր սեկտորի հնարավորություններն ու կարողությունները:

Միգրացիայի և քաղաքացիության ծառայության առաջնահերթ խնդիրներն են.

- ՀՀ-ում կենսաչափական փաստաթղթերի տրամադրման համակարգի արդիականացում և բնակչությանը մատուցվող էլեկտրոնային ծառայությունների հնարավորությունների ավելացում,
- հին անձնագրերի և էլեկտրոնային քարտերի աստիճանաբար փոխարինում ապագա սերնդի տեխնոլոգիաներով,
- ապաստան հայցողներին և նրանց ընտանիքներին ժամանակավոր կացարանի, սննդի, իրավաբանական խորհրդատվական անվճար ծառայությունների մատուցում,
- ապաստան հայցողների հետ իրենց հասկանալի լեզվով հարցազրույցի անցկացման, ինչպես նաև ապաստանի ընթացակարգում անհրաժեշտ փաստաթղթերի թարգմանչական ծառայությունների կազմակերպում,
- քաղաքացիների, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիներին տրամադրվող ծառայությունների թվայնացում, պարզեցում և ավտոմատացում:

16. ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Առաջիկա տարիներին ՊԵԿ-ի կողմից իրականացվող հիմնական նպատակն է լինելու հարկային և մաքսային օրենսդրության ամբողջական և համահավասար կիրառումը: «1023. Հարկային և մաքսային ծառայություններ» ծրագրի նպատակն է՝

- Հարկային և մաքսային օրենսդրության ամբողջական և համահավասար կիրառումը, վարչարարության պլանավորումը, պարզեցումը, վարչարարության բարելավման ծրագրերի համակարգումը, մոնիտորինգը, էլեկտրոնային և թվային գործիքակազմի կիրառումը, արդյունավետ և թիրախային հսկողությունը, իրազեկման և սպասարկման որակյալ ծառայությունները նպաստում են հարկային և մաքսային կարգապահության մակարդակի բարելավմանը, արդյունավետ հարկային և մաքսային վարչարարության իրականացմանը, պետական բյուջեի հարկային եկամուտների և պետական տուրքերի ծրագրավորված ցուցանիշների կատարմանը,
- Հարկային և մաքսային ծառայությունների համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով ապահովումը նպաստում է ՊԵԿ բնականոն գործունեության անխափան ընթացքին և որակյալ ծառայությունների մատուցմանը, հարկային և մաքսային վարչարարության արդյունավետության բարձրացմանը,
- Փորձաքննության ծառայությունները հնարավորություն են ընձեռնում ապրանքների ճշգրիտ դասակարգման, ինչն ապահովում է հսկողության օբյեկտիվությունը և արդյունավետությունը:
- Յուրաքանչյուր տարի հարկային և մաքսային ծառայողները ենթակա են պարտադիր վերապատրաստման ՊԵԿ-ի առջև դրված խնդիրների արդյունավետ իրագործման տեսանկյունից կարևոր է անձնակազմի մասնագիտական կարողությունների պարբերաբար բարելավումը, թիրախային և արդիական ծրագրերով մասնագիտական որակի բարձրացումը:
- ՀՀ ՊԵԿ-ի նոր շենքերի և շինությունների շինարարությունը (նախագծումը) նպաստում է համակարգի գործունեության արդյունավետությանը, բարելավում է աշխատակիցների աշխատանքային պայմանները: Իր կարևոր դերն ունի սահմանային անցակետերում վերափոխված շենքային պայմանների բարելավումը և տեխնիկական հագեցվածության ապահովումը, ինչը հնարավորություն կտա արդյունավետ մաքսային հսկողության՝ կենտրոնացված կառավարման և թիրախավորման գործիքների շնորհիվ, մաքսային վարչարարության պարզեցմամբ բերելով մաքսային սահմանի անցման գործընթացի դյուրինացման և սահմանի անցման համար պահանջվող ժամանակի կրճատման: Մեղրիի անցակետի արդիականացմամբ մաքսային հսկողության ժամանակակից ընթացակարգերի ներդրման միջոցով կապահովվի սահմանահատման դյուրինացված ու միաժամանակ վերահսկելի գործընթացը, կընդլայնվի միջպետական տնտեսական համագործակցությունը: Բացի այդ, նախատեսվում է Սյունիքի մազում կառուցել նոր մաքսային և լոգիստիկ կենտրոն:

17. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐ

Անշարժ գույքի ոլորտում իրականացվում է գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցումը, գույքի և դրա նկատմամբ իրավունքների և սահմանափակումների մասին տեղեկատվության տրամադրումը, գեոդեզիայի և քարտեզագրության բնագավառում՝ պետական կառավարման և նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի մշակման աշխատանքների, գեոդեզիական և քարտեզագրական գործունեության վերահսկողության, պետական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների, ՀՀ և երկրագնդի մնացած տարածքների գեոդեզիական, տեղագրական և քարտեզագրական տվյալների բանկի կառավարման իրականացնում, գեոդեզիական և քարտեզագրական գործունեության

սուբյեկտներին ամբողջական տեղեկությունների տրամադրում իրենց առնչվող տարածքների գեոդեզիական և քարտեզագրական ուսումնասիրվածության մասին

Հասարակության տեղեկատվական պահանջները բավարարելու նպատակով կոմիտեն 2025-2027 թվականներին ամբողջապես կփորձի անցնելու առցանց ծառայությունների ինքնաշխատ համակարգի՝ հրաժարվելով թղթային փաստաթղթաշրջանառությունից: Համակարգում առկա կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու նպատակով կիրականացվեն կառուցվածքային բարեփոխումներ, որի ռազմավարական նպատակները և գերակա վերջնական արդյունքներն առցանց, ինքնաշխատ, անթուղթ անշարժ գույքի կադաստրի ստեղծումն է: Նախատեսվում է իրականացնել թվային արխիվի ամբողջականացում և ընթեռնելիության բարձրացում:

Անշարժ գույքի գրանցման գործընթացների արդյունավետության բարձրացման նպատակով նախատեսվում է իրականացնել սպասարկման գրասենյակների օպտիմալացում՝ ի հաշիվ առցանց մատուցվող ծառայությունների զարգացման և օպտիմալացված գրասենյակների փոխարեն խորհրդատվական կենտրոնների ստեղծում:

Անշարժ գույքի շուկայի բարելավման և զարգացման նպատակով անշարժ գույքի գործակալների (բրոքերների) գործունեությունը կարգավորող ոլորտի օրենսդրական դաշտի ձևավորումից բխող ոլորտին անհրաժեշտ գործիքակազմի ներդրում՝ ծրագրային ապահովում անշարժ գույքի գործակալների համար տեղեկատվական բազային համակարգի ստեղծում, ավտոմատացված համակարգի ներդրում:

Աշխատանքները շարունակվում են նաև հանրապետության հասցեների վերջնական բազան ամբողջական և ավարտուն տեսքի բերելու ուղղությամբ:

Ռազմավարության պահանջների խթանումը գեոդեզիական, քարտեզագրական և երկրատեղեկատվական համակարգի հիման վրա ՀՀ ինտեգրված, միասնական կադաստրի ստեղծումն է:

Գեոդեզիայի ու քարտեզագրության բնագավառի զարգացման նպատակով 2025-2027 թվականների ընթացքում նախատեսվում է իրականացնել երկրատեղեկատվական համակարգում ՀՀ բնակավայրերի քարտեզագրական հենքի ստեղծման, կադաստրային քարտեզում չտեղադրված գույքերի նույնականացման, դաշտային հանութագրման, ՀՀ համայնքների կադաստրային թաղամասերի ուղղման նպատակով լրացուցիչ կետերի դիտարկման, թաղամասերի արտաքին սահմանների ամբողջական ուղղման, առկա բարձրունքային մոդելի ճշտության բարձրացման համար նոր կետերի տեղադրման, հանութագրման և տվյալների ամբողջական մշակման աշխատանքները և ՀՀ օրթոֆոտոհատակագծերով ամբողջությամբ ծածկված համայնքների ճշգրտված կադաստրային թաղամասերի հատակագծերը:

Կիրականացվեն նոր ձևաչափով՝ տպագիր, բազմալեզու, ինչպես նաև համացանցում տեղադրված հնարավորությամբ ատլասների տպագրման աշխատանքները:

Երկրակեղևի ուղղահայաց շարժումներն ուսումնասիրելու նպատակով նախատեսվում է իրականացնել I դասի նիվելիրացման աշխատանքներ սեյսմաակտիվ երկրակեղևի գործող խզվածքային շրջանում, թարմացնելու նախկինում կատարված նիվելիրացման տվյալներն ու ցանցը և ստանալ հիմնակետերի բացարձակ բարձրությունները:

Անշարժ գույքի գրանցման գործընթացների արդյունավետության բարձրացման նպատակով նախատեսվում է իրականացնել գրանցման միասնական ստորաբաժանման ստեղծում:

18. ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

ՀՀ վարչապետի աշխատակազմի ռազմավարական նպատակն է ՀՀ կառավարության, ՀՀ վարչապետի և ՀՀ փոխվարչապետերի գործունեությանն աջակցությունը՝ ՀՀ կառավարության և ՀՀ վարչապետի որոշումների ու հանձնարարականների կատարման վերահսկողության ապահովումը, աշխատակազմին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը, քաղաքացիական իրավահարաբերություններին նրա մասնակցությունը՝ աշխատակազմի խնդիրների և գործառույթների անվերապահորեն կատարման, դրանց կատարման արդյունավետության բարձրացման և աշխատանքների կատարման կանոնակարգերի կատարելագործման ճանապարհով:

Համաձայն «ՀՀ կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի՝ աշխատակազմի խնդիրն է ապահովել ՀՀ վարչապետի և ՀՀ փոխվարչապետերի լիազորությունների իրականացումը, ինչպես նաև ՀՀ կառավարության նիստերի անցկացումը:

«Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից իրականացվում է՝ ՀՀ կառավարությանը ենթակա տեսչական մարմինների գործունեության ապահովման համար անհրաժեշտ հաշվապահական հաշվառման, գնումների կազմակերպման, անձնակազմի կառավարման և կազմակերպատնտեսական, տեսչական մարմնի բյուջեի, ինչպես նաև տեսչական մարմնի կողմից ստուգումների տարեկան ծրագրով չնախատեսված ստուգումների անցկացման հետ կապված կազմակերպչական բնույթի գործառույթները:

ՀՀ վարչապետի աշխատակազմի գործունեության նպատակներն են՝

- Հանրային կապերի, պետական մարմինների թափանցիկության, տեղեկատվության մատչելիության ապահովումը, որին ուղղված են հանրային իրազեկման և հասարակական-քաղաքական հետազոտությունների շրջանակում ՀՀ կառավարության գործունեության լուսաբանումը, ինչպես նաև տեղեկատվության պահպանմանն ու արխիվացման գործընթացներին:
- Քաղաքական կյանքում հասարակության ընդգրկվածության ապահովման նպատակով աշխատակազմի կողմից իրականցվող ծրագրերի և միջոցառումների շրջանակներում աջակցել հասարակական կազմակերպություններին, այդ թվում՝ ազգային փոքրամասնությունների թվով 11 հասարակական կազմակերպությունների, որոնք իրականացնում են՝ կրթական, մշակութային միջոցառումներ, տոնախմբություններ, զանազան քննարկումներ
- Քաղաքացիական ծառայության բնագավառում պետական քաղաքականության իրականացման ապահովում, մասնավորապես, քաղաքացիական ծառայողների

վերապատրաստման իրականացում՝ պետական համակարգում պատրաստված և մրցունակ մասնագետներ ունենալու համար:

- Մաքսային միությանը և Միասնական տնտեսական տարածությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության շրջանակում միասնական տեղեկատվական տարածության և ինտեգրացված տեղեկատվական համակարգերի պահպանմանն, արդիականացմանն և զարգացմանն աջակցություն: Վերջինիս համար ապահովվում է ինտեգրացիոն շլյուզի սարքավորման սպասարկումն ու գործունակությունը:
- Մեծ կարևորություն տալով Ազգային ինքնության պահպանմանը՝ տոների և հիշատակի օրերին նվիրված միջոցառումների անցկացման ապահովումը
- Միջազգային դատարաններում, միջազգային արբիտրաժներում և այլ միջազգային ատյաններում ՀՀ շահերի ներկայացման և պաշտպանության, դրանց կողմից ընդունված վճիռների և որոշումների կատարման ապահովման գործընթացում արբիտրաժային և այլ վեճերի շրջանակներում ՀՀ շահերը ներկայացնելու և պաշտպանելու համար փաստաբանական, իրավաբանական, փորձագիտական ծառայությունների, վեճը լուծող հաշտարարի ծառայությունների, ՀՀ շահերից բխող խորհրդատվական բնույթի ծառայությունների ձեռքբերման, ինչպես նաև Միջազգային արբիտրաժային տրիբունալի կամ օտարերկրյա ներպետական դատարանի ծախսերի վճարման ապահովում:

Սփյուռքի գծով ծրագրեր.

ՀՀ կառավարությունը կարևորում է Հայաստան-սփյուռք գործակցության զարգացումը, որը նպատակաուղղված է հայ ինքնության պահպանմանը, հայրենադարձությանն ու Հայաստանում հայրենադարձների ինտեգրմանը, աշխարհասփյուռ հայության մարդկային, մտավոր, տնտեսական ներուժի՝ հայրենիքի կայուն զարգացման նպատակի շուրջ համախմբմանը:

Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման համար կարևորվում է ամուր կապերի հաստատումը՝ սփյուռքի հետ գործընկերության, ծրագրերի և միջոցառումների շնորհիվ:

Սփյուռքում հայության առջև ծառացած հիմնական մարտահրավերներն են հայ երիտասարդների մեջ ազգային ինքնության պահպանման հարցը, ուծացման դեմ պայքարը՝ համայնքային կառույցների գործունեության արդյունավետության բարձրացման ճանապարհով, միջհամայնքային կապերի ընդլայնումն ու զարգացումը, ներուժի օգտագործումը համազգային նշանակության խնդիրների ձևակերպման ու լուծման նպատակով:

Հայաստան-Սփյուռք գործակցության համատեքստում անհրաժեշտ է խթանել համայնքային կառույցների գործունեությունը, դրանցում սփյուռքահայ երիտասարդների ներգրավվածության ընդլայնման, համայնքային գործիչների՝ որպես կայացած առաջնորդի, ղեկավարման կարողությունների և հմտությունների զարգացումը, Հայրենիքի հետ բազմակողմանի կապերի ապահովումը:

Հայաստան-Սփյուռք գործակցության համատեքստում կարևորվում է սփյուռքի մասնագիտական ներուժի ներգրավումը Հայաստանի ինստիտուցիոնալ զարգացմանն ու հզորացմանը, որը կնպաստի նաև մասնագիտական հայրենադարձությանը:

Հայաստան-Սփյուռք գործակցության մեջ առանցքային նշանակություն ունեն նաև հանրային կապերն ու աշխարհասփյուռ հայության իրազեկվածության ապահովումը՝ ուղղված Հայաստանի հանրությանն ու Սփյուռքի համայնքներին, ինչպես նաև միջազգային հանրությանը:

Տեղեկատվությունը լսարանին ճիշտ հասցեագրելու համար կարևոր է լրագրողական ու մասնագիտական հանրույթի հետ գործընկերային կայուն կապերի ստեղծումն ու արդյունավետ աշխատանքը, տեղեկատվական դաշտում Հայաստան-Սփյուռք գործակցության ու դրա ամրապնդմանն ուղղված ծրագրերի, սոցիալական մեդիայի բոլոր հարթակների ակտիվ գործածումը, մեդիա արշավների իրականացումը, ներգրավվածությունը սոցիալական նախաձեռնություններում և այլն:

Հայաստան-Սփյուռք գործակցության կարևոր ուղղություններից է աջակցությունը սփյուռքի ներդրողներին և բարեգործներին՝ Հայաստանում իրենց ծրագրերն իրականացնելիս:

ՀՀ պետական քաղաքականությունը միտված է մշակել և իրականացնել միջոցառումներ, որոնք նպատակաուղղված կլինեն Հայաստանի զարգացման գործընթացում Սփյուռքի լիարժեք ներգրավմանը:

Մարմնի կողմից իրականացվում են նաև միջազգային պայմանագրերի շրջանակներում միջոցառումներ՝

- **«Պետական հատվածի արդիականացման ծրագիր» վարկային ծրագիր.**

Հայաստանում իրականացվող պետական հատվածի բարեփոխումներին աջակցելու նպատակով ՀՀ կառավարությունը Համաշխարհային բանկից ստացել է օժանդակություն՝ Պետական հատվածի արդիականացման չորրորդ վարկային ծրագրի իրականացման համար: Համաձայնագիրը ստորագրվել է Հայաստանի Հանրապետության և Համաշխարհային Բանկի (ՀԲ) միջև 2022թ. մարտի 18-ին և ծրագիրն ուժի մեջ է մտել 2022թ. նոյեմբերի 14-ին: Ծրագրի ավարտը սահմանվել է 2028թ. մարտի 31-ը:

Համաձայն վարկային համաձայնագրի պահանջների՝ ՀԲ-ի միջոցների հաշվին վճարվելու են ծրագրի շրջանակներում ֆինանսավորման ենթակա թույլատրելի ծախսերի 100%-ը առանց հարկերի, իսկ ՀՀ պետական բյուջեից համաֆինանսավորման հաշվին՝ տեղական հարկերը:

Ծրագրի նպատակն է ընտրված պետական ծառայությունների արդյունավետության բարձրացումը և հասանելիության բարելավումը բիզնեսի և քաղաքացիների համար:

- **«Արդյունահանող ճյուղերի զարգացման ծրագիր» դրամաշնորհային ծրագիր.**

ՀՀ կառավարությունը Համաշխարհային բանկի կողմից «Հայաստանի արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանն աջակցության համար ստացել է օժանդակություն (դրամաշնորհ), որի միջոցով ֆինանսավորվելու են արդյունահանող ոլորտում միջազգային ստանդարտին համապատասխան կոնտեքստուալ և ֆինանսական թափանցիկության ապահովման աշխատանքները, տվյալների համակարգված բացահայտումների ավտոմատացված էլեկտրոնային նորարարական համակարգի ստեղծումը, ԱՃԹՆ-ի ազգային զեկույցների կազմումը և հրապարակումը, ոլորտի հիմնական շահառուների կարողությունների հզորացման միջոցառումները, բազմաշահառու խմբի կողմից ոլորտի վերաբերյալ հանրային բանավեճի մշակույթի ձևավորմանն ուղղված աշխատանքները:

Դրամաշնորհային ծրագրի ավարտին՝ 2024թ. դեկտեմբերին հնարավոր կլինի ունենալ պորտալ, որի միջոցով հանքարդյունաբերության ոլորտի համապատասխան առաջնային տեղեկատվության տիրապետող լիազոր մարմիններում SS նոր ստեղծվող ծրագրերի միջոցով բացահայտված տվյալները հանրությանը հասանելի կլինեն մեկ վայրից՝ բաց տվյալների ձևաչափերով:

Ծրագրի ավարտից հետո, 2025թ. հունվարին կիրականացվի ավարտված ծրագրի աուդիտը՝ համաձայն Համաշխարհային բանկում ընդունված կարգի:

19. ՌԱԴԻՈ ԵՎ ՀԵՌՈՒՍՏԱՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՀԵՌԱՐՁԱԿՈՒՄ

Ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակման ոլորտը կարգավորվում է «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքով: Նույն օրենքի համաձայն՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը հանդիսանում է «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն», «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» և «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունների կառավարման մարմինը:

Հանրային հեռարձակման ռազմավարական նպատակն է ստեղծել և տարածել հանրային նշանակության վստահելի տեսալսողական (մեդիա) բովանդակություն, որը նպաստում է գիտակից և տեղեկացված հասարակության ձևավորմանը, աջակցում է երկրի անվտանգությանը, տնտեսական առաջընթացին, սոցիալական արդարության հաստատմանը, մարդու հիմնարար իրավունքների պաշտպանությանը և քաղաքացիների կյանքի բարելավմանը:

Ռազմավարական նպատակի իրականացման համար սահմանվել են ոլորտի հիմնական թիրախները.

- Ստեղծել և տարածել հանրային նշանակության վստահելի տեսալսողական (մեդիա) բովանդակություն,
- Ապահովել տեղեկատվական, ճանաչողական, կրթական, մշակութային, ժամանցային մեդիաբովանդակության բազմազանությունը,
- Տրամադրել հավաստի, անաչառ, բազմակողմանի լրատվություն և որակյալ վերլուծություն՝ Հայաստանում և աշխարհում տեղի ունեցող կարևոր հասարակական-քաղաքական իրադարձությունների վերաբերյալ:
- Ապահովել խոսքի ազատության, բազմակարծության, այլընտրանքային կարծիքի արտահայտման հարթակ:

Ոլորտում իրականացվում է «Ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակում» ծրագիրը, որի նպատակն է բազմազան տեղեկատվական, ճանաչողական, կրթական, ժամանցային հեռուստատեսային և ռադիո հաղորդումների արտադրության և հեռարձակման ապահովումը:

20. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Քաղաքաշինության ոլորտում իրականացվող ծախսային գերակայությունները բխում են ՀՀ կառավարության ծրագրից, Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված գործառույթներից, որոնք ուղղված են մարդու կենսագործունեության համար բարենպաստ տարածական միջավայրի ստեղծմանը: Ոլորտում առաջնահերթ ռազմավարական նպատակներից է՝

- միջազգային և եվրոպական ստանդարտներին ներդաշնակ շինարարական նորմերի, տեխնիկական կանոնակարգերի, ստանդարտների, շինարարական նորմերի կանոնների

հավաքածուների և այլ նորմատիվ փաստաթղթերի մշակումն ու բազայի ընդլայնումը՝ նպատակ ունենալով խթանել տեխնոլոգիաների զարգացմանը, ինչպես նաև նախագծային և շինարարական աշխատանքների որակի բարձրացմանն ու անվտանգության պահանջների ապահովմանը:

- քաղաքաշինական քաղաքականության բարեփոխումների հետևողական իրականացումը՝ բնակավայրերի կառուցապատմանն ու տարածական զարգացմանն առնչվող հիմնախնդիրների կարգավորման ուղղությամբ, երկրի կայուն տարածական զարգացման ռազմավարության մշակումն ու իրագործումը, սոցիալ-տնտեսական գործոնների, ինժեներաերկրաբանական, ինժեներատրանսպորտային, բնական պայմանների ու պաշարների, էկոլոգիական իրավիճակի, մշակութային ժառանգության, աշխարհագրական ու տարածաշրջանային այլ առանձնահատկությունների հաշվառմամբ: Օրենքով սահմանված պարտադիր մշակման ենթակա փաստաթղթի հաստատում, որպես ազգային մակարդակով պետական քաղաքաշինական քաղաքականության իրականացման հիմք,
- քաղաքաշինության բնագավառում պետական ծրագրերի իրականացման ապահովումը, որը միտված կլինի անբավարար տեխնիկական վիճակում գտնվող բնակֆոնդի փոխարեն նոր բնակելի ֆոնդի շարունակական ձևավորմանը.
- շենքերի և շինությունների մատչելիությունը և անձնագրավորումը, որի վերջնական արդյունքները կերաշխավորեն մարզերում և համայնքներում բնակվող քաղաքացիների կողմից հանրային նշանակության շենքերի և շինությունների մատչելի շահագործումը, հասարակության բոլոր շերտերի համար ներառականության սկզբունքի կիրառումը:

Նշված նպատակները բխում են «Քաղաքաշինության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքների, ՀՀ հողային օրենսգրքի դրույթներից, այլ օրենքներից և իրավական ակտերից, համահունչ են ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներին, համապատասխանում են նշված բնագավառում միջազգային պրակտիկային, «Լանդշաֆտի Եվրոպական կոնվենցիայի» գաղափարախոսությանը:

21. ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ վիճակագրական կոմիտեն ՀՀ պաշտոնական վիճակագրության գլխավոր արտադրողն է և համակարգում է ազգային վիճակագրական համակարգում պաշտոնական վիճակագրության մշակմանը, արտադրությանը և տարածմանն ուղղված ողջ գործունեությունը, բացառությամբ ՀՀ կենտրոնական բանկի:

Պաշտոնական վիճակագրության ոլորտում որդեգրված ռազմավարությունն ուղղորդված է «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքով սահմանված հիմնական խնդիրների իրագործման ապահովմանը, և խարսխվում է պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքների, այն է՝ պրոֆեսիոնալ անկախություն, անաչառություն, օբյեկտիվություն, ճշգրտություն, հուսալիություն, ոչ հակասականություն, համադրելիություն, պարզություն, թափանցիկություն, վիճակագրական գաղտնիություն և բացառապես վիճակագրական նպատակներով օգտագործելիություն ու արդիականություն, Եվրոպական վիճակագրության գործելակերպի կանոնագրքով սահմանված սկզբունքների, Եվրոպական վիճակագրական համակարգի ստանդարտների և նորմերի, ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի մոդեռնիզացման ստանդարտների և գործիքների, Արժույթի միջազգային հիմնադրամի

«Տվյալների տարածման հատուկ ստանդարտի» պահանջների, ինչպես նաև Եվրամիության փորձագետների կողմից Արմստատի և Հայաստանի պաշտոնական վիճակագրության փորձագիտական գնահատման արդյունքների (2018թ.) և Եվրոստատի փորձագետների կողմից ոլորտային գնահատումների դրույթների վրա:

Պաշտոնական վիճակագրությունը հնարավորության սահմաններում առավելագույնս ճշգրիտ, ոչ հակասական, արժանահավատորեն արտացոլում է առկա իրողությունը և աղբյուրների, մեթոդների ու ընթացակարգերի ընտրության հարցերում հիմնվում է գիտական չափանիշների վրա:

Արմստատի տվյալները միտված են նպաստելու ամուր ժողովրդավարություն և գործունակ տնտեսություն կառուցելու ու հանրային կյանքում տեղի ունեցող փոփոխություններին հանրությանն իրազեկելու ջանքերին:

Ոլորտի քաղաքականության հիմնական թիրախն է՝ ազգային պաշտոնական վիճակագրության արտադրություն և տարածում՝ միջազգային վիճակագրական ստանդարտների (ներառյալ՝ Արժույթի միջազգային հիմնադրամի Տվյալների տարածման հատուկ ստանդարտը) պահանջներին համապատասխան (այդ թվում՝ ռեսուրսների մասով, հոդված 13, մաս 1 և հոդված 14, մաս 2 և 3):

22. ՀԱՆՐԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

22.1. ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Հանրապետության նախագահի աշխատակազմն ապահովում է Հանրապետության նախագահի՝ Սահմանադրությամբ սահմանված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը:

Հանրապետության նախագահի աշխատակազմի միջնաժամկետ նպատակներն են՝

1. Հանրության կողմից Հանրապետության նախագահի և նրա աշխատակազմի գործառույթների հստակ ընկալում, հանրության վստահության ձեռք բերում և ամրապնդում: Այս նպատակին հասնելու համար նախատեսվում է՝

- Հանրապետության նախագահի և աշխատակազմի կողմից բարեգործական թիրախային ծրագրերի իրականացում, այդ ծրագրերի պատշաճ լուսաբանում,
- Պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով Նախագահի լիազորությունների հստակ և հանրամատչելի եղանակով ներկայացում,
- Նախագահի նստավայրում այցելուների կենտրոնի ստեղծում, մշակութային միջոցառումների կազմակերպում,
- Սոցիալական մեդիայում ակտիվ գործունեության շարունակություն, հետևորդների թվի ավելացում,
- Հանրապետության նախագահի և աշխատակազմի իրականացրած ծրագրերի վերաբերյալ հաշվետվողականության ապահովում, ընկալելի ձևով դրանց ներկայացում վերջնական արդյունքի ցուցադրմամբ,

- Նախագահին դիմած անձանց նկատմամբ հոգատար վերաբերմունքի ցուցաբերում, արագ արձագանքի ապահովում, հետևողականություն:

2. Նոր գաղափարներ գեներացնող և ռազմավարական ծրագրեր մշակող լոկոմոտիվի դերի ստանձնում և այդ դերի ճանաչելիություն հանրության կողմից: Այս նպատակին հասնելու համար նախատեսվում է՝

- Հանդես գալ նախաձեռնություններով, հայեցակարգերով, զարգացման տեսլականներով տարբեր ոլորտների վերաբերյալ՝ առաջարկելով նորարար լուծումներ,
- Կազմակերպել թեմատիկ կոնֆերանսներ, գիտաժողովներ և քննարկումներ՝ լավագույն միջազգային փորձագետների և շահագրգիռ անձանց ներգրավմամբ,
- Մրցույթների միջոցով վեր հանել երկրի զարգացմանն ուղղված գաղափարները, աշխատել այդ գաղափարների իրագործման հայեցակարգերի մշակման ուղղությամբ:

3. ՀՀ-ի և սփյուռքի, ՀՀ-ի և այլ երկրների միջև առանձնահատուկ կամրջի դերի ստանձնում և այդ դերի ճանաչելիություն հանրության կողմից:

Այս նպատակին հասնելու համար նախատեսվում է՝

- Համաշխարհային հարթակներում Հայաստանի ներկայացում, օրինակ՝ գիտաժողովներին, ցուցահանդեսներին մասնակցություն,
- Հայկական պատմամշակութային ժառանգությանն ու արժեքների պահպանությանը և դրանց ճանաչմանն ուղղված միջոցառումների իրականացում,
- Հայաստանի ճանաչելիության բարձրացմանն ուղղված միջոցառումների կազմակերպում, միջազգային հեղինակավոր միջոցառումների հյուրընկալում Հայաստանում:

4. Նախագահի աշխատակազմի դիրքավորում՝ որպես ցանկալի աշխատավայր: Այս նպատակին հասնելու համար նախատեսվում է՝

- Նախագահի աշխատակազմում ապահովել աշխատակցի հարմարավետության համար անհրաժեշտ ենթակառուցվածքներ,
- Ստեղծել աշխատակիցների վերապատրաստման մեխանիզմներ, այդ թվում՝ հեռակա ուսուցման հնարավորությամբ,
- Ապահովել աշխատակցի առաջխաղացման մեխանիզմները և պարբերաբար գնահատել աշխատանքից բավարարվածությունը:

22.2. ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Հայաստանի Հանրապետությունը խորհրդարանական կառավարման երկիր է և Ազգային ժողովը ոչ միայն ժողովրդի ներկայացուցչական մարմինն է և իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդիր իշխանությունը, այլև օժտված է իրականացնելու սահմանադրությամբ իրեն վերապահված գործադիր իշխանության գործունեության վերահսկողական գործառույթ: Որպես լեգիտիմ և ժողովրդավար խորհրդարան՝ Ազգային ժողովը ձգտում է հնարավորինս բաց և թափանցիկ լինել հանրության առջև՝ ապահովելով ՀՀ-ում արդյունավետ օրենսդրական դաշտ:

ՀՀ Ազգային ժողովը գործում է Սահմանադրությանը և իր կանոնակարգին համապատասխան՝ ձևավորելով և կատարելագործելով օրենսդրական դաշտը:

ՀՀ Ազգային ժողովի միջնաժամկետ նպատակներն են՝

- Իրականացնել ՀՀ ԱԺ դերի բարձրացմանն ուղղված միջոցառումներ ամրապնդելով խորհրդարանի և հանրության կապը,
- միջազգային խորհրդարանական կազմակերպությունների ներգրավմամբ համաշխարհային հարթակներում իրականացնել հայկական պատմամշակութային ժառանգության և արժեքների պահպանմանն ու ճանաչմանն ուղղված միջոցառումներ,
- հանդես գալ երկրի զարգացմանն ուղղված նոր գաղափարների և ռազմավարական ծրագրերի հայեցակարգերի մշակմամբ,
- կազմակերպել Հայաստանի ճանաչելիության բարձրացմանն ուղղված միջոցառումներ՝ հյուրընկալելով միջազգային հեղինակավոր միջոցառումների,
- ստեղծել այցելուների կենտրոն,
- ՀՀ ԱԺ նախագահին, պատգամավորներին, աշխատակազմին դիմած անձանց նկատմամբ հոգատար վերաբերմունքի ցուցաբերումը, արագ արձագանքումը և հետևողականության դրսևորումը,
- ՀՀ ԱԺ և աշխատակազմի կողմից իրականացվող ծրագրերի վերաբերյալ հաշվետվողականությունը, ընկալելի ձևով ներկայացնելով դրանց վերջնական արդյունքը,
- ՀՀ ԱԺ աշխատակազմը դարձնել հրապուրիչ աշխատավայր՝ աշխատակցի համար ապահովելով վերապատրաստման, առաջխաղացման և գնահատման անհրաժեշտ մեխանիզմներ:

22.3. ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

Կոռուպցիայի և կազմակերպված հանցագործության դեմ պայքարի ոլորտում ՀՀ դատախազության կողմից միջնաժամկետ ժամանակահատվածում նախատեսվում է իրականացնել մի շարք միջոցառումներ, մասնավորապես.

- ձեռնարկվելու են անհրաժեշտ միջոցառումներ՝ կոռուպցիոն բնույթի և կազմակերպված հանցագործությունները ժամանակին հայտնաբերելու և բացահայտելու հարցում այլ իրավապահ մարմինների հետ համագործակցությունը խորացնելու ուղղությամբ,
- իրականացվելու են համապատասխան միջոցառումներ՝ ուղղված կոռուպցիոն երևույթների ծագման, դրանց պատճառների և նպաստող պայմանների, օրենսդրական թերի կարգավորումների հայտնաբերմանը՝ օրենսդրական բարեփոխումների իրականացմանը նպաստելու նպատակով,
- միջոցներ են ձեռնարկվելու կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում իրավապահ մարմինների նկատմամբ հանրության վստահությունը բարձրացնելու ուղղությամբ, այդ թվում՝ հասարակական հնչեղություն ունեցող կոռուպցիոն հանցագործությունների քննության ընթացքի և ավարտի մասին հանրությանն իրազեկելու միջոցով,
- ակտիվացվելու է համագործակցությունը կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում գործունեություն իրականացնող մարմինների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների հետ,

- շարունակվելու են միջոցներ ձեռնարկվել Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և Հայաստանի Հանրապետությունում կազմակերպված հանցավորության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման ազգային ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման ուղղությամբ:

Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության ոլորտում ՀՀ դատախազության կողմից.

- խստացվելու է հիշյալ ոլորտում դատախազական հսկողության առարկա հանդիսացող իրավական ակտերի և մյուս փաստաթղթերի օրինականության և հիմնավորվածության նկատմամբ հսկողությունը և, ըստ անհրաժեշտության, դատախազական ներգործության միջոցներ կիրառելու պրակտիկան,

- շարունակվելու են հետևողականորեն միջոցներ ձեռնարկվել՝ ուղղված ազատազրկման վայրերում կոռուպցիոն երևույթների հայտնաբերմանը և մեղավոր անձանց պատասխանատվության ենթարկելուն,

- ուժեղացվելու է հսկողությունը ազատազրկման վայրերում պահվող անձանց հիմնարար իրավունքների, հատկապես վերջիններիս բժշկական օգնություն ստանալու իրավունքի պատշաճ իրացումն ապահովելու նկատմամբ,

- պարբերաբար ուսումնասիրվելու և ամփոփվելու է պատիժների ու հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության ոլորտում դատախազական հսկողության պրակտիկան և, ըստ այդմ, կանխորոշվելու են պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության ոլորտի գերակա ուղղությունները:

Դատարանում մեղադրանքի պաշտպանության և վճիռների, դատավճիռների և որոշումների բողոքարկման ոլորտում ՀՀ դատախազության կողմից.

- բարձրացվելու է դատարանում մեղադրանքի պաշտպանության որակը,

- ապահովվելու է մեղադրանքի պաշտպանության գործառույթի ինքնուրույնությունը և ակտիվությունը՝ մինչդատական վարույթից դրա անբաժանելիությունը չափավոր բացառելու միջոցով,

- վեր են հանվելու մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման գործառույթների իրականացման հետ կապված իրավակարգավորման խնդիրները ու նախաձեռնողականություն է ցուցաբերվելու դրանք հստակ ուղղություններով լուծելու հարցում,

- սահմանվելու և ապահովվելու են վերահսկողության մեխանիզմներ մեղադրանքի պաշտպանության նկատմամբ՝ նկատի ունենալով այդ դատավարական փուլի առանձնահատկությունները,

- ապահովվելու է գործի ելքի վրա ազդող դատավարական գործողությունների՝ մեղադրանքը փոփոխելու և մեղադրանքից հրաժարվելու լիազորությունների օրինականությունը,

- իրականացվելու է միասնական պատժողական քաղաքականություն՝ ապահովելով պատիժների կիրառման համաչափությունը,

- ուժեղացվելու է վերահսկողությունը դատական ակտերի բողոքարկման ոլորտում՝ պատշաճ բողոքներ նախապատրաստելու և ներկայացնելու, վճռաբեկ բողոքարկման ոլորտում հատկապես իրավունքի զարգացման խնդիրներ առաջադրելու նպատակով:

Պետական շահերի պաշտպանության ոլորտում ՀՀ դատախազության կողմից.

- ակտիվացվելու է օրենքով սահմանված կարգով և դեպքերում քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային շահերի, վարչական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի և քրեական դատավարության կարգով հանցագործությամբ պետությանը ուղղակի պատճառված գույքային վնասի հատուցման հայց հարուցելու համար անհրաժեշտ ուսումնասիրությունների կատարման պրակտիկան,
- բարձրացվելու է դատախազության տարածքային ստորաբաժանումների կողմից պետությանը պատճառված վնասի հատուցման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների արդյունավետությունը, հաշվի առնելով դատախազների ծանրաբեռնվածության աստիճանը՝ ակտիվացվելու է տարածքային դատախազությունների համագործակցությունը հանրապետական և տեղական հսկողական-տեսչական մարմինների հետ՝ դրանց ակտերով արձանագրված վնասների կապակցությամբ դատախազական ներգործության միջոցներ ձեռնարկելու միջոցով:

Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ոլորտում ՀՀ դատախազության կողմից.

- ապօրինի ծագում ունեցող գույքի առկայության, դրա ծավալների և շահագրգիռ անձանց շրջանակի վերաբերյալ տվյալներ ձեռք բերելու նպատակով իրականացվելու են հայց հարուցելու հիմքերի ուսումնասիրություններ, այդ նպատակով պահանջվելու են անհրաժեշտ իրավական ակտեր, փաստաթղթեր, տեղեկություններ (այդ թվում՝ հարկային կամ մաքսային գաղտնիք համարվող), նախնական քննության տվյալներ,
- ուսումնասիրության արդյունքներով դիմումներ են ներկայացվելու առաջին ատյանի դատարան՝ հայցի նախնական ապահովման միջոցներ, ինչպես նաև ապացույցների նախնական ապահովում կիրառելու մասին.
- ներկայացրած նյութերի և հավաքված ապացույցների հիման վրա կազմվելու են ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ եզրակացություններ, հարուցվելու են գույքի քաղաքացիական բռնագանձման հայցեր, կնքվելու են հաշտության համաձայնություններ.
- նոր երևան եկած կամ նոր հանգամանքներ ի հայտ գալու դեպքում, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դատական ակտի վերանայման բողոք նախապատրաստելու և ներկայացնելու նպատակով վերսկսվելու են ավարտված ուսումնասիրությունները:

22.4. ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀՀ քննչական կոմիտեն՝ որպես նախաքննություն իրականացնող մարմին պարտավոր է ձեռնարկել բոլոր միջոցառումները, որպեսզի քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարած յուրաքանչյուր ոք հայտնաբերվի և ենթարկվի պատասխանատվության: ՀՀ քննչական կոմիտեի քննիչները քրեական վարույթներով միջդատական վարույթի իրականացումը պատշաճ քննությունն ու դրա արդյունավետությունն ապահովելու նպատակով կատարում են օրենքով իրենց վերապահված բազմաթիվ քննչական գործողություններ՝ հարցաքննություններ, խուզարկություններ, զննություններ, առգրավումներ, անձանց կամ իրերի ճանաչումներ, քննչական փորձարարություններ, նշանակում են տարաբնույթ փորձաքննություններ և այլն: Քրեական գործերի նախաքննության ընթացքում վարույթ իրականացնող մարմինը պարզում է նաև հանցագործությունների կատարմանը նպաստող

պատճառներն ու պայմանները, որից հետո դրանք վերացնելու և կանխելու նպատակով համապատասխան մարմիններին ներկայացնում է միջնորդագրեր: Բացի այդ քննչական կոմիտեն զբաղվում է հանցագործությունների քննության մեթոդիկայի ուսումնասիրությամբ, ձեռնարկում է միջոցառումներ՝ քննության դրական փորձը քննչական պրակտիկայում ներդնելու ուղղությամբ: Բացի այդ՝ քննարկում և լուծում է ստացված դիմումներն ու բողոքները: Այս ամբողջ գործունեության վերջնական արդյունքը՝ քննության բազմակողմանիության, լրիվության, օբյեկտիվության և արդյունավետության, մարդու և քաղաքացու իրավունքների, հիմնարար ազատությունների, անձնական անձեռնմխելիության և մյուս իրավունքների պաշտպանության ապահովումն է, ինչպես նաև նախաքննության ժամկետների անհարկի ձգձգումների բացառումը, պետությանը և քաղաքացիներին պատճառված վնասի վերականգնման ապահովումը, ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու հարցերի լուծումը, կոռուպցիոն երևույթների ծագման, դրանց պատճառների և նպաստող պայմանների բացահայտմանն ու դրանց կանխմանն ուղղված գործողությունների իրականացումը, որը բխում է ՀՀ կառավարության 2019 թվականի ծրագրից:

ՀՀ քննչական կոմիտեի կողմից իրականացվող գործունեության հիմնական նպատակն է քրեական վարույթներով միջդատական վարույթի իրականացումը, որի շրջանակներում կարող է անհրաժեշտություն առաջանալ նշանակել մի շարք փորձաքննություններ, դատավարական փաստաթղթերը ներկայացնել թարգմանության, իրավական օգնության համար կազմել և ուղարկել միջազգային հարցումներ՝ համապատասխան երկրի պաշտոնական լեզվով: Բացի այդ քննչական կոմիտեի գործունեության ընթացքում քննիչների վերապատրաստման և պատրաստման գործընթացն ապահովելու համար նրանց ներգրավվում են մի շարք դասընթացներում, համապատասխան վերապատրաստման ծրագրերում, մասնագիտական պատրաստում անցնող ունկնդիրներին տրամադրվում է կրթաթոշակ:

22.5. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ սահմանադրական դատարանը Հայաստանի Հանրապետության իրավակարգում ապահովելով Սահմանադրության գերակայությունը և անմիջական գործողությունը, որպես ռազմավարական առաջնահերթ խնդիր Հայաստանի Հանրապետությունում իրականացնում է սահմանադրական արդարադատություն:

ՀՀ սահմանադրական դատարանն օրենքով սահմանված կարգով շարունակելու է որոշել օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, ՀՀ կառավարության, ՀՀ վարչապետի, ՏԻՄ որոշումների, մինչև միջազգային պայմանագրերի վավերացումը նրանցում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը ՀՀ սահմանադրությանը, ինչպես նաև լուծելու է հանրահավաքների արդյունքների ու պատգամավորների ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերը:

ՀՀ սահմանադրական դատարանի գործունեության ապահովում ծրագրով նախատեսված ՀՀ սահմանադրական դատարանի առաջնահերթ ռազմավարական նպատակներն են.

- Բարձրացնել սահմանադրական արդարադատության արդյունավետությունը, ապահովել Հայաստանի Հանրապետությունում սահմանադրության գերակայությունն ու անմիջական գործողությունը,

- իր գործունեությամբ նպաստել սահմանադրության և նրանում ամրագրված իրավունքների ու պարտավորությունների նկատմամբ հասարակության վստահության բարձրացմանը,
- սահմանված կարգով որոշում կայացնել օրենքների, Ազգային ժողովի որոշումների և այլ նորմատիվ ակտերի սահմանադրությանը համապատասխանության մասին,
- շարունակել Հանրապետությունում իրավունքի գերակայության ապահովման ուղղությամբ գործունեությունը:

Հիմնական գերակա վերջնական արդյունքները, որոնց վրա գերատեսչությունը ձգտում է ներազդել, նրանց իրագործման ռազմավարությունով ՀՀ սահմանադրական դատարանը հետամուտ կլինի հետևյալ արդյունքներին, մասնավորապես՝

Օրենքով սահմանված կարգով որոշել օրենքների, Ազգային ժողովի որոշումների, այլ նորմատիվ ակտերի համապատասխանությունը Սահմանադրությանը, մինչև վավերացումը որոշել միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը ՀՀ սահմանադրությանը, լուծել հանրաքվեների հետ կապված վեճերը:

Սահմանադրական դատարանի այս լիազորությունը սահմանված է Սահմանադրությամբ և առաջնահերթ է հանդիսանում առաջիկա տարիների համար:

ՀՀ սահմանադրական դատարանի գործունեության ապահովում ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է Օրենքով սահմանված կարգով լուծելով ընդունված որոշումների, օրենքների, իրավական այլ ակտերի սահմանադրությանը համապատասխանությունը՝ ապահովել նրանց արդյունավետ գործողությունը:

22.6. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես անկախ սահմանադրական ինստիտուտ, հետևում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների և ազատությունների պահպանմանը, նպաստում է խախտված իրավունքների և ազատությունների վերականգնմանը, իրավունքներին ու ազատություններին առնչվող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործմանը:

Մարդու իրավունքների պաշտպանի գործունեությունն ընդգրկում է հետևյալ հիմնական ուղղությունները.

- անհատական բողոքների և դիմումների քննարկում, մշտադիտարկման այցեր, դրանց արդյունքներով համակարգային խնդիրների վերհանում,
- մարդու իրավունքներին և ազատություններին վերաբերող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ իրավասու մարմին կարծիքների տրամադրում,
- մարդու իրավունքների ու ազատությունների ապահովմանն ուղղված օրենսդրական նախագծերի մշակում,
- օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, ՀՀ կառավարության և ՀՀ վարչապետի որոշումների, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի Սահմանադրության 2-րդ գլխի

դրույթներին համապատասխանության հարցերով Սահմանադրական դատարան դիմումների հասցեագրում,

- Սահմանադրական դատարանում քննվող՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին հակասությանը վերաբերող դիմումների վերաբերյալ հատուկ կարծիքների ներկայացում,
- մարդու իրավունքների կրթությանն ու իրազեկմանն ուղղված շարունակական միջոցառումների անցկացում,
- մարդու իրավունքների մանդատ ունեցող միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների հետ աշխատանք՝ միտված Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության իրավիճակի ներկայացմանն ու բարելավմանը:

«Մարդու իրավունքների պաշտպանություն» ծրագրի վերջնական արդյունքի հիմնական թիրախային նպատակն է՝ Մարդու իրավունքների ազգային հաստատությունների համաշխարհային միավորման անկախ հանձնախմբի կողմից Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի հաստատությանը շնորհված ամենաբարձր «A» միջազգային հեղինակավոր կարգավիճակի պահպանումը (վերահաստատումը):

22.7. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Բարձրագույն դատական խորհուրդն անկախ պետական մարմին է, որը Սահմանադրությամբ և «ՀՀ դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքով սահմանված լիազորություններն իրականացնելու միջոցով երաշխավորում է դատարանների և դատավորների անկախությունը: Բարձրագույն դատական խորհրդի գլխավոր նպատակն է նախադրյալներ ստեղծել Հայաստանում ձևավորելու արդարադատության անկախության, անաչառության, մատչելիության, թափանցիկության, հաշվետվողականության և արդյունավետության նոր մշակույթ: Բարձրագույն դատական խորհրդի կողմից որդեգրվել են փոխկապակցված ու փոխլրացնող ռազմավարական ուղղություններ, մոտեցումը համակարգային է, հատվածական կամ այսրոպեական լուծումները չեն կարող ակնկալվող արդյունքներն ապահովել: Հստակ առանձնացվում են ճգնաժամային և ֆունկցիոնալ կառավարման խնդիրներ:

Բարձրագույն դատական խորհրդի կողմից մշակված արդյունավետ արդարադատության արդյունավետության ռազմավարական առաջնահերթությունների շրջանակներում նախատեսվում են օրենսդրական և կազմակերպչական բնույթի այնպիսի քայլեր, ինչպիսիք են արդարադատության ծախսատարության կրճատումը, էլեկտրոնային արդարադատության փուլային ներդրումը, դատական գործերի կառավարման ժամանակակից թվայնացված համակարգի ներդրումը, արդարադատության համակարգային մշտադիտարկումը, դատական արխիվների և ընթացիկ գործերի ամբողջական թվայնացման համակարգի արմատավորումը, դատարանների շենքային ու նյութատեխնիկական պայմանների որակական բարելավումը, դատարանների ու դատավորների նյութական ու սոցիալական անկախության անհրաժեշտ ու բավարար երաշխիքների ապահովումը, դատավորների օպտիմալ ծանրաբեռնվածության ապահովումը:

ՄԺԾԾ ժամանակահատվածում հիմնական ծախսային գերակայություններն են.

Սահմանված ժամանակահատվածում, ինչպես նաև հաջորդող տարիներին թիրախային նպատակը համարվում է ըստ Արևելյան գործընկերության /ԱԼԳ/ Հայաստանի դատական

իշխանության անկախության ինդեքսի բարելավումը՝ միջազգային հարթակում դիրքի ամրապնդման համար, անկախ, անաչառ, մատչելի, արդյունավետ ու հաշվետու արդարադատություն ունենալու համար:

22.8. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հանձնաժողովի գործունեության ոլորտն առնչվում է.

1. ՀՀ Կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի N 1871-Լ որոշմամբ սահմանված կոռուպցիայի կանխարգելման քաղաքականությանը՝ ինստիտուցիոնալ համակարգի ներդրման և կայացման առումով,

2. «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված հայտարարագրման համակարգին, ինչպես նաև

3. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված Հանձնաժողովի հետևյալ լիազորությունների իրականացմանը՝

- պետական պաշտոն զբաղեցնող անձանց, համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, ինչպես նաև պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների խախտումների և իրավիճակային շահերի բախման դեպքերի վերաբերյալ դիմումների քննություն և որոշումների կայացում,

- հայտարարատու պաշտոնատար անձանց, այդ թվում՝ «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով նախատեսված՝ կուսակցությունների ղեկավար մարմինների պաշտոնատար անձանց և հայտարարագրերի ռեեստրի վարում, հայտարարագրի ձևանմուշի, <u>հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջների</u>, հայտարարագրերի ռեեստրի տվյալների ցանկի, <u>հայտարարագրի ներկայացման և հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու</u>, հայտարարագրի արխիվացման կարգերի, ինչպես նաև հայտարարագրերի վերլուծության մեթոդաբանության և ռիսկային չափորոշիչների սահմանում,

- հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ գործերի քննում,

- պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների վերաբերյալ խորհրդատվական բնույթի պարզաբանումներ, ինչպես նաև շահերի բախման իրավիճակի լուծմանն ուղղված քայլեր ձեռնարկելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,

- անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների, շահերի բախման դեպքերի վիճակագրության վարում,

- Հանրային ծառայողների կողմից նվերների հաշվառման ռեեստրի ներդրում և վարում,

- պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի կառուցակարգերի ներդրում և կիրառում,
- կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող ռազմավարությունների և միջոցառումների ծրագրերի (այդ թվում՝ ոլորտային), նախագծերի փորձագիտական վերլուծություն և դրանց վերաբերյալ իրավասու մարմնին առաջարկությունների ներկայացում,
- կոռուպցիայի կանխարգելման ծրագրերի մշակում և դրանց ներկայացում ՀՀ կառավարությանը,
- կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող հարցերով կրթական և հանրային իրազեկման բարձրացման ծրագրերի և իրականացնում միջոցառումների մշակում,
- իր մշակած հակակոռուպցիոն ծրագրերի և դրանց իրականացման միջոցառումների ծրագրի (այդ թվում՝ ոլորտային) կատարման վերաբերյալ մոնիտորինգի զեկույցների մշակում, դրանց վերաբերյալ առաջարկությունների ներկայացում իրավասու մարմիններին,
- «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված դեպքերում և կարգով պետական պաշտոններում նշանակման ենթակա անձանց բարեվարքության ուսումնասիրության իրականացում,
- պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց, հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնների (կանոնագիրքը) ընդունում,
- կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացում, ներառյալ՝ կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ներկայացման պահանջների պահպանման և դրանցում առկա տեղեկատվության և տվյալների արժանահավատության և ամբողջականության ստուգում, դրանց առնչվող խախտումների վերաբերյալ գործերի քննում և լուծում, տարեկան հաշվետվությունների աուդիտի կազմակերպում, կուսակցությունների ղեկավար մարմինների պաշտոնատար անձանց հայտարարագրում (համակարգի ներդրում, ռեեստրի վարում, հայտարարագրերի ստուգում և վերլուծություն, դրանց առնչվող խախտումների վերաբերյալ գործերի քննում և լուծում), «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով նախատեսված պետական նպատակային ֆինանսավորման միջոցների օգտագործման ստուգում, թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական հիմնադրամներ, քարոզչության հիմնադրամ կատարված նվիրատվությունների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերի ներկայացման պահանջների պահպանման, դրանցում առկա տեղեկատվության և տվյալների արժանահավատության ու ամբողջականության ստուգում և այլն:

Միջնաժամկետ հատվածում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նպատակն է կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության միասնական համակարգի արդյունավետ կիրառման ապահովումը: Այդ կապակցությամբ միջնաժամկետ հատվածում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը սահմանել է հետևյալ հիմնական թիրախները՝

- Օրենսդրական փոփոխությունների իրականացում, կանխարգելման գործող կառուցակարգերի կատարելագործում,
- Կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ հանրային իրազեկման և կրթական ծրագրերի շարունակական իրականացում,
- Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կարողությունների շարունակական զարգացում,
- Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գործունեության հաշվետվողականության բարձրացում,
- Կոռուպցիայի կանխարգելման հիմնական գործիքների թվայնացում, արհեստական բանականության միջոցով տվյալների վերլուծություն:

Ակնկալվում է նշված թիրախների միջոցով նպաստել՝ միջազգային ոլորտային կազմակերպությունների կողմից (Թրանսփարենսի ինթերնեշնլ կոռուպցիայի ընկալման համաթիվ, Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) 4-րդ և 5-րդ փուլի գնահատումներ, ինչպես նաև Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության գնահատում) Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ոլորտի առնչությամբ տրված ցուցանիշների (գնահատականների) բարձրացմանը, կոռուպցիայի կանխարգելման արդյունավետ մեխանիզմների, այդ թվում՝ բարեվարքության կառուցակարգերի ներդրման միջոցով հանրային կառավարման մարմիններում, պետական և համայնքային մասնակցությամբ կազմակերպություններում կոռուպցիայի նվազմանը, ինչպես նաև կոռուպցիայի նկատմամբ հանրային զգայունակության բարձրացմանը, որը բխում է ՄԱԿ-ի «Կայուն զարգացման 2030 օրակարգում» ներառված կայուն զարգացման նպատակների և դրանց գծով սահմանված գլոբալ ցուցանիշներից, մասնավորապես՝ նպատակ 16.5 Էապես կրճատել կոռուպցիան և կաշառակերությունը իրենց բոլոր ձևերով:

22.9. ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը պետական ինքնավար մարմին է, որն ապահովում է տնտեսական գործունեության ազատությունը, ազատ տնտեսական մրցակցությունը, բարեխիղճ մրցակցության և ձեռնարկատիրության զարգացման համար անհրաժեշտ միջավայրը և իրականացնում է սպառողների շահերի պաշտպանությունը:

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի հիմնական ռազմավարական նպատակներն են պաշտպանել և խրախուսել տնտեսական գործունեության ազատությունը, ապահովել բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր, նպաստել ձեռնարկատիրության զարգացմանը և սպառողների շահերի պաշտպանությանը Հայաստանի Հանրապետությունում: Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի գերակա վերջնական արդյունքն է ազատ տնտեսական մրցակցության ապահովումը:

Հանձնաժողովը տնտեսական մրցակցության իրավիճակը գնահատելու համար իրականացնում է 100 հատ ուսումնասիրություններ՝ Հայաստանի Հանրապետությունում արդյունավետ մրցակցային միջավայրի ձևավորման և տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության դրույթների պահպանման նկատմամբ ընթացիկ հսկողություն իրականացնելու նպատակով:

Հանձնաժողովը յուրաքանչյուր տարի իրականացնելու է լայն սպառում ունեցող պարենային և ոչ պարենային նշանակության ապրանքների և ծառայությունների 5 ոլորտի/ապրանքային շուկայի ուսումնասիրություն: Վերջիններիս նպատակն է բացահայտել ոլորտում մրցակցային իրավիճակը, տնտեսական մրցակցության հնարավոր կանխման, սահմանափակման, արգելման և (կամ) սպառողների շահերի հնարավոր վնասման դեպքերը, մրցակցային իրավիճակի վրա ազդող այլ պայմանները: Ուսումնասիրության շրջանակում Հանձնաժողովը, ըստ անհրաժեշտության, հատկորոշում է ապրանքային շուկայի սահմանները, որոշում է ապրանքային շուկայի սուբյեկտների կազմը, ապրանքային շուկայի ծավալները, տնտեսավարող սուբյեկտների մասնաբաժինները, ապրանքային շուկայի կենտրոնացվածության աստիճանը, ուսումնասիրում է համապատասխան իրավական ակտերը, պարզում է ապրանքային շուկա մուտքի խոչընդոտների առկայությունը, ինչպես նաև ուսումնասիրում է ոլորտին կամ ապրանքային շուկային առնչվող այլ հանգամանքներ, որոնք կարող են ընդհանուր մրցակցային իրավիճակի, տնտեսական մրցակցության հնարավոր կանխման, սահմանափակման, արգելման և (կամ) սպառողների շահերի հնարավոր վնասման դեպքերի վերաբերյալ եզրահանգումներ կատարելու հնարավորություն տալ:

«Տնտեսական մրցակցության պաշտպանություն» ծրագրի շրջանակներում Հանձնաժողովի ոլորտային ծախսերի գերակա ուղղություններն են.

- Տնտեսական մրցակցության պաշտպանությանն ուղղված միջոցառումների իրականացում,
- Ապրանքային շուկաներում «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված չարաշահումների սահմանափակումը, կանխումը, արգելումը, ձեռնարկատիրության զարգացման նպաստումը,
- Միջազգային համանման կառույցներին ինտեգրվելը և փորձի փոխանակումը:

22.10. ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) սահմանադրական կարգավիճակ ունեցող անկախ պետական մարմին է, որն ապահովում է հեռարձակվող լրատվության միջոցների ազատությունը, անկախությունը և բազմազանությունը, վերահսկում է տեսալսողական մեդիածառայություն մատուցողների, ցանցային և մուլտիպլեքս օպերատորների, ինչպես նաև տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորների գործունեությունը:

Հանձնաժողովի հիմնական գործառույթներն են՝

- հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթների անցկացում.
- լսողական ծրագրի հաճախականության օգտագործման լիցենզավորման մրցույթների անցկացում.
- մասնավոր մուլտիպլեքս օպերատորի գործունեության լիցենզավորման մրցույթների անցկացում.
- ցանցային օպերատորի գործունեության լիցենզավորում.
- տեսալսողական մեդիածառայություն մատուցողի կարգավիճակի տրամադրում՝ հեղինակազորում.

- տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորների ծանուցումների հաստատում.
- ոչ գծային տեսալսողական տեղեկատվության հեռարձակման գործունեություն իրականացնելու թույլտվությունների տրամադրում.
- լիցենզիա ստացած անձանց ցուցակի կազմում և հրապարակում, լիցենզիայում նշված պայմանների և «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) պահանջների կատարման նկատմամբ հսկողության իրականացում.
- տեսալսողական հաղորդումների տեսագրությունների և ձայնագրությունների ընտրանքային դիտարկման միջոցով օրենսդրության և լիցենզիայի պահանջներին դրանց համապատասխանության պարզում.
- «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում պատասխանատվության միջոցների կիրառում.
- տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից նախընտրական քարոզչության՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կարգի պահպանման նկատմամբ վերահսկողություն.
- տեսալսողական մեդիածառայություն մատուցողների, ցանցային և մուլտիպլեքս օպերատորների և տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորների գործունեության վերաբերյալ բողոքների, առաջարկությունների և հարցումների ուսումնասիրում և պատասխանում կամ եզրակացության տրամադրում.
- տեսալսողական մեդիածառայություն մատուցողների և ցանցային օպերատորների գործունեության մշտադիտարկում.
- «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքով սահմանված կարգով և դեպքերում ստուգումների և ուսումնասիրությունների իրականացում.
- Հանրային հեռարձակողի ծրագրերում տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանության ապահովման համար վերահսկողության իրականացում.
- օրենքով սահմանված դեպքերում կարգերի, մեթոդաբանությունների և այլ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունում:

ՄԺԾԾ ժամանակահատվածում Հանձնաժողովի կողմից իրականացվելիք հիմնական գերակա ծախսային ուղղություններն են՝

- Տեսալսողական մեդիածառայություն մատուցողների գործունեության վերահսկում և կարգավորում, ինչը կնպաստի ոլորտային նպատակների իրագործմանը.
- Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման և լսողական ծրագրի հաճախականության օգտագործման լիցենզավորման մրցույթների անցկացում, ներառյալ մարզային սփռման մրցույթների, ինչը տեղեկատվություն ստանալու ավելի լայն ընտրության հնարավորություն կտա սպառողներին, իսկ մարզերի բնակչությանը՝ մշտապես իրազեկ լինելու տեղական նորություններին և մարզերին առնչվող խնդիրներին.
- Մասնավոր մուլտիպլեքս օպերատորի գործունեության լիցենզավորման մրցույթի անցկացում, ինչը կնպաստի տեսալսողական ծրագրերի հեռարձակման թվայնացման

համակարգի կայուն գործարկմանը, ինչպես նաև կապահովի նոր սուբյեկտների մուտքը տեսալսողական շուկա՝ նպաստելով մեդիաների միջև հավասարակշռված մրցակցային միջավայրի ստեղծմանը.

22.11. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատանքներն ուղղված են ընտրական գործընթացների պատշաճ կազմակերպմանն ու անցկացմանը, դրանց բարելավմանն ու կատարելագործմանը, ընտրական իրավունքի և ընտրական գործընթացների վերաբերյալ ուսուցումների և դասընթացների կազմակերպմանը, դասավանդման նոր մեթոդաբանության, ուսուցման նոր հարթակների մշակմանն ու ներդրմանը և ընտրական գործընթացների վերաբերյալ հանրային իրազեկման ապահովմանն ու ընդլայնմանը:

Վերոգրյալի ապահովման համար իրականացվում են վերլուծություններ, ուսումնասիրություններ, կազմակերպվում են Հանձնաժողովի անդամների և Հանձնաժողովի աշխատակիցների վերապատրաստումներ, անցկացվում են սեմինարներ, կոնֆերանսներ, ապահովվում են շփումներ շահագրգիռ մասնակիցների հետ (կուսակցությունների ներկայացուցիչներ, հասարակական կազմակերպություններ, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ, տարածքային ընտրական հանձնաժողովներ և այլն):

Հանձնաժողովը համագործակցում է հասարակական կազմակերպությունների հետ՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար ընտրական գործընթացներն առավել մատչելի դարձնելու ուղղությամբ: Նշված աշխատանքները կնպաստեն նաև ՀՀ կառավարության ծրագրով սահմանված նպատակին, ըստ որի՝ «վերահաստատելով հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանն ուղղված հետևողական ջանքերը՝ ՀՀ կառավարությունը շարունակելու է ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները՝ բացառելու համար հաշմանդամության հիմքով խտրականությունը կյանքի բոլոր ոլորտներում», և ՀՀ կառավարության ծրագրով սահմանված՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և արժանապատվության պաշտպանությանը և նրանց սոցիալական ներառման ապահովման խնդրի լուծմանը:

Հանձնաժողովը ապահովում է կանանց լիարժեք և արդյունավետ մասնակցությունը և հավասար հնարավորությունները քաղաքական, տնտեսական և հանրային կյանքում որոշումների կայացման բոլոր մակարդակներում ղեկավար դիրք զբաղեցնելու համար (և՛ հանձնաժողովների անդամների, և՛ թեկնածուների շրջանում):

Հաշվի առնելով, որ քաղաքացիների իրազեկումը առաջնային է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համար, Հանձնաժողովը միջոցներ է ձեռնարկելու իրազեկման աշխատանքները (այդ թվում՝ բաց դասեր անցկացնելով, երիտասարդների ներգրավելով և այլն) ընդլայնելու համար:

22.12. ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի առաջնահերթ գործառույթներից է կարգավորման օրենսդրական դաշտի շարունակական կատարելագործումը, և միջազգային առաջավոր փորձի վրա հիմնված բազմակողմանի և

առավել ճկուն իրավական կարգավորումը՝ ելնելով սպառողների և կարգավորվող անձանց իրավունքների պաշտպանության, նրանց շահերի հավասարակշռման, մրցակցային միջավայրի զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծման, կարգավորվող ենթակառուցվածքներում արդյունավետ ներդրումների խրախուսման և կարգավորման դաշտի թափանցիկության ապահովման առաջնահերթություններից, հանրային ծառայությունների ոլորտում միջազգային համագործակցության անհրաժեշտությունից:

Հանձնաժողովը, իր կողմից հիմնարար նշանակություն ունեցող հանրային շահերի պաշտպանության սահմանադրահիրավական մանդատի իրագործմանն ուղղված խնդիրների առավել համակողմանի և արդյունավետ լուծումների ապահովման, հանրային ծառայություններից օգտվող սպառողների և ոլորտի կարգավորվող անձանց շահերի հավասարակշռման և վերջիններիս նկատմամբ խտրականության բացառման անհրաժեշտությունից ելնելով, շարունակելու է հետամուտ լինել կարգավորվող ոլորտների իրավական ակտերի լրամշակման աշխատանքներին:

Կշարունակվեն նաև ոլորտում ներդրումների խթանմանն ուղղված էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի կատարելագործման աշխատանքները:

Միջնաժամկետ հատվածում ևս շարունակվելու են աշխատանքները սակագնային քաղաքականության իրականացման ու կատարելագործման, էներգետիկայի բնագավառում իրականացվող ներդրումային ծրագրերի ուսումնասիրման, համապատասխան կազմակերպությունների կողմից կազմված և հրապարակված գնումների պլանների վերլուծության և շուկայի ազատականացման իրավական դաշտի կատարելագործման ուղղությամբ: Աշխատանքներ կտարվեն նաև էլեկտրաէներգետիկական շուկայի գործունեության մշտադիտարկման, հնարավոր խնդիրների վերհանման և դրանց լուծման ուղղությամբ:

Միջնաժամկետ հատվածում կշարունակվեն իրականացվել էներգետիկայի բնագավառում սակագների վրա ազդող գործոնների վերլուծության և էներգետիկայի բնագավառի սակագների վերանայման աշխատանքները:

Նախատեսվում է իրականացնել «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի վարձակալության պայմանագրային հաշվետու տարվա համար խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման սակագների վերանայման (ճշգրտման) աշխատանքները, այդ թվում՝ խմելու ջրի ծավալների մոնիթորինգի իրականացման աշխատանքները:

Հանրային ծառայությունների կարգավորվող այլ բնագավառներում գործող անձանց կողմից սակագների սահմանման կամ վերանայման հայտի ներկայացման դեպքում կիրականացվեն համապատասխան սակագների վրա ազդող գործոնների վերլուծության և սակագների վերանայման աշխատանքները:

Բաժանորդների կողմից բարձրացված խնդիրների ուսումնասիրության արդյունքում՝ մատակարար-սպառող կարգավորվող իրավահարաբերությունների բարելավման նպատակով ևս ըստ անհրաժեշտության կլրամշակվեն էլեկտրաէներգետիկական շուկայի բաշխման ցանցային կանոնները, էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկայի առևտրային կանոնները, բնական գազի մատակարարման և օգտագործման, ինչպես նաև խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնները:

Էլեկտրաէներգետիկական համակարգում ֆինանսական կայունություն և առաքված էլեկտրաէներգիայի և մատուցված ծառայությունների դիմաց «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից 100% վճարումներ ապահովելու նպատակով միջնաժամկետ հատվածում ևս հանձնաժողովը կշարունակի վերահսկել իր կողմից ներդրված՝ հատուկ հաշվի մեխանիզմի բնականոն աշխատանքը՝ երաշխավորելով արտադրողներին և շուկային ծառայություններ մատուցող ընկերություններին վճարումների կատարումը: Միաժամանակ, հանձնաժողովը կվերահսկի նաև էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում հաշվեկշռման ծառայություն մատուցող կայանի (Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ) կողմից հաշվեկշռման և հաճախականության կարգավորման նպատակով երկրորդային և երրորդային պահուստ ապահովող արտադրող կայաններին («Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» ԲԲԸ և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ (Հրազդան-5 կայանի մասով) էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի կանոններով նախատեսված վճարումների կատարման ընթացքը:

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում ինքնավար էներգաարտադրության զարգացման տեմպերի դինամիկան և սպասվող միտումները՝ հանձնաժողովը միջնաժամկետ հատվածում ևս ըստ անհրաժեշտության կլրամշակի համապատասխան իրավակարգավորումները և կշարունակի հանրության շրջանում և գործարար միջավայրում իրականացնել ոլորտին առնչվող հանրային իրազեկման աշխատանքները:

Հաշվի առնելով, ՀՀ-ում սպառողների պահանջի աճը ինտերնետի նկատմամբ՝ հանձնաժողովը նախատեսում է շարունակել աշխատանքները (այդ թվում՝ օպերատորների հետ համագործակցության, ինչպես նաև լիցենզիաների և ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունների տրամադրմամբ) ենթակառուցվածքների զարգացման և ՀՀ բնակավայրերում ամրակցված (լարային և անլար տեխնոլոգիաների) լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայությունների զարգացման ուղղությամբ, որոնցով պայմանավորված ակնկալվում է լայնաշերտ տեխնոլոգիայի վրա հիմնված օպտիկամանրաթելային ցանցերի հասանելիության և ամրակցված լայնաշերտ ինտերնետ հասանելիության բաժանորդների թվաքանակի տարեկան աճ 5-10-ական %, ինչպես նաև օգտագործված ընդհանուր լայնաշերտ ինտերնետ կապի հոսքերի աճ՝ տարեկան 5-30% միջակայքերի սահմաններում:

Հանձնաժողովի կողմից իրականացված՝ 700ՄՀց և 800ՄՀց ռադիոհաճախականությունների համապատասխան հատվածների օգտագործման թույլտվությունների տրամադրման մրցութային գործընթացի, ինչպես նաև լիցենզիոն պարտավորությունների սահմանման արդյունքում

- հանրապետության բնակավայրերի առնվազն 80%-ում հասանելի կլինի բոլոր 3 օպերատորի փոխադարձ ներթափանցելի շարժական կապի 4G+ (LTE Advanced) ծածկույթ (ներկայումս բոլոր 1001 բնակավայրերում առկա է առնվազն 1 օպերատորի, 91,4%-ում (915 բնակավայր)՝ առնվազն 2 օպերատորի և 21,8%-ում (218 բնակավայր)՝ 3 օպերատորի 4G+ (LTE Advanced) ծածկույթ),
- հանրապետության խոշոր քաղաքներում (Երևան, Գյումրի, Վանաձոր) կներդրվի շարժական լայնաշերտ կապի 5G տեխնոլոգիայի ցանց (այդ թվում՝ «իրերի ինտերնետ»/IoT տեխնոլոգիայի),
- կբարձրացվեն շարժական կապի օպերատորների կապի ցանցերի հուսալիության և անվտանգության մակարդակն ու կարդիականացվեն անվտանգության համակարգերը,

- ընդհանուր շուրջ 2 մլրդ ՀՀ դրամի կապիտալ ներդրումների իրականացմամբ կընդլայնվեն շարժական կապի բոլոր երեք օպերատորների կապի ենթակառուցվածքները,
- ՀՀ պետական ԲՈՒՀ-ում կհիմնվի էլեկտրոնային հաղորդակցության շարժական կապի ծառայություններ մատուցելու հնարավորությամբ ուսումնական լաբորատորիա, որը կնպաստի ռադիոտեխնիկա, կապ և տեղեկատվահաղորդակցական տեխնոլոգիաներ մասնագիտությունների կրթական ծրագրերով մասնագիտացվող՝ ոլորտի համար անհրաժեշտ որակյալ կադրերի պատրաստմանը,
- օպտիկամանրաթելային հասանելիություն չունեցող 302 բնակավայրերում կապահովվի լարային օպտիկամանրաթելային և (կամ) դրան որակապես համարժեք անլար տեխնոլոգիայի ամրակցված լայնաշերտ կապ՝ այսինքն, արդյունքում նշված տեխնոլոգիայի լայնաշերտ ինտերնետ կապը հասանելի կլինի հանրապետության բոլոր բնակավայրերում (ներկայումս օպտիկամանրաթելային կապի հասանելիությամբ ապահովված են բնակավայրերի շուրջ 70%-ը՝ 691 բնակավայր):

Ներկայումս ոլորտի իրավասու և շահագրգիռ այլ մարմինների հետ քննարկումներ են իրականացվում 5G տեխնոլոգիայի ներդրման համար կիրառվող 2300-2400ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթը մրցութային հիմունքներով տրամադրելու տարբերակների (ներառյալ՝ մրցույթի իրականացման և մրցութային պայմաններին վերաբերող, այդ թվում՝ շարժական կապի լայնաշերտ 5G տեխնոլոգիայի ցանցերի ներդրման և հետագա զարգացման համար բարենպաստ պայմանների ապահովման հարցերը) և այդ համատեքստում նշված տիրույթի տրամադրման և օգտագործման պարտադիր վճարների չափերի սահմանման առնչությամբ, որի արդյունքների հիման վրա ՀՀ կառավարության քննարկմանը կներկայացվի տվյալ վճարների չափերը սահմանող ՀՀ պետական բյուջեի մասին օրենքում համապատասխան փոփոխություններ նախատեսող օրենքի նախագիծ և այն ուժի մեջ մտնելուց հետո հանձնաժողովի կողմից կիրականացվի 2300-2400ՄՀց, ինչպես 700ՄՀց և 2600ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթի ազատ հատվածների տրամադրման մրցութային գործընթացը:

Բացի այդ, հանձնաժողովն ակտիվ աշխատանքներ է տանում ոլորտի շարունակական զարգացման ապահովման ուղղությամբ, մասնավորապես, 5G տեխնոլոգայի զարգացման և հանրապետությունում լիարժեք 5G տեխնոլոգիայի ներդրումն ապահովելու համար անհրաժեշտ (օրինակ, 3600-3800ՄՀց) ռադիոհաճախականային ռեսուրսի ազատականացման և հետագա տրամադրման, ինչպես նաև լայնաշերտ ցանցերի զարգացմանը նպաստող՝ ենթակառուցվածքների համատեղ օգտագործմանն առնչվող կարգավորումների մշակման և կիրառման մասով (լայնաշերտ կապի ենթակառուցվածքների զարգացման նպատակով կապի և այլ ենթակառուցվածքների օգտագործման հնարավորության ստեղծում, որը կնպաստի լայնաշերտ կապի ցանցերի ներդրման ծախսերի նվազեցմանը):

22.13. ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

«Պետական վերահսկողական ծառայության մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք) ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պետական վերահսկողության ոլորտում գործող ՀՀ վարչապետին ենթակա մարմին է, որն իրականացնում է Օրենքով իրեն վերապահված վերահսկողական լիազորություններ:

ՀՀ պետական վերահսկողական ծառայության քաղաքականության հիմնական թիրախներից է՝ ՀՀ պետական միջոցների կառավարման, ձևավորման և օգտագործման արդյունավետության և օրինականության բարձրացումը:

ՀՀ պետական վերահսկողական ծառայության գործունեությունը նպաստում է ՄԱԿ-ի կայուն զարգացման 17 նպատակների և դրանց գծով սահմանված գլոբալ ցուցանիշների ապահովմանը:

ՀՀ պետական վերահսկողական ծառայության կողմից կատարվող աշխատանքների գերակայություններն են.

- պետական կառավարման համակարգի մարմիններում և պետական հիմնարկներում իրականացնում է ուսումնասիրություններ.
- Սահմանադրությամբ և օրենքներով ստեղծված, պետական կառավարման համակարգի մարմին չհանդիսացող մարմիններում իրականացնում է ուսումնասիրություններ պետական միջոցների կառավարման օրինականության վերահսկողության նպատակով.
- Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ իրավաբանական անձանց մոտ իրականացնում է ուսումնասիրություններ Հայաստանի Հանրապետության մասնակցությունից ծագող և լիազոր մարմնի, ինչպես նաև կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմնում Հայաստանի Հանրապետության ներկայացուցչի լիազորություններից բխող վերահսկողության իրականացման նպատակով.
- Հայաստանի Հանրապետությունից սուբսիդիա և դրամաշնորհ ստացած անձանց մոտ իրականացնում է ուսումնասիրություններ պետական միջոց տրամադրելու համար հիմք հանդիսացող տեղեկատվության արժանահավատության գնահատման նպատակով:

22.14. ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ

Կոմիտեի գործունեության հիմնական ուղղություններն են՝

- ատոմային էներգիայի օգտագործման ոլորտի միջուկային և ճառագայթային անվտանգության կարգավորում,
- իոնացնող և գեներացնող ճառագայթային աղբյուրներ պարունակող ախտորոշիչ սարքերի օգտագործմամբ գործունեության լիցենզավորում,
- միջուկային տեղակայանքների և միջուկային նյութերի ֆիզիկական պաշտպանություն՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայության հետ համատեղ,
- սահմանային անցակետերում միջուկային նյութերի և ճառագայթային աղբյուրների չարտոնված տեղափոխման հսկողություն՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հետ համատեղ,
- բնակչության և ՀԱԷԿ-ի անձնակազմի պաշտպանություն միջուկային և ճառագայթային վթարների դեպքում, այդ թվում միջուկային տեղակայանքների հրդեհի առաջացման դեպքում՝ ՀՀ ներքին գործերի նախարարության հետ համատեղ,
- ՀՀ միջուկային օրենսդրության համապատասխանեցումը Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) անվտանգության ստանդարտներին, Եվրոպական միության անվտանգության դիրեկտիվների՝ այդ թվում Արևմտաեվրոպական երկրների

կարգավորող մարմինների ասոցիացիայի (WENRA) անվտանգության պահանջներին, «Ատոմային էներգիայի մասին» ՀՀ նոր օրենքի նախագծի մշակումը, միջուկային և ճառագայթային անվտանգության նոր նորմերի, կանոնների, պահանջների, ուղեցույցների, անվտանգության գնահատման մեթոդների մշակումը, գործող նորմերի ու կանոնների վերանայումը, լրամշակումը, անվտանգությանը վերաբերվող փաստաթղթերի քննարկումը, վերլուծությունը և գնահատումը:

ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեն իրականացնում է «Միջուկային և ճառագայթային անվտանգության կարգավորում» ծրագիրը: Ծրագրի նպատակն է՝ բնակչության, ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների անձնակազմի անվտանգության ապահովումը, շրջակա միջավայրի պաշտպանությունն իոնացնող ճառագայթման հնարավոր վնասակար ազդեցությունից, Հայաստանի Հանրապետության անվտանգության շահերի պաշտպանության նպատակով:

Ծրագրի վերջնական արդյունքն է՝ ՀՀ բնակչության համար թույլատրելի իոնացնող ճառագայթման տարեկան արդյունարար դոզայի արժեքի չգերազանցումը սահմանված չափաքանակներից: Վերջնական արդյունքին հասնելու գերակա ուղղությունները՝

- շրջակա միջավայրի ճառագայթային մոնիթորինգի ժամանակակից համակարգի ներդրում՝ շրջակա միջավայրի հնարավոր ռադիոակտիվ աղտոտմամբ պայմանավորված բնակչության ճառագայթահարումը վերահսկելու համար
- կոմիտեի գիտատեխնիկական աջակցության զարգացում
- մասնագիտական և տեսչական անձնակազմի որակավորման բարձրացում, (փորձի փոխանակում, վերապատրաստում, դասընթացներ)
- միջուկային զենքի չտարածման ռեժիմի ուժեղացում, միջուկային նյութի հաշվառման և վերահսկման պետական համակարգի կատարելագործում
- վթարային հակազդման կենտրոնի համապատասխանեցում ժամանակակից պահանջներին:

22.15. ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

Հաշվեքննիչ պալատն արտաքին պետական հաշվեքննություն իրականացնող անկախ պետական մարմին է:

Հաշվեքննիչ պալատի գործունեության նպատակը հաշվեքննությունների իրականացմամբ հանրային ֆինանսների և սեփականության ոլորտում օրինականության և արդյունավետության պահպանման վերաբերյալ հանրությանն ու Ազգային ժողով ժամանակին մասնագիտական ու անկողմնակալ տեղեկատվություն ներկայացնելն է:

Նշված նպատակի ապահովման համար Հաշվեքննիչ պալատը հաշվեքննություն է իրականացնում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու հիմնարկների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հիմնադրած՝ պետական գործառույթներով օժտված այլ իրավաբանական անձանց նկատմամբ՝ անկախ դրանց գործունեությունն

արտահայտող ֆինանսական գործառնությունների՝ պետական և համայնքային բյուջեներում արտացոլված լինելու հանգամանքից կամ եղանակից:

Հաշվեքննիչ պալատը իր ռազմավարական զարգացման ծրագրի շրջանակներում ձգտում է հասնել վերջնական արդյունքներին հետևյալ ուղղություններով՝

- 2024 թվականի հունիսի 11-ին ուժի մեջ մտած Արտաքին պետական հաշվեքննության ոլորտի օրենսդրական փաթեթի լիարժեք ներդրման նպատակով և Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության (INTOSAI) ստանդարտներին համաձայն ներքին իրավական ակտերի մշակում և ներդրում.

- հաշվեքննության գործընթացի որակի բարձրացում՝ նկատի ունենալով նաև Հաշվեքննիչ պալատի SS ենթակառուցվածքների զարգացման հարցերը.

- Հաշվեքննիչ պալատում հաշվեքննության ծառայության ներդրման նպատակով մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի մշակում և ներդրում,

- Ազգային ժողովի, ՀՀ կառավարության և այլ շահառուների հետ համագործակցության զարգացում՝ հատկապես նկատի ունենալով հաշվեքննությունից հետո տարվող աշխատանքները՝ follow-up գործընթաց:

22.16. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵ

Հակակոռուպցիոն կոմիտեն քննչական մարմին է, որը կազմակերպում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով իր ենթակայությանը վերապահված՝ ենթադրյալ կոռուպցիոն հանցագործություններով մինչդատական քրեական վարույթը: Հակակոռուպցիոն կոմիտեն իր լիազորությունների շրջանակներում իրականացնում է օպերատիվ-հետախուզական գործունեություն:

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի կողմից իրականացվող գործունեության հիմնական նպատակն է կոռուպցիոն բնույթի հանցագործությունների բացահայտումն ու քննությունը:

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն՝ որպես քննչական մարմին ձեռնարկելու է բոլոր միջոցառումները, որպեսզի իր գործունեության արդյունքում քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարած յուրաքանչյուր ոք բացահայտվի և ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվի:

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողները քրեական վարույթի պատշաճ քննությունն ու դրա արդյունավետությունն ապահովելու նպատակով կատարում են մի շարք քննչական, օպերատիվ-հետախուզական և դատավարական գործողություններ, այդ թվում՝ նշանակում փորձաքննություններ, դատավարական փաստաթղթեր ներկայացնում թարգմանության և այլն:

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի քննչական գործառույթներ իրականացնող ստորաբաժանումների գործունեությունն ապահովում է հանցավորության, մասնավորապես՝ կոռուպցիայի դեմ պայքարը, որը բխում է ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրի 5.5-րդ բաժնից:

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների հանձնարարությամբ կամ խնդրանքով օտարերկրյա պետության տարածքում հարցաքննության, զննության, առգրավման, խուզարկության, փորձաքննության և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով

նախատեսված այլ դատավարական գործողությունների կատարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերին համապատասխան:

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն առաջնորդվում է ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի դրույթներով, ինչպես նաև ՀՀ-ի կողմից վավերացված մի շարք միջազգային պայմանագրերով ամրագրված կարգավորումներով, մասնավորապես՝ ՄԱԿ-ի «Անդրազգային հանցավորության դեմ պայքարի» կոնվենցիայով, «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» Մինսկի և Քիշնևի կոնվենցիաներով, «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման ու բռնագրավման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայով և այլն:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2025-2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարությունը ներկայացնում է ՀՀ պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման և պարտքի վերաֆինանսավորման համար անհրաժեշտ փոխառու միջոցների ներգրավման, ինչպես նաև ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի ծախսերի և ռիսկերի կառավարման ռազմավարությունը: Այն եռամյա ծրագիր է, որը վերանայվում և հրապարակվում է տարեկան պարբերականությամբ՝ նպաստելով կառավարության պարտքի կանխատեսելի և թափանցիկ կառավարման ապահովմանը:

ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարությունը պարզաբանում է պարտք ներգրավելու քաղաքականությունը՝ ներառելով կառավարության պարտքի կառավարման ուղենշային ցուցանիշները, բացահայտում և գնահատում է կառավարության պարտքի պորտֆելի կառավարման հետ կապված ռիսկերը, ինչպես նաև նախանշում է միջնաժամկետ հատվածում պարտքային քաղաքականության սկզբունքները, նպատակադրումներն ու իրականացվելիք միջոցառումները:

ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարությունը մշակվում է Պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախանշված հարկաբյուջետային քաղաքականության հիմնական նպատակադրումների ներքո, որոնք ենթադրում են, որ պետական բյուջեն միջնաժամկետ հորիզոնում շարունակելու է ձևավորվել պակասուրդով, սակայն վերջինս, հարկաբյուջետային կանոնների ներքո, ծրագրավորվում է այնպիսի մակարդակում, որ երաշխավորի կառավարության պարտքի կայունությունն ու կառավարելիությունը:

ՀՀ կառավարության պարտքի ընդունելի պորտֆելի ձևավորման նպատակով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից իրականացվում են ծախսերի և ռիսկերի վերլուծություններ՝ կիրառելով նաև միջազգային լավագույն փորձի հիման վրա հեղինակավոր միջազգային ֆինանսական կառույցների կողմից մշակված մոտեցումները: Վերլուծությունները հնարավորություն են ընձեռում գնահատել ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի ծախսերի ու ռիսկերի ցուցանիշները և դրանց վրա հնարավոր շոկերի ազդեցությունները: ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարությունում ներկայացվում և վերլուծվում են ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի շուկայական՝ փոխարժեքի և տոկոսադրույքի ռիսկերը, ինչպես նաև վերաֆինանսավորման ռիսկը: Ռազմավարությունը կազմելիս հաշվի են առնվել նաև ՀՀ կառավարության պարտքի կառավարման այնպիսի սահմանափակումներ, ինչպիսիք են ներքին շուկայի կարողությունը կամ արտաքին վարկերից օգտվելու հնարավորությունները:

Ընդհանուր առմամբ, ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարությունը ներկայացնում է ծախսերի և ռիսկերի համադրման հնարավոր տարբերակներից նախընտրելին, որի ընտրության հիմքում ընկած է ընդունելի ծախսերով և ռիսկերով ֆինանսական կարիքի բավարարումը:

1.1. ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարության նպատակները և ընդգրկման շրջանակը

ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարությունը մշակվում է 2008 թվականին ընդունված «Պետական պարտքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներին համապատասխան:

«Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի համաձայն, ՀՀ կառավարության պարտքի կառավարման հիմնական նպատակը կառավարության ֆինանսական կարիքի բավարարման մշտական հնարավորության ապահովումն է՝ երկարաժամկետ հատվածում նվազեցնելով պարտքի սպասարկման մեծությունը: ՀՀ կառավարության պարտքի կառավարման նպատակներից է նաև կառավարության պարտքի օպտիմալ կառուցվածքի ձևավորումը՝ հաշվի առնելով պոտենցիալ ռիսկերը: Այլ կերպ ասած, Կառավարության պարտքի կառավարման հիմնական նպատակն է միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածում ապահովել կառավարության ֆինանսական կարիքների բավարարման մշտական հնարավորությունը և վճարային պարտավորությունների կատարումը՝ հնարավոր նվազագույն ծախսերով և պարտքի պորտֆելի ռիսկերի խելամիտ մակարդակի պայմաններում:

«Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքով սահմանվել են նաև պետական պարտքի ներգրավման նպատակները՝ պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորումը և ընթացիկ իրացվելիության ապահովումը, ներքին պետական պարտքի շուկայի պահպանումը և զարգացումը:

ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարությունն ընդգրկում է միայն ՀՀ կառավարության պարտքը. կատարված վերլուծությունները չեն ներառում ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտքը: Վերջինս ստանձնվում է ՀՀ կենտրոնական բանկի անունից և կողմից: «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի համաձայն Կենտրոնական բանկի պարտքի կառավարման նպատակները սահմանվում են «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով:

1.2. ՀՀ կառավարության պարտքի կառավարման ոլորտում 2023 թվականի տարեսկզբից արձանագրված զարգացումները

2023 թվականի տարեվերջին «ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ» ցուցանիշը կազմել է 48.1%, որը պակաս է ծրագրային ցուցանիշից 1.8 տոկոսային կետով: Վերջինս պայմանավորված է ինչպես ՀՀ կառավարության պարտքի՝ ծրագրային մակարդակից 1.6%-ով պակաս կազմելու, այնպես էլ անվանական ՀՆԱ-ի փաստացի և ծրագրային ցուցանիշների միջև դրական տարբերությամբ:

Ինչպես 2022 թվականի տարեվերջին, «ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ» ցուցանիշը ցածր է հարկաբյուջետային կանոններով սահմանված 50% շեմային մակարդակից և գտնվում է 40% շեմային մակարդակը գերազանցելու ծախսային սահմանափակումների կամ կանոնների համակարգի ավելի մեղմ տիրույթում:

2024-2026 թվականների ռազմավարությամբ սահմանված բոլոր ուղենշային ցուցանիշները 2023 թվականի փաստացի արդյունքներով գտնվել են նախանշված միջակայքերում:

Աղյուսակ 1. *ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2024-2026 թվականների ռազմավարությամբ սահմանված ուղենշային ցուցանիշների կատարողականը 2023 թվականին*

	Ուղենիշ	31.12.2023 փաստացի
Վերաֆինանսավորման ռիսկ		
Մինչև մարում միջին ժամկետը	7 – 10 տարի	7.4
Առաջիկա երեք տարիների ընթացքում մարվող պարտքի կշիռը ընդամենը պարտքի մեջ	առավելագույնը 35%	28.6
Առաջիկա տարվա ընթացքում մարվող պետական գանձապետական պարտատոմսերի (ՊԳՊ) կշիռը ՊԳՊ-երի ծավալի մեջ (տարեվերջին)	առավելագույնը 20%	11.8
Տոկոսադրույքի ռիսկ		
Ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ	առնվազն 80%	84.1
Փոխարժեքի ռիսկ		
Ներքին պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ	առնվազն 40%	47.3
ՀՀ դրամով ներգրավված պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ	առնվազն 40%	45.9

Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ հաշվարկներ

2023 թվականի պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը փոխառու զուտ միջոցների հաշվին կատարվել է 287.0 մլրդ դրամով, ընդ որում, ներքին փոխառու զուտ միջոցների հաշվին (առանց մուրհակների) ֆինանսավորումը կազմել է 360.0 մլրդ դրամ, իսկ արտաքին փոխառու զուտ միջոցների հաշվին ֆինանսավորումը բացասական է՝ (73.3) մլրդ դրամ: Հետևաբար, ներքին փոխառու միջոցներով զուտ ֆինանսավորումն ամբողջությամբ ծածկել է փոխառու զուտ

միջոցներով դեֆիցիտի ֆինանսավորման փաստացի կարիքը և արտաքին փոխառու միջոցների զուտ մարումը:

2023 թվականի ընթացքում ՀՀ կառավարության պարտքի գծով իրականացված գործառնություններում զգալի կշիռ ունեն պետական գանձապետական պարտատոմսերը:

Աղյուսակ 2. *ՀՀ կառավարության պարտքի գծով իրականացված գործառնություններն ըստ գործիքների*

2023	Տեղաբաշխված ծավալը	Տեղաբաշխումից մուտքը	Մարման և/կամ հետգնման ծավալը	Վճարված տոկոսագումարը
Պետական գանձապետական պարտատոմսեր, մլրդ դրամ	829.5[28]	584.1	223.8	157.4
Արտարժութային պետական պարտատոմսեր, մլն ԱՄՆ դոլար	-	-	186.8	86.5
Արտարժութային պետական պարտատոմսեր, մլրդ դրամ	-	-	73.4	33.8
		Մասհանման ծավալը	Մարման ծավալը	Վճարված տոկոսագումարը
Արտաքին վարկեր, մլն ԱՄՆ դոլար		316.4	315.6	157.6
Արտաքին վարկեր, մլրդ դրամ		124.6	124.5	62.3

Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ

2023 թվականի ընթացքում պետական գանձապետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխումների միջին կշռված եկամտաբերությունը կազմել է 10.83 %՝ նախորդ տարվա 11.07%-ի համեմատությամբ նվազելով 0.2 տոկոսային կետով: 2023 թվականի ընթացքում տեղաբաշխված պետական գանձապետական պարտատոմսերի միջին կշռված ժամկետը կազմել է 2381 օր կամ 6.5 տարի՝ նախորդ տարվա նույն ցուցանիշի 1762 օրվա կամ 4.8 տարվա դիմաց: Եթե հաշվի չառնենք 2023թ. դեկտեմբերին 206.4 մլրդ դրամ անվանական արժեքով պարտատոմսերի ուղղակի տեղաբաշխման գործարքը, ապա 2023 թվականի ընթացքում պետական գանձապետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխումների միջին կշռված եկամտաբերությունը կկազմի 11.24%, ինչը նախորդ տարվա (11.07%) ցուցանիշից բարձր է 0.17 տոկոսային կետով: Առանց 2023թ. դեկտեմբերին 206.4 մլրդ դրամ անվանական արժեքով պարտատոմսերի ուղղակի տեղաբաշխման գործարքը հաշվի առնելու՝ պարտատոմսերի միջին կշռված ժամկետը կկազմեր 1978 օր կամ 5.4 տարի: 2022-2023 թվականներին արձանագրված բարձր տոկոսադրույքների միջավայրում գանձապետական պարտատոմսերի

[28] Ներառված է ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2326-Ն որոշման համաձայն Լեռնային Ղարաբաղի կառավարության և նրա ստեղծած հիմնադրամների, առանձին ֆիզիկական անձանց նկատմամբ Հայաստանի Հանրապետության առևտրային բանկերի, վարկային և ապահովագրական կազմակերպությունների դրամական պահանջների (գույքային իրավունքների) զիջման դիմաց առանձին ֆինանսական կազմակերպությունների դրամական պահանջների (գույքային իրավունքների) զիջման դիմաց 206,357,605,000 դրամ անվանական արժեքով ուղղակի տեղաբաշխված պարտատոմսը

տեղաբաշխումների կառուցվածքում գերակշռել են կարճաժամկետ և միջնաժամկետ պարտատոմսերը՝ նպատակ ունենալով երկարաժամկետ հատվածում զսպել տոկոսավճարների աճը: 2023 թվականի երկրորդ կեսից, վերաֆինանսավորման տոկոսադրույքի շարունակական նվազմանը զուգահեռ, գանձապետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխումների եկամտաբերությունն աստիճանաբար նվազել է, իսկ տեղաբաշխվող պարտատոմսերի ժամկետայնությունը՝ երկարել:

Վերաֆինանսավորման ռիսկի կառավարման, ինչպես նաև դրամի արժևորման պայմաններում դրամային արտահայտությամբ թողարկումից մուտքի համեմատությամբ եվրապարտատոմսի մարման խնայողության նպատակով 2023 թվականի հոկտեմբերի 2-ին իրականացվել է 2025 թվականին մարվող եվրոպարտատոմսի հետգնում՝ 186.8 մլն ԱՄՆ դոլար ծավալով: Հետգնված 186.8 մլն ԱՄՆ դոլարի դիմաց փոխարժեքների տարբերության հետևանքով խնայողությունը կազմել է 15.4 մլրդ դրամ:

1.3. ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի ծախսերի ու ռիսկերի նկարագիրը

2023 թվականի տարեվերջին ՀՀ կառավարության ծախսերի և ռիսկերի ցուցանիշներն ամբողջական պատկերացում են տալիս և որակապես բնութագրում են ՀՀ կառավարության պարտքի պորտֆելը:

Աղյուսակ 3. *ՀՀ կառավարության պարտքի ծախսերի և ռիսկերի ցուցանիշները 31.12.2023 թվականի դրությամբ*

		Արտարժութային պարտք	Դրամային պարտք	Ընդամենը
ՀՀ կառավարության պարտքի ծավալը (մլրդ դրամ)		2,471.9	2,100.0	4,571.9
Միջնաժամկետ հատվածում նախատեսվում է առավել մատչելի դարձնել ոչ ռեզիդենտների մուտքը պետական գանձապետական պարտատոմսերի շուկա և ապահովել ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում դրամային պարտքի առնվազն 40% մասնաբաժին: Նախատեսվում է նաև կիրառել պետական գանձապետական պարտատոմսերի փոխանակման աճուրդների կազմակերպման էլեկտրոնային համակարգը, որը լրացուցիչ խթան կհանդիսանա պետական գանձապետական պարտատոմսերի իրացվելիության աճի համար:

Կարևոր է նշել, որ միայն ՀՀ կառավարության պարտքի կառավարման ոլորտում իրականացվող միջոցառումները բավարար չեն ՀՀ կառավարության ներքին պարտքի շուկան էականորեն զարգացնելու համար: Ներքին պարտքի շուկայի զարգացման և ներդրողների բազայի ընդլայնման նախապայմաններից է նաև ֆինանսական շուկայի ոչ բանկային հատվածի հետագա զարգացումը:

ՀՀ պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման արտաքին աղբյուրները սահմանելիս բացի ՀՀ կառավարության պարտքի պորտֆելին բնորոշ ծախսերի և ռիսկերի ցուցանիշների համախմբի վերլուծություններից, ֆինանսավորման աղբյուրների տարբերակման անհրաժեշտությունից, հաշվի են առվել նաև ՀՀ պետական բյուջեի հոսքերում արտարժութային մուտքերի և ելքերի դինամիկան: Վերջինիս արդյունքում, պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներում փոխառությունների զուտ ներգրավումը արտաքին աղբյուրների հաշվին միջնաժամկետ հատվածում կավելանա:

Համագործակցությունն արտաքին վարկատուների հետ կընդլայնվի, իսկ ֆինանսավորման գործիքները կդիվերսիֆիկացվեն: Այս համագործակցության շրջանակում ծրագրային վարկերն ուղղվելու են կարևոր ենթակառուցվածքների ձևավորմանը, իսկ մյուս վարկերի մեջ աստիճանաբար ընդլայնվելու է արդյունքի վրա հիմնված գործիքների կիրառումը, որոնք

խթանելու են տնտեսական աճը և, հետևաբար, գեներացնելու են եկամուտներ, որոնք էլ իրենց հերթին ապահովելու են պարտքի կայունությունն ու պարտքի բեռի ցուցանիշների կառավարելի մակարդակում պահպանումը:

ՀՀ կառավարությունը միջնաժամկետ հատվածում շարունակելու է ՀՀ կառավարության պարտքի մարման գրաֆիկի հարթեցման և վերաֆինանսավորման ռիսկի նվազեցմանն ուղղված գործողությունները՝ կիրառելով իրացվելիության կառավարման այնպիսի գործիքներ, ինչպիսիք են կանխիկի բուֆերի ձևավորումը, հետգնումների ու փոխանակումների իրականացումը: Ըստ անհրաժեշտության և իրավիճակի՝ կիրականացվի նաև տոկոսադրույքի և փոխարժեքի ռիսկի ակտիվ կառավարում, ինչպես օգտվելով առկա վարկային պայմանագրերի հնարավորություններից և փոփոխելով գործող վարկերի պայմանները, այնպես էլ ածանցյալ գործիքների ներդրմամբ:

Հավելված

ՀՀ կառավարության պարտքը բնութագրող 2022-2023 թվականների փաստացի, 2024 թվականի պետական բյուջեի ծրագրային և 2025-2027 թվականների կանխատեսումային ցուցանիշները

Աղյուսակ 19. *ՀՀ կառավարության պարտքի հիմնական ցուցանիշները 2022-2027 թվականներին (մլրդ դրամ)*

	2022 փաստ.	2023 փաստ.	2024 պետբյուջեի ծրագիր	2024 կանխ.	2025 կանխ.	2026 կանխ.	2027 կանխ.
Կառավարության պարտք	3,969.7	4,571.9	4,645.0	5,172.9	6,017.5	6,774.8	7,430.3
% ՀՆԱ-ի նկատմամբ	46.7	48.1	49.9	50.5	53.7	55.0	55.0
Ըստ գործիքակազմի							
արտաքին վարկեր և փոխառություններ	1,772.6	1,836.1	2,051.0	2,048.8	2,490.5	2,946.9	3,400.2
պետական գանձապետական պարտատոմսեր	1,496.3	2,092.9	1,824.4	2,450.7	2,744.7	3,021.7	3,213.7
արտարժութային պետական պարտատոմսեր	688.7	632.8	763.9	664.3	777.1	802.8	805.0
արտաքին երաշխիքներ	2.9	3.0	2.9	2.8	2.6	2.5	2.2
ներքին երաշխիքներ	9.2	7.2	2.8	6.4	2.6	1.0	-
Կառավարության պարտքի տոկոսավճար	198.3	253.4	323.1	323.1	393.7	440.5	489.6
Տոկոսավճար/պետական բյուջեի ծախսեր (%)	8.8	9.9	10.1	10.4	11.2	11.6	12.0
Տոկոսավճար/պետական բյուջեի սեփական (առանց դրամաշնորհներ) եկամուտներ (%)	9.7	10.8	11.9	12.4	13.7	13.6	13.6
Տոկոսավճար/ՀՆԱ (%)	2.3	2.7	3.1	3.2	3.5	3.6	3.6

Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ

Աղյուսակ 20. *Պետական պարտատոմսերի ցուցանիշները 2022-2027 թվականներին*

	2022 փաստ.	2023 փաստ.	2024 պետբյուջեի ծրագիր	2024 կանխ.	2025 կանխ.	2026 կանխ.	2027 կանխ.
Պետական գանձապետական պարտատոմսեր, մլրդ դրամ	1,496.3	2,092.9	1,824.4	1,894.6	2,223.6	2,543.7	2,863.7
% ՀՆԱ-ի նկատմամբ	17.6	22.0	19.6	19.9	21.0	21.6	21.8

	2022 փաստ.	2023 փաստ.	2024 պետբյուջեի ծրագիր	2024 կանխ.	2025 կանխ.	2026 կանխ.	2027 կանխ.
Ըստ մարման մնացած օրերի, մլրդ դրամ							
Մինչև 1 տարի	192.8	246.6	350.1	350.1	365.1	405.5	426.2
1-5 տարի	517.5	708.4	924.5	924.5	979.3	1,185.6	1,167.4
5-ից ավելի տարի	785.9	1,137.8	1,176.1	1,176.1	1,400.3	1,430.6	1,620.1
Ըստ մարման մնացած օրերի կշիռը (%)							
Մինչև 1 տարի	12.9	11.8	14.3	13.3	13.4	13.3	13.3
1-5 տարի	34.6	33.8	37.7	35.7	39.2	36.3	36.3
5-ից ավելի տարի	52.5	54.4	48.0	51.0	47.3	50.4	50.4
Միջին տոկոսադրույք (%)	10.5	10.7	10.7	10.7	10.4	10.2	10.1
Միջին ժամկետայնություն (տարի)	8.8	8.0	8.0	7.3	7.5	7.6	7.6
Արտարժութային պետական պարտատոմսեր, մլն ԱՄՆ դոլար	1,750.0	1,563.2	1,563.2	1,563.2	1,750.0	1,750.0	1,750.0
% ՀՆԱ-ի նկատմամբ	8.1	6.7	6.4	6.5	6.9	6.5	6.0
Միջին տոկոսադրույք (%)	5.0	4.7	4.7	4.7	5.0	5.0	5.0
Միջին ժամկետայնություն (տարի)	6.0	5.5	5.5	4.5	5.9	4.9	3.9

Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ

Աղյուսակ 21. *ՀՀ կառավարության վարկերի և փոխառությունների ցուցանիշները 2022-2027 թվականներին*

(մլն ԱՄՆ դոլար)

	2022 փաստ.	2023 փաստ.	2024 պետբյուջեի ծրագիր	2024 կանխ.	2025 կանխ.	2026 կանխ.	2027 կանխ.
Կառավարության վարկեր և փոխառություններ	4,503.9	4,503.9	4,536.0	5,056.8	4,821.0	5,608.6	6,423.6
% ՀՆԱ-ի նկատմամբ	20.9	20.9	19.3	20.6	20.0	22.2	23.9
Ըստ վարկատուի							
միջազգային ֆինանսական կառույցներից	3,495.9	3,590.1	4,049.9	3,737.2	3,667.3	3,636.7	3,992.1
օտարերկրյա պետություններից	994.2	933.9	997.6	1,074.2	1,933.9	2,780.8	3,394.9

	2022 փաստ.	2023 փաստ.	2024 պետբյուջեի ծրագիր	2024 կանխ.	2025 կանխ.	2026 կանխ.	2027 կանխ.
առևտրային բանկերից	13.7	12.1	9.3	9.5	7.4	6.1	4.8
Միջին տոկոսադրույք (%)	3.2	3.6	4.4	4.5	5.2	5.1	5.2
Միջին ժամկետայնություն (տարի)	7.5	7.3	7.2	7.5	8.0	8.2	8.0

Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ

2. ԱՅԼ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ

Կանխատեսումներ: Աղյուսակում ներկայացված է ՀՀ ֆինանսների նախարարության և այլ կառույցների կողմից ՀՀ տնտեսական աճի կարճաժամկետ և միջնաժամկետ կանխատեսումների համեմատականը: Արժույթի միջազգային հիմնադրամի կանխատեսումներով 2024 թվականին սպասվում է 6.0% աճ, Համաշխարհային բանկի կանխատեսումներով՝ 5.5% աճ, իսկ ՀՀ կենտրոնական բանկի կանխատեսումներով՝ 6.1-6.8% աճ: Ֆիթչի հունվար և Մուդիսի փետրվար ամիսների կանխատեսումներով սպասվում են համապատասխանաբար 6.0% և 5.5% աճեր:

Աղյուսակ 2.1 *Այլ կառույցների կողմից ՀՀ տնտեսական աճի կանխատեսումները, (%)*

	2024	2025	2026	2027
ՀՀ ֆինանսների նախարարություն, բազային սցենար (2024թ. հունիս)	6.3	5.8	5.7	5.5
Արժույթի միջազգային հիմնադրամ (2024թ. հունիս)	6.0	5.3	4.5	4.5
Համաշխարհային բանկ (2024թ. հունիս)	5.5	4.9	4.5	-
ՀՀ կենտրոնական բանկ (2023թ. հունիս)	6.1-6.8	3.8-6.1	4.1-5.5	-
Մուդիս (2024թ. հունիս)	5.5	4.5	-	-
Ֆիթչ (2024թ. հունվար)	6.0	4.9	4.8	4.8

Աղբյուրը՝ համապատասխան կառույցների հրապարակումներ

«-» տվյալները հասանելի չեն

3. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

3.1. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎՐԱ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻՑ ՇԵՂՄԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

3.1.1.2025-2027 թվականներին ՄԺԾԾ հարկային եկամուտների վրա մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսվածից շեղման ռիսկերի ազդեցության քանակական գնահատումը

Միջնաժամկետ հատվածում հարկային եկամուտների կանխատեսվող հոսքերի վրա մակրոտնտեսական բնույթի ռիսկերի ազդեցության քանակական գնահատումը հիմնվել է ստորև նկարագրված **ՀՆԱ կանխատեսումներից շեղումների ռիսկի** և **ենթադրություններից շեղումների ռիսկի** վրա: Ռիսկերի առարկայացման գնահատումն իրականացվել է Բայեսյան Վեկտոր ավտոռեգրեսիոն մոդելով, որի նախնական արժեքները նշանակվել են հիմք ընդունելով ՀՀ ՖՆ «AFSM DSGE» կառուցվածքային մոդելով[29] գնահատված զգայունության գործակիցները:

1. ՀՆԱ կանխատեսումներից շեղումների ռիսկ

ՀՆԱ-ի կանխատեսումների ռիսկը գնահատվել է 2010-2023 թվականներին միջնաժամկետ ծախսերի ծրագրերի հիմքում դրվող ՀՆԱ-ի կանխատեսված ցուցանիշների և ՀՆԱ-ի փաստացի ցուցանիշների միջև շեղման հիման վրա, որոնք վերջին տարիների համար եղել են 3.3-ից 4.1 տոկոսային կետ: Ընդ որում, պետք է նշել, որ այս գնահատականներն ամփոփում են կանխատեսումներից ինչպես դրական, այնպես էլ բացասական շեղումները՝ ըստ էության արտացոլելով ՀՆԱ պատմական տատանողականության և ՀՆԱ կանխատեսումների շուրջ ձևավորվող անորոշության ազդեցությունը: Այս պարագայում որպես ռիսկ է դիտարկվել ՀՆԱ-ի իրական աճի կանխատեսվածից 3.3 տոկոսային կետով ավելի ցածր ցուցանիշի ձևավորումը 2025 թվականին, 4.1 տոկոսային կետով ցածր՝ 2026 թվականին և 4.1 տոկոսային կետով ցածր՝ 2027 թվականին:

Արդյունքում, ՀՆԱ նվազման ռիսկի ազդեցությունը հարկային եկամուտների վրա 2025, 2026 և 2027 թվականների համար գնահատվում է համապատասխանաբար 53.1, 77.6 և 84.3 մլրդ ՀՀ դրամ ֆինանսական պահանջի ավելացման ուղղությամբ:

2. Ենթադրություններից շեղումների ռիսկ

ՄԺԾԾ հիմքում դրվող կանխատեսումները կառուցվում են որոշակի ենթադրությունների հիման վրա, որոնք էլ իրենց հերթին կախված են արտաքին կամ ներքին գործոններից: Սակայն միշտ չէ, որ այդ ենթադրությունները կանխատեսվող հորիզոնում իրականություն են դառնում՝ կապված ՀՀ կառավարության և ՀՀ ԿԲ-ի կառավարման դաշտից դուրս ի հայտ եկող երևույթների հետ:

Բացի արտաքին կամ ներքին գործոններից, ենթադրությունների ռիսկ է հարկեր/ՀՆԱ թիրախավորված բարելավման չապահովումը՝ հարկային վարչարարության կատարելագործման ոչ բավարար տեմպ ապահովելու դեպքում:

[29] Տե՛ս Babajanyan, V., Baksa, D., Fukac, M. M., Hakobyan, E., Harutyunyan, A., Karapetyan, N., ... & Zanna, L. F. (2022). The ararat fiscal strategy model: a structural framework for fiscal policy analysis in Armenia. International Monetary Fund. https://www.imf.org/en/Publications/WP/Issues/2022/06/10/The-Ararat-Fiscal-Strategy-Model-A-Structural-Framework-for-Fiscal-Policy-Analysis-in-519522

Ենթադրություններից շեղումների ռիսկ է նաև ԵԱՏՄ անդամ պետությունների տնտեսական զարգացումները: Միաժամանակ, ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտներում մաքսատուրքերի մասնաբաժինը կարող է փոփոխվել նոր պետությունների ԵԱՏՄ-ին անդամակցությունից:

2.1. Գնաճի շեղման հնարավոր չափը

Գնաճի ցուցանիշի շեղման հնարավոր չափ է դիտարկվում է վերջին տասնամյակում միջնաժամկետ ծախսերի ծրագրերի հիմքում դրվող գնաճի կանխատեսումներից փաստացի շեղումների միջին չափը:

Կանխատեսված ցուցանիշից գնաճի շեղման ռիսկերը միջնաժամկետ հորիզոնում գնահատվում են միջինում **դեպի ներքև՝ 2.6 տոկոսային կետի չափով**:

Գնաճի շեղման ռիսկը կարող է ազդեցություն ունենալ ՀՀ պետական բյուջեի և՛ եկամտային, և՛ ծախսային կատարողականների վրա՝ անուղղակի հարկերի, ինչպես նաև ապրանքների և ծառայությունների գծով ծախսերի ուղղությամբ: Գնանկումային պայմաններում հարկերից մուտքերը կկրճատվեն և ընդհակառակը:

Արդյունքում, գնաճի դանդաղման ռիսկի ազդեցությունը հարկային եկամուտների վրա 2025, 2026 և 2027 թվականների համար գնահատվում է համապատասխանաբար 25.6, 27.8 և 30.0 մլրդ ՀՀ դրամ ֆինանսական պահանջի ավելացման ուղղությամբ:

2.2. Փոխարժեքի շեղման հնարավոր չափը

Չնայած ՀՀ ԿԲ-ն և ՀՀ ՖՆ-ն մշակում են փոխարժեքի վերաբերյալ սցենարներ, որոնք արտացոլում են փոխարժեքի վարքագիծը տարբեր մակրոտնտեսական հիմնարարների ներքո, ՀՀ-ում իրականացվում է լողացող փոխարժեքի քաղաքականություն, իսկ յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի ցուցանիշների կանխատեսումների հիմքում դրվում է փոխարժեքի անփոփոխ (որոշակի պահի դրությամբ) մակարդակ: Սակայն փոխարժեքի տատանումները կազդեն ներմուծումից ՀՀ պետական բյուջե մուտքագրվող հարկային եկամուտների վրա:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջին տարիների համար և՛ արժևորման, և՛ արժեզրկման ուղղությամբ փոխարժեքի տատանումների բացարձակ շեղման միջին չափը չի գերազանցել 6.3 տոկոսը՝ որպես ռիսկ է դիտարկվել ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի առավելագույնը 6.3 տոկոս արժեզրկումը:

Արդյունքում, փոխարժեքի 6.3 տոկոսով արժեզրկման ռիսկի դրսևորման դեպքում, այլ հավասար պայմաններում, 2025, 2026 և 2027 թվականներին կարելի է ապահովել հարկային եկամուտների համապատասխանաբար 17.7, 19.3 և 21.8 մլրդ ՀՀ դրամ լրացուցիչ մուտք:

2.3. Ներմուծման գծով ռիսկի հնարավոր չափը

Քանի որ մաքսային սահմանին ներմուծումից գանձվող անուղղակի հարկերը էական կշիռ ունեն պետական բյուջեի ընդհանուր հարկային եկամուտներում, անհրաժեշտ է գնահատել նաև ներմուծման հնարավոր նվազման պարագայում հարկային եկամուտների նվազման ռիսկի չափը: 2010-2023 թվականների ընթացքում ՄԺԾԾ-ում ներմուծման գծով կանխատեսումների շեղման միջին բացարձակ չափը գտնվում է 7.3-14.3%-ի միջակայքում, ինչն էլ հաշվի է առնվել այս գործոնի ազդեցությունը գնահատելու համար: 2022-2024 թթ. գնահատականներում ներմուծման ցուցանիշները դիտարկվել են առանց վերաարտահանման ծավալների: 2025, 2026 և 2027 թվականների համար ծրագրվածից համապատասխանաբար 7.3, 12.3 և 14.3% պակաս

ներմուծման ռիսկի դրսևորման պայմաններում հարկային եկամուտների վրա ազդեցությունը գնահատվել է համապատասխանաբար՝ 25.7, 47.5 և 62.2 մլրդ ՀՀ դրամ՝ ֆինանսական պահանջի ավելացման ուղղությամբ:

2.4. Հարկեր/ՀՆԱ թիրախավորված բարելավումը չապահովելու ռիսկի չափը

ՀՀ հարկեր/ՀՆԱ ցուցանիշը վերջին տասնամյակում միջինում բարելավվել է շուրջ 0.2 տոկոսային կետով, որին նպաստել են ինչպես տնտեսության կառուցվածքային փոփոխությունները (հարկունակ ճյուղերի մասնաբաժնի ավելացում), այնպես էլ հարկային օրենսդրական բարեփոխումները և վարչարարության արդյունավետության բարձրացումը՝ ստվերի դեմ պայքարի և հարկային վարչարարության ճեղքի աստիճանական կրճատման ճանապարհով: Այնուամենայնիվ, վերջին տարիներին հարկային վարչարարության ճեղքի կրճատման ավելի բարձր արագության հաշվին հարկեր/ՀՆԱ բարելավումների տեմպը արագացել է (2021-2022թթ. հարկային ճեղքը միջինում կրճատվել է 0.6%-ային կետով): Ըստ այդմ, համահունչ նաև ՀՀ կառավարության ծրագրով մինչև 2026 թ. թիրախավորված առնվազն 25% հարկեր/ՀՆԱ ցուցանիշ գրանցելու թիրախին, միջնաժամկետ հատվածում ծրագրվել է տարեկան 0.6 տոկոսային կետով բարելավման տեմպ, որում հարկային վարչարարության ազդեցությունը 0.5%-ային կետ է: Այնուամենայնիվ, հարկային վարչարարության ազդեցությունը ճեղքի կրճատման վրա ոչ գծային է, և կարող է թուլանալ ճեղքի ավելի ցածր մակարդակներում: Ըստ այդմ, ռիսկի չափ է դիտարկվել ծրագրվածից ավելի դանդաղ հարկեր/ՀՆԱ բարելավման սցենարը 0.3%-ային կետի չափով, որը ենթադրում է ցուցանիշի բարելավում վերջին տասնամյակի միտումներին համահունչ:

Վերը նկարագրված ռիսկի առարկայացման դեպքում 2025, 2026 և 2027 թվականներին հարկային եկամուտները առավել ցածր կձևավորվեն համապատասխանաբար 33.6, 36.9, 40.5 մլրդ դրամով:

Ամփոփելով վերը նկարագրված **կանխատեսումների ռիսկի, ենթադրություններից շեղումների և հարկեր/ՀՆԱ թիրախավորված բարելավումը չապահովելու ռիսկի** գնահատականները, միջնաժամկետ հորիզոնում ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների վրա մակրոտնտեսական ցուցանիշների՝ իրական ՀՆԱ-ի աճի, գնաճի, փոխարժեքի տատանողականության և ներմուծման, ինչպես նաև հարկային վարչարարության լրացուցիչ ջանքի չապահովման ռիսկերի ազդեցության քանակական ամփոփ գնահատականները ներկայացվում են ստորև.

Աղյուսակ 3.1.1 Հարկային եկամուտների վրա մակրոտնտեսական կանխատեսումների և ենթադրությունների ռիսկերի ազդեցություն, մլրդ դրամ [30]

Ռիսկի տեսակը	Ազդեցության գնահատականը, մլրդ ՀՀ դրամ		
	2025	2026	2027
Ռիսկերի առանձին հանդես գալու պայմաններում			
1. Կանխատեսվածից ավելի ցածր իրական ՀՆԱ-ի աճ, 3.3-4.1 տոկոսային կետ	-53.1	-77.6	-84.3

[30] ՀՆԱ, ներմուծման, փոխարժեքի և գների գծով հավանական ռիսկերի քանակային գնահատականը ստացվել է՝ հիմք ընդունելով այս գործոնների պատմական շարժի բացարձակ միջին սխալը:

2. Ավելի ցածր գնաճի ռիսկ, 2.6 տոկոսային կետ	-25.6	-27.8	-30.0
3. Փոխարժեքի 6.3 տոկոս արժեզրկման ռիսկ	17.7	19.3	21.8
4. Ներմուծման նվազման ռիսկ, 7.3-14.3 տոկոսային կետ	-25.7	-47.5	-62.2
Վերոնշյալ ռիսկերի միաժամանակյա հանդես գալու պայմաններում	**-82.2**	**-123.0**	**-141.9**
Հարկային եկամուտների վարչարարության ռիսկ, 0.3 տոկոսային կետով ավելի ցածր հարկեր/ՀՆԱ բարելավման տեմպ	-33.6	-36.9	-40.5
ԸՆԴԱՄԵՆԸ	**-115.8**	**-160.0**	**-182.4**

Այսպիսով, գնահատվում է, որ հարկային եկամուտների վրա ազդող վերոնշյալ ռիսկերի միաժամանակյա ի հայտ գալու պարագայում հարկային եկամուտների ծրագրված մակարդակից շեղումը կկազմի շուրջ 115.8 մլրդ ՀՀ դրամ 2025 թվականին, 160.0 մլրդ ՀՀ դրամ 2026 թվականին և 182.4 մլրդ ՀՀ դրամ 2027 թվականին:

Հարկային եկամուտների վրա առանձին ռիսկերի ազդեցության չափի վերաբերյալ պատկերացում են տալիս նաև ստորև ներկայացվող զգայունության գնահատականները, սակայն այս դեպքում դիտարկվում է հարկային եկամուտների աճի վրա ազդող գործոնների աճերի 1% փոփոխության ազդեցությունը, ինչը ներկայացված է հարկային եկամուտների զգայունության աղյուսակում:

Աղյուսակ 3.1.2 Հարկային եկամուտների զգայունությունը հիմնական տնտեսական գործոնների նկատմամբ, %

	ՀՆԱ	Գնաճ	Փոխարժեք	Ներմուծում
Տարեկան (շոկին հաջորդող 4 եռամսյակների) ազդեցություն	0.99	0.66	0.26	0.13

Ինչպես երևում է աղյուսակից, հարկերի հավաքագրման առումով առավել էական գործոններ են հանդիսանում ՀՆԱ-ի և գնաճի փոփոխությունները:

Հարկային եկամուտների կանխատեսումների հետ կապված անորոշությունների և ռիսկերի հաշվեկշռի վերաբերյալ գնահատականներն իրենց արտացոլումն են գտել ստորև ներկայացվող հարկային եկամուտների հավանականային բաշխման գծապատկերում և համապատասխան աղյուսակում (տես՝ Գծապատկեր 3.1 և Աղյուսակ 3.1.3): Հավանականային բաշխման գրաֆիկի կառուցման ժամանակ օգտագործվել է աղյուսակ 3.1.1-ում գնահատված ամբողջական ռիսկերի միաժամանակյա հանդես գալու պայմաններում ի հայտ եկող բացասական ռիսկերը:

Գծապատկեր 3.1. Հարկային եկամուտների տարեկան աճի տեմպերի կանխատեսումների հավանականային բաշխումը, %



Կանխատեսումների բաշխման հավանականություններն առավել պարզորոշ երևում են ստորև բերվող աղյուսակում:

Աղյուսակ 3.1.3 Հարկային եկամուտների կանխատեսումների հավանականային բաշխումը

Հարկային եկամուտների աճի միջակայքը	Հարկային եկամուտների աճի՝ տվյալ միջակայքում ձևավորվելու հավանականությունը		
	2024	2025	2026
3-8 տոկոս	0.27	0.26	0.31
8-13 տոկոս	***0.43***	***0.38***	***0.37***
13-18 տոկոս	0.17	0.19	0.06

Աղյուսակ 3.1.3-ի առաջին սյունը ներկայացնում է հարկային եկամուտների աճի միջակայքերը, իսկ 2-ից 4-րդ սյուները՝ նշված միջակայքերից յուրաքանչյուրում այդ աճի ձևավորվելու հավանականությունները՝ ըստ միջնաժամկետ կանխատեսումների: Համաձայն գնահատականների, 2025-2027 թվականներին հարկային եկամուտների աճի տեմպի՝ 8-13% միջակայքում գտնվելու հավանականությունն ամենաբարձրն է (Գծապատկեր 3.1-ում այն մուգ կարմիր է, իսկ Աղյուսակ 3.1.3-ում՝ հոծ նշումով):

3.1.2. 2025-2027 թվականներին ՄԺԴԾ մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսվածից շեղման ռիսկերի ազդեցության ընդհանուր գնահատականը և դրանց մեղմման հնարավորությունները

Կանխատեսումներում մեծ ուշադրություն է դարձվում նաև պետական բյուջեի ծախսերի պլանավորված մակարդակների ապահովումը խաթարող ռիսկերին, որոնք կարող են հանգեցնել լրացուցիչ ֆինանսավորման պահանջի առաջացման:

Աղյուսակ 3.2.1 ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների և ծախսերի, ինչպես նաև այլ հոսքերի գծով ռիսկերի ընդհանուր ազդեցությունը[31]. (ֆինանսավորման պահանջ՝ - պահանջի մեծացում, + պահանջի նվազում), մլրդ ՀՀ դրամ

Մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսվող ռիսկեր	2025	2026	2027
1. Կանխատեսվածից ավելի ցածր իրական ՀՆԱ-ի աճ, 3.3-4.1 տոկոսային կետ	-53.1	-77.6	-84.3
2. Ավելի ցածր գնաճի ռիսկ, 2.6 տոկոսային կետ	-19.5	-20.0	-21.8
3. Փոխարժեքի 6.3 տոկոս արժեզրկման ռիսկ	7.5	8.2	7.8
4. Ներմուծման նվազման ռիսկ, 7.3-14.3 տոկոսային կետ	-25.7	-47.5	-62.2
Հարկային եկամուտների վարչարարության ռիսկ, 0.3 տոկոսային կետ	-33.6	-36.9	-40.5
Ընդամենը	**-124.5**	**-173.8**	**-201.0**

Աղյուսակ 3.2.1-ում ցույց են տրված գնահատված լրացուցիչ ռիսկերը, որոնք կհանգեցնեն լրացուցիչ ֆինանսավորման պահանջի առաջացման: Ակնհայտորեն երևում է, որ գնաճի տատանումների հետևանքով կնվազի նախատեսված ֆինանսավորման պահանջը և համապատասխանաբար կփոփոխվեն նաև պետական բյուջեի ծախսերը՝ նվազման ուղղությամբ:

Հաշվի առնելով մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսվող մակարդակից վերոնշյալ հնարավոր շեղումների ռիսկերի գնահատականները՝ ՀՀ պետական բյուջեի եկամուտների հավաքագրման և ծախսերի կատարման տեսանկյունից 2025-2027 թվականներին ՀՀ պետական բյուջեի պակասուրդի լրացուցիչ ֆինանսավորման պահանջը կկազմի շուրջ 124.5–201.0 մլրդ ՀՀ դրամ կամ ՀՆԱ-ի 1.1-1.5%-ը: Պետք է նշել, որ գնահատված ռիսկի չափը, առարկայացման դեպքում ամբողջությամբ կարող է կլանվել ՀՀ կառավարության կողմից ապահովվող՝ նվազագույնը ՀՆԱ 1%-ի չափով իրացվելիության «բարձիկի» միջոցով:

3.2. ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Միջնաժամկետ հատվածում ՀՀ կառավարության պարտքը գնահատվում է կայուն և կառավարելի, ինչը խարսխված է 2020 թ. երկակի շոկերի պայմաններում պարտքի բեռի բարձր մակարդակի գրանցումից հետո 2021-2022 թթ. մինչև հարկաբյուջետային կանոններով ընդունելի մակարդակի նվազման և 2023թ.-ին այդ մակարդակում պահպանման, պարտքի կառուցվածքի զգալի բարելավման, ինչպես նաև միջնաժամկետ հատվածում պարտքի բեռի չափավոր կայուն մակարդակ ապահովելու հանձնառության վրա: Այնուամենայնիվ, պարտքը շարունակում է զգայուն մնալ հատկապես տնտեսական աճի ցնցումների նկատմամբ, պարտքի կառուցվածքը գնահատվում է միջին կամ բարձր խոցելի, իսկ պատմությանը և ապագային

[31] Ընդհանուր ազդեցության գնահատականը հիմնված է մակրոտնտեսական ռիսկերի առանձին հանդես գալու ենթադրության վրա:

նայող գնահատումները ուրվագծում են էական անորոշություններ: Այս առումով, կարևոր է առկա անորոշությունների պայմաններում պարտքի բեռի պահպանումը կառավարելի մակարդակում, հարկաբյուջետային «բարձիկների» պահպանումը անհրաժեշտ մակարդակում, ինչպես նաև, պարտքի կառավարման 2025-2027 թթ. ռազմավարությանը համահունչ, պարտքի կառուցվածքի շարունակական, միաժամանակ՝ լրացուցիչ ռիսկեր չստեղծող բարելավումը:

2021-2022 թթ. ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը էապես նվազել է 2020 թ. գրանցված 60%-ը գերազանցող մակարդակից և կայունացել այդ մակարդակում 2023-24 թվականներին՝ առաջանցիկ կերպով ապահովելով հարկաբյուջետային կանոններով պահանջված պարտքի բեռի նվազեցումը և հնարավորություն տալով ստեղծել բարձիկ ապագա հնարավոր շոկերին դիմակայելու համար ու բարձրացնել հարկաբյուջետային քաղաքականության ճկունության աստիճանը: 2020 թվականին տնտեսական շոկի և պատերազմական իրավիճակի գործոններով պայմանավորված, հարկաբյուջետային կանոնի՝ «բացառիկ դեպքի» կարգավորումների շրջանակում գրանցված պարտքի բեռը աճել էր մինչև ՀՆԱ 63.5%-ը, ինչը զուգորդվել է պարտքի սպասարկման բեռի բարձրացմամբ: Սակայն «բացառիկ դեպքի» ճանաչման գործոնների չեզոքացման հետ ՀՀ կառավարությունը պետք է հարկաբյուջետային քաղաքականությունը վերադարձներ բնականոն իրավիճակների համար սահմանված կանոնների համապատասխանության տիրույթ, և, ի թիվս կանոնների համակարգով պահանջվող այլ միջոցառումների, առաջիկա 5 տարվա ընթացքում ապահովեր պարտքի բեռի նվազեցում 60%-ից ներքև, որի հանձնառությունը սահմանվել էր ՀՀ կառավարության պարտքի բեռի նվազեցման 2022-2026 թթ. ծրագրով: Սակայն, պայմանավորված իրականացվող հարկաբյուջետային կոնսոլիդացիայի քաղաքականությամբ, սպասվածից ավելի դրական տնտեսական զարգացումներով և ՀՀ դրամի փոխարժեքի արժևորմամբ, հարկաբյուջետային կոնսոլիդացիայի ընթացքը առաջանցիկ եղավ նախանշված ուղեգծից, և ՀՀ կառավարությունը նախ 2021 թ. գրանցեց 60.3%, ապա 2022թ.-ին՝ 50%-ից ցածր՝ 46.7% ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշ, իսկ 2023 թ.-ին այն պահպանվեց 50%-ից ցածր մակարդակում՝ փոքր-ինչ աճելով և կազմելով 48.1%: Պարտքի բեռի պահպանումը ընդունելի ցածր մակարդակում հնարավորություն է տալիս կառավարելիության տիրույթում պահել պարտքի բեռից բխող ռիսկերը և տոկոսավճարների աճը, ինչպես նաև քաղաքականության «բարձիկ» ստեղծել հետագա հնարավոր ցնցումներին դիմակայելու համար:

Միջնաժամկետ հատվածի համար նախանշած՝ պարտքի հիմնական սցենարի վրա հիմնված պարտքի ռիսկերի գնահատումը ցույց է տվել, որ ինչպես ՀՀ կառավարության պարտքի, այնպես էլ պարտքի սպասարկման ռիսկերը գնահատվում են ցածր, թեպետ նաև տեսանելի է, որ նոր հնարավոր շոկերը (հատկապես՝ մի քանի շոկերի համադրությունը) կարող են վտանգել պարտքի կայունությունը: Սթրես թեստերի շրջանակներում ՀՀ կառավարության պարտքը ամենաշատը զգայուն է տնտեսական աճի, և համեմատաբար զգայուն է՝ փոխարժեքի շոկի նկատմամբ: Տնտեսական աճի շոկի ի հայտ գալու պարագայում 2025թ. ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը հասնում է 67.4% մակարդակին, և պահպանվում 60%-ը գերազանցող մակարդակում ամբողջ կանխատեսման հորիզոնում: Փոխարժեքի շոկի ազդեցությունն անհամեմատ ավելի մեղմ է, և դրա ազդեցության ներքո պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը ցածր է մնում 60% մակարդակից: ՀՀ պետական բյուջեի համախառն ֆինանսավորման կարիքը կանխատեսվող ժամանակահատվածում իրականացված սթրես թեստերից ոչ մեկի, և անգամ՝ դրանց համակցման դեպքում չի գերազանցում զարգացող երկրների համար ռիսկայնության համար ընդունված 15% սահմանաչափը:

ՀՀ կառավարության պարտքի պորտֆելից բխող ռիսկերը զգալիորեն մեղմվել են: ՀՀ երկրի ռիսկի հավելավճարը, պայմանավորված ռուս-ուկրաինական հակամարտության ազդեցությունների ներքո տարածաշրջանի երկրների ռիսկի հավելավճարների բարձրացմամբ, ինչպես նաև ԱՄՆ-ում և եվրոգոտում տոկոսադրույքների բարձրացմամբ և զարգացող երկրներից ավելի շարժուն կապիտալի արտահոսքով դեպի այս երկրներ, որոշակիորեն բարձրացել էր, սակայն 2023 թ.-ի ընթացքում և 2024թ.-ի ընթացիկ ամիսներին զգալիորեն նվազել է և մայիսին կազմել 271 բազիսային կետ, ինչը միջին ռիսկայնության միջակայքի ստորին հատվածում է գտնվում: Այս գործընթացին նպաստել է ՀՀ ֆինանսական համակարգում կուտակված լրացուցիչ իրացվելիությունը, որը նպաստել է ՀՀ եվրոբոնդերի շուկայի իրացվելիությանը ևս: Միաժամանակ, ներքին և դրամային պարտքի կշիռների զգալի բարելավմամբ, դրամային պարտքի կշիռը ներկայումս գնահատվում է միջին ռիսկային, իսկ արտաքին պարտքի կշիռը կտրուկ մոտեցել է միջին ռիսկայնության շեմին: Ներքին ու դրամային պարտքի մասնաբաժնի բարելավման քաղաքականության շարունակումը առաջիկա հեռանկարում կարող է ապահովել պարտքի պորտֆելի էլ ավելի չափավոր ռիսկերի մակարդակ:

Չնայած նրան, որ ՀՀ կառավարության պարտքի ռիսկերը ստանդարտ սթրես սցենարների շրջանակում ազդանշում են ցածր ռիսկեր, գնահատվող անորոշությունների մակարդակը բարձր է: Հավանականությունների բաշխման գրաֆիկի վրա հիմնվող (այսինքն, ըստ էության, «պատմությանը նայող») գնահատումը ցույց է տալիս, որ պարտքի կանխատեսումները ընդհանրապես անորոշության էական աստիճան են պարունակում, քանի որ պարտք ձևավորող գործոնները պատմականորեն բարձր տատանողականություն են ունեցել: Այս նկարագիրը բացահայտվում է Գծապատկեր 6-ում ներկայացված հավանականությունների բաշխման գրաֆիկում, ըստ որի՝ 2026 թ. համար 10-ից 90% հավանականային միջակայքում ուրվագծում է ՀՆԱ-ում 44.5%-ից 64.7% միջակայք:

Ոչ թե պատմությանը, այլ՝ ապագային նայող ռիսկերի գնահատման նպատակով փորձագիտական դատողությունների հիման վրա կառուցվել են այլընտրանքային զարգացումների սցենարներ, որոնք արտահայտում են ինչպես վերջին տարիներին ՀՀ տնտեսությունում կուտակված ռիսկերի համաժամանակյա նյութականացման, այնպես էլ արտաքին հատվածում անբարենպաստ զարգացումների փոխանցման հնարավորությունը: Այլընտրանքային զարգացումների սցենարները և դրանց ենթադրությունները հետևյալն են:

- **Տնտեսական աճի ռիսկերի նյութականացման սցենար:** Այս սցենարը ենթադրում է 2022-2023թթ. ռուս-ուկրաինական պատերազմի արդյունքում առաջացած դրական շոկի (ՌԴ-ից տուրիստական հոսքեր, արտահանման շուկայի ընդլայնում, դրամական փոխանցումներ, SS ընկերությունների և աշխատակիցների տեղափոխում դեպի ՀՀ, վերաարտահանման հնարավորություններ) աստիճանական շրջադարձ, որի արդյունքում տնտեսական աճի տեմպերը դանդաղում են 2024թ.-ին մինչև 3.5, իսկ 2025թ.-ին՝ 2.4 տոկոսի, որից հետո սկսում աստիճանաբար արագանալ՝ 2026 թ.-ին կազմելով 3.3%, իսկ 2027թ.-ին՝ 3.9 տոկոս:

- **Փոխարժեքի՝ դեպի նախկին մակարդակներ վերադարձի սցենար:** Ենթադրվում է, որ 2022 թ. ընթացքում դեպի ՀՀ մարդկանց և կապիտալի ներհոսքի արագացման պայմաններում արժևորված փոխարժեքը հետ կգնա նախկին մակարդակին, և 2024 թ. վերջի դրությամբ դոլար/դրամ փոխարժեքը կկազմի 480 դրամ՝ 2021թ.-ի վերջի մակարդակին համապատասխան, իսկ հաջորդ տարիներին կթուլանա տարեկան 1.6% տեմպով, պայմանավորված գնային մրցունակության պահպանման անհրաժեշտությամբ (հիմք ընդունելով ՀՀ և զարգացած երկրներում գնաճերի տեմպերի տարբերությունը՝ «PPP կանոն»), ինչպես նաև ֆինանսական

շուկայի սպասումներով (ՀՀ դրամային պարտատոմսերի և եվրոբոնդերի տոկոսադրույքների տարբերություն՝ «UIP» կանոն):

- **Բյուջեի պակասուրդի ռիսկերի սցենար հարկեր/ՀՆԱ ցուցանիշի ավելի դանդաղ բարելավման ազդեցությամբ:** Այս սցենարում ենթադրվում է, որ միջնաժամկետ հատվածի համար թիրախավորված՝ միջինում տարեկան 0.6% հարկեր/ՀՆԱ ցուցանիշի բարելավումը կապահովվի միայն մասնակի, և հարկեր/ՀՆԱ ցուցանիշը կբարելավվի տարեկան 0.3%-ային կետով (հարկային վարչարարության 0.3% ազդեցության ռիսկի նյութականացում):

Նախ, մինչ վերջնական սցենարը կառուցելը, առանձին սցենարները ու դրանց բաղադրիչների ազդեցությունները գնահատվում են առանձին-առանձին: Սցենարներից ամենաբարձր ազդեցությունը, ինչպես և պարտքի կայունության վերլուծության ստանդարտացված սթրես թեստերի դեպքում, տնտեսական աճի ռիսկերի նյութականացման սցենարն է, որի դեպքում ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը 2027 թվականին հասնում է 60.1%-ի: Պակասուրդի ռիսկի նյութականացման դեպքում կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը հասնում է 57.9%-ի, իսկ փոխարժեքի ռիսկի դեպքում՝ 56.8%-ի:

3 սցենարների համակցման, այսինքն՝ բոլոր ռիսկերի նյութականացման դեպքում պարտքի բեռը արդեն 2025թ.-ին գերազանցում է հարկաբյուջետային կանոնի 60% շեմից, և 2027թ.-ին հասնում 65.1%-ի: Այս սցենարներում, ընդհանուր առմամբ, պարտքի հետագիծը անկայուն է, որը ՀՀ կառավարության համար հղի է հեղինակության ռիսկերով և ֆինանսական շուկաների ռիսկի ընկալումների էական վատթարացմամբ, որի դեպքում պարտքի կայունությունը բարձր խոցելի կարող է դառնալ:

Կատարված փորձագիտական սցենարային վերլուծության արդյունքները, ընդհանուր առմամբ, համահունչ են և լրացնում են ԱՄՀ և ՀԲ մեթոդաբանությամբ իրականացված պարտքի սթրես թեստերի արդյունքներին և ազդանշում են պարտքի կայունության համար առկա վտանգների վերաբերյալ: Վերլուծությունը արտացոլում է պարտքի բեռը կառավարելի մակարդակում պահպանելու, ինչպես նաև պարտքի կառուցվածքի հետագա հաշվեկշռված (ֆինանսական շուկայի վրա էական ճնշում չգործադրող և պարտքի սպասարկման ծախսերը կառավարելի մակարդակում պահպանող) բարելավման անհրաժեշտությունը, ինչը ուղենիշ ընդունելով կառուցվել է ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2025-2027 թթ. ռազմավարությունը:

Գծապատկեր 4.1. ՀՀ Կառավարության պարտքի կանխատեսումների հավանականությունների բաշխման գծապատկերը



Գծապատկեր 4.2. ՀՀ Կառավարության պարտքի և համախառն ֆինանսավորման կարիքի սթրես թեստեր*



** 2028-2029 թվականների համար բերված ցուցանիշները ՀՀ ՖՆ կանխատեսումն են՝ ՄԺԾԾ մշակման համար կիրառված հիմնական դպրոցությունների անփոփոխության ենթադրությամբ:*

Աղյուսակ 4.1. ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի ռիսկայնության ցուցանիշներ

	Շեմեր			ՀՀ ցուցանիշ	
	Ցածր	Միջին	Բարձր	2023թ. մայիս	2024թ. մայիս
ՀՀ երկրի ռիսկի հավելավճար, բազիսային կետ	<200	200-600	>600	371.4	271.0
Ոչ ռեզիդենտների նկատմամբ պարտքի կշիռ, % ընդհանուր պարտքում	<15	15-45	>45	55.9	49.8
Արտարժութային պարտքի կշիռ, % ընդհանուր պարտքում	<20	20-60	>60	59.2	51.0

Գծապատկեր 4.3. *ՀՀ կառավարության պարտքը տարբեր սցենարների դեպքում*



3.3. ՀԱՏՈՒԿ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հարկաբյուջետային ռիսկերն այն կառուցվածքային և հատուկ գործոններն են, որոնք կարող են հանգեցնել հարկաբյուջետային արդյունքների շեղմանը՝ նախապես սպասված կամ կանխատեսված ցուցանիշներից: Հարկաբյուջետային արդյունքների շեղումը առավել հաճախ արտահայտվում է պետության ստանձնած պարտավորությունների նյութականացմամբ: Այդ պարտավորությունները կարող են լինել բացահայտ, երբ առկա է իրավական պարտավորություն (օրինակ՝ պետական վարկի երաշխիքներ), կամ թաքնված, երբ կա պետության պատասխանատվության հանրային ակնկալիք, որը սահմանված չէ օրենքով (օրինակ՝ բնական կամ մարդածին աղետներից առաջացող վնասների փոխհատուցումը):

Հարկաբյուջետային ռիսկերի կառավարումը կարևոր է, քանի որ այդ ռիսկերը չբացահայտելը և դրանց չնախապատրաստվելը կարող է հանգեցնել զգալի բացասական հետևանքների, ինչպիսիք են լրացուցիչ պետական պարտավորությունները, պետական պարտքի ավելացումը ու ճգնաժամերը: Հարկաբյուջետային ռիսկերի արդյունավետ բացահայտումը, ազդեցության չափի գնահատումը և կառավարումը նպաստում է հարկաբյուջետային կայունության բարձրացմանը, փոխառությունների ծախսերի և հարկաբյուջետային ճգնաժամերի հավանականության նվազեցմանը, ինչպես նաև արդյունավետ հարկաբյուջետային քաղաքականության իրականացմանը:

Ստորև նկարագրված են հարկաբյուջետային ռիսկերի այն աղբյուրները, որոնք պետական բյուջեի կայունության տեսանկյունից համարվում են էական, և դրանց ազդեցության գնահատումն ու կառավարմանն ուղղված քայլերը նշանակալի են ֆիսկալ կայունության տեսանկյունից: Հատուկ ռիսկերի տեսանկյունից դիտարկվել են այնպիսի ռիսկեր, որոնք բխում են պետական մասնակցությամբ ընկերություններից, պետություն-մասնավոր գործընկերության պայմանագրերից, բյուջետային վարկերից և երաշխիքներից, բնական և մարդածին աղետներից, բնապահպանական պարտավորություններից, շրջակա միջավայրի դեգրադացիայից, ինչպես նաև պետության դեմ դատական վարույթներից:

3.3.1 ՊԵՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԾԱԳՈՂ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐ

Այս բաժինը վերլուծում է պետական մասնակցությամբ ընկերությունների (այսուհետ՝ ՊՄԸ) առկա վիճակից և գործունեությունից բխող ֆիսկալ ռիսկերի մակարդակը:

Ֆիսկալ ռիսկը կարող է ի հայտ գալ այն ժամանակ, երբ ՊՄԸ-ների գործունեությունը կամ ֆինանսական վիճակը հանգեցնում է լրացուցիչ փոխառությունների, սուբսիդիաների, սեփական կապիտալի ներարկումների կամ պետական բյուջեից այլ վճարումների անհրաժեշտության: Բացի այդ, ֆինանսական դժվարություններ ունեցող ՊՄԸ-ներից ակնկալվող շահութաբաժինների կամ փոխառությունների սպասարկման վճարումների չկատարումը կարող է բացասաբար անդրադառնալ պետական եկամուտների վրա:

ՊՄԸ-ների պորտֆելի վերլուծություն

ՊՄԸ է համարվում այն ընկերությունը, որի բաժնետոմսերի 50 կամ ավելի տոկոսը պետության կամ համայնքի սեփականությունն է[32]:

Ըստ դիտարկված տեղեկությունների՝ 2022 թվականի տվյալներով ՀՀ-ում գործում է 188 շահույթ հետապնդող պետական մասնակցությամբ և համայնքային մասնակցությամբ ընկերություն, որոնցից 36-ը գտնվում է Երևանի քաղաքապետարանի կառավարման ներքո: Առկա է նաև 15 ընկերություն, որտեղ պետությունն ունի մինչև 50 տոկոս բաժնեմաս (տե՛ս աղյուսակ 1):

Աղյուսակ 1. *Պետական և համայնքային մասնակցությամբ ընկերությունների դասակարգումն՝ ըստ բաժնեմասնակցության*

50 տոկոս և ավել	Երևանի Քաղաքապետարան	Մինչև 50 տոկոս	Ընդհանուր
152	36	15	203

ՊՄԸ-ները հիմնականում գործում են այնպիսի ռազմավարական ոլորտներում, ինչպիսիք են էներգետիկան, առողջապահությունը, ջրային տնտեսությունը և այլն: Ընկերությունների ակտիվների և պարտավորությունների մեծ մասը կենտրոնացված է էներգետիկ ոլորտում՝ կազմելով ՊՄԸ-ների ընդհանուր պորտֆելի, համապատասխանաբար, 55%-ը և 70%-ը (տե՛ս գծապատկեր 1):

Գծապատկեր 1. *Պետական մասնակցությամբ ընկերությունների ակտիվները և պարտավորություններն՝ ըստ ոլորտների*



Հարկ է նշել, որ ՀՀ-ում ՊՄԸ-ների եկամտաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ ցածր է համաշխարհային միջին մակարդակից: Մասնավորապես, ՀՀ-ում ՊՄԸ-ների եկամուտ/ՀՆԱ հարաբերակցությունը 2022թ.-ին կազմել է շուրջ 7%[33], մինչդեռ, Համաշխարհային բանկի զեկույցի համաձայն, որտեղ 91 երկրում ուսումնասիրվել է առնվազն 10% պետական մասնաբաժին ունեցող 76,000 ընկերություն, միջին եկամուտը կազմել է ՀՆԱ-ի 17%-ը[34]:

[32] «Պետական գույքի մասնավորեցման մասին» ՀՀ օրենք:
[33] Ներկայացված տվյալները ներառում են նաև մինորիտար մասնակցությամբ ընկերությունները:
34 Աղբյուրը՝ World Bank, The business of the state, 2023.

2022թ.-ին ՊՄԸ-ների ակտիվների ծավալը կազմել է 830 մլրդ ՀՀ դրամ՝ աճելով 2020թ.-ի նկատմամբ 4%-ով, իսկ պարտավորությունների ծավալը կազմել է 453 մլրդ ՀՀ դրամ՝ 2021թ.-ի նկատմամբ նվազելով 11%-ով, իսկ 2020թ.-ի նկատմամբ՝ 17%-ով (տե՛ս գծապատկեր 2):

Գծապատկեր 2. *ՊՄԸ-ների ակտիվների և պարտավորությունների ծավալը 2020-2023թթ.*[35]



9 ընկերության ակտիվների ծավալը կազմում է ընդհանուր ակտիվների պորտֆելի 62%-ը, մինչդեռ նրանց պարտավորությունները կազմում են ընդհանուր պարտավորությունների պորտֆելի 77%-ը: Այդ ընկերություններն են՝ «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ն, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն, «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն, «Հայփոստ» ՓԲԸ, «Էլեկտրաէներգետիկական Համակարգի Օպերատոր» ՓԲԸ, «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ, «Երևանի ավտոբուս» ՓԲԸ, «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ: Հաշվի առնելով վերջիններիս ակտիվների գերակշռող մակարդակը՝ հետևաբար դրանց նշանակությունը թե՛ հանրային շահի, թե՛ ֆինանսական կայունության տեսանկյունից՝ ստորև վերլուծվել են 9 ՊՄԸ-ի ֆինանսական առողջության մակարդակը: Ներկայացվել է նաև այդ ընկերությունների շարքում քվազի-ֆիսկալ գործունեության օրինակներ:

Քվազի-ֆիսկալ են համարվում գործունեության այն տեսակները, որոնք, չնայած վատթարացնում են հանրային ընկերությունների ֆինանսական վիճակը՝ համեմատած զուտ առևտրային առավելագույն շահույթի մակարդակի հետ, սակայն ուղղված են հանրային քաղաքականության նպատակներին: Քվազի-ֆիսկալ գործունեությունը կարող է դրսևորվել տարբեր ձևերով՝ ներառյալ իրենց առևտրային արժեքից ցածր գնով ապրանքների և ծառայությունների վաճառքը կամ ընտրված մատակարարներին առևտրային արժեքից բարձր գնով վճարումները[36]:

Հաշվի առնելով, որ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից մատուցվող ծառայությունների արժեքը ցածր է շուկայականից, պետությունն աջակցում է ընկերությանը՝ գործառնական գործունեության արդյունքում առաջացող ֆինանսական

[35] 2020-2021թթ. ներառված են նաև Երևան քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվող համայնքային մասնակցությամբ ընկերությունների տվյալները:
[36] Աղբյուրը՝ IMF, Fiscal Transparency Handbook (2018).

ճեղքվածքի չափով: Մասնավորապես, 2024թ-ին ֆինանսական ճեղքվածքի ծածկմանն ուղղվելու է շուրջ 1.9 մլրդ ՀՀ դրամ: «Ջրառ» ՓԲԸ-ին ուղղվելու է շուրջ 1.3 մլրդ ՀՀ դրամ՝ ոռոգման ջրի սակագնի և նվազագույն շահավետ գնի տարբերության չափով[37]:

ՊՄԸ-ների ֆինանսական առողջության վերլուծություն[38]

Վերլուծությունը կատարվել է շահութաբերության, իրացվելիության և վճարունակության ցուցանիշների գնահատումների հիման վրա, որոնց արդյունքում ռիսկայնության մակարդակը դասակարգվել է ըստ կատեգորիաների: Ընդ որում, 1-ին կատեգորիան նշում է ռիսկի ցածր մակարդակ, իսկ 5-րդը՝ ռիսկի բարձր մակարդակ (տե՛ս աղյուսակ 2): Վերլուծության համաձայն՝ ՊՄԸ-ների ռիսկի միջին կշռված մակարդակը 2022 թվականի դրությամբ 3-րդ կատեգորիայում է (տե՛ս աղյուսակ 3): Ի թիվս այլ ֆինանսական ցուցանիշների՝ ընկերությունների պարտքի մակարդակը[39] շարունակում է մնալ բարձր: Պարտքի բարձր մակարդակը կարող է հանգեցնել պետության կողմից աջակցության կարիքի առաջացման հավանականության՝ բարձրացմանը ֆինանսական անկայունության պայմաններում: ՊՄԸ-ների ֆինանսական առողջությունը հատկապես վատթարացել է 2020 և 2021 թվականներին, ինչը պայմանավորված է COVID-19-ի համաճարակի ազդեցությամբ: 2022թ.-ին, չնայած պարտքի մակարդակի իջեցմանը, այն դեռևս մնում է էական:

Աղյուսակ 2. *Ռիսկի դասակարգում*



2022թ.-ին դիտարկված ընկերություններից 6-ը շահութաբեր են եղել, իսկ 3-ը՝ աշխատել են վնասով: 2022թ.-ին զուտ շահույթի մարժան[40] կազմել է 46%, իսկ գործառնական շահույթի մարժան[41]՝ 7% (տե՛ս գծապատկեր 3):

Աղյուսակ 3. *ՊՄԸ-ների ռիսկայնության մակարդակը*

Կազմակերպության անվանում	2019	2020	2021	2022
«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ	3-րդ կատեգորիա	4-րդ կատեգորիա	4-րդ կատեգորիա	2-րդ կատեգորիա

[37] Աղբյուրը ՝ ՀՀ ՖՆ, 2024թ. պետական բյուջե:
38 ՊՄԸ-ների 2023 թվականի ֆինանսական հաշվետվությունները դեռևս հրապարակված չեն:
[39] Պարտքի մակարդակը բնութագրող հիմնական ֆինանսական ցուցանիշներն են պարտքը՝ ակտիվների նկատմամբ (debt to assets), պարտքը՝ սեփական կապիտալի նկատմաբ (debt to equity), պարտքը՝ ճշգրտված շահույթը նախքան տոկոսների վճարումը, հարկումը, մաշվածության և ամորտիզացիայի մասհանումների (debt to EBITDA) նկատմամբ:
[40] Ցույց է տալիս եկամտի այն տոկոսը, որը մնում է որպես շահույթ, երբ բոլոր ծախսերը հանվում են ընդհանուր եկամուտից: Հարաբերակցության ավելի բարձր ցուցանիշը ցույց է տալիս, որ ստացված եկամուտների մեծ մասն իրացվում է որպես շահույթ
[41] Չափում է ընկերության գործառնական գործունեության արդյունքում ստացված շահույթի մակարդակը՝ նախքան ֆինանսավորման ծախսերը նվազեցնելը: Հարաբերակցության ավելի բարձր ցուցանիշը ցույց է տալիս, որ ստացված եկամուտների մեծ մասն իրացվում է որպես գործառնական շահույթ:

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ	4-րդ կատեգորիա	4-րդ կատեգորիա	4-րդ կատեգորիա	3-րդ կատեգորիա
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ	3-րդ կատեգորիա	4-րդ կատեգորիա	3-րդ կատեգորիա	3-րդ կատեգորիա
«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ	3-րդ կատեգորիա	4-րդ կատեգորիա	2-րդ կատեգորիա	2-րդ կատեգորիա
«Հայփոստ» ՓԲԸ[42]	3-րդ կատեգորիա	4-րդ կատեգորիա	4-րդ կատեգորիա	4-րդ կատեգորիա
«ԷլեկտրաԷներգետիկական Համակարգի Օպերատոր» ՓԲԸ	4-րդ կատեգորիա	3-րդ կատեգորիա	3-րդ կատեգորիա	3-րդ կատեգորիա
«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ	3-րդ կատեգորիա	3-րդ կատեգորիա	3-րդ կատեգորիա	3-րդ կատեգորիա
«Երևանի ավտոբուս» ՓԲԸ	4-րդ կատեգորիա	4-րդ կատեգորիա	4-րդ կատեգորիա	4-րդ կատեգորիա
«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ	2-րդ կատեգորիա	1-ին կատեգորիա	2-րդ կատեգորիա	3-րդ կատեգորիա
Միջին ռիսկայնության մակարդակ	4-րդ կատեգորիա	4-րդ կատեգորիա	4-րդ կատեգորիա	3-րդ կատեգորիա

Գծապատկեր 3. *ՊՄԸ-ների պորտֆելի ընդհանուր շահութաբերությունը*



2022 թ-ին ընդհանուր ՊՄԸ-ների կողմից փաստացի վճարված շահութաբաժինների գումարը ՀՀ պետական բյուջե կազմել է 2.3 մլրդ ՀՀ դրամ: Գծապատկեր 4-ում ներկայացված են փաստացի վճարված շահութաբաժինների չափերը՝ 2017-2022թթ.-ին[43]:

[42] Հայփոստ ՓԲԸ-ի 2022թ-ի ֆինանսական հաշվետվության աուդիտորական եզրակացությունը եղել է վերապահումով:
[43] Գծապատկերը ներառում է նաև այն ընկերությունները, որտեղ պետության մասնաբաժինը 50%-ից ցածր է:

Գծապատկեր 4. *Շահութաբաժինների գծով փաստացի բյուջետային մուտքեր (հազար ՀՀ դրամ)*



Չնայած նրան, որ ընկերությունների վճարունակությունը բարելավման միտումներ ունի, այնուամենայնիվ, պարտք/ակտիվներ հարաբերակցությունը (աջ առանցք)[44], և պարտք/սեփական կապիտալ հարաբերակցությունը (ձախ առանցք)[45] շարունակում են մնալ բարձր (տե՛ս գծապատկեր 5):

Գծապատկեր 5. *ՊՄԸ-ների վճարունակություն*



Ըստ առանձին ՊՄԸ-ների պարտավորությունների չափի և ընդհանուր ռիսկի փոխկապվածությունը ներկայացված է Գծապատկեր 6-ում: Վերջինից երևում է, որ չնայած ընկերությունների պարտավորությունների բարձր չափի, նրանք գտնվում են ռիսկայնության ավելի ցածր մակարդակում, քան այն ընկերությունները, որոնց պարտավորությունները ավելի ցածր են: Այս հանգամանքը հիմնավորվում է նրանով, որ մոդելի յուրաքանչյուր ցուցանիշին տրված է հավասար կշիռ և մեկ ցուցանիշի բարձր ռիսկային արդյունքը կարող է փոխհատուցվել մեկ այլ ցուցանիշի ցածր ռիսկային արդյունքով:

[44]Չափում է ընկերության ֆինանսավորման մասնաբաժինը, ինչը բխում է պարտավորություններից: Բարձր հարաբերակցությունը ցույց է տալիս ավելի մեծ կախվածություն պարտքի ֆինանսավորումից:

[45] Չափում է ընկերության ֆինանսավորման մասնաբաժինը, որը բխում է պարտավորություններից սեփական կապիտալի նկատմամբ: Բարձր հարաբերակցությունը ցույց է տալիս ավելի մեծ կախվածություն պարտքի ֆինանսավորումից և ավելի քիչ ֆինանսական ճկունություն:

Գծապատկեր 6. *ՊՄԸ-ների պարտավորությունների չափի և ընդհանուր ռիսկի փոխկապվածությունը 2022 թ. (հազար ՀՀ դրամ)*



Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ

2. «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ
3. «Էլեկտրաէներգետիկական Համակարգի Օպերատոր» ՓԲԸ
4. «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ
5. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
6. «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ
7. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
8. «Երևանի ավտոբուս» ՓԲԸ
9. «Հայփոստ» ՓԲԸ

ՊՄԸ-ների տրամադրված բյուջետային վարկերի և երաշխիքների վերլուծություն

ՊՄԸ-ների ռիսկը բյուջետային վարկերից (ենթավարկերից) և երաշխիքներից բխում է նրանից, որ դրանք արտահայտված են հիմնականում արտարժույթով: Արժույթի տատանումները կարող են բացասաբար ազդել պարտքի սպասարկման ծախսերի վրա և մեծացնել ՊՄԸ-ների վճարման ընդհանուր ֆինանսական բեռը: Վարկերի և ենթավարկերի հիմնական մասը կենտրոնացված է էներգետիկ ոլորտում («Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ, «Երևան ՋԷԿ» ՓԲԸ, «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ, «Էլեկտրաէներգետիկական Համակարգի Օպերատոր» ՓԲԸ): Աղյուսակ 4-ում նշված ՊՄԸ-ներին տրամադրված վարկերը և ենթավարկերը կազմում են ընդհանուր վարկային պորտֆելի 71%:

Աղյուսակ 4. *Բյուջետային վարկեր և երաշխիքներ, ինչպես նաև պետական օժանդակություն ունեցող ՊՄԸ-ների վերլուծություն (մլն ՀՀ դրամ)*[46]

ՀՀ մլն դրամ	2020	2021	2022	2023	29.02.2024
«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ					
Պետության կողմից տրամադրված վարկեր	-	-	-	-	-
Բյուջետային վարկեր և ենթավարկեր	114,244	125,534	103,468	90,537	86,534
Պետական աջակցություն	-	-	-	-	4,994
Տոկոսային հարաբերակցություն ընդհանուր վարկային պորտֆելի նկատմամբ	22.45%	30.52%	32.23%	29.46%	28.55%
«Երևան ՋԷԿ» ՓԲԸ					
Պետության կողմից տրամադրված վարկեր	-	-	-	-	-
Բյուջետային վարկեր և ենթավարկեր	128,802	104,952	74,994	68,449	65,374
Պետական աջակցություն	-	-	-	-	21,785
Տոկոսային հարաբերակցություն ընդհանուր վարկային պորտֆելի նկատմամբ	25.31%	25.52%	23.36%	22.27%	22.23%
«Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ					
Պետության կողմից տրամադրված վարկեր	-	-	-	-	-
Բյուջետային վարկեր և ենթավարկեր	61,540	58,931	46,154	47,368	47,361
Պետական աջակցություն	-	-	-	-	16,344
Տոկոսային հարաբերակցություն ընդհանուր վարկային պորտֆելի նկատմամբ	12.09%	14.33%	14.38%	15.41%	15.61%
«Երևան Ավտոբուս» ՓԲԸ					
Պետության կողմից տրամադրված վարկեր	-	-	-	-	-
Բյուջետային վարկեր և ենթավարկեր	-	-	1,764	8,958	8,760
Պետական աջակցություն	357	510	1,654	-	-
Տոկոսային հարաբերակցություն ընդհանուր վարկային պորտֆելի նկատմամբ	-	-	0.55%	2.91%	2.89%
«Հայփոստ» ՓԲԸ					
Պետության կողմից տրամադրված վարկեր					
Բյուջետային վարկեր և ենթավարկեր					
Պետական աջակցություն					

[46] Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ

«Հայփոստ»/Վարկային պորտֆել					
«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ					
Պետության կողմից տրամադրված վարկեր	-	-	-	-	-
Բյուջետային վարկեր և ենթավարկեր	5,355	4,361	3,026	2,524	2,470
Պետական աջակցություն	2,799.80	2,855	2,720.50	2,712.50	2,641.80
Տոկոսային հարաբերակցություն ընդհանուր վարկային պորտֆելի նկատմամբ	1.05%	1.06%	0.94%	0.82%	0.81%
«Էլեկտրաէներգետիկական Համակարգի Օպերատոր» ՓԲԸ					
Պետության կողմից տրամադրված վարկեր	-	-	-	-	-
Բյուջետային վարկեր և ենթավարկեր	10,341	8,947	6,714	6,407	6,161
Պետական աջակցություն	-	-	-	-	934.2
Տոկոսային հարաբերակցություն ընդհանուր վարկային պորտֆելի նկատմամբ	2.03%	2.18%	2.09%	2.08%	2.03%
«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ					
Պետության կողմից տրամադրված վարկեր					
Բյուջետային վարկեր և ենթավարկեր					
Պետական աջակցություն					
«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ					
Պետության կողմից տրամադրված վարկեր					
Բյուջետային վարկեր և ենթավարկեր					
Պետական աջակցություն					

Հանրային միջոցների արդյունավետ կառավարման, թափանցիկության, հաշվետվողականության և մրցակցային հավասար դաշտի երաշխավորման նպատակով, միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության և Արժույթի Միջազգային Հիմնադրամի կողմից 2024 թվականի «Պետական մասնակցությամբ ընկերությունների սեփականության քաղաքականության մշակում» տեխնիկական աջակցության արդյունքների, ինչպես նաև Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության՝ ՊՄԸ-ների կորպորատիվ կառավարման վերաբերյալ ուղեցույցների հիման վրա՝ մշակվել և շրջանառվել են ՊՄԸ-ներին ուղղված քաղաքականության հայեցակարգային մոտեցումները: Հայեցակարգային մոտեցումների հիման վրա առաջիկայում նախատեսվում է ՊՄԸ-ներին ուղղված սեփականության քաղաքականության մշակում:

ՊՄԸ սեփականության <u>նպատակներն են.</u>

Հանրային քաղաքականության նպատակներ՝

1. Աջակցել ազգային անվտանգության նպատակների կամ ազգային շահերի ռազմավարական նպատակների իրագործմանը, որոնք նախանշված են Կառավարության ծրագրով:
2. Պահպանել բնական մենաշնորհների արդյունավետ գործունեությունը, երբ շուկայի կարգավորումը համարվում է անիրագործելի կամ անարդյունավետ:
3. Ապահովել կարևոր հանրային ծառայությունների մատուցումը, երբ շուկայի մասնակիցները, հաշվի առնելով իրենց առևտրային շահերը, չեն ստանձնի այդ ծառայությունների մատուցումը:

Առևտրային նպատակ՝

4. Բացառապես առևտրային (շահույթի) նպատակով, ընդ որում, առևտրային նպատակ հետապնդող ընկերությունները պետք է թիրախավորեն արտաքին շուկաները, այդ թվում՝ հնարավորինս ձգտելով տնտեսապես բարդ ապրանքների արտադրությանը կամ հիմնվելով բացառիկ և սահմանափակ ռեսուրսների վրա:

Գծապատկեր 7. Պետական սեփականության հիմնավորումը և դրա բաղադրիչները



Նշենք, որ ընթացքում է «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ի գործունեությունը դադարեցնելու գործընթացը. համաձայն ՀՀ կառավարության 23.05.2024թ. N 734-Ն որոշման՝ ընկերության կառավարումը վերապահվում է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Պետական գույքի կառավարման կոմիտեին: Գործընթացը կարող է ժամանակատար լինել և պահանջել հավելյալ վերլուծություններ, համապատասխանաբար, ՀՀ ֆինանսների նախարարությունն ընթացքում կապահովի անհրաժեշտ աջակցություն՝ ֆիսկալ ռիսկերը նվազեցնելու ուղղությամբ:

3.3.2 ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՎԱՐԿԵՐԻՑ ԾԱԳՈՂ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐ

Այս բաժնում վերլուծվում են տրամադրված բյուջետային վարկերից և երաշխիքներից ծագող ուղղակի ու ածանցված ֆիսկալ ռիսկերի մակարդակը, ներկայացվում՝ բյուջետային վարկերի և երաշխիքների պորտֆելների վերլուծական պատկերը:

Բյուջետային վարկերից և երաշխիքներից բխող ֆիսկալ ռիսկերն այն ռիսկերն են, որոնց ի հայտ գալը կհանգեցնի տարեկան բյուջեում և ՄԺԾԾ-ում իրականացված կանխատեսումների շեղումների՝ կապված վերոնշյալ վարկերի սպասարկման և մարման, ինչպես նաև վարկավորմամբ կամ երաշխիքի տրամադրմամբ պետության կողմից փաստացի փոխհատուցում տրամադրելու հնարավոր անհրաժեշտության հետ:

Վարկային պորտֆելի իրականացվելիք վերլուծության հիմնական նպատակը պորտֆելի՝ տարբեր ռիսկերի ենթարկվածության աստիճանի գնահատումն է՝ հնարավոր ֆիսկալ ռիսկերի բացահայտման ճանապարհին:

2024 թվականի փետրվարի 29-ի դրությամբ վարկային պորտֆելի չմարված մասի ընդհանուր գումարը կազմել է 303.1 մլրդ, որը նախորդ նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է մոտ 2.7%-ով, ինչը պայմանավորած է տրամադրված վարկերի մարմամբ: Հարկ է նշել, որ զուգահեռաբար նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պորտֆելը համալրվել է նոր վարկերով՝ միաժամանակ կրելով փոխարժեքի տատանումները (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ դրամի փոքր-ինչ արժեզրկում): Նույն ամսաթվի դրությամբ չաշխատող վարկերի տեսակարար կշիռը վարկային պորտֆելում կազմել է 2.23% (տե՛ս գծապատկեր 8):

Գծապատկեր 8. *Չաշխատող վարկերի տեսակարար կշիռը վարկային պորտֆելում*



2024 թվականի փետրվարի 29-ի դրությամբ վարկային պորտֆելի գերակշիռ մասը բաժին է ընկել էներգետիկայի ոլորտին՝ կազմելով մոտ 77%, իսկ հանրագումարային 233.95 մլրդ ՀՀ դրամ:

2024 թվականի փետրվարի 29-ի դրությամբ ենթավարկային պայմանագրերով տրամադրված վարկերը կազմել են ընդհանուր պորտֆելի 71.9%-ը, իսկ բյուջետային վարկերը՝ 28.1%-ը (տե՛ս գծապատկեր 9): Հատկանշական է, որ ՊՄԸ-ների մասնաբաժինը վարկային պորտֆելում կազմել է 73.8%:

Գծապատկեր 9. *Վարկային պորտֆելի տարանջատումն՝ ըստ բյուջետային վարկերի և ենթավարկերի*



Վարկային պորտֆելի դինամիկայի վերաբերյալ պատկերացում կազմելու համար ստորև՝ Գծապատկեր 10–ում, ներկայացնենք վերջինիս տեսակարար կշիռը ՀՆԱ-ում՝ վերջին տարիների կտրվածքով:

Գծապատկեր 10. *Վարկային պորտֆելը և վերջինիս կշիռը ՀՆԱ-ում (մլրդ ՀՀ դրամ, %)*



Ինչպես տեսանելի է գծապատկերից, դիտարկվող տարիներին առավելագույն վարկային պորտֆելի չափն ու կշիռը ՀՆԱ-ում արձանագրվել է 2020 թվականին, որը հետևանք է համավարակի ֆոնին տնտեսական ծրագրերի իրականացման նպատակով տրամադրված նոր վարկերի, ինչպես նաև տվյալ տարում արտարժույթի փոխարժեքի դեպի վեր տատանման: Հարկ է նշել, որ վերջին տարիների վարկային պորտֆելի նվազումը մեծամասամբ պայմանավորված է դրամի արժևորմամբ:

2024 թվականի փետրվարի 29-ի դրությամբ ընդհանուր վարկային պորտֆելում ՀՀ դրամով տրամադրված վարկերը կազմել են 33.4% կամ 101.2 մլրդ ՀՀ դրամ, ԱՄՆ դոլարով՝ 99.5 մլրդ ՀՀ դրամ կամ 32.9%, Եվրոյով՝ 13.3% կամ 40.3 մլրդ ՀՀ դրամ, ճապոնական իենով՝ 17.9% կամ 54.1 մլրդ ՀՀ դրամ, հատուկ փոխառության իրավունքով (ՀՓԻ) տրամադրված վարկերը՝ 2.5% կամ 7.7 մլրդ ՀՀ դրամ (տե՛ս գծապատկերը 11):

Գծապատկեր 11. *Վարկային պորտֆելի արժութային կազմը*



Վարկային պորտֆելի՝ արժութային ռիսկին ենթարկվածության աստիճանը գնահատվում է բավականին բարձր, քանի որ տրամադրված վարկերի գերակշիռ մասը՝ 66.6%-ը, արտարժույթով են, իսկ վարկառուների եկամուտները՝ հիմնականում ՀՀ դրամով:

Վարկային պորտֆելի՝ տոկոսադրույքի ռիսկին ենթարկվածության աստիճանը գնահատելու համար ներկայացնենք փոփոխվող տոկոսադրույքով վարկերի տեսակարար կշիռը վարկային պորտֆելում, վերջին տարիների կտրվածքով (տե՛ս Գծապատկեր 12):

Գծապատկեր 12*. Փոփոխվող տոկոսադրույքով վարկերը և վերջիններիս տեսակարար կշիռը վարկային պորտֆելում (մլրդ ՀՀ դրամ, %)*



Գծապատկերից նկատելի է, որ վարկային պորտֆելի՝ տոկոսադրույքի ռիսկին ենթարկվածության աստիճանը ցածր է: 2020թ. փոփոխվող տոկոսադրույքով վարկերի բացարձակ մեծությունը արձանագրվել է առավելագույնը դիտարկվող ժամանակահատվածում, սակայն ի հակադրություն դրան, տեսակարար կշիռը նվազել է, ինչը հետևանք է վարկային

պորտֆելի ավելի առաջանցիկ աճի տեմպի, որի հիմնական պատճառներ են հանդիսացել թե՛ համավարակի ֆոնին տրամադրված վարկերը, թե՛ արտարժույթի զգալի տատանումները: 2022-2023թթ. ցուցանիշի աճը պայմանավորված է վարկային պորտֆելի նվազմամբ (վարկերի մայր գումարի մարում), միևնույն ժամանակ փոփոխվող տոկոսադրույքով վարկերի աճով (փոփոխվող տոկոսադրույքով վարկերի աճ, արտարժույթի արժևորում):

Հաշվի առնելով, որ բյուջետային վարկերը տրամադրվել են փոփոխվող և ֆիքսված տոկոսադրույքներով, ստորև ներկայացնենք ֆիքսված տոկոսադրույքով տրամադրված բյուջետային վարկերի միջին տոկոսադրույքների (ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար) դինամիկան՝ բանկային վարկերի միջին տոկոսադրույքների (ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար)[47] համեմատությամբ և վերաֆինանսավորման տոկոսադրույքի համադրությամբ:

Գծապատկեր 13. *Ֆիքսված տոկոսադրույքով տրամադրված վարկերի ընդհանուր պորտֆելի միջին տոկոսադրույքների դինամիկան՝ ֆինանսական համակարգի տոկոսադրույքների համադրությամբ*



Գծապատկերից նկատելի է, որ վերջին տարիներին վերաֆինանսավորման տոկոսադրույքի դեպի վեր փոփոխությանը համընթաց փոփոխվել են նաև ֆինանսական շուկայի միջին տոկոսադրույքները, իսկ բյուջետային վարկերի միջին տոկոսադրույքները դիտարկվող ժամանակահատվածում էական փոփոխությունների չեն ենթարկվել:

2024 թվականի փետրվարի 29-ի դրությամբ պետության կողմից տրամադրված վարկերի 73.6%-ն ապահովված են գրավով (անշարժ և շարժական գույք, հասարակ մուրհակներ, ակտիվներ և այլն), իսկ 26.4%-ը կազմում են գրավով չապահովված վարկերը: Չապահովված վարկերի մոտ 52%-ը բաժին է ընկնում ՊՄԸ-ներին:

[47] «Ֆինանսական շուկայի 1 տարուց ավել ժամկետով իրավաբանական անձանց տրամադրված վարկերի միջին տոկոսադրույք (ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար)», աղբյուրը՝ ԿԲ տեղեկագրեր

Գծապատկեր 14. *Բյուջետային վարկերի տարանջատումն՝ ըստ ապահովվածության*



2024 թվականի փետրվարի 29-ի դրությամբ վարկային պորտֆելի կենտրոնացվածության մասին պատկերացում կազմելու նպատակով թվով 53 վարկառուներից առանձնացվել են 10 խոշոր վարկառուները (տե՛ս աղյուսակ 5), որոնց տրամադրված վարկերի կշիռը վարակային պորտֆելում կազմում է 88.4%, ընդ որում վերջիններիս 73.81%-ը ՊՄԸ-ներ են՝ թվով 5 վարկառու:

Աղյուսակ 5. Վարկային պորտֆելի 10 խոշոր վարկառուները, ՀՀ դրամ

Վարկառու		Վարկի չափ	Կշիռը պորտֆելում
1. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ	ՊՄԸ	86,534,351,017	28.55%
2. «Երևան Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ	ՊՄԸ	67,376,793,429	22.23%
3. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ	ՊՄԸ	47,316,461,712	15.61%
4. «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ		16,458,539,395	5.43%
5. «Դի Էնդ Էյջ Գրուպ» ՍՊԸ		11,009,505,960	3.63%
6. ՀՀ կենտրոնական բանկ		10,845,414,109	3.58%
7. ՀՀ ԿԲ գերմանահայկական հիմնադրամին վարկավորում		9,004,380,471	2.97%
8. «Երևանի ավտոբուս» ՓԲԸ	ՊՄԸ	8,760,600,000	2.89%
9. «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ	ՊՄԸ	6,160,655,639	2.03%
10. ԳՖԿ ԾԻԳ (Գյուղատնտեսական տարածքների տնտեսական զարգացում ԳՏՏՋ)		4,339,772,252	1.43%

3.3.3 ՊԵՏԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻՑ ԾԱԳՈՂ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐ

Բյուջետային վարկերից բացի պետության կողմից տրամադրվում են նաև պետական երաշխիքներ, որոնք հանդիսանում են պետական պարտքի բաղադրիչ՝ ներքին և արտաքին պետական պարտքի հետ միաժամանակ և ըստ տեսակների լինում են՝ *ներքին և արտաքին*:

2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ տրամադրված երաշխիքները կազմել են հանրագումարային 41.4 մլրդ ՀՀ դրամ կամ նույն տարվա ՀՆԱ-ի 0.44%-ը:

Վերոնշյալ երաշխիքների փաթեթում արտարժույթով տրամադրված երաշխիքները կազմել են հանրագումարային 84.6 մլն ԱՄՆ դոլար, իսկ ազգային արժույթով՝ 7.2 մլրդ ՀՀ դրամ:

Ստորև ներկայացնենք տրամադրված պետական երաշխիքների դինամիկան և վերջիններիս տեսակարար կշիռը Կառավարության պարտքում՝ ըստ տարիների:

Գծապատկեր 15. *Տրամադրված պետական երաշխիքների դինամիկան և վերջիններիս տեսակարար կշիռը Կառավարության պարտքում՝ 2016-2023 թթ. (մլրդ ՀՀ դրամ, %)*



Ինչպես նկատելի է գծապատկերից վերջին տարիներին Երաշխիքներ/Կառավարության պարտք ցուցանիշը ցուցաբերել է մոնոտոն նվազման միտում՝ պայմանավորված մի կողմից տրամադրված երաշխիքների նվազմամբ, մյուս կողմից՝ Կառավարության պարտքի ավելացմամբ:

Ներքին պետական երաշխիքները ՀՀ ռեզիդենտներին տրամադրված բյուջետային երաշխիքներն են, իսկ արտաքին պետական երաշխիքները ոչ ռեզիդենտներին և օտարերկրյա պետություններին Հայաստանի Հանրապետության և Կենտրոնական բանկի կողմից տրամադրված պետական երաշխիքներն են:

Ստորև ներկայացնենք պետական երաշխիքների տարանջատումը՝ արտաքինի և ներքինի, ըստ տարիների:

Գծապատկեր 16. *Պետական երաշխիքների տարանջատումը՝ արտաքինի և ներքինի 2016-2023թթ.*



Գծապատկերից նկատելի է, որ բյուջետային երաշխիքները մեծամասամբ տրամադրվել են արտարժույթով, ինչն էլ փաստում է փաթեթի՝ արտարժութային ռիսկի ենթարկվածության բարձր մակարդակի մասին:

Ներկայացնենք երաշխավորվող կազմակերպությունների ցանկը, տրամադրված երաշխիքի չափը ՀՀ դրամով և կշիռը համապատասխան պորտֆելում 2023թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ (տե՛ս աղյուսակ 6):

Աղյուսակ 6. *Երաշխավորվող կազմակերպությունների ցանկ*

ԱՐՏԱՔԻՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐ			
Պրինցիպալ[48]	**Բենեֆիցիար**[49]	**Երաշխիքի չափ (ՀՀ դրամ)**	**Կշիռը արտաքին երաշխիքների պորտֆելում**
1. ՀՀ կենտրոնական բանկ	ՎԶՄԲ[50], ԱԶԲ[51], Գերմանիա (ՎՎԲ[52])	31,231,750,763	91.20%
2.«ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ» Բժշկական Կենտրոն ՓԲԸ	Էռստե Բանկ (Ավստրիա)	3,014,711,538	8.80%
ՆԵՐՔԻՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐ			
Պրինցիպալ	**Բենեֆիցիար**	**Երաշխիքի չափ (ՀՀ դրամ)**	**Կշիռը ներքին երաշխիքների պորտֆելում**
1.«Վեդի Ալկո» ՓԲԸ	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ	1,958,100,000	27.3%

[48] Երաշխավորվող կազմակերպություն
[49] Կազմակերպություն, որի նկատմամբ պարտավորություն է ստանձնել երաշխավորվող կազմակերպությունը (երաշխավորվող կազմակերպության պարտատեր)
[50] Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկ (IBRD)
[51] Ասիական Զարգացման Բանկ (ADB)
[52] Վերականգնման Վարկերի Բանկ (KFW)

2. «Պռոշյանի կոնյակի գործարան» ՍՊԸ	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ, «ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ	1,748,200,000	24.4%
3. «Իջևանի գինու, կոնյակի գործարան» ՓԲԸ	«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ, «Հայաստանի զարգացման և ներդրումների Կորպորացիա» ՈՒՎԿ ՓԲԸ	1,273,400,000	17.7%
4. «ՄԱՊ» ՓԲԸ	«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ	900,000,000	12.5%
5. «Արտաշատ-Վինկոն» ՓԲԸ	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ	693,000,000	9.6%
6.«Արարատի գինու գործարան» ՍՊԸ	«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ	250,000,000	3.5%
7. «Գետափի գինու, կոնյակի գործարան» ՍՊԸ	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ	218,100,000	3.1%
8. «Երասխի գինու գործարան» ՍՊԸ	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ	139,400,000	1.9%

Համաձայն «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ կետի՝ տվյալ բյուջետային տարում երաշխավորվող պարտավորությունների ընդհանուր գումարը (բացառությամբ Հայաստանի Հանրապետության անունից կնքված միջազգային պայմանագրերով նախատեսված երաշխիքների) չի կարող գերազանցել նախորդ բյուջետային տարվա պետական բյուջեի հարկային եկամուտների 10 տոկոսը:

Հաշվի առնելով օրենսդրորեն սահմանված վերոնշյալ ֆիսկալ կանոնը ստորև ներկայացնենք տվյալ բյուջետային տարում երաշխավորվող պարտավորությունների կշիռը նախորդ բյուջետային տարվա պետական բյուջեի հարկային եկամուտներում՝ համեմատելով սահմանային շեմի հետ:

Գծապատկեր 17. *Տվյալ բյուջետային տարում երաշխավորվող պարտավորությունների կշիռը նախորդ բյուջետային տարվա պետական բյուջեի հարկային եկամուտներում՝ 2016-2023թթ.*



Ինչպես նկատելի է գծապատկերից դիտարկվող ժամանակահատվածում ցուցանիշը չի հատել սահմանային շեմը՝ վերջին տարիներին դրսևորելով նվազման միտում, որը պայմանավորված է ինչպես հարկային եկամուտների աճով, այնպես էլ երաշխավորվող պարտավորությունների նվազմամբ:

«Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից վարկերի տրամադրման դեպքում իրականացվող վերլուծությունների արդյունքում տրամադրվող եզրակացության բովանդակության և կառուցվածքի վերաբերյալ» ՀՀ ֆինանսների նախարարի հրամանի համաձայն՝ ՀՀ պետական բյուջեից հատկացվող բյուջետային վարկերից բխող ֆիսկալ ռիսկերի բացահայտման, գնահատման և զսպանն ուղղված առաջարկների ներկայացման նպատակով Ֆիսկալ ռիսկերի կառավարման վարչության կողմից իրականացվում է հայտատուի՝ բյուջետային վարկի տրամադրման փուլում նպատակայնության և հիմնավորվածության համապատասխանության ուսումնասիրություն (վարկի տրամադրման նպատակը և հիմնավորումը պետք է բխեն հանրային քաղաքականության նպատակներից), ինչպես նաև ֆինանսական վիճակի և վարկունակության գնահատման համապարփակ վերլուծություններ: Ուսումնասիրությունների և իրականացված վերլուծությունների արդյունքների հիման վրա ներկայացված բյուջետային հայտի վերաբերյալ տրամադրվում է եզրակացություն՝ նշելով պոտենցիալ ռիսկերը և դրանց զսպման մեխանիզմների վերաբերյալ առաջարկները:

Պետական երաշխիքներից բխող ֆիսկալ ռիսկերի զսպման առումով օրենսդրորեն սահմանված են հետևյալ ֆիսկալ կանոնները.

- «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ պետական երաշխիքի գումարը երաշխիքի ստացման համար դիմելու պահին չպետք է գերազանցի երաշխիք ստացողի ակտիվների ***20 տոկոսը*:**
- «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 9-րդ կետի համաձայն՝ որոշակի պահի դրությամբ տրամադրված և չմարված պետական երաշխիքների հանրագումարը չպետք է գերազանցի նախորդ տարվա համախառն ներքին արդյունքի ***20 տոկոսը:***
- «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ տվյալ բյուջետային տարում երաշխավորվող պարտավորությունների ընդհանուր գումարը (բացառությամբ Հայաստանի Հանրապետության անունից կնքված միջազգային պայմանագրերով նախատեսված երաշխիքների) չի կարող գերազանցել նախորդ բյուջետային տարվա պետական բյուջեի հարկային եկամուտների 10 տոկոսը: Համաձայն նույն հոդվածի 5-րդ կետի՝ երաշխիքների վճարմամբ Հայաստանի Հանրապետության մոտ ծագում է հետադարձ պահանջի իրավունք:Միաժամանակ վերոնշյալ օրենքի իմաստով բյուջետային երաշխիքի վճարմամբ ծագող հետադարձ պահանջները համարվում են բյուջետային վարկեր:
- «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն ՀՀ ռեզիդենտ իրավաբանական անձինք, որոնց համար տրամադրվել են բյուջետային երաշխիքներ, երաշխիքային ծրագրի ավարտից հետո պետական բյուջե պետք է վճարեն միջնորդավճար՝ *երաշխիքային գումարի 1 տոկոսի չափով*: Լիազոր մարմինն իրավասու է մինչև վարկի մարելը բյուջետային երաշխիքի տրամադրման պայմանագրով նախատեսված դեպքերում և կարգով ստուգելու ստացողի ֆինանսական վիճակը:

3.3.4 ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՄԱՍՆԱՎՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ (ՊՄԳ) ՁԵՎԱՉԱՓՈՎ ԳՈՐԾՈՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻՑ ԲԽՈՂ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում ՊՄԳ օրենքն ուժի մեջ է մտել 2020 թվականի հունվարի 1-ից՝ սահմանելով, որ վերջինիս դրույթները վերաբերելի են միայն 2020 թվականից հետո կնքված պայմանագրերին: Այնուամենայնիվ, օրենսդրությանը նախորդող բազմաթիվ ՊՄԳ ձևաչափին համապատասխան պայմանագրեր կան կնքված, որոնք իրենց էական ֆիսկալ ռիսկերի և բարդ պայմանական պարտավորությունների պատճառով վերլուծվում են այս բաժնում:

Վերլուծության են ենթարկվել «Հարավկովկասյան երկաթուղի», «Վեոլիա ջուր», «Արմենիա» միջազգային օդանավակայաններ, «Քոնթուր Գլոբալ հիդրո կասկադ», «Արմփաուեր» և «Էֆարվի Մասրիկ» պայմանագրերը, որոնք գործունեություն են ծավալում այնպիսի կարևոր ոլորտներում, ինչպիսիք են տրանսպորտը, էներգետիկան և ջրամատակարարումը: Այս ՊՄԳ-ների համար պայմանական պարտավորությունների առավել մեծ ծավալ են կազմում վաղաժամկետ դադարեցման, տնտեսական կամ օրենսդրական փոփոխությունների հետևանքով պայմանավորված նոր բանակցությունների և յուրաքանչյուր ծրագրին հատուկ ռիսկի այլ գործոնների հետ կապված հնարավոր ծախսերը:

Ստորև ներկայացվում է նշված 6 ընկերությունների վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն:

Աղյուսակ 7. *Գործող ՊՄԳ և ԷԳՊ պայմանագրերը*

Անվանում	Ոլորտ	Սկիզբ	Ավարտ	Պայմանական պարտավորությունների հարկաբյուջետային ռիսկի կարգավիճակի փոփոխությունները
«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ	Տրանսպորտ	2008թ.	2038թ.	Նշանակալի, Անփոփոխ
«Վեոլիա Ջուր» ՓԲԸ	Ջրամատակարարում և կեղտաջրերի հեռացում	2016թ.	2031թ.	Նշանակալի, Անփոփոխ
«Արմենիա միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ	Տրանսպորտ	2002թ.	2032թ.	Նշանակալի, Անփոփոխ
«Քոնթուր Գլոբալ հիդրո կասկադ» ՓԲԸ (Որոտան ՀԷԿ), ԷԳՊ	Էներգետիկա	2016թ.*	2038թ.	Նշանակալի, Վատթարացում
«Արմփաուեր» ՓԲԸ, ԷԳՊ	Էներգետիկա	2019թ.*	2041թ.	Միջին, Անփոփոխ
«Էֆարվի Մասրիկ» ՓԲԸ, Մասրիկ-1 արևային ֆոտովոլտային էլեկտրակայան, ԷԳՊ	Էներգետիկա	2021թ.*	2041թ.	Նշանակալի, Անփոփոխ

*գործարքի ֆինանսական պայմանների բավարարման տարի. ԷԳՊ պայմանագրերի փաստացի տևողությունը կազմում է մինչև 25 տարի՝ սկսած ստորագրման տարվանից:

ՊՄԳ պայմանագրերի վերլուծության արդյունքում նյութականացման ռիսկի աստիճանը հիմնականում նշանակալի է համարվել **ՊՄԳ բոլոր պայմանագրերի համար՝** հաշվի առնելով,

որ իրար հաջորդող ճգնաժամերը, հատկապես Ադրբեջանի ռազմական ագրեսիան, տարբեր բնույթի ազդեցություն են ունեցել ընկերությունների դրամական հոսքերի վրա, ինչն իր հերթին մեծացնում է պայմանագրի վերաբանակցման (պայմանագրերում անհաղթահարելի ուժի ազդեցության և տնտեսական հավասարակշռության վերաբերյալ դրույթների հետևանքով) կամ պայմանագրի վաղաժամ դադարեցման ռիսկերը, որոնք էլ իրենց հերթին կարող են ավելացնել ՀՀ կառավարության պայմանական պարտավորությունները: **Շինարարության փուլում գտնվող ծրագրերի պարագայում ճգնաժամերը հանգեցրել է էական ուշացումների, ինչն իր հերթին կարող է բարձրացնել գերածախսերի կամ վերաբանակցման ռիսկերը:**

«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ

ՀՀ կառավարության 07.02.2008թ. N83-Ա որոշման հիման վրա Հայաստանի Հանրապետության, «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի և «Ռուսական երկաթուղիներ» ԲԲԸ-ի միջև 13.02.2008թ. կնքվել է «Հայկական երկաթուղու համակարգը «Ռուսական երկաթուղիներ» ԲԲԸ կողմից ստեղծված «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ փոխանցելու մասին» կոնցեսիոն պայմանագիրը: Ծառայությունների ծավալները և երթուղիները համաձայնեցվում են յուրաքանչյուր տարի՝ հաջորդող տարվա համար, հետևաբար պայմանագրի ֆինանսական տարբեր բաղադրիչների ապագա մակարդակները բարդ է կանխատեսել:

Կոնցեսիոն պայմանագիրը ներառում է վնասի սուբսիդավորում որոշ անշահավետ ուղևորափոխադրումների երթուղիների համար, որոնք իրականացվել են պայմանագրի բոլոր տարիներին: Սակայն, ըստ պայմանագրի, վճարման ենթակա գումարների առավելագույն չափը սահմանափակվում է կոնցեսիոների կողմից վճարման ենթակա տարեկան կոնցեսիոն վճարի չափով: Համաձայն առկա պատմական տեղեկատվության, կոնցեսիոն պայմանագրի սկզբից ի վեր որևէ այլ պայմանական պարտավորության նյութականացում տեղի չի ունեցել:

Կոնցեսիոն պայմանագիրը նախատեսում է նաև փոխհատուցումներ մի շարք դեպքերում: Այդպիսի դեպքերից են՝

- Օրենսդրության անբարենպաստ փոփոխություն,
- Անհաղթահարելի ուժի ազդեցության մեղմման ծախսեր,
- Անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով պայմանագրի վաղաժամ դադարեցման հետ կապված վճարումներ,
- Կոնցեդենտի կողմից պարտավորությունների չկատարման հիմքով պայմանագրի վաղաժամ դադարեցման վճարներ,
- Փոխադարձ համաձայնությամբ պայմանագրի վաղաժամ դադարեցման վճարներ:

Կոնցեսիոն պայմանագրի վաղաժամ դադարեցման մասով պայմանական պարտավորությունները հիմնականում չափելի են և դրանց առավելագույն ազդեցությունը վատագույն սցենարի դեպքում գնահատվում է 103.6 մլրդ ՀՀ դրամ[53], ընդ որում այդ գումարը կոնցեսիոն գործունեության ընթացքում աճում է՝ հաշվի առնելով պայմանագրի պայմանները:

Կոնցեսիոն պայմանագրի ֆիսկալ ռիսկայնության կարգավիճակը մինչև համավարակը գնահատվում էր միջին, իսկ համավարակի և պատերազմի ճգնաժամերով պայմանավորված՝ նշանակալի, և ներկայումս շարունակում է գնահատվել նշանակալի՝ պայմանավորված զարգացող աշխարհաքաղաքական և մակրոտնտեսական ճգնաժամով: Միաժամանակ կարևոր

[53] Կիրառվել է Ասիական Զարգացման Բանկի կողմից մշակված մեթոդաբանությունը՝ ինչպես և սույն փաստաթղթում ներկայացվող այլ հաշվարկների դեպքում:

է փաստել, որ ընկերության գործունեությունը 2022 թվականին եղել է շահութաբեր՝ 2.3 մլրդ դրամ շահույթով՝ արձանագրելով նախորդ տարվա նկատմամբ 82% աճ և ապահովելով զուտ շահույթի մարժայի 10%: Սակայն 2023 թ.-ը ֆինանսապես ոչ այդքան բարենպաստ տարի էր, խոշոր գնորդ «Գեորպրոմայնինգ» ընկերությունից ստացվող եկամուտները կտրուկ անկում ապրեցին՝ պայմանավորված ընկերության արտադրական ծավալների նվազմամբ: ՀԿԵ ընկերության եկամուտները նվազել են 6 մլրդ դրամով, կամ 25%-ով: Բացի այդ, ընկերությունը վերագնահատել է կոնցեսիոն պայմանագրի արժեքը՝ կիրառելով զեղչված դրամական հոսքերի մեթոդը՝ արժեզրկելով հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների մնացորդային արժեքը 61,5 մլրդ-ով, ինչը առաջացրել է 58,7 մլրդ դրամի զուտ վնաս: 2022 թվականի ընթացքում բեռնափոխադրումների ֆիզիկական ծավալներն 2021 թվականի նկատմամբ ավելացել են մոտ 11 տոկոսով, սակայն 40% անկում են ապրել 2023 ընթացքում: Ուղևորափոխադրումների ծավալի աճի տեմպը դանդաղել է 2023 թվականին՝ 15%-ից դառնալով 7.5%:

Գծապատկեր 18. *Ուղևորափոխադրումները և բեռնափոխադրումները 2021-2023թթ.*



Ֆիսկալ ռիսկի կարգավիճակը նշանակալի է՝ նաև հաշվի առնելով տարածաշրջանային ճգնաժամը և ընթացող վերաբանակցությունները:

Կարևոր է նշել, որ Մայիսի 25-26-ին հորդառատ անձրևների պատճառով Լոռիում տեղի ունեցած ջրհեղեղները վնասել են երկաթուղային գծի 8 հատված՝ մինչև 2 կմ ընդհանուր երկայնքով: Այժմ ընթանում են վերականգման աշխատանքները, և իրականացվում է վնասի չափի գնահատում: Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը և Կոնցեսիոները համատեղ մշակում են երկաթուղու աշխատանքի ժամանակավոր սխեմաներ:

«Վեոլիա ջուր» ՓԲԸ

21.11.2016թ. ՀՀ կառավարության, «Վեոլիա Օ Կոմպանի Ժեներալ Դեզ Օ» կոմանդիտային բաժնետիրական ընկերության և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև կնքվել է «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի վարձակալության պայմանագիր՝ 15 տարի ժամկետով (Վարձակալական պայմանագիր):

Ընկերությունը 2023 թվականին շահութաբեր է եղել՝ պայմանավորված եկամուտների ավելացմամբ, ինչպես նաև բարելավվել են դեբիտորական պարտքերի հավաքագրման ցուցանիշները:

Վարձակալական պայմանագրի շրջանակներում առկա են մի շարք նշանակալի պայմանական պարտավորություններ, այդ թվում.

- Վարձակալի կողմից պարտադիր կապիտալ աշխատանքների ծրագրի շրջանակից դուրս այլ աշխատանքների իրականացման դեպքում Վարձատուի կողմից համապատասխան գումարի փոխհատուցում,
- Բազային սակագնի երաշխիք, որն արդեն առնվազն երկու անգամ կիրառվել է՝ ներառյալ վարձակալական վճարի կրճատումը 2020 և 2021 թվականներին,
- Վարձակալական պայմանագիրը պարունակում է վերաբանակցությունների և վաղաժամկետ դադարեցման բազմաթիվ դեպքեր: Առաջիկայում Վարձակալական պայմանագրի վաղաժամկետ դադարեցման ռիսկը համարվել էր ցածր՝ առնվազն մինչև 2025թ.: Պայմանագրի վաղաժամ դադարեցման գծով պայմանական պարտավորությունը մասնակի չափելի է և վերագնահատվել է պայմանագրի վերջին փոփոխությունից հետո՝ 60.3 մլրդ դրամ 2023 թվականի վերջի դրությամբ՝ միջանկյալ սցենարի դեպքում, որտեղ նման վճարումը չի կարող գերազանցել ապագա վարձակալական վճարների հանրագումարը: Վարձակալը պարբերաբար հանրային տիրույթում արտահայտվում է Ջրային Կոմիտեի և Կառավարության այլ մարմինների կողմից չկատարված պարտավորությունների վերաբերյալ, ուստի հարցը պետք է մշտապես մշտադիտարկվի, նույնիսկ եթե բանակցությունները միշտ դրական են ավարտվել: Պայմանական պարտավորությունների նյութականացումը նախորդ տարիներին տեղի է ունեցել հիմնականում վարձակալական վճարի կրճատումների միջոցով, ինչը միջանկյալ սցենարում նվազեցնում է հնարավոր վաղաժամկետ դադարեցման վճարի գումարը:

Վերջին տարիներին ընթանում էին որոշակի բանակցություններ արդեն իսկ կառուցված ակտիվի, մասնավորապես՝ ջրի մաքրման կայանի վերաբերյալ: 2023 թվականի սկզբին որոշվեց, որ այդ ակտիվը կփոխանցվի և կվերականգնվի Հայկական տարածքային զարգացման հիմնադրամի կողմից, այսպիսով այս հարցն այլևս չի ստեղծելու ՀՀ կառավարության համար հավելյալ պայմանական պարտավորությունները (վերջին անգամ դրանք գնահատվել էին 13 միլիարդ դրամ): Սակայն նախագիծը դառնալու է պետական բյուջեով ֆինանսավորվող ներդրումային ծրագիր: Բացի այդ, ակնկալվում է, որ հաջորդ տարիներին էապես կավելանան նաև պետությանը փոխանցվելիք կոնցեսիոն ակտիվներին առնչվող պարտադիր կապիտալ աշխատանքները՝ հաշվի առնելով, որ միջին տարեկան գումարը 2022 թվականից հետո բարձրացել է (ըստ ընկերության գնահատականի դեռևս մոտ 55 մլն ԱՄՆ դոլարի չափով ներդրումներ): Այս աշխատանքները ֆինանսավորվելու են պետական բյուջեի միջոցներից, այդպիսով դրանք չեն հանդիսանում պայմանական պարտավորություններ, բայց այս

տեղեկատվության առկայությունը ավելի ամբողջական պատկերացում է տալիս այս նախագծի իրական արժեքի մասին:

Ի լրումն ընկերությունն իր 2023թ. տարեկան հաշվետվության մեջ նշում է մոտ ապագայում վերաբանակցությունների անհրաժեշտության մասին:

Այդպիսով, հարկաբյուջետային ռիսկի կարգավիճակը մնում է նշանակալի:

«Արմենիա Միջազգային Օդանավակայաններ» ՓԲԸ

Կոնցեսիոն պայմանագիրը գործում է 2002թ.-ից՝ Երևանի «Զվարթնոց» օդանավակայանի համար, իսկ 2007թ.-ից ներառում է նաև Գյումրու «Շիրակ» օդանավակայանը: Մայր ընկերությունը աշխարհի օդանավակայանների խոշորագույն օպերատորներից է՝ «Կորպորասիոն Ամերիկա Ս.Ա.» ընկերությունն, որը ցուցակված է Նյու Յորքի ֆոնդային բորսայում:

Խումբը մինչև 2019 թվականը արձանագրում էր շահութաբերության բարձր ցուցանիշներ, իսկ ՀՀ-ի դուստր ձեռնարկությունը եղել է ամենաշահութաբերներից մեկը: Համավարակի ճգնաժամից հետո ֆինանսական վիճակը վերականգնվեց և 2022-ին «ԱՄՕ»-ն արձանագրեց 2019 թ.-ի ցուցանիշները 50% գերազանցող զուտ շահույթի մակարդակ: 2023 թվականը եղել է էլ ավելի շահութաբեր՝ արձանագրելով շահույթի 74% աճ՝ նախորդ տարվա համեմատ, իսկ 21.7% եկամուտների աճով Հայաստանը շարունակում է լինել խմբի ամենաշահութաբեր սեգմենտներից մեկը:

Պայմանագիրը Կոնցեսիոներին հնարավորություն է տալիս միակողմանիորեն երկարացնել կոնցեսիայի տևողությունը:

Ըստ պայմանագրի սահմանված է տարեկան 20% ֆինանսական ներքին շահութաբերության թիրախային մակարդակ, որը սահմանված է օդանավակայանում ներդրողի ընդհանուր ներդրումների (այդ թվում սեփական կապիտալի, դրա համարժեքների, ենթավարկերի և/կամ փոխարկելի վարկերի և միջազգային աուդիտորական ընկերության կողմից աուդիտ անցած Կառավարչի հաշվապահական հաշվետվություններում արտացոլված ցանկացած այլ կապիտալ ներդրման) տարեկան ներքին զուտ դոլարային շահութաբերությունը հարկվելուց հետո:

Համաձայնեցված ներքին շահութաբերության մակարդակը պահպանելու համար պայմանագրով նախատեսված է հետևյալ մեխանիզմը՝ մաստեր-պլանի վերանայում, որի արդյունքում փոխվում է կապիտալ ծախսերի կառուցվածքը և ժամանակացույցը, սակագնի բարձրացում և պայմանագրի ժամկետի երկարացում: Պայմանագրի դադարեցման փոխհատուցման վճարները կարող են լինել չափազանց բարձր վաղաժամ դադարեցման դեպքում:

Հաշվի առնելով ընկերության բարձր շահութաբերությունը՝ պայմանագրի վաղաժամ դադարեցման պայմանական պարտավորությունը և ընկերության բիզնես ռիսկը ի սկզբանե գնահատվում էին ցածր, սակայն օդանավակայանների ոլորտը համավարակով պայմանավորված ճգնաժամից առավել տուժածներից մեկն է, իսկ այժմ այն ևս աշխարհաքաղաքական ճգնաժամով պայմանավորված դրսևորում է չափազանց տատանողական վարքագիծ՝ ունենալով եզակիորեն շահութաբեր 2022-2023 թվականներ, որոնք սակայն կարող են կայուն չլինել:

Համավարակի ժամանակաշրջանում ընկերությունը ստիպված եղավ հայցել վարկային պայմանագրի ֆինանսական քովենանթի չեղարկում, որը բավարարվեց ֆինանսավորողի կողմից և մարման ժամանակացույցը երկարաձգվեց մինչև 2024 թվականը:

2021-2022 թվականներից սկսած «Կորպորասիոն Ամերիկա Ս.Ա.» ընկերությունների խմբի ֆինանսական վիճակը զգալիորեն վերականգնվել է՝ պայմանավորված գործառնությունների վերսկսմամբ, ստացված մի շարք փոխհատուցումներով, վերակառուցված և նոր վարկերով, սակայն գործառնությունների մակարդակը, բացի Հայաստանից, զիջում է մինչև համավարակն առկա մակարդակին: Նշված վերականգնումը արտահայտվել է նաև Խմբի համախմբված դրամական մնացորդի ցուցանիշով, հետևաբար, անհրաժեշտության դեպքում Խումբը կրկին կկարողանա աջակցել «ԱՄՕ» ՓԲԸ-ին:

Ինչպես երևում է ՀՀ ուղևորափոխադրումների վիճակագրությունից, ոլորտի վերականգնումը գրանցվել է 2021 թվականի ընթացքում և թափ է առել 2022 թվականին՝ շարունակվելով 2023թ.-ին, երբ արձանագրված ծավալները գերազանցել են նախահամավարակային մակարդակը: Սակայն 2024 թվականի առաջին չորս ամիսներին նկատվում է ուղևորափոխադրումների որոշակի անկում:

Բեռնափոխադրումների ծավալները ևս վերականգնվել են 2022թ.՝ գերազանցելով 2019թ. մակարդակը 16.3%-ով: Այսպիսով բեռնափոխադրումների ծավալները 2022 և 2023 թվականի սկզբին գերազանցում են նախաճգնաժամային ծավալները՝ հիմնականում պայմանավորված Ռուսաստանի Դաշնության հետ առևտրաշրջանառության աճով: Բեռնափոխադրումների ծավալը շարունակել է աճել 2024 թվականի առաջին ամիսներին՝ ի տարբերություն ուղևորների: Հարկ է նշել, որ և՛ բեռների, և՛ ուղևորների համար ծավալները 2023 թվականին 2022 թվականի համեմատ աճել են ավելի քան 45 տոկոսով:

Շարունակվել է շահույթի նախքան հարկումը, տոկոսավճարները և մաշվածությունը (EBITDA) զգալի վերականգնումը: «ԱՄՕ» ՓԲԸ-ն լավ է դիմակայել 44-օրյա պատերազմի, նոր կորոնավիրուսային տարբերակների, Ռուսաստան-Ուկրաինա պատերազմի, 2022 և 2023թ սեպտեմբերյան ադրբեջանական ներխուժման հետևանքով ստեղծված մարտահրավերներին: 2022 թվականին վերականգնումը EBITDA եկամուտներ հարաբերակցությունը հասցրեց 33%-ի՝ բավականին բարձր, թեև ոչ այնքան բարձր, որքան 2021 թվականին՝ հաշվի առնելով եկամուտների կառուցվածքում վառելիքի լիցքավորման ծառայություններից ստացված եկամուտների շատ ավելի մեծ տեսակարար կշիռը (աշխարհաքաղաքական ճգնաժամի պատճառով վառելիքի ավելի բարձր գները), որոնց պարագայում ավելի ցածր է մարժան: 2023 թվականին EBITDA ցուցանիշը կազմեց 39.5%:

Կանխիկի մնացորդը 2023 թվականի տարեվերջին կազմել է 39 մլն ԱՄՆ դոլար, ինչն ավելի բարձր է, քան 2024 թվականին պարտքի սպասարկման գծով սպասվող վճարումները՝ հաշվի առնելով, որ նախորդ վարկային պայմանագիրը փոխարինվել է մեկ տարով ավելի երկար ժամկետ ունեցող Ամերիա բանկի հետ վարկային համաձայնագրով: Արդյունքում, նվազում է համապատասխան պայմանական պարտավորությունը:

Խումբը նաև հրապարակայնորեն հայտարարել է Զվարթնոց օդանավակայանի ընդլայնման մասին, որը ենթադրում է՝ հզորությունների կրկնապատկում և ներդրումների ծավալը գնահատվում է 400 մլն ԱՄՆ դոլար: Ընդլայնման ծրագրի շուրջ բանակցությունները դեռ շարունակվում են, և այդ ծրագիրը զգալիորեն կբարձրացնի ՀՀ կառավարության համար պայմանական պարտավորությունները, հատկապես գործող պայմանագրի կարգավորումների ներքո:

Վերը նշված հանգամանքներից ելնելով՝ սույն ՊՄԳ պայմանագրի գծով պայմանական պարտավորությունների ֆիսկալ ռիսկի կարգավիճակը, որը փոխվել էր միջինի՝ չնայած նոր աշխարհաքաղաքական և մակրոտնտեսական ճգնաժամից բխող անորոշություններին,

վերագնահատվել է նախորդ տարի: Հաշվի առնելով «Զվարթնոց» օդանավակայանի ընդլայնման հավակնոտ ծրագիրը և դրա հիմքում դրված ուղևորահոսքի ենթադրությունը, որը հիմնվել է նախորդ երկու տարիների արտասովոր ցուցանիշների վրա և, մյուս կողմից, այդ ցուցանիշների կայունության անորոշությունը միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում, ինչը կարող է հագեցնել ՀՀ-ի համար պայմանական պարտավորությունների, ինչպես արժեքի այնպես էլ հավանականության ավելացման: Մինչ ընդլայնման ծրագիրը, «ԱՄՕ» ՓԲԸ-ի ռիսկը զգալիորեն բարելավվել էր, սակայն այժմ այս ՊՄԳ-ի հարկաբյուջետային ռիսկի կարգավիճակը շարունակում է մնալ «Էական»:

«Քոնթուր Գլոբալ հիդրո կասկադ» ՓԲԸ

Ընկերությունը հանդիսանում է հիդրոէլեկտրաէներգիայի արտադրության առանցքային համալիրներից մեկը: Այն նախկինում պետական մասնակցությամբ ընկերություն էր, որը մասնավորեցման արդյունքում վաճառվել է էլեկտրաէներգիայի արտադրությամբ զբաղվող «Քոնթուր Գլոբալ» խոշոր միջազգային խմբին: Ընկերությունն արտադրված էլեկտրաէներգիան վաճառում է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին (ՀԷՑ)՝ ՀԾԿՀ կողմից հաստատված սակագներով: ՀԷՑ ընկերությունը պարտավոր է գնել արտադրված ամբողջ էլեկտրաէներգիան, իսկ չգնելու դեպքում՝ վճարել փոխհատուցում, որը մինչ այժմ չի կիրառվել: Ամենախոշոր պայմանական պարտավորությունը պետության կողմից հիմնական միջոցների հետգնման պարտավորությունն է, որի արժեքը 2023թ. ավարտին կազմում է 100 մլրդ դրամ, սակայն ակնկալվում է դրա նվազում՝ պայմանավորված խոշոր ներդրումների պլանների բացակայությամբ և փոխարժեքային տատանումով պայմանավորված վերագնահատումներով:

Նշենք նաև, որ ընկերությունը ներկայում մարում է Վերականգնման վարկերի բանկից (KfW) եվրոյով ստացված վարկը, ինչպես նաև 3 այլ ՄՖՀ-ներից, այդ թվում՝ Միջազգային ֆինանսական կորպորացիայից, ԱՄՆ դոլարով ստացված վարկեր: Այս առնչության հարկ է նկատել, որ 2020թ. ԱՄՆ դոլարի և եվրոյի փոխարժեքները դրամի նկատմամբ աճել էին, մինչդեռ 2021թ. և հատկապես 2022թ. դրամը արժևորվել է և կայուն պահպանում է այդ բարձր մակարդակը:

2019թ. ընկերության գործունեությունը եղել է շահութաբեր, 2020թ. COVID-19 համավարակի հետևանքով տնտեսական ակտիվության կտրուկ նվազման հետ մեկտեղ, ընկերությունն արձանագրել է հասույթի մոտ 25 տոկոս կրճատում, ինչը խիստ ազդեցություն է ունեցել ընկերության գործունեության՝ առանց արտադրված ամբողջ էլեկտրաէներգիան գնելու կամ փոխհատուցում վճարելու պարտավորությունն ակտիվացնելու: Դրան ավելացան նաև արտարժույթի փոխարժեքի հետ կապված վնասները՝ ԱՄՆ դոլարի և Եվրոյի նկատմամբ արժեզրկման հետևանքով, ինչը հանգեցրեց պարտքի սպասարկման առավել մեծ ծախսերի: Արդյունքում, 2020թ. ընկերությունն արձանագրել է սեփական կապիտալի բացասական մակարդակ՝ չնայած բաժնետերերի կողմից հավելյալ սեփական կապիտալի ներարկմանը: Ընկերությունը շարունակում է սպասարկել իր վարկերը՝ շնորհիվ բաժնետերերի հավելյալ աջակցության, որոնք տրամադրել են ավելի քան 10 մլրդ դրամ ծավալով արտակարգ աջակցության վարկ (համարժեք է ընկերության 2020թ. հասույթին): 2021 ընթացքում բաժնետերերի կողմից նորից կատարվել է սեփական կապիտալի ավելացում:

Հասույթի գեներացումը բարելավվել է 2021 թվականին՝ գերազանցելով 2019 մակարդակը և ապահովելով էականորեն ավելի բարձր շահույթ, դրական միտումը շարունակվել է 2022թ.-ին, երբ ընկերությունները արձանագրել է 2019 թվականի շահույթը գերազանցող մակարդակ:

Մայր կազմակերպության կողմից աջակցությունը առկա էր նաև 2022 թվականին, սեփական կապիտալի մոտ 2 մլրդ դրամի չափով ներարկումով, որը մասամբ փոխհատուցել էր բաժնետերերի վարկի ավելի մեծ մարումները:

Այնուամենայնիվ, 2023 թվականին ընկերության իրավիճակը կտրուկ վատթարացել է. եկամուտները զգալիորեն նվազել են՝ 16.6 միլիարդից հասնելով 12 միլիարդի՝ հիդրոօդերևութաբանական գործոնների՝ մասնավորապես երկար ժամանակ ջրի մակարդակների ցածր լինելու պատճառով**, ի**նչն առաջացրել է շատ ավելի ցածր գործառնական շահույթ: Այս գործոնը, ավելի բարձր տոկոսային ծախսերի, փոխարժեքի տատանումներից վնասների և ավելի ցածր տոկոսային եկամուտների հետ միասին հանգեցրել է զուտ վնասի: Ընդհանուր առմամբ, մայր ընկերությունը տարվա ընթացքում էական գումարներ է դուրս բերում հայկական ընկերությունից:

Կանխիկ միջոցները դուրս են բերվել բաժնետերերի վարկի արագացված մարման եղանակով, որը կազմում է 2023 թվականի ընթացքում մնացորդ գումարի կեսից ավելին: Բացի այդ, հայտարարվել է 5.5 միլիարդ դրամ բացառիկ շահութաբաժնի վճարում՝ չնայած 2023 թվականի ֆինանսական վնասների: Խումբը դիմել է վարկատուներին՝ ավելացնելու վարկի ծավալը, այդ թվում նախատեսվող ավելի մեծ կանխիկ միջոցների դուրսբերումը սպասարկելու նպատակով: Միևնույն ժամանակ վարկի ժամկետը կերկարաձգվի՝ այն հարթելու համար: Այս վարկի ավելացումը պահանջում է ՀՀ կառավարության համաձայնությունը, որը նույնպես վարկատու է՝ KfW վարկի օժանդակությամբ: Բանակցությունները շարունակվում են:

Ֆիսկալ ռիսկի կարգավիճակը շարունակում է մնալ «էական»՝ հաշվի առնելով ընկերության ֆինանսական վիճակը և այն փաստը, որ ընկերությանը, ըստ իր հաղորդակցման, չեն բավարարում հաստատված սակագները: Կարևոր է նշել, որ անցյալում բաժնետերերը, հանդիսանալով շահութաբեր ընկերությունների խումբ, աջակցել են ընկերությանը առանձնահատուկ դժվար 2020թ. ընթացքում, որից հետո իրականացավ մայր ընկերության ձեռք բերում KKR խմբի կողմից և ապացուցակում: Անորոշության մեկ այլ գործոն է մայր ընկերության ձեռքբերումը KKR խմբի կողմից, ինչի արդյունքում կարող է փոխվել Խմբի և որոշակի երկրներում դրա ներդրումների մասով քաղաքականությունը: Այս ձեռքբերման արդյունքում խմբի վարկային բեռն ավելացել է և Ֆիտչի կողմից խմբի վարկանիշը դասակարգվել է որպես «բացասական դիտարկում», որը նախ և առաջ դրդեց բարձրացնել հարկաբյուջետային ռիսկի կարգավիճակը մինչև էական: KKR-ի կողմից ձեռքբերման արդյունքում մայր ընկերության վրա դրված լրացուցիչ պարտքը մասամբ բացատրում է Հայաստանի դուստր ձեռնարկությունից դրամական միջոցների դուրսբերումը:

«Արմփաուեր» ՓԲԸ (Երևանի նոր ՋԷԿ)

Ընկերությունը Երևան քաղաքում կառուցել և հանձնել է շահագործման ջերմային էլեկտրակայան, հանդիսանում է աշխարհում էլեկտրաէներգիայի արտադրության խոշոր գործունեություն իրականացնող իտալական «Ռենկո» էներգետիկական խմբի և գերմանական «Սիմենս» խմբի դուստր ընկերություն: Ծրագրի գնահատված արժեքը կազմել է 257.575 մլն ԱՄՆ դոլար, ինչը նվազեցնում է նախկինում հաշվարկված պայմանական պարտավորության ծավալը: Կոնցեսիայի ժամկետը կազմում է 20 տարի՝ սկսած առևտրային շահագործման մեկնարկից: Կայանը շահագործման է հանձնվել 2021թ. դեկտեմբերի 11-ին, 2022 թվականի ապրիլին կայանի շահագործումը խափանվել է շոգետուրբինի վնասման պատճառով, որը շտկվել է EPC կապալառուի կողմից 2022 թվականի օգոստոսին, և կայանը վերագործարկվել է 2022 թվականի

սեպտեմբերի 10-ին: Այսպիսով, կայանը չի աշխատել ամբողջ հզորությամբ 2022 թվականին, ինչին հաջողվել է հասնել 2023 թվականին, և եկամուտները համապատասխանաբար աճել են շուրջ 40%-ով՝ հասնելով 114,7 միլիոն ԱՄՆ դոլարի: Սակայն կարողությունները և եկամուտները կարող են ավելի բարելավվել, և ընկերությունը նախատեսում է առաջարկություն ներկայացնել ՀՀ կառավարությանը: Մյուս կողմից, վաճառքի ինքնարժեքը զգալիորեն ավելացել է՝ հանգեցնելով 2022 թվականի համեմատ շահույթի նվազման:

Հիմնական պայմանական պարտավորությունը ՀՀ կառավարության կողմից պարտավորությունների չկատարման հետևանքով պայմանագրի վաղաժամ դադարեցման դեպքում կայանի հետգնման պարտավորությունն է (նյութականացման դեպքերն են՝ օտարումը, բռնագրավումը, զավթումը, ՀՀ կառավարությանն առնչվող անվճարունակության դեպքի տեղի ունենալը, պայմանագրի շրջանակներում պետության կողմից տրված հավաստիացումների և երաշխիքների էական խախտումը, ծրագրի կառուցման կամ շահագործման՝ Կառուցապատողի կարողության վրա էականորեն և անբարենպաստ կերպով ազդող օրենսդրական փոփոխությունը): Շահագործման առաջին տարվանից հետո, որը դեռևս չի լրացել, պայմանական պարտավորության գումարին կավելանա 15 տոկոս հավելավճար՝ ի հավելումն ներդրման գումարի, իսկ այնուհետև գումարը կնվազի տարեկան 4 տոկոսով: Քանի որ կայանը ստիպված էր վերագործարկվել շահագործման մեջ մտնելուց անմիջապես հետո, հավելավճարը կիրառելի է միայն 2023 թվականի սեպտեմբերից: Վերագործարկման համար պահանջվել էր լրացուցիչ 3,2 մլն ԱՄՆ դոլար, որը ֆինանսավորվել է սեփական կապիտալի համալրման հաշվին: Հիմնական միջոցների մնացորդը այժմ կազմում է 241.2 մլն ԱՄՆ դոլար՝ մաշվածության նվազեցումից հետո:

Առկա է նաև պետության կողմից երաշխավորված՝ ՀԷՑ ընկերության պարտավորություն՝ արտադրված ամբողջ էլեկտրաէներգիան գնելու, իսկ չգնելու դեպքում՝ վճարել հզորության վճար:

Հաշվի առնելով կայանի հաջող շահագործման հանձնումը՝ չնայած կորոնավիրուսային համավարակի հետևանքով առաջացած ուշացումներին, ծրագրի ֆիսկալ ռիսկի կարգավիճակը կարող էր փոփոխվել ցածրի, սակայն ռուս-ուկրաինական նոր ճգնաժամի անորոշություններով պայմանավորված ծրագրի հարկաբյուջետային ռիսկի կարգավիճակը պահպանվում է միջին մակարդակում:

«Մասրիկ-1» արևային ֆոտովոլտային կայան

Այս նախագծի շրջանակներում կառուցվում է 55 ՄՎտ դրվածքային հզորությամբ արևային էլեկտրակայանը: Այն պատկանում է La Providencia և FRV իսպանական մասնագիտացված խմբերին և ֆինանսավորվում է IFC-ի, EBRD-ի և Ֆինլանդիայի ՀՀ կառավարության վարկային միջոցներով: Պայմանագրի ֆինանսական կայացումը տեղի է ունեցել 2020թ. հուլիսին, իսկ աշխատանքները նախատեսվում էր ավարտել 2022թ-ին, սակայն 2022 թվականի հուլիսին կնքված լրացուցիչ համաձայնագրով այն հետաձգվել է մինչև 2023 թվականի սեպտեմբեր, քանի որ արձանագրվել էին էական ուշացումներ: Ժամկետներից ուշացումները շարունակվել են՝ չնայած աշխատանքները աստիճանաբար վերսկսվել են 2022 թվականի սեպտեմբերյան ադրբեջանական ներխուժմամբ պայմանավորված երկարատև ընդհատումից հետո (Մասրիկի տեղամասը սահմանին շատ մոտ է): Ավարտի ժամկետը հետաձգվել է մինչև 2024 թվականի հուլիս, սակայն ընկերությունն այժմ դիմել է ևս մեկ երկարաձգման՝ մինչև 2024 թվականի դեկտեմբեր:

Ներկայումս ծրագրի ծախսերը գնահատվում են 45.5 մլն ԱՄՆ դոլար, սկզբնական գնահատականից ցածր՝ պայմանավորված ՖՎ պանելների գների նվազմամբ:

Նախագծի իրականացման արդյունքում շինարարության ավարտից մեկ տարվա ընթացքում առաջանում են մի շարք պայմանական պարտավորություններ, մասնավորապես՝ արտադրվող էլեկտրաէներգիայի համար գնման երաշխիք ՀՀ կառավարության կողմից, և անբարենպաստ իրադարձությունների դիմաց լրացուցիչ հատուցման իրավունք:

Մինչ այդ և գործարքի ֆինանսական կայացումից հետո հիմնական պայմանական պարտավորությունը վաղաժամ դադարեցումն է՝ ՀՀ կառավարության տարբեր հիմքերով գործողությունների հետևանքով. (ա) ՀՀ կառավարությունը չի կատարում իր կողմից պարտավորություն հանդիսացող որևէ վճար, (բ) որևէ պետական մարմնի կողմից էքսպրոպրիացիայի կամ հարկադիր ձեռքբերման է ենթարկվել ծրագրի տարածքը, կայանը, գ) ՀՀ կառավարությանը վերաբերող անվճարունակության դեպք, դ) Օրենքի փոփոխություն կամ անբարենպաստ պայմանի դեպք, որը վերացված կամ փոփոխված չէ 180 (մեկ հարյուր ութսուն) օրվա ընթացքում և անհնար է դարձնում կայանի կառուցումը կամ շահագործումը: Կառուցապատողի կողմից. ե) ՀՀ կառավարության կողմից Համաձայնագրի ցանկացած այլ էական խախտում, եթե այդ խախտումը չի վերացվել 180 օրվա ընթացքում:

Հաշվարկվել է առավելագույնը 19.4 մլրդ ՀՀ դրամի փոխհատուցում, որը շինարարության ավարտից հետո կնվազի՝ պայմանավորված պայմանագրով սահմանված վաղաժամ դադարեցման այլ դրույթի կիրառելիությամբ: Պայմանական պարտավորություններին կարող է ավելացվել ավելի քան 5 մլրդ ՀՀ դրամ՝ անբարենպաստ իրադարձություն հայտարարելու ռիսկի հիմքով, սակայն, հաշվի առնելով դրույթի մեկնաբանությունը, համաձայն որի փոխհատուցումը չի կարող պահանջվել, քանի դեռ շինարարական աշխատանքները չեն ավարտվել, այդ գումարը չի ներառվում: Արտադրված ամբողջ էլեկտրաէներգիան գնելու, կամ փոխհատուցելու հետ կապված պայմանական պարտավորությունը դեռ չի կարող չափվել:

Նախորդ տարվա համեմատ, նվազել են և՛ տվյալ ծրագրի ռիսկի նյութականացման հավանականությունը, և՛ ռիսկի չափը: Դա պայմանավորված է նրանով, որ կայանի կառուցման աշխատանքները ակտիվ փուլում են, և պահանջվող ներդրումների ծավալը նվազել է՝ արևային վահանակների գների միջազգային միտումների պատճառով: Այնուամենայնիվ, քանի դեռ արևային կայանը չի հանձնվել շահագործման և հետաձգումների ռիսկը, այդ թվում՝ սահմանին հնարավոր լարվածությունների պատճառով, մշտապես պահպանվում է, հարկաբյուջետային ռիսկի կարգավիճակը պահպանվում է էական:

Աղյուսակ 8. *ՊՄԳ ծրագրերի գծով պայմանական պարտավորությունների ամփոփ հաշվարկ, 2023թ., (մլրդ ՀՀ դրամ)*

Ծրագրի անվանում	Այլ ՊՊ	Վաղաժամ դադարեցում	Ընդհանուր ՊՊ	ՀՆԱ նկատմամբ
«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ		103.6	103.6	1.09%
«Վեոլիա Ջուր» ՓԲԸ		60.3	60.3	0.63%
«Արմենիա միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ	5.3	175.6	180.9	1.81%

«Քոնթուր Գլոբալ հիդրո կասկադ» ՓԲԸ		100	100	1.05%
«Արմփաուեր» ՓԲԸ		111	111	1.17%
«Էֆարվի Մասրիկ» ՓԲԸ		19.4	19.4	0.20%
Ընդամենը	**5.3**	**569.9**	**575.2**	**6.05%**

Ծանոթագրություններ. «Վեոլիա Ջուր» ՓԲԸ մասով Աէրացիայի կայանը մինչև 13 մլրդ ՀՀ դրամ արժեքով այլևս ներառված չէ: «Էֆարվի Մասրիկ» ՓԲԸ պարագայում հիմնվում ենք այն ենթադրության վրա, որ նախքան շինարարական աշխատանքների ավարտը հետ գնման դեպքում այլ փոխհատուցում չի կարող պահանջվել: «Արմփաուեր» ՓԲԸ դեպքում, որի շինարարական ծախսերն արդյունքում ավելի ցածր են եղել, 1 տարին լրանալուց հետո 15 տոկոսի չափով հավելավճարի հաշվարկը իրականացվել է, քանի որ կայանը վերագործարկվել է 2022 թվականի Սեպտեմբերին: ԱՄՆ դոլարով արտահայտված գումարների փոխարկման համար կիրառվել է 400 ՀՀ դրամ 1 ԱՄՆ դոլարի դիմաց փոխարժեքը: 2023թ. ՀՆԱ-ն՝ 9,505 մլրդ ՀՀ դրամ:

2020թ. վերջին պայմանական պարտավորությունների հանրագումարը ՀՆԱ-ի նկատմամբ կազմում էր ՀՆԱ 8.26%: 2021-2023 թվականների ընթացքում ՀՆԱ-ի աճը և դրամի արժևորումը նվազեցրել են ցուցանիշը մինչև 6.05% նախորդ զեկույցում այդ ցուցանիշը կազմում էր 6.52%:

2021 թվականի հունիսի 18-ի ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվել է Հայաստանում արդյունաբերական մասշտաբի «Այգ-1» արևային ֆոտովոլտային ծրագրի շրջանակում կազմակերպված մրցույթի ընթացակարգի արդյունքները՝ հաղթող ճանաչելով «Աբու Դաբի Ֆյուչեր Էներջի Քոմփանի» ՀԲԸ («Մասդար»): Ծրագրի իրականացման շուրջ կնքվել է կառավարության աջակցության համաձայնագիր, իսկ ֆինանսական կայացման համար նախապես սահմանված վերջնաժամկետը՝ 2022 թվականի դեկտեմբեր ամիսը, երկարաձգվել է մինչև 270 օրով, սակայն 2023 թվականի հունիսին այն երկարաձգվել է ևս մեկ անգամ՝ մինչև 2023 թվականի դեկտեմբերի 25: Ներկայումս կողմերը նորից բանակցում են ժամկետի երկարաձգման, ինչպես նաև վաղաժամ դադարեցման պայմանների փոփոխության վերաբերյալ: Նախատեսվում է իրականացնել մոտ 174 մլն ԱՄՆ դոլարի չափով ներդրում (ՀՆԱ-ի մոտ 0.7 %):: Ծրագրի նախապատրաստման փուլում կնքվել է համատեղ զարգացման համաձայնագիր «Աբու Դաբի Ֆյուչեր Էներջի Քոմփանի» ՀԲԸ և «Հայաստանի Հետաքրքրություն-ների ֆոնդ» պետական ՓԲԸ ի միջև, որում պարունակվող պարտավորությունների վերաբերյալ լիարժեք տեղեկատվություն առկա չէ:

3.3.5 ԲՆԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԴԱԾԻՆ ԱՂԵՏՆԵՐԻՑ ԾԱԳՈՂ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐ

Աղետների ռիսկը համարվում է Հայաստանում ֆիսկալ ռիսկերի արդիական աղբյուրներից մեկը՝ հաշվի առնելով երկրի «աղետների պրոֆիլը», որը ներառում է էական երկրաֆիզիկական (հատկապես՝ երկրաշարժերի և սողանքների), եղանակային պայմանների հետ կապված (հիդրոօդերևութաբանական և այլ), ինչպես նաև մարդածին ռիսկեր:

Համաձայն ՄԱԿ Զարգացման Ծրագրի տվյալների՝ Հայաստանը աշխարհում ամենից շատ աղետների ենթակա 60 երկրների շարքում է: Հայաստանը բազմաթիվ վտանգներ ունեցող երկրի տիպիկ օրինակ է՝ խոշոր երկրաշարժերի, ջրհեղեղների, երաշտների, ծայրահեղ

եղանակային պայմանների (ցրտահարություն և ջերմային ալիքներ), ուժեղ քամիների, կարկուտի, փոթորիկների, սելավների, սողանքների և այլնի պատմությամբ:

Երկրաֆիզիկական ռիսկերից ՀՀ-ում 7.0 կամ ավելի բարձր մագնիտուդ ուժգնությամբ երկրաշարժի դեպքում կարող է փլուզվել Երևան քաղաքի շենքերի մեծամասնությունը՝ խլելով մոտ 300,000 մարդու կյանք: Նախնական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 2012թ. տվյալներով տնտեսական վնասները կարող են հավասար լինել՝ ընդհուպ ՀՆԱ-ի 100 տոկոսին[54]:

2017 թվականին Համաշխարհային բանկը հաշվարկել է 1.3 միլիարդ ԱՄՆ դոլարի չափով «ֆինանսավորման բաց»՝ Սպիտակի երկրաշարժի նման ևս մեկ ուժեղ երկրաշարժի դեպքում[55]: Սակայն, համաձայն աղետների նվազեցման և վերականգնման գլոբալ հիմնադրամի կողմից 2017 թվականին կազմված՝ Հայաստանի աղետների ռիսկի պրոֆիլի, ընդհանուր տնտեսական ազդեցությունը կարող է շատ ավելի մեծ լինել, չնայած հնարավոր զոհերի գնահատված ավելի փոքր քանակին[56]:

ՇՄՆ քարտեզագրման արդյունքներով արձանագրվել է մոտ **2500 սողանքային տարածք**, որոնց համար 2023թ. պետական բյուջեի «Սողանքային տեղամասերի ինժեներաերկրաբանական հետազոտություններ» հոդվածով նախատեսվել է 61,290.0 հազար ՀՀ դրամ, իսկ որպես սողանքներից բխող խնդիրների ֆինանսավորման աղբյուր ներկայումս դիտարկվում է ՀՀ կառավարության պահուստային ֆոնդը:

Ինչ վերաբերում է **եղանակային պայմանների** հետ կապված ռիսկերին, ապա կլիմայի փոփոխությունը համարվում է աղետների և՛ հաճախականության, և՛ ուժգնության վրա ազդող էական գործոն: Այդ իսկ պատճառով կարևոր է ներդրումներ կատարել կլիմայի փոփոխության հարմարվողականության և աղետների ռիսկի համապարփակ նվազեցման ուղղություններով: Վերջին 9 տասնամյակի ընթացքում գրանցվել է միջին ջերմաստիճանի կայուն աճ և միջին տեղումների կայուն նվազում՝ համաշխարհային միջինից բարձր և վերջին 3 տասնամյակների ընթացքում արագացող միտումներով: Հայաստանի տարածքի համար 1961- 1990թթ. միջինի (5.50° C) նկատմամբ կանխատեսվում է տարեկան միջին ջերմաստիճանի աճ՝ մինչև 1.60°C-ով՝ 2040թ., 3.30°C-ով՝ 2070թ. և 4.70°C-ով՝ 2100թ.: Մթնոլորտային տեղումների դեպքում ակնկալվում է 1961-1990թթ. տարեկան տեղումների միջին քանակի (592 մմ) նկատմամբ նվազում՝ մինչև 2.7%-ով՝ 2040թ., 5.4%-ով՝ 2070թ. և 8.3%-ով՝ 2100թ. (տե՛ս աղյուսակ 9)[57]:

Աղյուսակ 9. *Տարեկան միջին ջերմաստիճանի (T, °C) և տեղումների քանակի (P, մմ) կանխատեսվող արժեքները Հայաստանի տարածքում՝ ըստ բարձրության տարբեր գոտիների (մ) METRAS մոդելով՝ համաձայն RCP8.5 սցենարի*[58]

Բարձրության գոտիներ, մ	1961-1990		2011-2040		2041-2070		2071-2100	
	T, °C	P, մմ	T, °C	P, մմ	T, °C	P, մմ	T, °C	P, մմ
< 800	11.2	467	12.8	452	14.5	439	15.9	426
800 - 1000	10.8	343	12.4	332	14.1	322	15.5	313
1000 - 1500	8.4	502	10	486	11.7	472	13.1	458
1500 - 2000	5.5	592	7.1	573	8.8	557	10.2	540

[54] Աղբյուրը՝ ADB, Country Partnership Strategy: Armenia, 2014–2018.
[55] Աղբյուրը՝ World Bank, Disaster Risk Finance Country Note: Armenia, 2017.
[56] Աղբյուրը՝ World Bank, Global Facility for Disaster Reduction and Recovery (GFDRR), Disaster Risk Profile: Armenia, 2017.
[57] «2021-2025 թվականների Հարմարվողականության ազգային ծրագիր»: Տվյալների սկզբնաղբյուր. ՄԱԿ կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի ներքո կլիմայի փոփոխության մասին Հայաստանի 4-րդ ազգային հաղորդագրություն (2020թ.):
[58] 1991-2010թթ-ի տեղեկատվությունը բացակայում է:

2000 - 2500	3.3	660	4.9	640	6.6	621	8	603
2500 - 3000	1.6	732	3.2	713	4.9	692	6.3	671
> 3000	-0.7	800	0.9	776	2.6	753	4	731
Հայաստան	5.5	592	7.1	576	8.8	560	10.2	543

2022թ.-ին ՀՀ-ում գրանցվել է 14,262 արտակարգ դեպք, որոնցից 4.9%-ը բաժին է ընկել տարերային վտանգավոր երևույթներին: Արտակարգ դեպքերի 74.4%-ը բաժին է ընկել **մարդածին արտակարգ դեպքերին** (տե՛ս գծապատկեր 19)[59]:

Գծապատկեր 19. *Արտակարգ իրավիճակների բաշխումն՝ ըստ դեպքերի (%)*



Գծապատկեր 20. *Արտակարգ դեպքերը (քանակ)*



2020 թվականին տարերային աղետների, այդ թվում՝ կարկուտի, ուժեղ քամիների, ցրտահարության, սելավների պատճառած ընդհանուր վնասը կազմել է 3.8 մլրդ դրամ: 2021 թվականին այն կազմել է շուրջ 3.1 մլրդ դրամ, որոնց հիմնական պատճառներն են հանդիսացել ուժեղ քամիները, երաշտը, տորնադոները և երկրաշարժերը: 2022 թվականին կրած վնասը կազմել է 727 մլն դրամ, ինչը հիմնականում պայմանավորված է եղել այնպիսի տարերային աղետներով, ինչպիսիք են ուժեղ քամիները, կարկուտը, առատ ձյունը և երկրաշարժը, իսկ 2023թ.-ին 892 մլն դրամ, որը պայմանավորված է եղել ուժեղ քամիներով, հորդառատ անձրևներով ու կարկատով: Վնասի գնահատումն իրականացվում է՝ համաձայն ՀՀ կառավարության թիվ 1582-Ն որոշման: Անհրաժեշտ է նշել, որ գնահատման բարդությունների պատճառով որոշ աղետներ չեն գնահատվել:

Բացի վերը նշված վնասների գնահատականից՝ 2024 թվականի մայիսի 25-ից 26-ը ընկած ժամանակահատվածում հորդառատ անձրևի հետևանքով ՀՀ Լոռու և Տավուշի մարզերում Դեբեդ, Աղստև և Տաշիր գետերը վարարել են, ինչը մեծ ավերածությունների պատճառ է դարձել Լոռու և Տավուշի մարզերում: Հայաստանի կառավարության խնդրանքով Միավորված ազգերի կազմակերպության կողմից իրականացված՝ բազմոլորտային կարիքների արագ գնահատում

[59] Աղբյուրը՝ Արմստատ, շրջակա միջավայրը և բնական պաշարները ՀՀ-ում:

(ԲԿԱԳ) վերլուծական շրջանակն օգտագործվել է Լոռու և Տավուշի մարզերի տուժած տարածքներում առաջնային հումանիտար կարիքները բացահայտելու համար: Ստորև ներկայացված են գնահատման հիմնական բացահայտումները:

Ջրհեղեղները զգալի վնաս են հասցրել ենթակառուցվածքներին՝ ներառյալ ճանապարհներին, կամուրջներին, բնակելի և ոչ բնակելի շենքերին, ինչի հետևանքով տուժել է մոտ 40,839 մարդ, գրանցվել է 4 զոհ և 2,382 մարդ ժամանակավորապես տարհանվել է: Զգալի վնաս է հասցվել բնակարաններին և ենթակառուցվածքներին, որի հետևանքով ջրի տակ են անցել 464 բնակելի տուն, որոնցից 217-ը մասամբ վնասվել են կամ ամբողջությամբ ավերվել: Վնասների մեծ մասը գրանցվել է տրանսպորտի ոլորտում՝ 41,8 կմ ճանապարհներ, 1,8 կմ երկաթուղի, 3,3 կմ գետապաշտպան թմբեր, 24 կամուրջներ (ներառյալ 5 հիմնականները, որոնք կապված են մայրուղիների հետ), և 44 ավելի փոքր հետիոտնային և կոմունալ նշանակության կամուրջներ: Ջրի և սանիտարահիգիենիկ ապահովման հատվածը լուրջ ազդեցություն է կրել՝ վնասվել կամ ավերվել են 3,4 կմ ջրի և կոյուղու խողովակներ:

Հայաստանի կառավարությունը և միջազգային կազմակերպությունները արձագանքել են որոնողափրկարարական, մաքրման միջոցառումներով և կամավորների ներգրավմամբ: Կառավարությունը տուժած շրջանները հայտարարել է աղետի գոտիներ:

Հայաստանում փաստացի առկա են ֆինանսական պաշտպանության ռազմավարության որոշ բաղադրիչներ. աղետներին արձագանքման անհրաժեշտության դեպքում օգտագործվում է Կառավարության պահուստային ֆոնդը, աղետների դեպքում երբեմն կարող են կիրառվել պետական բյուջեի միջոցների վերաբաշխումներ, ինչպես նաև Covid-19 համավարակով պայմանավորված ճգնաժամի ընթացքում Հայաստանը ներգրավել է հետաղետային ֆինանսավորում:

ՀՀ-ում առկա է աղետների ռիսկի կառավարման (այսուհետ՝ ԱՌԿ) 2023-2030թթ. ռազմավարություն, որը ընդգրկում է ԱՌԿ պետական քաղաքականության շրջանակը[60]:

ՀՀ-ում իրականացվում է պետական աջակցության՝ գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական փորձնական ծրագիր, որը իրականացվում է Գերմանական զարգացման բանկի (KfW) հետ համատեղ՝ համաձայն ՀՀ կառավարության 2019թ. թիվ 1485-Լ որոշման:

Հաշվի առնելով Աղետների ռիսկի կարևորությունը՝ Ասիական Զարգացման Բանկի տեխնիկական աջակցությամբ ՖԵՆ-ի կողմից մշակվել և նախապատրաստվել է շրջանառության «Աղետների դեմ ֆինանսական պաշտպանության պլանի վերաբերյալ» հայեցակարգային մոտեցումներ:

2023 թվականին գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման համար պետական աջակցության ծրագրի շրջանակներում ապահովագրվել են ծիրան, խաղող, դեղձ, սալոր, խնձոր, կեռաս, բալ, ձմերուկ, սեխ, կարտոֆիլ, աշնանացան/գարնանացան ցորեն, գարի և վարսակ մշակաբույսերը: Գյուղատնտեսական տարվա համար կնքված ապահովագրական պայմանագրերի վերաբերյալ

[60] ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 5-ի N 1717-Լ որոշում, հավելված N 1, աղետների ռիսկի կառավարման 2023-2030 թվականների ռազմավարություն:

տեղեկատվությունը ներկայացված է Աղյուսակ 10-ում՝ համաձայն գյուղատնտեսությունը ապահովագրողների ազգային գործակալության կողմից տրամադրած տեղեկատվության:

2024 թվականին ծրագրի պետական բյուջեով ֆինանսավորման չափը սահմանվել է 1,521,688.2 հազ. ՀՀ դրամ, որը հավասարապես բաժանվել է ՀՀ կառավարության համաֆինանսավորման և արտաքին միջոցների (KfW) միջև, յուրաքանչյուրը՝ 760,844.1 հազ. դրամ:

Աղյուսակ 10. *Գյուղատնտեսական տարվա համար կնքված ապահովագրական պայմանագրերը, 2020-2023թթ.*

	2020	2021	2022	2023
Պայմանագրերի թիվ, հատ	1546	4279	5091	10192
Ապահովագրված տարածք, հա	2363.3	5832	6444	11662
Համախառն ապահովագրավճար, մլն դրամ	130.5	474.6	866.3	1,800
Սուբսիդիա, մլն դրամ	69	275.9	513.6	1,100
Հատուցումներ, մլն դրամ	151.3	319.1	1,300	2700
Հատուցումների քանակ, հատ		1517	2167	3864

2016թ. մեկնարկել է «Հանրակրթական դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիրը», որի շրջանակներում ընդգրկված են 46 դպրոցներ, որոնցից 16-ը արդեն կառուցվել են, 20-ը գտնվում են կառուցման փուլում, իսկ 10-ը՝ գտնվում են նախագծման և/կամ փորձաքննության փուլում:

3.3.6 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ, ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԴԵԳՐԱԴԱՑԻԱՅԻՑ ԵՎ ՋԵՐՄՈՑԱՅԻՆ ԳԱԶԵՐԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԱՎԵԼԱՑՈՒՄԻՑ ԾԱԳՈՂ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐ

Արդյունաբերական աճը զգալի բնապահպանական մարտահրավերներ է ստեղծում, ինչպիսիք են շրջակա միջավայրի աղտոտումը, կլիմայի փոփոխությունը, կենսաբազմազանության կորուստը և նմանատիպ այլ գլոբալ խնդիրներ, որոնք էական վտանգ են ներկայացնում տնտեսության ու կենսագործունեության համար: Այդ պատճառով բնապահպանական նկատառումներն իրենց տեղն են գտնում հարկաբյուջետային և ֆինանսական քաղաքականության մեջ:

Գծապատկեր 21. *Ջերմոցային գազերի արտանետումների դինամիկայի ուսումնասիրությունն՝ ըստ սեկտորների, 1990-2019թթ.*[61]



Ինչպես երևում է գծապատկերի 21-ից տարբեր սեկտորներից արտանետումների մասնաբաժինների հարաբերակցությունը կայուն է: «Էներգետիկա» սեկտորից առաջացող արտանետումները շարունակաբար պահպանել են բացարձակ գերակշռությունը, իսկ ընդհանուր առմամբ, 1990թ. համեմատությամբ ՋԳ արտանետումները նվազել են մոտ 57%-ով՝ հիմնականում պայմանավորված «Էներգետիկա» սեկտորից արտանետումների կրճատումով: Այդ կրճատումը հիմնականում պայմանավորված է տնտեսության կառուցվածքային փոփոխություններով, Էներգետիկ արտադրություններում, Տրանսպորտ և Բնակարանային ենթակատեգորիաներում էկոլոգիապես ավելի մաքուր վառելիքի՝ բնական գազի, լայնածավալ օգտագործմամբ (ածուխի և մազութի օգտագործումը բացակայում է), ատոմային էլեկտրակայանի վերաթողարկմամբ, 2000 թվականներից փոքր հիդրոէներգետիկայի աննախադեպ աճով և վերջին տարիներին արևային էներգետիկայի զարգացման բարենպաստ միտումներով:

Բնապահպանական ռիսկերի կառավարման նպատակով հնարավոր տնտեսական և ֆիսկալ վնասների հաշվարկման համար դեռևս մշակված չեն սցենարների վերլուծության և սթրես-թեստերի մեթոդաբանություններ, ուստի ֆիսկալ ռիսկերի գնահատման շրջանակներում բնապահպանական ռիսկերին հնարավոր է դարձել անդրադարձ կատարել միայն փաստերի (ստորև նշված) արձանագրման միջոցով:

ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը (ՇՄՆ) 11.10.2019 N337-L հրամանով նույնականացրել է հնարավոր բնապահպանական պարտավորություններ ենթադրող 44 տեղամաս, որոնք հիմնականում հանքարդյունաբերական գործունեության արդյունք են համարվում, և 2023 թվականի ընթացքում վերականգնում պահանջող նոր տեղամասեր չեն արձանագրվել, հետևաբար, 2019 թվականից ի վեր այդ տեղամասերի քանակը չի փոխվել: Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների նվազեցման նպատակով ՇՄՆ առանձնացրել է 10 փակված պոչամբարի և արտադրական լցակույտի տեղամասեր: 2023 թվականի ՀՀ պետական բյուջեով հատկացված 137.9 մլն ՀՀ դրամի շրջանակներում կազմվել են Փխրուտի (69.0 մլն. ՀՀ դրամ) և Նազիկի (68.9 մլն. ՀՀ դրամ) փակված պոչամբարների ռեկուլտիվացիայի նախագծանախահաշվային փաթեթները: Ռեկուլտիվացիայի

[61] ՀՀ ՇՄՆ «ՀՀ ջերմոցային գազերի ազգային կադաստրի հաշվետվություն, 1990-2019թթ.»:

աշխատանքների արժեքը կազմել է 925.0 մլն. ՀՀ դրամ, որից Փխրուտ փակված պոչամբարի ռեկուլտիվացիայի արժեքը 675.0 մլն. ՀՀ դրամ է, իսկ Նազիկ փակված պոչամբարինը՝ 250.0 մլն. ՀՀ դրամ: Քանի որ արդեն 2 տեղամասի ռեկուլտիվացիայի համար կազմված նախագծանախահաշվային փաստաթղթերով արժեքները գնահատվել են, ուստի ընդհանուր բոլոր առաջնահերթ տեղամասերի համար ծախսերի ընդհանուր գնահատականը կարող է տրվել, երբ յուրաքանչյուր տեղամասի համար կազմվեն նախագծանախահաշվային փաստաթղթերով գնահատված արժեքները:

Հնարավոր ռիսկերի աղբյուր է հանդիսանում Նուբարաշենի ժամկետանց թունաքիմիկատների գերեզմանոցը (ՆԹԳ), որը կառուցվել է 1970թ.՝ արգելված և ժամկետանց թունաքիմիկատները մատակարարման շղթայից հեռացնելու նպատակով: Հնարավոր բնապահպանական ռիսկը պայմանավորված է տարածքում թաղված մաքուր թունաքիմիկատների և դրանց մետաբոլիտների տարալվացման կամ փոշու տեսքով օդում տարածման հետ: Ռիսկի կառավարման նպատակով ՇՄՆ 2023թ. ՀՀ պետական բյուջեում «Նուբարաշենի գերեզմանոցի մաքրման և թափոնի ոչնչացման աշխատանքների» 1032 տոննայի համար ամփոփ հաշվարկ է ներկայացրել՝ առանց այրման 1082234.4 հազար ՀՀ դրամի չափով, որի այրման համար գումարը նախատեսվել է 2024թ. պետական բյուջեով:

Բնապահպանական ծախսերի վերականգման նպատակով անհրաժեշտ է դիտարկել նաև Սևանա լճից բխող հնարավոր բնապահպանական ռիսկերը.

Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման աշխատանքներ, որոնք մեկնարկել են 2005 թվականից և մինչ օրս իրականացվել է 24 հա ջրածածկ անտառային տարածքի մաքրում: 2023 թ. այդ աշխատանքների իրականացման համար պետական բյուջեով նախատեսվել է 118,163.2 հազար ՀՀ դրամ, որը չի իրականացվել՝ մրցույթը չկայացած լինելու պատճառով և հատկացված գումարն ուղղվել է ՀՀ պետական բյուջե:

2023 թվականին Սևանա լճի առափնյա հատվածներում, ծովի մակարդակից 1901,5 մետր բացարձակ նիշից ցածր, ապօրինի կառուցված և քանդման ենթակա շենք-շինությունների ապամոնտաժման (քանդման) աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռք բերման նպատակով հատկացվել է 7,194.0 հազար ՀՀ դրամ, որն ամբողջապես ծախսվել է:

Հետխորհրդային ճգնաժամային տարիների ընթացքում մասշտաբային ծառահատումների հետևանքով անտառային տարածքների կրճատման փոխհատուցման և սողանքային ռիսկերի նվազեցման նպատակով 2013 թվականից ՀՀ-ն իրականացվում է անտառապատման և անտառավերականգնման աշխատանքներ: Անտառվերականգնման և անտառապատման աշխատանքների շրջանակներում 2023 թվականին իրականացվել է 436 հա անտառվերականգնման ու անտառապատման աշխատանքներ՝ որից 226 հա պետական բյուջեի միջոցներով, իսկ 210 հա արտաբյուջետային միջոցների հաշվին: Աշխատանքների իրականացման համար 2023թ. պետական բյուջեով պլանավորվել է ծախսել 413,011.7 հազար ՀՀ դրամ, սակայն հատկացվող գումարը ճշգրտվել է 665,569.7 հազար ՀՀ դրամի չափով, որն ամբողջապես հաշվետու տարում ծախսվել է:

3.3.7 ՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻՑ ԾԱԳՈՂ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐ

2024 թվականի մարտի 31-ի դրությամբ **ընդդեմ Հայաստանի Հանրապետության** Մարդու իրավունքների եվրոպական դատարանը կոմունիկացրել է 428 գործ (ընթացքում գտնվող

գործեր, որոնցով առկա չէ վերջնական դատական ակտ): 2023 թվականի ընթացքում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը 24 գործով (5 որոշում և 19 վճիռ) դիմումատուներին վճարել է 562 հազար եվրոյին համարժեք ՀՀ դրամ՝ որպես արդարացի փոխհատուցում: 2024 թվականի առաջին եռամսյակի ընթացքում ընդհանուր թվով Եվրոպական դատարանի 5 վճռով կատարվել է արդարացի փոխհատուցման գումարների վճարում, որը կազմել է 99,400 եվրոյին համարժեք ՀՀ դրամ:

Անհրաժեշտ է նշել, որ դիմումատուների կողմից պահանջված և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից հատկացված արդարացի փոխհատուցման գումարների միջև առկա է մեծ տարբերություն (տե՛ս գծապատկեր 22):

Գծապատկեր 22. *Դիմումատուների կողմից պահանջված և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից հատկացված արդարացի փոխհատուցման գումարը (հազար եվրո)*



ՀՀ մասնակցությամբ 2024 թվականի մարտի 31-ի դրությամբ առկա է 7 միջազգային արբիտրաժային/դատական գործ: Հարկ է նշել, որ 2023-2024թ. մարտի 31-ն ընդգրկող ժամանակահատվածում հայցվորներին գումարներ չեն վճարվել: Միջպետական գանգատների առնչությամբ հարկ է նկատի ունենալ, որ ներկայումս ընդդեմ Հայաստանի Հանրապետության ընթանում է թվով 5 միջազգային դատական/արբիտրաժային վարույթ, որոնցով հայցապահանջի չափ դեռևս ներկայացված չէ:

ՀՀ դատարաններում **ՀՀ ֆինանսների նախարարության մասնակցությամբ** պետության դեմ քննվող հայցերի քանակը 2024 թվականի մայիսի դրությամբ կազմում է 1,059, ընդհանուրը 3,489,181,853 ՀՀ դրամ, 88,529 ԱՄՆ դոլար, 3,600,000 չեխական կրոն և 16,100 ՌԴ ռուբլի հայցագնի չափով:

Բացի վերը նշված հայցերից առկա են նաև այլ հայցեր՝ **ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի**: Ներկայացված հայցերով ՀՀ դատարաններում 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ քննվում է 6,554 դատական գործ՝ 128.5 մլրդ ՀՀ դրամի չափով, իսկ 2024 թվականի մարտի 31-ի դրությամբ՝ 6,507 դատական գործ՝ 129 մլրդ ՀՀ դրամի չափով: 2023 թվականի ընթացքում դատական վարույթների շրջանակներում հայցվորներին վճարված ընդհանուր գումարը 2022 թվականի համեմատ նվազել է 18%-ով, իսկ 2024 թվականի առաջին եռամսյակի ընթացքում կազմել է 3 մլն ՀՀ դրամ (տե՛ս գծապատկեր 23):

Գծապատկեր 23. *2021-2023թթ. հայցվորներին վճարված գումարը (մլն ՀՀ դրամ)*



Անհրաժեշտ է նշել, որ ռիսկի իրական մակարդակը շատ ավելի ցածր է, քանի որ հայցվորները ոչ բոլոր գործերն են հաղթում, իսկ հաղթելու պարագայում վճռով հաճախ սահմանվում են ավելի փոքր գումարներ:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1.1. Հայաստանի Հանրապետության 2025-2027 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերն՝ ըստ պետական մարմինների կողմից իրականացվող ծրագրերի և ըստ բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչների

Հավելված 1.2. Հայաստանի Հանրապետության 2025-2027 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերով նախատեսված ծախսերն՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման

Հավելված 1.3. Հայաստանի Հանրապետության 2025-2027 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերով նախատեսված ծախսերն՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման

Հավելված 1.4. Հայաստանի Հանրապետության 2025-2027 թվականների պետական բյուջեների դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրներն՝ ըստ առանձին տարրերի

Հավելված 1.5. Հայաստանի Հանրապետության 2025-2027 թվականների պետական բյուջեի ծախսային ծրագրերի գծով վերջնական արդյունքի ցուցանիշները

Հավելված 1.6. 2025-2027 և 2024-2026 թվականների ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի համեմատական աղյուսակները

Հավելված 1.7. 2025-2027թթ ընթացքում նախատեսվող օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից ֆինանսավորումը (ըստ կնքված և բանակցային փուլում գտնվող համաձայնագրերի)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
ՀՀ կառավարության 2024 թվականի
04 հուլիսի N 1064-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐ

2025 - 2027

ԵՐԵՎԱՆ 2024

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱԳՆ	Արտաքին գործերի նախարարություն
ԱԺ	Ազգային ժողով
ԱԷՄԳ	Ատոմային էներգիայի միջազգային գործակալության
ԱՃԳԾԱ	Արդյունահանող ճյուղերի գլոբալ ծրագրային աջակցություն
ԱՃԹՆ	Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն
ԱՄՀ	Արժույթի միջազգային հիմնադրամ
ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԱՊՀ	Անկախ Պետությունների Համագործակցություն
ԲՏ	Բարձր տեխնոլոգիական
ԲԷՍՀ	Բարձր էներգիաների ստերեոսկոպիկ համակարգ
ԲՈՒՀ	Բարձրագույն ուսումնական հաստատություն
ԳԱԱ	Գիտությունների ազգային ակադեմիա
ԳՏՃՄ	Գիտություն տեխնոլոգիա ճարտարագիտություն մաթեմատիկա
ԵԱՀԿ	Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն
ԵԱՏՄ	Եվրասիական տնտեսական միություն
ԵԽ	Եվրոպայի խորհուրդ
ԵՄ	Եվրոպական միություն
ԵՏՀ	Եվրոպական տնտեսական համագործակցություն
ԶԼՄ	Զանգվածային լրատվության միջոց
ԿԲ	Կենտրոնական բանկ
ՀԱԷԿ	Հայկական ատոմային էլեկտրակայան
ՀԱՊԿ	Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն
ՀԸԳՀ	Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԺԾԾ	Միջնաժամկետ ծախսերի ծրագիր
ՄՀՄԻ	Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտ
ՊԵԿ	Պետական եկամուտների կոմիտե
ՊՕՊ	Պետական գանձապետական պարտատոմսեր
ՌԴ	Ռուսաստանի Դաշնություն
ՍԴ	Սահմանադրական դատարան
ՎԿ	Վիճակագրական կոմիտե
ՏԱՑ	Տնտեսական ակտիվության ցուցանիշ
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՏՏ	Տեղեկատվական տեխնոլոգիա
ՓՄՁ	Փոքր և միջին ձեռնարկատիրություն
ՖՆ	Ֆինանսների նախարարություն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍ I. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 9

ԳԼՈՒԽ 1. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ 10

1.1 ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ ԵՎ ՇՐՋԱՆԱԿ 10

1.2. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐ ԵՐԿՐՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ 13

1.3. ՀՀ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ 17

1.3.1. ՀՆԱ և տնտեսական աճ 17

1.3.1.1. Թիրախային տնտեսական աճի սցենար 22

1.3.2. Աշխատանքի շուկա 24

1.3.3. ՀՀ վճարային հաշվեկշիռ, արտահանում և ներմուծում 26

1.3.4. Արժութային շուկա և փոխարժեքներ 30

1.3.5. Գնաճ և դրամավարկային քաղաքականություն 32

1.4. ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՔՈՒՄ ԸՆԿԱԾ ԵՆԹԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 35

1.5. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԸ 38

1.5.1. ՀՀ տնտեսական աճի դեպի ներքև ուղղությամբ ռիսկեր 38

1.5.2. Տնտեսական աճի դեպի վերև ուղղությամբ ռիսկեր 39

1.6. ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ ՆԱԽՈՐԴ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ 40

ԳԼՈՒԽ 2. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ 42

2.1. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿ 42

2.2. ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 44

2.3. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ 47

2.4. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐ 53

2.5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԻՆ 56

2.6. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ 59

ԳԼՈՒԽ 3. ՀՀ 2025–2027ԹԹ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ 62

3.1. ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2025-2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ 62

3.2. ՀՀ 2025-2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ 64

ԳԼՈՒԽ 4. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿ 68

4.1. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԴԵՖԻՑԻՏԸ 68

4.2. 2024-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ՝ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ 68

4.3. ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԾԱԽՍԵՐՆ ԸՍՏ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ 72

4.4. 2024-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԸ 78

ՄԱՍ II. ԾԱԽՍԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ***79***

ՀՀ 2024-2026ԹԹ. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ **80**

1. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ 80
2. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ 87
3. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 89
4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ 90
5. ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ 91
6. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ 93
7. ԷԿՈՆՈՄԻԿԱ 95
8. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ 98
9. ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 99
10. ՖԻՆԱՆՍՆԵՐ 100
11. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 100
12. ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ 101
13. ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ 101
13. ԱՐՏԱՔԻՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆ 102
14. ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 102
15. ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ 104
16. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐ 105
17. ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ 107
18. ՌԱԴԻՈ ԵՎ ՀԵՌՈՒՍՏԱՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՀԵՌԱՐՁԱԿՈՒՄ 110
19. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ 110
20. ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ 111
21. ՀԱՆՐԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 112
21.1. ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ 112
21.2. ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ 113
21.3. ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ 114
21.4. ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ 116
21.5. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 117
21.6. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ 118
21.7. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ 119
21.8. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ 120
21.9. ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ 122
21.10. ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ 123
21.11. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ 125
21.12. ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ 125
21.13. ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ 128
21.14. ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ 129
21.15. ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ 130
21.16. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵ 131

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ***133***

1. ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2024-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ 134

Ներածություն ***134***

2. ԱՅԼ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ 170

3. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ **171**

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ ***220***

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Պետական միջնաժամկետ ծախսային ծրագիրը (այսուհետև՝ ՄԺԾԾ) ներկայացնում է ՀՀ կառավարության տնտեսական և հարկաբյուջետային, այդ թվում՝ պարտքային և ծախսային քաղաքականությունները եռամյա ժամանակահատվածում:

2025-2027թթ ՄԺԾԾ հիմնվում է ՀՀ կառավարության 2021-2026թթ ծրագրի[1] և ՀՀ կառավարության այլ ռազմավարական փաստաթղթերի վրա և միտված է այդ փաստաթղթերով ՀՀ կառավարության կողմից հռչակված քաղաքականության նպատակների, սահմանված առաջնահերթությունների և թիրախների ամբողջական և արդյունավետ ապահովմանը:

Այդ առումով, 2025-2027թթ միջնաժամկետ հատվածում ՀՀ կառավարության հարկաբյուջետային քաղաքականության նպատակներն են՝ ՀՀ անվտանգության ամրապնդումը, տնտեսական ենթակառուցվածքների զարգացումն ու հասնելիության բարձրացումը, մարդկային կապիտալի զարգացումը:

ՀՀ կառավարության ծրագրի առաջնահերթություններին համահունչ, միջնաժամկետ հատվածում կիրականացվեն սոցիալական, կրթական, առողջապահական, ենթակառուցվածքային բնույթի մի շարք առաջնահերթ միջոցառումներ, որոնց արդյունքում ի թիվս այլ թիրախների, կապահովվի հետևյալ առանցքային թիրախների իրագործումը.

- առողջապահությանն ուղղվող ծախսերի առաջանցիկ աճ ՀՆԱ-ի նկատմամբ,
- առողջության համապարփակ ապահովագրության համակարգի ներդնում, ինչը կապահովի քաղաքացիների համար առողջապահական ծառայությունների հասանելիությունն ու մատչելիությունը,
- ԿԳՄՍՆ գծով ծախսերը կպահպանվեն ՀՆԱ-ի 3.3 տոկոսի մակարդակում,
- մասնագիտական կրթության ոլորտում կմշակվեն և կներդրվեն տնտեսության ժամանակակից պահանջներից բխող նոր մասնագիտությունների կրթական ծրագրեր՝ մեծացնելով շրջանավարտների մրցունակությունն աշխատաշուկայում, բարձրագույն կրթության ծրագրերում կխթանվի գիտահետազոտական աշխատանքների իրականացումը,
- հանրակրթական դպրոցների ուսուցիչների, նախնական և միջին մասնագիտական, արտադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների ատեստավորման արդյունքում ուսուցիչների աշխատավարձերի շեշտակի աճի ապահովում,
- մինչև 2027թ-ը առնվազն 500 մանկապարտեզների և 300 դպրոցների կառուցման, հիմնանորոգման և վերանորոգման՝ ՀՀ կառավարության ծրագրով սահմանված թիրախի ապահովում՝ այդ թվում ապահովելով դրանց ամբողջական հագեցումը անհրաժեշտ գույքով և սարքավորումներով,
- ընտանեկան/ անապահովության նպաստների համակարգի բարելավում,
- 3 և ավելի երեխա ունեցող ընտանիքներին դրամական աջակցության ծավալների ավելացում,

[1] ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ն որոշում

- շարունակվելու են տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործունեություն իրականացնող առևտրային կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին պետական աջակցության տրամադրումը,
- շարունակվելու են ջրային պաշարների մակերևութային հոսքի կառավարման նպատակով ջրամբարաշինության ծրագրերը, որի արդյունքում կապահովվի ջրային ռեսուրսների պաշարների ավելացում և ջրային հոսքերի կառավարման համակարգի արդյունավետության բարձրացում,
- շարունակվելու են ՀՀ-ում ճանապարհային ցանցի զարգացմանն ուղղված՝ տարեկան առնվազն 500 կմ ճանապարհների հիմնանորոգման և միջին նորոգման աշխատանքների իրականացումը, կշարունակվի Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի կառուցումը և այլն:

Վերոհիշյալ նպատակներին հասնելու ու թիրախներն ապահովելու համար ձևավորվել է այնպիսի միջնաժամկետ մակրոտնտեսական և հարկաբյուջետային շրջանակ, որը մի կողմից կապահովի անհրաժեշտ ռեսուրսներ ՀՀ կառավարության ռեֆորմների արդյունավետ իրագործման համար, իսկ մյուս կողմից համաշխարհային տուրբուլենտ ժամանակաշրջանում կպահպանի հետագա կայուն զարգացման համար անկյունաքարային նշանակություն ունեցող մակրոտնտեսական և հարկաբյուջետային կայունությունը: Այս մոտեցումը թույլ կտա անհրաժեշտ միջավայր և հենասյուներ ձևավորել Հայաստանը տարածաշրջանում մրցունակ, նորարար ու արդար տրանսպորտային և տոխնոլոգիական հանգույց դարձնելու՝ ՀՀ կառավարության տեսլականի իրագործման համար:

Մասնավորապես, 2024 թվականի համար սպասվում է շուրջ 6.3% տնտեսական աճ, իսկ միջնաժամկետում՝ կանխատեսվում միջինում 5.7% աճ: Այս պայմաններում ՀՀ կառավարության ծրագրի 2021-2026թթ. միջինում առնվազն 7% տնտեսական աճը կապահովվի: Ընդ որում, վերջին տարիներին ՀՀ տնտեսական աճի ներուժը բարձրացել է՝ հասնելով 5.0-5.5%, որի վրա ի թիվս այլ գործոնների իրենց էական ազդեցությունն են թողել ՀՀ կառավարության կողմից ենթակառուցվածքներում ներդրումների շարունակական աճը, ՀՀ կառավարության կողմից աջակցվող տնտեսական զարգացման տեսանկյունից առաջնահերթ ոլորտներից մեկի՝ ՏՏ ոլորտի դրական զարգացումները, Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված մեր հայրենակիցների աշխատանքի շուկայում ինտեգրման ջանքերը: Այս աճը պահպանելու և ավելի բարձր՝ 7% կայուն աճի հասնելու համար ՀՀ կառավարությունը կշարունակի ներդնել լրացուցիչ ջանքեր՝ մարդկային և ֆիզիկական կապիտալում ներդրումների, մասնավոր ներդրումների, զբաղվածության և արտահանման խթանմանն ուղղված ռազմավարությունների արդյունավետ իրականացման, ինչպես նաև պետական համակարգի արդյունավետության ու հանրությանը մատուցվող ծառայությունների որակի բարձրացման ճանապարհով:

Միջինաժամկետ հատվածում հարկաբյուջետային քաղաքականությունն ուղղված կլինի նշված բարեփոխումների սահուն ընթացքը երաշխավորելու, տնտեսական և պաշտպանական ենթակառուցվածքներում, մարդկային կապիտալում ներդրումների մակարդակի էական բարձրացման միջոցով տնտեսության դիմակայունության ամրապնդմանն ու աճի ներուժի բարձրացմանը: Այս քաղաքականությունը իրականացվելու է միջնաժամկետի սկզբում ավելի մեծ ռեսուրսների ձևավորման ճանապարհով, ինչի արդյունքում բյուջեի պակասուրդը 2024-2025թթ. կաճի՝ հանգեցնելով կառավարության պարտքի բեռի որոշակի մեծացմանը, որից հետո տեղի կունենա հարկաբյուջետային կոնսոլիդացիա, որով պարտքի բեռը 2026-2027թթ.

կկայունանա 55%-ի մակարդակում: Ընդ որում, տնտեսական աճի՝ իր ներուժային մակարդակին մոտենալու պայմաններում հարկաբյուջետային քաղաքականությունը ամբողջական պահանջարկի վրա կունենա չեզոք ազդեցություն:

Միջնաժամկետում կշարունակվեն հարկերի հավաքագրման վերջին տարիներին գրանցած ջանքերը: Ստվերի դեմ պայքարին ուղղված հարկային վարչարարության բարելավման, ինչպես նաև տնտեսական խեղաթյուրումները վերացնող և մասնավոր ներդրումների խթանմանը ու տնտեսության ներուժի բարձրացմանը միտված հարկային քաղաքականության միջոցառումների արդյունքում ակնկալվում է ապահովել հարկեր/ՀՆԱ հարաբերակցության շարունակական բարելավում՝ 2024թ. 0.5, իսկ միջնաժամկետում միջինում 0.6 տոկոսային կետով՝ 2027թ. հասցնելով 26.2%-ի:

Պարտքի կառավարելի մակարդակում պահպանմանը զուգահեռ ՀՀ կառավարությունը կշարունակի պարտքի պորտֆելի բարելավման ջանքերը՝ նպատակ ունենալով պահպանել դիմակայունությունը հնարավոր ցնցումներին, պետական պարտատոմսերի շուկայի շարունակական զարգացումը և խորացումը, հասանելիությունը ներքին ու արտաքին ֆինանսական շուկաներին, ինչպես նաև ֆինանսավորման աղբյուրների ու գործիքների դիվերսիֆիկացումը: Այս տեսանկյունից ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում ներքին արժույթով պարտքը կշարունակի պահպանվել պատմականորեն բարձր մակարդակներում, կշարունակվեն արտաքին ներդրողների մոտ պարտատոմսերի շուկայի բարձր գրավչության պահպանման ջանքերը, ինչպես նաև կընդլայնվի միջազգային ֆինանսական կառույցների հետ համագործակցությունը՝ ավանդական գործիքներին զուգահեռ ներգրավելով նոր թիրախային ֆինանսավորման գործիքներ ՀՀ կառավարության տարբեր ոլորտների ռազմավարությունների արյդունավետ իրականացման համար:

Հաշվի առնելով աշխարհում և տարածաշրջանում բարձր անորոշությունները ՀՀ կառավարությունը շարունակելու է ամրապնդել տնտեսական ու հարկաբյուջետային սցենարների կազմման և ռիսկերի կառավարման համակարգերի զարգացման մեծ թափ առած ընթացքը, որոնք թույլ կտան միջնաժամկետում ֆինանսավորման անհրաժեշտ պահուստների նախատեսման և հարկային ու ծախսային քաղաքականությունների վերանայման միջոցով սահուն իրագործել ՀՀ կառավարության առաջնահերթ ծախսերը:

ՄԱՍ Ի. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԳԼՈՒԽ 1. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

1.1 ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ ԵՎ ՇՐՋԱՆԱԿ

- 2021թ. համավարակի շոկից հետո տնտեսական աճի վերականգնման փուլ թևակոխած համաշխարհային տնտեսությունը, այդ թվում՝ ՀՀ գործընկեր երկրների տնտեսությունները, 2022 թվականի տարեսկզբին բախվեցին նոր շոկի, որի արդյունքում տեղի է ունեցել տնտեսական աճի տեմպերի դանդաղում (ՌԴ-ում՝ անկում)՝ պայմանավորված համաշխարհային արժեշղթաների խաթարումներով, պարենային և հումքային ապրանքների միջազգային գների բարձրացմամբ, դրանց հետևանքով առաջացած բարձր գնաճին հակազդող աննախադեպ զսպող դրամավարկային քաղաքականություններով ու համաշխարհային ֆինանսական պայմանների խստացմամբ: 2023թ. ՀՀ հիմնական գործընկեր երկրներում, բացառությամբ Եվրագոտու, տեղի է ունեցել տնտեսական աճի տեմպերի վերականգնում: Աճի արագացումը պայմանավորված է եղել պետական ու մասնավոր սպառման աճով, ինչպես նաև գնաճի տեմպերի աստիճանական կայունացմամբ: Եվրագոտում արձանագրված թույլ աճն արտացոլում էր սպառողական թույլ տրամադրությունները, էներգակիրների բարձր գների երկարաձգված ազդեցությունը, ինչպես նաև մշակող արդյունաբերության թույլ ակտիվությունը: Այս պայմաններում 2024 թվականին գործընկեր երկրներից ԱՄՆ-ում և Եվրագոտում կանխատեսվում է տնտեսական աճի տեմպերի արագացում, մինչդեռ ՌԴ-ում և Չինաստանում՝ դանդաղում, իսկ միջնաժամկետում՝ կանխատեսվում են իրենց պատմական միջին աճերից ցածր տնտեսական աճեր:
- Կորոնավիրուսի համավարակի և Արցախյան պատերազմի բացասական ազդեցություններով պայմանավորված 2020 թվականի տնտեսական անկումից հետո 2021-2023 թվականներին տնտեսությունը թևակոխել է վերականգնման և աճի փուլ և միջինում գրանցել 9.0% իրական աճ՝ իր վրա կրելով 2022 թվականի փետրվարի վերջերից սկիզբ առած ռուս-ուկրաինական հակամարտության և Ռուսաստանի դեմ կիրառված պատժամիջոցների հետևանքով դեպի Հայաստան մարդկանց ներհոսքի, զբոսաշրջության զգալի ավելացման, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ընկերությունների ՀՀ տեղափոխման, ՀՀ-ից դեպի Ռուսաստան արտահանման պահանջարկի ավելացման, պետական բյուջեից կապիտալ ծախսերի և բնակարանաշինության բարձր աճերի, ինչպես նաև 2023 թվականի սեպտեմբերի վերջից Լեռնային Ղարաբաղից ՀՀ բռնի տեղահանված մեր հայրենակիցների և նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ոսկերչական արտադրատեսակների արտադրության կտրուկ աճի տնտեսական ազդեցությունները:
- Տնտեսական աճի բարձր տեմպերը շարունակվել են նաև 2024 թվականի առաջին եռամսյակում՝ իրենց վրա կրելով նաև ոսկերչական արտադրատեսակների վերամշակման կտրուկ աճի և Լեռնային Ղարաբաղից ՀՀ բռնի տեղահանված անձանց աջակցության ծրագրերի և ինտեգրման տնտեսական ազդեցությունները: Արդյունքում գրանցվել է 9.2% տնտեսական աճ՝ պայմանավորված հիմնականում ծառայությունների և արդյունաբերության աճով: Ապրիլ-մայիս ամիսներին տնտեսական ակտիվությունը որոշակիորեն դանդաղել է՝ պայմանավորված հիմնականում արդյունաբերության և առևտրի աճերի տեմպերի դանդաղմամբ, սակայն տնտեսական ակտիվության բարձր տեմպը շարունակվել է պահպանվել:
- 2024թ. ընթացիկ զարգացումների, պետական կապիտալ ծախսերի դերի շարունակական բարձրացման, ինչպես նաև կառուցվածքային բարեփոխումների ու Ամուլսարի շահագործման հնարավոր ազդեցությունների արդյունքում 2024 թվականի համար սպասվում է

շուրջ 6.3% տնտեսական աճ, իսկ միջնաժամկետում՝ միջինում 5.7% աճ: Այս պայմաններում ՀՀ կառավարության ծրագրի 2021-2026թթ. միջինում 7% աճը կապահովվի: Ընդ որում, վերջին տարիներին ՀՀ տնտեսական աճի ներուժը բարձրացել է՝ հասնելով 5.0-5.5%: Այս աճը պահպանելու և ավելի բարձր՝ 7% կայուն աճի հասնելու համար անհրաժեշտ են լրացուցիչ ջանքեր՝ ուղղված արտադրողականության բարձրացմանը, ներդրումների և արտահանման խթանմանը: Այս համատեքստում ՀՀ կառավարությունը հետամուտ է լինելու մարդկային և ֆիզիկական կապիտալում ներդրումների, մասնավոր ներդրումների, զբաղվածության և արտահանման խթանմանն ուղղված ռազմավարությունների արդյունավետ իրականացմանը:

- Տնտեսական ակտիվության աճի տեմպի դանդաղման և վերաարտահանման դերի որոշակի նվազման պայմաններում 2024թ. սպասվում է արտահանման և ներմուծման աճի տեմպերի զգալի դանդաղում: Արդյունքում՝ առևտրային բացասական հաշվեկշռի և ծառայությունների դրական հաշվեկշի վատթարացմամբ պայմանավորված 2024թ. ընթացիկ հաշվի պակասուրդը ՀՆԱ-ում կշարունակի խորանալ՝ հասնելով ՀՆԱ-ում 3.2%-ի: Միջնաժամկետում, 2022-2023թթ. առաջացած դրական գործոնների ազդեցությունների աստիճանական չեզոքացման պայմաններում ընթացիկ հաշվի պակասուրդը կխորանա՝ մոտենալով իր երկարաժամկետ հավասարակշիռ մակարդակին:
- Միջինաժամկետ հատվածում հարկաբյուջետային քաղաքականությունն ուղղված կլինի կառուցվածքային բարեփոխումների սահուն ընթացքը երաշխավորելու և ֆիզիկական ու մարդկային կապիտալում ներդրումների մակարդակի էական բարձրացման միջոցով տնտեսության դիմակայունության ամրապնդմանն ու աճի ներուժի բարձրացմանը: Ընդ որում, այն իրականացվում է նշված բարեփոխումների համար միջնաժամկետի սկզբում «առաջ ընկած» ռեսուրսների ձևավորման ճանապարհով, ինչի արդյունքում բյուջեի պակասուրդը 2024-2025 թթ.-ին կաճի՝ հանգեցնելով կառավարության պարտքի բեռի որոշակի մեծացմանը, որից հետո տեղի կունենա հարկաբյուջետային կոնսոլիդացիա, որով պարտքի բեռը 2026-2027 թվականներին կկայունանա 55%-ի մակարդակում: Ընդ որում, տնտեսական աճի՝ իր ներուժային մակարդակին մոտենալու պայմաններում հարկաբյուջետային քաղաքականությունը ամբողջական պահանջարկի վրա կունենա չեզոք ազդեցություն: Միաժամանակ հարկաբյուջետային քաղաքականության համար առաջնահերթ է առկա ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործումը և հնարավոր ռիսկերի կառավարման կարողությունների ձևավորումը, ինչը, աճի ներուժի բարձրացման հետ, պետք է երաշխավորի հարկաբյուջետային կայունությունը երկարաժամկետում:
- 2023թ.-ին գնաճի կտրուկ դանդաղումից, ապա՝ գնանկումային տենդենցների ձևավորումից հետո 2024թ.-ին ինչպես միջին, այնպես էլ 12 ամսյա գնաճը ցածր կլինեն նպատակային ցուցանիշից և միջնաժամկետում կկայունանան նպատակային 4% ցուցանիշի շուրջ: Մշտադիտարկելով տնտեսության զարգացման սցենարները, ԿԲ-ը կձեռնարկի համարժեք գործողություններ՝ միջնաժամկետ հորիզոնում գնաճի 4% մակարդակի և գների կայունության նպատակի ապահովման համար:
- Ռուս-ուկրաինական հակամարտությունը և Ռուսաստանի դեմ կիրառված աննախադեպ պատժամիջոցները աշխարհում ստեղծել են նոր իրականություն, որի պայմաններում ինչպես աշխարհի և ՀՀ գործընկեր երկրների, այնպես էլ ՀՀ տնտեսական աճի կանխատեսումները իրենց մեջ կրում են մեծ անորոշություն: Այս պայմաններում, ինչպես աշխարհի և ՀՀ գործընկերների, այնպես էլ ՄԺԾԾ շրջանակում ՀՀ տնտեսական աճի կանխատեսումների համար առկա են երկկողմանի ռիսկեր, սակայն դեպի ներքև ռիսկերը համեմատաբար մեծ են:

Աղյուսակ 1.1. 2025-2027թթ. ՄԺԾԾ (ներառյալ 2025թ. պետական բյուջեի) մակրոտնտեսական շրջանակ

Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ	**2021 փաստ**	**2022 փաստ**	**2023 փաստ**	**2024 սպասում**	**2025 ծրագիր**	**2026 կանխ.**	**2027 կանխ.**
Անվանական ՀՆԱ, մլրդ դրամ	6,991.8	8,501.4	9,505.2	10,235.4	11,197.2	12,308.9	13,505.3
Տնտեսական աճ, %	5.8	12.6	8.7	6.3	5.8	5.7	5.5
ՀՆԱ դեֆլյատորի աճ, %	6.9	8.0	2.9	1.3	3.4	4.0	4.0
Գնաճ (ժամանակ. վերջ), %	7.7	8.3	-0.6	3.0	4.0	4.0	4.0
Գնաճ (միջին), %	7.2	8.6	2.0	0.7	3.5	4.0	4.0
ՀՆԱ իրական աճն ըստ ճյուղերի ավելացված արժեքների, %							
Արդյունաբերություն	2.4	6.9	0.0	6.8	5.8	4.5	4.5
Գյուղատնտեսություն	-0.8	-2.8	2.9	2.7	3.0	3.0	3.0
Շինարարություն	3.1	18.6	16.0	6.6	6.3	5.9	5.5
Ծառայություններ	8.6	18.4	11.5	6.6	6.1	6.3	6.1
Զուտ հարկեր	7.4	8.1	11.0	6.7	6.2	6.1	5.8
ՀՆԱ ծախսային բաղադրիչների իրական աճերը, %							
Վերջնական սպառում	1.3	4.4	9.7	6.6	4.4	5.9	5.4
Պետական	-6.2	-2.2	28.3	10.6	-1.3	7.6	7.2
Մասնավոր	2.8	5.6	6.5	5.8	5.7	5.5	5.0
Հիմնական միջոցներում ներդրումներ[2]	23.6	14.0	10.1	13.6	6.2	11.4	4.3
Պետական	33.9	17.9	24.4	53.1	2.5	31.1	-5.5
Մասնավոր	22.3	13.5	8.1	7.2	7.1	7.0	7.0
Արտահանում	18.6	59.3	29.5	7.0	-15.9	-0.7	3.1
Ներմուծում	12.9	34.5	29.7	10.0	-13.3	2.7	4.8
Արտաքին հատված (մլն ԱՄՆ դոլար)							
Ընթացիկ հաշիվ	-483.0	64.7	-556.3	-778.0	-900.5	-1,240.6	-1,462.7
Ապրանքների և ծառայությունների հաշվեկշիռ	-1,107.9	-145.3	-203.2	-565.1	-883.0	-1,280.6	-1,518.9
Արտահանում	5,011.9	10,080.0	14,278.2	14,728.6	12,196.2	12,030.6	12,375.1
Փոփոխություն, %	31.3	101.1	41.6	3.2	-17.2	-1.4	2.9
Ներմուծում	6,119.7	10,225.4	14,481.4	15,293.8	13,079.2	13,311.2	13,894.1
Փոփոխություն, %	20.4	67.1	41.6	5.6	-14.5	1.8	4.4
Դրամական փոխանցումներ	1,274.0	1,449.2	979.0	1,005.4	1,041.0	1,077.1	1,114.3
ՀՆԱ-ի նկատմամբ %							
Ընթացիկ հաշիվ	-3.5	0.3	-2.3	-3.2	-3.5	-4.6	-5.1
Ապրանքների և ծառայությունների հաշվեկշիռ	-8.0	-0.7	-0.8	-2.3	-3.4	-4.7	-5.3
Արտահանում	36.1	51.7	59.0	59.7	47.3	44.2	42.9
Ներմուծում	44.1	52.4	59.8	62.0	50.8	48.9	48.1
Դրամական փոխանցումներ	9.2	7.4	4.0	4.1	4.0	4.0	3.9

[2] Կապիտալ ներդրումներում ներառված չէ պաշարների փոփոխությունը, ներկայացված են միայն հիմնական միջոցներում կատարված կապիտալ ներդրումները, քանի որ 2019թ.-ից ՀՀ ՎԿ կողմից պաշարների փոփոխությունը հաշվառվում է որպես հաշվեկշռող գործոն կամ այլ կերպ՝ դրա մեջ ներառվում են նաև վիճակագրական սխալները:

1.2. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐ ԵՐԿՐՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

Տնտեսական զարգացումներ: **2023 թվականին, չնայած շարունակվող դրամավարկային խստացման և աշխարհաքաղաքական անորոշություններին, համաշխարհային տնտեսությունում և ՀՀ հիմնական գործընկեր երկրներում, բացառությամբ Եվրագոտու, նախորդ տարվա նկատմամբ դիտվել է տնտեսական աճի տեմպերի արագացում: Տնտեսական աճի արագացմանը նպաստել են պետական ու մասնավոր սպառման աճը, իսկ Եվրագոտում արձանագրված թույլ աճն արտացոլում էր սպառողական թույլ տրամադրությունները, էներգակիրների բարձր գների երկարաձգված ազդեցությունը, ինչպես նաև մշակող արդյունաբերության թույլ ակտիվությունը:** Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) գնահատականներով 2023 թվականին համաշխարհային տնտեսական աճը կազմել է 3.2%՝ նախորդ տարվա 3.4%-ի դիմաց, իսկ ՀՀ հիմնական գործընկեր երկրներից ՌԴ-ում գրանցվել է 3.6% աճ, Եվրագոտում՝ 0.4%, ԱՄՆ-ում՝ 2.5%, իսկ Չինաստանում՝ 5.2%:

2024 թվականի առաջին եռամսյակում հիմնական գործընկեր երկրներում տնտեսական աճի տեմպերն արագացել են, ինչը զուգորդվել է պետական ու մասնավոր սպառման աճերով: Միաժամանակ, զսպող դրամավարկային քաղաքականության դիրքի պահպանման պայմաններում գործընկեր երկրներում նկատվել է գնաճի կայունացում: 2024 թվականի առաջին եռամսյակում ԱՄՆ տնտեսությունը նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի նկատմամբ գրանցել է 3% աճ[3]՝ պայմանավորված արտադրողականության և զբաղվածության կայուն աճով, ինչն ուղեկցվել է սպառման աճով: Եվրագոտու տնտեսությունը 2024 թվականի առաջին եռամսյակում նախորդ տարվա վերջին կիսամյակի համեմատ գրանցել է աճի տեմպի արագացում[4] (0.4% աճ), որը հիմնականում պայմանավորված է եղել անդամ երկրներից Գերմանիայի տնտեսության նախորդ եռամսյակների համեմատ գրանցած աճով՝ շինարարության ոլորտում ներդրումների և արտահանման աճի արդյունքում, ինչպես նաև Իսպանիայի կտրուկ աճով, որն էլ պայմանավորված էր ներդրումների և մասնավոր սպառման աճով:

Ընթացիկ տարվա առաջին եռամսյակում Չինաստանում տնտեսական աճը կազմել է 5.3%[5], որը պայմանավորված էր կառավարության կողմից շարունակվող խթանող միջոցառումներով՝ միտված անշարժ գույքի շուկայում առկա անկայունության մեղմացմանը: Աճի արագացմանը նաև նպաստել են Լուսնային նոր տարվա ընթացքում սպառման մեծ ծավալները: Մյուս կողմից, մարտ ամսվա ցուցանիշները փաստում են, որ գրանցվել է արդյունաբերական արտադրանքի և մանրածախ առևտրի աճի կտրուկ դանդաղում: Ռուսաստանի Դաշնությունում հունվար-մարտ ամիսներին գրանցվել է միջինում 5.4% աճ[6], ընդ որում հունվարին տնտեսական աճը կազմել է 4.6%, փետրվարին՝ 7.6% և մարտին՝ 4.2%: Աճի հիմնական աղբյուրներն են եղել մասնավոր և պետական պահանջարկը, ինչպես նաև ոչ նավթագազային արտահանման որոշակի վերականգնումը: Դեպի ներքին շուկա կողմնորոշված ճյուղերը շարունակել են աճ գրանցել:

Առաջատար տնտեսությունների կենտրոնական բանկերի կողմից զսպող դրամավարկային քաղաքականության դիրքի պահպանման պայմաններում 2023 թվականին և ընթացիկ տարվա հունվար-մայիս ամիսներին նկատվել է գնաճի կայունացում, բացառությամբ ՌԴ-ի, որտեղ

[3] Աղբյուրը՝ ԱՄՆ տնտեսական վերլուծությունների բյուրո, https://www.bea.gov/

[4] Աղբյուրը՝ Եվրոստատ, https://ec.europa.eu/eurostat/

[5] Աղբյուրը՝ Չինաստանի վիճակագրության ազգային բյուրո, http://www.stats.gov.cn/

[6] Աղբյուրը՝ ՌԴ տնտեսական զարգացման նախարարություն, https://economy.gov.ru/

առաջին եռամսյակում գնաճը կայունացման միտումներից հետո արագացել է՝ մայիսին հասնելով 8.3% մակարդակին: ԱՄՆ-ում և Ռուսաստանում գնաճը շարունակել է մնալ թիրախից էականորեն բարձր մակարդակում, իսկ ԵԳ-ում աստիճանաբար մոտեցել է սահմանված 2% թիրախին: Մինչդեռ Չինաստանում 2023 թվականի առաջին ինն ամիսներին գտնվել էր 3% թիրախից ներքև, իսկ վերջին եռամսյակում գնանկում է գրանցվել, սակայն ընթացիկ տարվա հունվար-մայիս ամիսներին ներքին պահանաջարկի վերականգնմանը զուգահեռ գնաճ է գրանցվել:

<u>Կանխատեսում:</u> ԱՄՀ ապրիլ ամսվա կանխատեսումների համաձայն 2024 և 2025 թվականներին համաշխարհային տնտեսական աճը կպահպանվի նույն մակարդակում՝ կազմելով 3.2%, որը ցածր է պատմական՝ 2000-2019 թվականների տարեկան միջինից՝ արտացոլելով զսպող դրամավարկային քաղաքականության, հարկաբյուջետային խթանման դադարեցման ազդեցությունները, ինչպես նաև արտադրողականության ցածր աճը: ՀՀ հիմնական գործընկեր երկրներից ԱՄՆ-ում 2024 թվականին աճի արագացումից հետո սպասվում է կտրուկ դանդաղում, մինչդեռ Եվրագոտում՝ տնտեսությունը կշարունակի աճել, որին կնպաստի մասնավոր սպառման աճը: ՀՀ ամենամեծ առևտրատնտեսական գործընկեր ՌԴ-ում 2024 թվականին կանխատեսվում է 3.2% աճ՝ պայմանավորված ներդրումների և մասնավոր սպառման աճով, մինչդեռ 2024 թվականին Եվրագոտում կանխատեսվում է տնտեսական աճի արագացում մինչև 0.8%, իսկ ԱՄՆ-ում՝ 2.7%: Չինաստանում 2024 թվականի տնտեսական աճի տեմպերը կդանդաղեն՝ պայմանավորված անշարժ գույքի շուկայի անկմամբ: Ընդ որում, ՀՀ հիմնական գործընկեր երկրների 2024 թվականի ապրիլյան կանխատեսումները հունվարի կանխատեսումների համեմատ վերանայվել են, հիմնականում, առավել դրական սպասումներով: 2025 թվականին ՌԴ տնտեսության համար հունվարի 1.1% աճի կանխատեսումը ապրիլին վերանայվել է 1.8%, իսկ ԱՄՆ-ի հունվարի կանխատեսումը 1.7%-ից վերանայվել է 1.9%: Միևնույն ժամանակ, 2025 թվականին Եվրագոտու 1.7%-ի աճի կանխատեսումը ապրիլին վերանայվել է դեպի ներքև՝ 1.5% (ավելի մանրամասն տե՛ս Աղյուսակ 1.2 -ում):

Աղյուսակ 1.2. ԱՄՀ կանխատեսումներ

	2023	2024թ.-ի կանխատեսում			2025թ.-ի կանխատեսում			2026թ.	2027 թ.
	Փաստ	2023 Հոկտ.	2024 Հունվ.	2024 Ապրիլ	2023 Հոկտ.	2024 Հունվ.	2024 Ապրիլ	2024 Ապրիլ	2024 Ապրիլ
Աշխարհի տնտեսական աճ, %	3.2	2.9	3.1	3.2	3.2	3.2	3.2	3.2	3.1
ՌԴ	3.6	1.1	2.6	3.2	1.0	1.1	1.8	1.3	1.3
Եվրագոտի	0.4	1.2	0.9	0.8	1.8	1.7	1.5	1.4	1.3
Չինաստան	5.2	4.2	4.6	4.6	4.1	4.1	4.1	3.8	3.6
ԱՄՆ	2.5	1.5	2.1	2.7	1.8	1.7	1.9	2.0	2.1
Համաշխարհային առևտրի աճ, %	0.3	3.5	3.3	3.0	3.7	3.6	3.3	3.5	3.4

Աղբյուրը՝ ԱՄՀ «World Economic Outlook»

Համաշխարհային տնտեսության զարգացման թույլ տեմպերը, Չինաստանի տնտեսության աճի հեռանկարի հետ կապված անորոշությունները, դրամավարկային քաղաքականությունների խիստ պայմանների պահպանումը, շարունակվող աշխարհաքաղաքական առճակատումները և դրանցից բխող մատակարարման շղթաների խաթարումները ճնշումներ են գործադրել հումքային և պարենային ապրանքների

միջազգային գների վրա: Կանխատեսվող հորիզոնում նավթի միջազգային գինը նվազման միտում ունի, մինչդեռ պղնձի միջազգային գինը՝ աճի: 2023 թվականին պղնձի տարեկան միջին գինը նախորդ տարվա նկատմամբ նվազել է 3.8%-ով, ինչին նպաստել են Չինաստանի անշարժ գույքի շուկայում ծագած խնդիրները, որոնք առավելապես դրսևորվել են երրորդ եռամսյակում: Նավթի միջազգային գինը 2023 թվականին կազմել է 83 ԱՄՆ դոլար մեկ բարելի դիմաց՝ նվազելով 17.2%-ով, իսկ պարենային ապրանքների միջազգային գինը նախորդ տարվա նկատմամբ նվազել է 13.8%-ով:

2024 թվականի հունվար-մայիս ամիսներին հումքային և պարենային ապրանքների գները որոշակի կայունացման միտում են դրսևորել, սակայն վերջին երկու ամիսներին առկա է նաև գների աճի միտում: Ընթացիկ տարվա հունվար-մայիս ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ պղնձի միջազգային գինն աճել է 2.5%-ով՝ պայմանավորված մետաղի նկատմամբ Չինաստանի պահանջարկի վերականգնմամբ: Նավթի միջազգային գինն աճել է 4.3%-ով, ինչը, հիմնականում, պայմանավորված է ՕՊԵԿ+ -ի կողմից հայտարարված նավթի արտադրության և արտահանման լրացուցիչ կրճատման երկարաձգմամբ, համաշխարհային տնտեսության վերականգնման ազդակներով: Մինչդեռ, պարենի միջազգային գները նվազել են՝ 7.8%-ով՝ պայմանավորված որոշ ապրանքների (կաթնամթերք, հացահատիկ, բուսական յուղեր և շաքարավազ) միջազգային գների նվազմամբ, ինչպես նաև դրամավարկային քաղաքականության բարձր տոկոսադրույքներով:

Միջազգային տնտեսական և ֆինանսական զարգացումները և կանխատեսումները

Գծապատկեր 1.1. *Համաշխարհային և գործընկեր երկրների տնտեսական աճերը (%)*



Աղբյուրը՝ ԱՄՀ

Գծապատկեր 1.2. *Հումքային ապրանքների գները (ԱՄՆ դոլար)*



Աղբյուրը՝ կանխատեսումները ըստ Բլումբերգի

Գծապատկեր 1.3. *Համաշխարհային առևտրի դոլարային աճերը(%)*



Գծապատկեր 1.4. *Զարգացող երկրների ազգային արժույթների դոլարի նկատմամբ փոփոխությունները*[7]

[7] Դոլարի ինդեքսը հաշվարկվում է որպես կշռված երկրաչափական միջին՝ հետևյալ արժույթների նկատմամբ. Եվրո, Ճապոնական յեն, Բրիտանական ֆունտ, Կանադական դոլար, Շվեդական կրոն, Շվեյցարական ֆրանկ:

Աղբյուրը՝ ԱՄՀ



Աղբյուրը՝ Բլումբերգ, ՀՀ ԿԲ, ՀՀ ՖՆ հաշվարկներ

Գծապատկեր 1.5. *Գործընկեր երկրների բաժնետոմսերի շուկաների ինդեքսները*



Աղբյուրը՝ Բլումբերգ, ՀՀ ՖՆ հաշվարկներ

Գծապատկեր 1.6. *Տարածաշրջանի երկրների ռիսկի հավելավճարները*[8]



Աղբյուրը՝ Բլումբերգ

«Բլումբերգ» միջազգային հեղինակավոր կազմակերպության հունվարի կանխատեսումների համեմատ մայիսին 2024թ. նավթի և պղնձի միջազգային գների կանխատեսումները վերանայվել են դեպի վերև:

Միջազգային ապրանքային, արժութային և ֆինանսական շուկաները էական տատանումների են ենթարկվում: Համաշխարհային առևտրի տեմպերը էապես դանդաղել են, իսկ ֆինանսական շուկաներում նկատվում են բաժնետոմսերի գների վերականգնում: Զարգացող երկրների արժույթները վերականգնման միտում ունեն: Սակայն ռուսական ռուբլին ԱՄՆ դոլարի նկատմամբ շարունակել է արժեզրկված մնալ: Այս պայմաններում զարգացող երկրների, այդ թվում տարածաշրջանի երկրների ռիսկի հավելավճարները նվազում են:

Չնայած տնտեսական աճերի վերականգնմանը, հիմնականում չի հաջողվել պահպանել նախորդ տարիներին գրանցված հարկաբյուջետային կոնսոլիդացիայի տեմպերը՝ պայմանավորված ռուս-ուկրաինական հակամարտության առաջացրած մարտահրավերներով: 2021-2022 թվականներին ապահովված հարկաբյուջետային կոնսոլիդացիայից հետո 2023 թվականին գրանցվել է պետական բյուջեի պակասուրդի և պետական պարտքի բեռի աճ՝ գտնվելով մինչ համաճարակայինից բարձր մակարդակում: Համաշխարհային պետական պարտքը 2023 թվականին կազմել է ՀՆԱ-ի 93.2%-ը, իսկ

[8] Երկրի ռիսկի հավելավճարները հաշվարկված են որպես տվյալ երկրի եվրոպարտատոմսերի (դոլարային արժույթով) և ԱՄՆ համապատասխան ժամկետայնությամբ գանձապետական պարտատոմսերի եկամտաբերությունների տարբերություն (պարտատոմսերի մարման ժամկետները նշված են երկրների անվանումների կողքը՝ փակագծերում):

պետական բյուջեի պակասուրդ/ՀՆԱ ցուցանիշը խորացել է՝ կազմելով 5.5%: Հաշվի առնելով, որ պետական ծախսերն անփոփոխ են մնացել 2022 թվականի համեմատ՝ պետական բյուջեի պակասուրդը, հիմնականում, պայմանավորված է եղել եկամուտների անկմամբ՝ մասնավորապես, նավթ արտադրող և հումքային ապրանքներ արտահանող երկրներում հումքային ապրանքների միջազգային գների նվազման արդյունքում:

Համաշխարհային հարկաբյուջետային զարգացումների ռիսկերից են զարգացող և ցածր եկամտային խմբի երկրներում կուտակվող պարտքի անկայունության ռիսկերը: Այս ռիսկերն արդեն իսկ առարկայացել են զարգացող տնտեսությամբ 19 երկրներում: Միևնույն ժամանակ, պետական պարտքի մակարդակը ցածր եկամտային խմբի երկրներում 2019-2023 թվականներին աճել է մոտ 12 տոկոսային կետով: Արդյունքում, 2023 թվականին ցածր եկամտային խմբի երկրների կեսից ավելին արդեն իսկ բախվել էր պարտքի անկայունությանը կամ դրա ռիսկը գնահատվել է բարձր:

Գծապատկեր 1.7. *Համաշխարհային տնտեսությունում ընթացող հարկաբյուջետային զարգացումները*





Աղբյուրը՝ IMF, Fiscal Monitor, October 2021 և Fiscal Monitor, April 2024.

1.3. ՀՀ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

1.3.1. ՀՆԱ և տնտեսական աճ

Կորոնավիրուսի համավարակի և Արցախյան պատերազմի բացասական ազդեցություններով պայմանավորված 2020 թվականի տնտեսական անկումից հետո 2021-2023 թվականներին տնտեսությունը թևակոխել է վերականգնման և աճի փուլ և միջինում գրանցել 9.0% իրական աճ՝ իր վրա կրելով 2022 թվականի փետրվարի վերջերից սկիզբ առած ռուս-ուկրաինական հակամարտության և Ռուսաստանի դեմ կիրառված պատժամիջոցների հետևանքով դեպի Հայաստան մարդկանց ներհոսքի, զբոսաշրջության զգալի ավելացման, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ընկերությունների ՀՀ տեղափոխման, ՀՀ-ից դեպի Ռուսաստան արտահանման պահանջարկի ավելացման, պետական բյուջեից կապիտալ ծախսերի և բնակարանաշինության բարձր աճերի, ինչպես նաև 2023 թվականի սեպտեմբերի վերջից Լեռնային Ղարաբաղից ՀՀ բռնի տեղահանված մեր հայրենակիցների և նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ոսկերչական արտադրատեսակների արտադրության կտրուկ աճի տնտեսական ազդեցությունները:

2021-2023 թվականներին տնտեսական աճը հիմնականում պայմանավորված է եղել ծառայությունների աճով (նպաստումը՝ միջինում 6.7 տոկոսային կետ): Տնտեսական աճին նպաստել են նաև շինարարության և արդյունաբերության ճյուղերը (նպաստումները՝ համապատասխանաբար՝ միջինում 0.8 և 0.6 տոկոսային կետեր), իսկ գյուղատնտեսությունը տնտեսական աճի վրա ունեցել է փոքր-ինչ բացասական ազդեցություն: Պահանջարկի տեսանկյունից աճին նպաստել է ինչպես ներքին (հիմնականում սպառման և մասնավոր ներդրումների), այնպես էլ արտահանման աճը:

Տնտեսական աճի բարձր տեմպերը շարունակվել են նաև 2024 թվականի առաջին եռամսյակում՝ իրենց վրա կրելով նաև ոսկերչական արտադրատեսակների վերամշակման կտրուկ աճի և Լեռնային Ղարաբաղից ՀՀ բռնի տեղահանված մեր հայրենակիցների տնտեսական ազդեցությունները: Արդյունքում առաջին եռամսյակում գրանցվել է ՀՆԱ-ի 9.2% իրական աճ՝ հիմնականում պայմանավորված ծառայությունների և արդյունաբերության աճով (նպաստումները՝ համապատասխանաբար՝ 4.6 և 3.9 տոկոսային կետեր): Տնտեսության մյուս ճյուղերը ևս նպաստել են տնտեսական աճին:

Գծապատկեր 1.8. *ՀՆԱ աճ (%) և ճյուղերի նպաստումները ՀՆԱ աճին (տ.կ.)*



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ հաշվարկներ

Գծապատկեր 1.9. *ՀՆԱ աճ (%) և պահանջարկի բաղադրիչների նպաստումները ՀՆԱ աճին (տ.կ.)*



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ հաշվարկներ

Ապրիլ-մայիս ամիսներին տնտեսական ակտիվությունը որոշակիորեն դանդաղել է՝ պայմանավորված հիմնականում արդյունաբերության և առևտրի աճերի տեմպերի դանդաղմամբ: Արդյունքում 2024 թվականի հունվար-մայիսին արձանագրվել է 11.2% աճ: Արդյունաբերության՝ նախորդ տարվա նոյեմբերից սկիզբ առած բարձր աճի տեմպերը ապրիլ ամսից սկսած աստիճանաբար նվազել են՝ պայմանավորված հիմնականում ոսկերչական արտադրատեսակների արտադրության նվազմամբ, որին որոշ չափով հակազդել են ապրիլից հիմնային մետաղների[9] արտադրության առաջանցիկ աճերը: Տնտեսական ակտիվության աճին հիմնականում նպաստել են արդյունաբերության (4.1 տոկոսային կետ), առևտրի (3.4 տոկոսային կետ) և ծառայությունների (1.9 տոկոսային կետ) ճյուղերի աճը: Շինարարությունը նույնպես աճել է՝ նպաստելով տնտեսական ակտիվությանը (1.1 տոկոսային կետ)[10]:

---

[9]2024թ. ապրիլ ամսվա հաշվետվության ներկայացման ժամանակ ՀՀ ՎԿ-ն **ճշգրտել է նախորդ երեք ամիսների արդյունաբերության արտադրանքի ծավալների տվյալները**՝ կապված տնտեսական գործունեության տեսակների 24 (հիմնային մետաղների արտադրություն) և 32 (արտադրատեսակների արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում, այդ թվում՝ ոսկերչական արտադրանքի արտադրություն) ծածկագրերով հատվածների միջև վերադասակարգման հետ, ինչով պայմանավորված վերանայվել են նաև նախորդ երեք ամիսների արդյունաբերության ցուցանիշները:

[10]ՏԱՑ-ի աճին ճյուղերի նպաստումները ՀՀ ֆինանսների նախարարության գնահատականներն են: Գյուղատնտեսության ցուցանիշը ոչ բոլոր հաշվարկներում է ներկայացված, քանի որ այն հրապարակվում է եռամսյակային պարբերականությամբ՝ պայմանավորված գյուղատնտեսության սեզոնայնությամբ և բնակլիմայական

Գծապատկեր 1.10. *ՏԱՑ և տնտեսության ճյուղերի իրական աճերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (կուտակային, %)*



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ

Գծապատկեր 1.11. *ՏԱՑ և տնտեսության ճյուղերի իրական աճերը նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (ամսական, %)*



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ

Գծապատկեր 1.12. *Տնտեսության ճյուղերի նպաստումները ՏԱՑ-ին (կուտակային, տ.կ.)*[11]



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ հաշվարկներ

Գծապատկեր 1.13. *Տնտեսության ճյուղերի նպաստումները ՏԱՑ-ին նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (ամսական, տ.կ.)*



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ հաշվարկներ

Ներքին և արտաքին պահանջարկի բարձր աճի տեմպերը շարունակվել են նաև 2024 թվականի առաջին եռամսյակում: 2024 թվականի հունվար-մարտին տնտեսական աճը հիմնականում պայմանավորվել է ներքին մասնավոր պահանջարկի (մասնավոր սպառման և մասնավոր ներդրումների) և արտահանման աճով: Նույն ժամանակահատվածում գրանցվել են արտահանման և ներմուծման աճի բարձր տեմպեր: Ընդ որում՝ արտահանման աճն առաջանցիկ է եղել ներմուծման նկատմամբ, ինչի արդյունքում զուտ արտահանումն էական դրական նպաստում է ունեցել ՀՆԱ-ի աճին:

Ապրիլ-մայիս ամսին ներքին պահանջարկի աճի միտումները շարունակվել են՝ պայմանավորված տնօրինվող եկամտի, հիպոթեքային, շինարարության, ինչպես նաև սպառողական վարկավորման աճերով, իսկ արտաքին պահանջարկը (առանց վերաարտահանման ազդեցության) որոշակի նվազել է: Ներքին պահանջարկի աճին դրական նպաստում է ունեցել նաև Լեռնային Ղարաբաղից ՀՀ բռնի տեղահանված բնակչության

ոչ կայուն պայմաններից կախված ամսական արտադրության տատանողականության հարթեցման անհրաժեշտությամբ:

[11]ՏԱՑ-ի նպաստումների «այլ» բաղադրիչի մեջ ներառված են գյուղատնտեսության (բացառությամբ՝ հունվար-մարտի) և ոչ շուկայական ծառայությունների նպաստումները:

սպառումը: Սպառման աճի մասին են վկայում նույն ժամանակաշրջանում առևտրի և ծառայությունների աճը, իսկ ներդրումների աճի մասին՝ շինարարության աճը:

<u>Կանխատեսում:</u> Ընթացիկ տնտեսական զարգացումների ստեղծած հնարավորությունների, պետական կապիտալ ծախսերի դերի շարունակական բարձրացման, ինչպես նաև Ամուլսարի շահագործման և կառուցվածքային բարեփոխումների (առավել մանրամասն տե՛ս 1.4 բաժնում) հնարավոր ազդեցությունների արդյունքում 2024 թվականի համար սպասվում է շուրջ 6.3% տնտեսական աճ, իսկ միջնաժամկետում՝ միջինում 5.7% աճ: 2024 թվականին և միջնաժամկետում տնտեսական աճը պայմանավորված կլինի հիմնականում ծառայությունների աճով: Տնտեսական աճին իրենց նպաստումը կունենան նաև արդյունաբերության և շինարարության ճյուղերի աճերը, ինչը համահունչ է կառավարության նպատակադրած արտահանման խթանման և ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված քաղաքականություններին: Ամբողջական պահանջարկը նույնպես կաճի՝ հիմնականում պայմանավորված ներքին սպառողական և ներդրումային պահանջարկի աճով:

2024 թվականին և միջնաժամկետում դեֆլյատորը կաճի՝ պայմանավորված ՍԳԻ-ի և ապրանքների միջազգային գների զարգացումներով:

Վերոնշյալ զարգացումների պայմաններում անվանական ՀՆԱ-ն 2024 թվականին կկազմի 10,235.4 մլրդ դրամ՝ 280.7 մլրդ դրամով պակաս լինելով 2024 թվականի պետական բյուջեով ծրագրված ցուցանիշից: Իսկ միջնաժամկետում անվանական ՀՆԱ-ն կաճի՝ 2027 թվականին կազմելով 13,505.3 մլրդ դրամ:

Գծապատկեր 1.14. *Անվանական ՀՆԱ և տնտեսական աճ*



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ

Գծապատկեր 1.15. *Տնտեսության առանձին ճյուղերի նպաստումները տնտեսական աճին*



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ

Գծապատկեր 1.16. *Տնտեսական աճին պահանջարկի բաղադրիչների նպաստումները*



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ

<u>Համախառն առաջարկի կանխատեսում.</u> 2024 թվականին տնտեսական աճը պայմանավորված կլինի հիմնականում ծառայությունների աճով (6.6%): Տնտեսության մյուս ճյուղերը նույնպես կաճեն՝ նպաստելով տնտեսական աճին:

Միջնաժամկետում՝ պայմանավորված ներքին և արտաքին պահանջարկի աճով, տնտեսությունում իրականացվող պետական և մասնավոր ներդրումներով, ինչպես նաև ՀՀ կառավարության կողմից արտահանման ու ներդրումների խթանմանն ուղղված քաղաքականություններով՝ ծառայությունները կաճեն միջինում 6.1%-ով (ծառայությունների աճը կշարունակի պայմանավորվել SS, զբոսաշրջության և ֆինանսական ծառայությունների աճերով), արդյունաբերությունը՝ 4.9%-ով (պայմանավորված հանքարդյունաբերության՝ մասնավորապես Ամուլսարի, Սոթքի շահագործմամբ և մշակող արդյունաբերության աճերով), շինարարությունը՝ 5.9%-ով (պետական կապիտալ ծախսերի աճով (հիմնականում ենթակառուցվածքներում ներդրումների աճով) և բնակարանային շինարարության աճով), իսկ գյուղատնտեսությունը՝ 3.0%-ով (գյուղատնտեսության ոլորտի պետական օժանդակության ծրագրերով պայմանավորված ոլորտի աճով):

Գծապատկեր 1.17. *Ծախսային բաղադրիչների տեսակարար կշիռները ՀՆԱ-ի կազմում*



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ

Գծապատկեր 1.18. *Ճյուղերի տեսակարար կշիռները ՀՆԱ-ի կազմում*



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ

<u>Համախառն պահանջարկի կանխատեսում.</u> 2024 թվականին վերջնական սպառումը կաճի 6.6%-ով, իսկ ներդրումները՝ 13.6%-ով: Սպառման և ներդրումների աճին կնպաստեն տնօրինվող եկամտի աճը, բնակարանային շինարարության շարունակվող աճը, ինչպես նաև ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված պետական քաղաքականությունն ու նախատեսվող պետական կապիտալ ծախսերը: Միջնաժամկետում՝ սպառումը միջինում կաճի 5.2%-ով, իսկ ներդրումները՝ 7.3%-ով: Միջնաժամկետում ներդրումների վրա դրական ազդեցություն կունենա ՀՀ կառավարության կողմից ենթակառուցվածքներում ներդրումների նախատեսվող շարունակական աճը, ինչպես նաև մասնավոր ներդրումների խթանմանն ուղղված միջոցառումները, իսկ սպառումը պայմանավորված կլինի տնօրինվող եկամտի աճով:

2024 թվականին արտահանումը և ներմուծումը կաճեն 7.0%-ով և 10.0%-ով՝ պայմանավորված ներքին պահանջարկի և տնտեսական ակտիվության աճով, ինչպես նաև այլ երկրներից (առանց ՌԴ) զբոսաշրջության աճով և վերաարտահանման գործոնով: Ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով 2022-2023 թվականներին առաջացած դրական գործոնների աստիճանական թուլացմամբ, մասնավորապես, վերաարտահանման ծավալների նվազմամբ պայմանավորված 2025 թվականին արտահանումը կնվազի 15.9%-ով, իսկ ներմուծումը՝ 13.3%-ով: ՀՀ և համաշխարհային տնտեսական աճերի, ՀՀ տնտեսության արտահանելի հատվածի զարգացումների, տնօրինվող եկամտի և զբոսաշրջության աճի, ինչպես նաև արտահանմանը և ներդրումների խրախուսմանն ուղղված ՀՀ կառավարության քաղաքականության

պայմաններում 2026-2027 թվականներին արտահանումն ու ներմուծումը կաճեն միջինում 1.2% և 3.7%-ով:

1.3.1.1. Թիրախային տնտեսական աճի սցենար

ՀՀ կառավարությունը նպատակադրել է հասնել միջինում առնվազն 7% տնտեսական աճի: Հատկանշական է, որ կանխատեսված սցենարում 2021-2026թթ. միջինում տնտեսական աճը կազմում է 7.5%, որը փոքր-ինչ բարձր է կառավարության նպատակադրած 7% տնտեսական աճի թիրախից: Ընդ որում, վերջին տարիներին ՀՀ տնտեսական աճի ներուժը բարձրացել է՝ հասնելով 5.0-5.5%: Այս աճը պահպանելու և ավելի բարձր՝ 7% կայուն աճի հասնելու համար անհրաժեշտ են լրացուցիչ ջանքեր՝ ուղղված արտադրողականության բարձրացմանը, ներդրումների և արտահանման խթանմանը:

Հաշվի առնելով տնտեսության զարգացման ներկա իրավիճակը, միջնաժամկետում կայուն 7% տնտեսական աճի ապահովմանը հնարավոր է հասնել միայն համապատասխան քաղաքականությունների և միջոցառումների իրականացման միջոցով, ուստի կառավարությունը ջանքեր է գործադրելու նպատակադրած աճի թիրախն ապահովելու համար՝ իրականացնելով տնտեսական աճի ներուժի բարձրացմանն ուղղված գործողություններ:

Գծապատկեր 1.19. Կառավարության թիրախավորած 7% տնտեսական աճի և կանխատեսվող սցենարների համեմատականը, իրական ՀՆԱ, 2020=100



Այդ առումով, սույն բաժնում նկարագրվում է 2025-2027 թվականներին տնտեսության ներուժի աստիճանական բարձրացման և ավելի բարձր տնտեսական աճի ապահովման մակրոտնտեսական սցենարը: Վերջինս առաջիկա տարիների համար նախանշում է առանցքային մակրոտնտեսական ցուցանիշների ուղենշային այն մեծությունները, որոնց թիրախավորման դեպքում հնարավոր կլինի ապահովել ՀՀ տնտեսության ավելի արագ տեմպերով զարգացումը: Անհրաժեշտ է նշել, որ այս սցենարը և դրանում ներառված առանցքային ուղենշային ցուցանիշները կարող են ենթարկվել որոշակի փոփոխությունների՝ հաշվի առնելով նախատեսվող քննարկումների արդյունքում ձևավորվելիք տնտեսական քաղաքականության հստակ միջոցառումները և դրանց հնարավոր ազդեցությունները:

<u>Տնտեսական աճ:</u> Չնայած 2021-2023 թվականներին տնտեսությունը վերականգնվել է, և միջինում գրանցվել է բարձր՝ 9.0% իրական աճ, այնուամենայնիվ նշված ժամանակահատվածն աչքի է ընկել մի շարք կարևոր իրադարձություններով, որոնք

նշանակալի ազդեցություն են ունեցել բարձր տնտեսական աճի ապահովման գործընթացում, որոնց ազդեցությունն առաջիկա տարիներին կչեզոքանա: Մասնավորապես՝ 2022 թվականի փետրվարի վերջերից սկիզբ առած ռուս-ուկրաինական հակամարտության և Ռուսաստանի դեմ կիրառված պատժամիջոցների հետևանքով նկատվել է դեպի Հայաստան մարդկանց ներհոսք, զբոսաշրջության զգալի ավելացում, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ընկերությունների ՀՀ տեղափոխում, ՀՀ-ից դեպի Ռուսաստան արտահանման պահանջարկի ավելացում, գրանցվել են պետական բյուջեից կապիտալ ծախսերի և բնակարանաշինության բարձր աճեր, 2023 թվականի սեպտեմբերի վերջից Լեռնային Ղարաբաղից ՀՀ են բռնի տեղահանվել ավելի քան 100,000 հայրենակիցներ, ինչպես նաև 2023 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներից սկսած տեղի է ունեցել ոսկերչական արտադրատեսակների արտադրության կտրուկ աճ:


2024-2026 թվականների ռազմավարությամբ սահմանված բոլոր ուղենշային ցուցանիշները 2023 թվականի փաստացի արդյունքներով գտնվել են նախանշված միջակայքերում:

Աղյուսակ 1. *ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2024-2026 թվականների ռազմավարությամբ սահմանված ուղենշային ցուցանիշների կատարողականը 2023 թվականին*

	Ուղենիշ	31.12.2023 փաստացի
Վերաֆինանսավորման ռիսկ		
Մինչև մարում միջին ժամկետը	7 – 10 տարի	7.4
Առաջիկա երեք տարիների ընթացքում մարվող պարտքի կշիռը ընդամենը պարտքի մեջ	առավելագույնը 35%	28.6
Առաջիկա տարվա ընթացքում մարվող պետական գանձապետական պարտատոմսերի (ՊԳՊ) կշիռը ՊԳՊ-երի ծավալի մեջ (տարեվերջին)	առավելագույնը 20%	11.8
Տոկոսադրույքի ռիսկ		
Ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ	առնվազն 80%	84.1
Փոխարժեքի ռիսկ		
Ներքին պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ	առնվազն 40%	47.3
ՀՀ դրամով ներգրավված պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ	առնվազն 40%	45.9

Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ հաշվարկներ

2023 թվականի պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը փոխառու զուտ միջոցների հաշվին կատարվել է 287.0 մլրդ դրամով, ընդ որում, ներքին փոխառու զուտ միջոցների հաշվին (առանց մուրհակների) ֆինանսավորումը կազմել է 360.0 մլրդ դրամ, իսկ արտաքին փոխառու զուտ միջոցների հաշվին ֆինանսավորումը բացասական է՝ (73.3) մլրդ դրամ: Հետևաբար, ներքին փոխառու միջոցներով զուտ ֆինանսավորումն ամբողջությամբ ծածկել է փոխառու զուտ

միջոցներով դեֆիցիտի ֆինանսավորման փաստացի կարիքը և արտաքին փոխառու միջոցների զուտ մարումը:

2023 թվականի ընթացքում ՀՀ կառավարության պարտքի գծով իրականացված գործառնություններում զգալի կշիռ ունեն պետական գանձապետական պարտատոմսերը:

Աղյուսակ 2. *ՀՀ կառավարության պարտքի գծով իրականացված գործառնություններն ըստ գործիքների*

2023	Տեղաբաշխված ծավալը	Տեղաբաշխումից մուտքը	Մարման և/կամ հետգնման ծավալը	Վճարված տոկոսագումարը
Պետական գանձապետական պարտատոմսեր, մլրդ դրամ	829.5[26]	584.1	223.8	157.4
Արտարժութային պետական պարտատոմսեր, մլն ԱՄՆ դոլար	-	-	186.8	86.5
Արտարժութային պետական պարտատոմսեր, մլրդ դրամ	-	-	73.4	33.8
		Մասհանման ծավալը	Մարման ծավալը	Վճարված տոկոսագումարը
Արտաքին վարկեր, մլն ԱՄՆ դոլար		316.4	315.6	157.6
Արտաքին վարկեր, մլրդ դրամ		124.6	124.5	62.3

Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ

2023 թվականի ընթացքում պետական գանձապետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխումների միջին կշռված եկամտաբերությունը կազմել է 10.83 %՝ նախորդ տարվա 11.07%-ի համեմատությամբ նվազելով 0.2 տոկոսային կետով: 2023 թվականի ընթացքում տեղաբաշխված պետական գանձապետական պարտատոմսերի միջին կշռված ժամկետը կազմել է 2381 օր կամ 6.5 տարի՝ նախորդ տարվա նույն ցուցանիշի 1762 օրվա կամ 4.8 տարվա դիմաց: Եթե հաշվի չառնենք 2023թ. դեկտեմբերին 206.4 մլրդ դրամ անվանական արժեքով պարտատոմսերի ուղղակի տեղաբաշխման գործարքը, ապա 2023 թվականի ընթացքում պետական գանձապետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխումների միջին կշռված եկամտաբերությունը կկազմի 11.24%, ինչը նախորդ տարվա (11.07%) ցուցանիշից բարձր է 0.17 տոկոսային կետով: Առանց 2023թ. դեկտեմբերին 206.4 մլրդ դրամ անվանական արժեքով պարտատոմսերի ուղղակի տեղաբաշխման գործարքը հաշվի առնելու՝ պարտատոմսերի միջին կշռված ժամկետը կկազմեր 1978 օր կամ 5.4 տարի: 2022-2023 թվականներին արձանագրված բարձր տոկոսադրույքների միջավայրում գանձապետական պարտատոմսերի

[26] Ներառված է ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2326-Ն որոշման համաձայն Լեռնային Ղարաբաղի կառավարության և նրա ստեղծած հիմնադրամների, առանձին ֆիզիկական անձանց նկատմամբ Հայաստանի Հանրապետության առևտրային բանկերի, վարկային և ապահովագրական կազմակերպությունների դրամական պահանջների (գույքային իրավունքների) զիջման դիմաց առանձին ֆինանսական կազմակերպությունների դրամական պահանջների (գույքային իրավունքների) զիջման դիմաց 206,357,605,000 դրամ անվանական արժեքով ուղղակի տեղաբաշխված պարտատոմսը

տեղաբաշխումների կառուցվածքում գերակշռել են կարճաժամկետ և միջնաժամկետ պարտատոմսերը՝ նպատակ ունենալով երկարաժամկետ հատվածում զսպել տոկոսավճարների աճը: 2023 թվականի երկրորդ կեսից, վերաֆինանսավորման տոկոսադրույքի շարունական նվազմանը զուգահեռ, գանձապետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխումների եկամտաբերությունն աստիճանաբար նվազել է, իսկ տեղաբաշխվող պարտատոմսերի ժամկետայնությունը՝ երկարել:

Վերաֆինանսավորման ռիսկի կառավարման, ինչպես նաև դրամի արժևորման պայմաններում դրամային արտահայտությամբ թողարկումից մուտքի համեմատությամբ եվրապարտատոմսի մարման խնայողության նպատակով 2023 թվականի հոկտեմբերի 2-ին իրականացվել է 2025 թվականին մարվող եվրոպարտատոմսի հետգնում՝ 186.8 մլն ԱՄՆ դոլար ծավալով: Հետգնված 186.8 մլն ԱՄՆ դոլարի դիմաց փոխարժեքների տարբերության հետևանքով խնայողությունը կազմել է 15.4 մլրդ դրամ:

1.3. ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի ծախսերի ու ռիսկերի նկարագիրը

2023 թվականի տարեվերջին ՀՀ կառավարության ծախսերի և ռիսկերի ցուցանիշներն ամբողջական պատկերացում են տալիս և որակապես բնութագրում են ՀՀ կառավարության պարտքի պորտֆելը:

Աղյուսակ 3. *ՀՀ կառավարության պարտքի ծախսերի և ռիսկերի ցուցանիշները 31.12.2023 թվականի դրությամբ*

		Արտարժութային պարտք	Դրամային պարտք	Ընդամենը
ՀՀ կառավարության պարտքի ծավալը (մլրդ դրամ)		2,471.9	2,100.0	4,571.9
ՀՀ կառավարության պարտքի ծավալը (մլն ԱՄՆ դոլար)		6,106.6	5,188.0	11,294.6
ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ, (%)		26.0	22.1	48.1
Ծախսի ցուցանիշներ	Տոկոսավճար/ՀՆԱ, (%)	1.0	1.7	2.7
	Միջին կշռված տոկոսադրույքը (%)	3.9	10.7	7.0
Վերաֆինանսավորման ռիսկ	Մինչև մարում միջին ժամկետը (տարի)	6.8	8.0	7.4
	Մեկ տարվա ընթացքում մարվող պարտքի կշիռը (% ընդամենի մեջ)	6.8	11.8	9.1
Տոկոսադրույքի ռիսկ	Մինչև վերաֆիքսում միջին ժամկետը (տարի)	5.1	8.0	6.4
	Առաջիկա տարում վերաֆիքսվող պարտքի կշիռը (% ընդամենի մեջ)	29.9	11.8	21.6
	ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշիռը (% ընդամենի մեջ)	70.5	100.0	84.1
Փոխարժեքի ռիսկ	Արտարժութային պարտքի կշիռը (% ընդամենի մեջ)	-	-	54.1

		Արտարժութային պարտք	Դրամային պարտք	Ընդամենը
	Արտարժութային կարճաժամկետ պարտք/միջազգային պահուստներ, (%)	-	-	11.4

Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ հաշվարկներ

Կառավարության պարտքի ծախսերը բնութագրելու համար կիրառվել են հետևյալ ցուցանիշները՝ պարտքի պորտֆելի միջին կշռված տոկոսադրույքը, տոկոսավճարի կշիռը պետական բյուջեի եկամուտների մեջ և տոկոսավճարի կշիռը ՀՆԱ-ի մեջ:

2023 թվականի տարեվերջին ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի միջին կշռված տոկոսադրույքը կազմել է 7.0%, ընդ որում՝ դրամային պարտքի համար այն կազմել է 10.7%, իսկ արտարժութային պարտքի համար՝ 3.9%:

Արտաքին վարկերի տոկոսադրույքներն ունեցել են աճի միտում, որովհետև միջին եկամուտ ունեցող երկրների շարքին դասվելու արդյունքում Հայաստանին այլևս հասանելի չեն միջազգային կառույցների կողմից տրամադրվող արտոնյալության բարձր աստիճան ունեցող վարկերը: Միաժամանակ, միջազգային ֆինանսական շուկաներում, պայմանավորված հիմնականում զարգացած երկրների կենտրոնական բանկերի (ԱՄՆ, Եվրոգոտի, Մեծ Բրիտանիա) կողմից ինչպես տոկոսադրույքների բարձրացումների, այնպես էլ քանակական մեղմացման ծրագրերի հետքաշման տեսքով զսպող դրամավարկային քաղաքականությամբ, տոկոսադրույքների զգալի աճ է գրանցվել: Այս գործոնների ազդեցությամբ արտաքին վարկերի և փոխառությունների միջին կշռված տոկոսադրույքը տարեվերջին կազմել է 3.6%՝ նախորդ տարվա 3.2%-ի դիմաց: Ինչ վերաբերում է պետական գանձապետական պարտատոմսերի միջին եկամտաբերությանը, ապա 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՊԳՊ-երի միջին կշռված եկամտաբերությունը կազմել է 10.7%՝ 2022 թվականի տարեվերջի 10.5% տոկոսի դիմաց:

Գծապատկեր 1. *Շրջանառության մեջ գտնվող ՊԳՊ-երի առաջնային տեղաբաշխումների միջին կշռված եկամտաբերության դինամիկան 2020-2023 թվականներին*



Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ

2022 թվականի մարտ ամսից, ՀՀ ԿԲ-ի կողմից դրամավարկային պայմանների շարունակական խստացման միջավայրում, ՊԳՊ-երի առաջնային տեղաբաշխումների միջին կշռված եկամտաբերությունն աճել է և 2021թ. տարեվերջի 9.3%-ի դիմաց 2023թ. տարեվերջին կազմել է 11.2%՝ առանց 2023 թվականի դեկտեմբերի 29-ին 206.4 մլրդ դրամ անվանական արժեքով պարտատոմսերի ուղղակի տեղաբաշխման գործարքի: Վերջինս հաշվի առնելու դեպքում 2023 թվականի տարեվերջի դրությամբ 2023 թվականի առաջնային տեղաբաշխումների միջին կշռված եկամտաբերությունը կազմել է 10.8%:

ՀՀ կառավարությունը 2023 թվականի ընթացքում պարտքի գծով վճարել է 253.4 մլրդ դրամ տոկոսավճար՝ նախորդ տարվա 198.3 մլրդ դրամի դիմաց: 2023 թվականին վճարված տոկոսագումարը կազմել է պետական բյուջեի եկամուտների 10.7%-ը, պետական բյուջեի ծախսերի 9.9%-ը և ՀՆԱ-ի 2.7%-ը՝ համապատասխանաբար նախորդ տարվա նույն ցուցանիշների 9.6%, 8.8% և 2.3%-ի դիմաց:

Փոխարժեքի ռիսկ

ՀՀ կառավարության պարտքի առկա պորտֆելում տարիներ շարունակ շուկայական ռիսկերից ամենաէականը հանդիսացել է փոխարժեքի ռիսկը: Փոխարժեքի ռիսկը հիմնականում չափվում է հետևյալ ցուցանիշներով՝ արտարժութային պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ և արտարժութային կարճաժամկետ պարտքի կշիռը միջազգային պահուստների մեջ:

ՀՀ կառավարության պարտքի ներկայիս պորտֆելը դեռևս կրում է փոխարժեքի զգալի ռիսկ, քանի որ 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ պարտքի 54.1%-ը ներգրավված է արտարժույթով: Փոխարժեքի ռիսկի նվազեցման ուղղությամբ ՀՀ կառավարության պարտքի կառավարման քաղաքականության հետևողական իրականացման արդյունքում այս ցուցանիշը

2018 թվականից սկսած նվազման միտում է դրսևորել և հինգ տարիների կտրվածքով նվազել է 26.8 տոկոսային կետով: Նախորդ տարվա համեմատ այն նվազել է 8.0 տոկոսային կետով:

Գծապատկեր 2. ՀՀ կառավարության արտարժութային և դրամային պարտքերի հարաբերակցությունը 2019-2023 թվականներին (%)



Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ

2023 թվականի տարեվերջին ՀՀ կառավարության արտարժույթով ներգրավված պարտքի պորտֆելի արտարժութային կառուցվածքում գերակշռել է ԱՄՆ դոլարով պարտքը՝ 57.2%, որը SDR-ի համապատասխան արտարժույթների կշիռներով բաշխելուց հետո կազմել է 67%: ՀՀ կառավարության արտարժույթով ներգրավված պարտքի կառուցվածքը նախորդ տարվա վերջի համեմատությամբ դիվերսիֆիկացվել է, որի արդյունքում ԱՄՆ դոլարով պարտքի մասնաբաժինը նվազել է մոտ 2 տոկոսային կետով, իսկ եվրոյով պարտքի մասնաբաժինն աճել է 3.8 տոկոսային կետով: Բավական է նշել, որ 2023 թվականին վարկերի մասհանումների 70%-ը, այդ թվում, ներգրավված բյուջետային աջակցության վարկերի 83%-ը կատարվել է եվրոյով: Գծապատկերը ցույց է տալիս, որ նախորդ 5 տարիների ընթացքում պարտքի արտարժութային կառուցվածքի դիվերսիֆիկացիայի առումով 2023 թվականը բեկումնային է:

Գծապատկեր 3. *ՀՀ կառավարության արտարժութային պարտքի պորտֆելի դինամիկան 2019-2023 թվականներին*



Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ հաշվարկներ

Արտարժութային կարճաժամկետ պարտքի կշիռը միջազգային պահուստների մեջ կազմել է 11.4%, ինչը նշանակում է, որ արտարժութային կարճաժամկետ պարտքի մարումների իրականացման համար առկա է արտարժութային ակտիվների բավարար ծավալ: Ըստ էության, 2024 թվականին մարման ենթակա արտարժութային պարտքը կազմում է 2023 թվականի տարեվերջին առկա միջազգային պահուստների մոտ մեկ տասներորդ մասը: Նախորդ տարվա համեմատությամբ այս ցուցանիշը նվազել է 0.5 տոկոսային կետով:

Վերաֆինանսավորման ռիսկ

Կառավարության պարտքի պորտֆելի վերաֆինանսավորման ռիսկը գնահատվում է մինչև մարում միջին ժամկետի, առաջիկա մեկ և երեք տարիների ընթացքում մարվող պարտքի կշռի ցուցանիշներով և կառավարության պարտքի պորտֆելի մարման գրաֆիկով:

ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետի ցուցանիշը 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 7.4 տարի, նախորդ ժամանակահատվածի 7.7 տարվա դիմաց: Ընդ որում, ՀՀ կառավարության արտարժութային պարտքի մինչև մարում միջին ժամկետը կազմել է 6.8 տարի՝ նախորդ ժամանակահատվածի 7.1 տարվա դիմաց, իսկ դրամային պարտքինը՝ 8.0 տարի՝ նախորդ ժամանակահատվածի 8.7 տարվա դիմաց: ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետի ցուցանիշների նվազումը պայմանավորված է եղել 2023 թվականի ընթացքում ֆինանսական շուկայում տոկոսադրույքների աճի ազդեցությունը տոկոսավճարների վրա մեղմելու նպատակով տեղաբաշխվող պետական գանձապետական պարտատոմսերի ժամկետայնության կրճատմամբ, ինչպես նաև արտոնյալ՝ երկարաժամկետ վարկերի աստիճանական մարմամբ և դրանց համեմատաբար ավելի կարճ ժամկետայնությամբ պարտքային գործիքներով վերաֆինանսավորմամբ: Այնուամենայնիվ, ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի վերաֆինանսավորման ռիսկի տեսակետից մինչև մարում միջին ժամկետի ցուցանիշը գտնվել է

ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2024-2026 թվականների ռազմավարությամբ սահմանված ուղենշային միջակայքում:

Գծապատկեր 4. *ՀՀ կառավարության պարտքի մինչև մարումը մնացած ժամկետն ըստ պարտքային հիմնական գործիքների*



2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ առաջիկա տարվա ընթացքում մարվող պարտքի կշիռը կազմել է 9.1% և նախորդ տարվա նկատմամբ այն աճել է 1.1 տոկոսային կետով: ՀՀ կառավարության արտարժութային պարտքի մեկ տարվա ընթացքում մարման կշիռը նախորդ տարվա նկատմամբ աճել է 1.8 տոկոսային կետով և կազմել է 6.8%, իսկ դրամային պարտքինը՝ նվազել է 1.3 տոկոսային կետով և կազմել է 11.8%: Ինչ վերաբերում է առաջիկա երեք տարիների ընթացքում մարվող պարտքի կշռի ցուցանիշին, ապա այն 2023 թվականի տարեվերջին կազմել է 28.6%, իսկ առաջիկա երեք տարիների ընթացքում մարվող արտարժութային և դրամային պարտքի կշիռները կազմել են համապատասխանաբար 25.2% և 32.6%: Առաջիկա երեք տարիների ընթացքում մարվող պարտքի կշռի ցուցանիշները նախորդ տարեվերջի նկատմամբ էականորեն չեն փոխվել:

2023 թվականի տարեվերջի դրությամբ կառավարության արտաքին վարկերի մարումները սփռված են եղել մինչև 2054 թվականը, դրամային պարտատոմսերինը՝ մինչև 2052 թվականը, արտարժութային պարտատոմսերինը՝ մինչև 2031 թվականը, իսկ երաշխիքներինը՝ մինչև 2036 թվականը:

Գծապատկեր 5. *Կառավարության պարտքի մարումների գրաֆիկն ըստ գործիքակազմի 31.12.2023 թվականի դրությամբ (մլրդ դրամ)*



Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ

Տոկոսադրույքի ռիսկ

Կառավարության պարտքի պորտֆելի տոկոսադրույքի ռիսկը գնահատվում է հիմնականում հետևյալ ցուցանիշներով՝ ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ, առաջիկա տարում վերաֆիքսվող պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ և մինչև վերաֆիքսում միջին ժամկետը:

ՀՀ կառավարության պարտքի 84.1%-ը ֆիքսված տոկոսադրույքով է: Դրամային պարտքն ամբողջությամբ ֆիքսված տոկոսադրույքով է, իսկ արտարժութային պարտքի 70.5%-ն է ֆիքսված տոկոսադրույքով՝ նախորդ տարվա 73.5%-ի դիմաց: Կարելի է արձանագրել, որ նախորդ տարվա նկատմամբ արտարժութային պարտքի տոկոսադրույքի ռիսկը որոշակիորեն մեծացել է: Ընդհանրապես, բարձր տոկոսադրույքների միջավայրում, ինչպիսին 2023 թվականն էր արտաքին ֆինանսական շուկաների առումով, լողացող տոկոսադրույքով պարտքի ներգրավումը նախընտրելի է ֆիքսվածի համեմատությամբ, ինչն էլ հաշվի է առնվել ընդունված որոշումներում և արտացոլվում է ՀՀ կառավարության պարտքի ցուցանիշներում:

Գծապատկեր 6. *Արտարժութային պարտքի կառուցվածքն ըստ տոկոսադրույքի*



Ինչ վերաբերում է առաջիկա տարում վերաֆիքսվող պարտքի կշռի ցուցանիշին, ապա ՀՀ կառավարության պարտքի միայն 21.6%-ն է ենթակա վերաֆիքսման 2024 թվականին, ուստի այս ցուցանիշի գծով էական ռիսկեր չեն արձանագրվել:

Մինչև վերաֆիքսում միջին ժամկետի ցուցանիշը 2023 թվականի վերջին կազմել է 6.4 տարի, որը կարելի է գնահատել որպես պարտքի պորտֆելի տոկոսադրույքի ռիսկի ցածր մակարդակ: Այս ցուցանիշն ավելի փոքր է, քան մինչև մարում միջին ժամկետի ցուցանիշը, քանի որ պարտքի 15.9%-ը լողացող տոկոսադրույքով է, որի տոկոսադրույքը ևս ենթակա է վերաֆիքսման 2024 թվականի ընթացքում:

ՀՀ կառավարության պարտքի առկա պորտֆելի ծախսերի և ռիսկերի ցուցանիշները ցույց են տալիս, որ պարտքի առկա պորտֆելն ամենաշատը կրում է փոխարժեքի ռիսկի ազդեցությունը, ինչը հիմնավորվում է նաև հաջորդող բաժիններում ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի ռիսկի ցուցանիշների զգայունության վերլուծությունների արդյունքներով:

ՀՀ կառավարության պարտքի կառավարման հիմնական ռիսկերը կառավարելիության շրջանակներում պահելու, և հատկապես փոխարժեքի բարձր ռիսկը նվազեցնելու նպատակով, որպես ռազմավարական նպատակադրում, դիտարկվում է ներքին պետական պարտքի շուկայի զարգացումը և կառավարության պարտքի մեջ ՀՀ դրամով ներգրավված պարտքի կշռի ավելացումը:

1.4. ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2025-2027 թվականների ռազմավարությունը

1.4.1. Մակրոտնտեսական զարգացումները և կանխատեսումները

- 2021թ. համավարակի շոկից հետո տնտեսական աճի վերականգնման փուլ թևակոխած համաշխարհային տնտեսությունը, այդ թվում՝ ՀՀ գործընկեր երկրների տնտեսությունները, 2022 թվականի տարեսկզբին բախվեցին նոր շոկի, որի արդյունքում տեղի է ունեցել տնտեսական աճի տեմպերի դանդաղում (ՌԴ-ում՝ անկում)՝ պայմանավորված համաշխարհային արժեշղթաների խաթարումներով, պարենային և հումքային ապրանքների միջազգային գների բարձրացմամբ, դրանց հետևանքով առաջացած բարձր գնաճին հակազդող աննախադեպ զսպող դրամավարկային քաղաքականություններով ու համաշխարհային ֆինանսական

պայմանների խստացմամբ: 2023թ. ՀՀ հիմնական գործընկեր երկրներում, բացառությամբ Եվրագոտու, տեղի է ունեցել տնտեսական աճի տեմպերի վերականգնում: Աճի արագացումը պայմանավորված է եղել պետական ու մասնավոր սպառման աճով, ինչպես նաև գնաճի տեմպերի աստիճանական կայունացմամբ: Եվրագոտում արձանագրված թույլ աճն արտացոլում էր սպառողական թույլ տրամադրությունները, էներգակիրների բարձր գների երկարաձգված ազդեցությունը, ինչպես նաև մշակող արդյունաբերության թույլ ակտիվությունը: Այս պայմաններում 2024 թվականին գործընկեր երկրներից ԱՄՆ-ում և Եվրագոտում կանխատեսվում է տնտեսական աճի տեմպերի արագացում, մինչդեռ ՌԴ-ում և Չինաստանում՝ դանդաղում, իսկ միջնաժամկետում՝ կանխատեսվում է իրենց պատմական միջին աճերից ցածր տնտեսական աճեր:

- Կորոնավիրուսի համավարակի և Արցախյան պատերազմի բացասական ազդեցություններով պայմանավորված 2020 թվականի տնտեսական անկումից հետո 2021-2023 թվականներին տնտեսությունը թևակոխել է վերականգնման և աճի փուլ և միջինում գրանցել 9.0% իրական աճ՝ իր վրա կրելով 2022 թվականի փետրվարի վերջերից սկիզբ առած ռուս-ուկրաինական հակամարտության և Ռուսաստանի դեմ կիրառված պատժամիջոցների հետևանքով դեպի Հայաստան մարդկանց ներհոսքի, զբոսաշրջության զգալի ավելացման, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ընկերությունների ՀՀ տեղափոխման, ՀՀ-ից դեպի Ռուսաստան արտահանման պահանջարկի ավելացման, պետական բյուջեից կապիտալ ծախսերի և բնակարանաշինության բարձր աճերի, ինչպես նաև 2023 թվականի սեպտեմբերի վերջից Լեռնային Ղարաբաղից ՀՀ բռնի տեղահանված մեր հայրենակիցների և նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ոսկերչական արտադրատեսակների արտադրության կտրուկ աճի տնտեսական ազդեցությունները:

- Տնտեսական աճի բարձր տեմպերը շարունակվել են նաև 2024 թվականի առաջին եռամսյակում՝ իրենց վրա կրելով նաև ոսկերչական արտադրատեսակների վերամշակման կտրուկ աճի և Լեռնային Ղարաբաղից ՀՀ բռնի տեղահանված անձանց աջակցության ծրագրերի և ինտեգրման տնտեսական ազդեցությունները: Արդյունքում գրանցվել է 9.2% տնտեսական աճ՝ պայմանավորված հիմնականում ծառայությունների և արդյունաբերության աճով: Ապրիլ-մայիս ամիսներին տնտեսական ակտիվությունը որոշակիորեն դանդաղել է՝ պայմանավորված հիմնականում արդյունաբերության և առևտրի աճերի տեմպերի դանդաղմամբ, սակայն տնտեսական ակտիվության բարձր տեմպը շարունակվել է պահպանվել:

- 2024թ. ընթացիկ զարգացումների, պետական կապիտալ ծախսերի դերի շարունակական բարձրացման, ինչպես նաև կառուցվածքային բարեփոխումների ու Ամուլսարի շահագործման հնարավոր ազդեցությունների արդյունքում 2024 թվականի համար սպասվում է շուրջ 6.3% տնտեսական աճ, իսկ միջնաժամկետում՝ միջինում 5.7% աճ: Այս պայմաններում ՀՀ կառավարության ծրագրի 2021-2026թթ. միջինում 7% աճը կապահովվի: Ընդ որում, վերջին տարիներին ՀՀ տնտեսական աճի ներուժը բարձրացել է՝ հասնելով 5.0-5.5%: Այս աճը պահպանելու և ավելի բարձր՝ 7% կայուն աճի հասնելու համար անհրաժեշտ է լրացուցիչ ջանքեր՝ ուղղված արտադրողականության բարձրացմանը, ներդրումների և արտահանման խթանմանը: Այս համատեքստում ՀՀ կառավարությունը հետամուտ է լինելու մարդկային և ֆիզիկական կապիտալում ներդրումների, մասնավոր ներդրումների, զբաղվածության և արտահանման խթանմանն ուղղված ռազմավարությունների արդյունավետ իրականացմանը:

- Տնտեսական ակտիվության աճի տեմպի դանդաղման և վերաարտահանման դերի որոշակի նվազման պայմաններում 2024թ. սպասվում է արտահանման և ներմուծման աճի

տեմպերի զգալի դանդաղում: Արդյունքում՝ առևտրային բացասական հաշվեկշռի և ծառայությունների դրական հաշվեկշի վատթարացմամբ պայմանավորված 2024թ. ընթացիկ հաշվի պակասուրդը ՀՆԱ-ում կշարունակի խորանալ՝ հասնելով ՀՆԱ-ում 3.2%-ի: Միջնաժամկետում, 2022-2023թթ. առաջացած դրական գործոնների ազդեցությունների աստիճանական չեզոքացման պայմաններում ընթացիկ հաշվի պակասուրդը կխորանա՝ մոտենալով իր երկարաժամկետ հավասարակշիռ մակարդակին:

- Միջինաժամկետ հատվածում հարկաբյուջետային քաղաքականությունն ուղղված կլինի կառուցվածքային բարեփոխումների սահուն ընթացքը երաշխավորելու և ֆիզիկական ու մարդկային կապիտալում ներդրումների մակարդակի էական բարձրացման միջոցով տնտեսության դիմակայունության ամրապնդմանն ու աճի ներուժի բարձրացմանը: Ընդ որում, այն իրականացվում է նշված բարեփոխումների համար միջնաժամկետի սկզբում «առաջ ընկած» ռեսուրսների ձևավորման ճանապարհով, ինչի արդյունքում բյուջեի պակասուրդը 2024-2025 թթ.-ին կաճի՝ հանգեցնելով կառավարության պարտքի բեռի որոշակի մեծացմանը, որից հետո տեղի կունենա հարկաբյուջետային կոնսոլիդացիա, որով պարտքի բեռը 2026-2027 թվականներին կկայունանա 55%-ի մակարդակում: Ընդ որում, տնտեսական աճի՝ իր ներուժային մակարդակին մոտենալու պայմաններում հարկաբյուջետային քաղաքականությունը ամբողջական պահանջարկի վրա կունենա չեզոք ազդեցություն: Միաժամանակ հարկաբյուջետային քաղաքականության համար առաջնահերթ է առկա ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործումը և հնարավոր ռիսկերի կառավարման կարողությունների ձևավորումը, ինչը, աճի ներուժի բարձրացման հետ, պետք է երաշխավորի հարկաբյուջետային կայունությունը երկարաժամկետում:

- 2023թ.-ին գնաճի կտրուկ դանդաղումից, ապա՝ գնանկումային տենդենցների ձևավորումից հետո 2024 թ.-ին ինչպես միջին, այնպես էլ 12 ամսյա գնաճը ցածր կլինեն նպատակային ցուցանիշից և միջնաժամկետում կկայունանան նպատակային 4% ցուցանիշի շուրջ: Մշտադիտարկելով տնտեսության զարգացման սցենարները, ԿԲ-ը կձեռնարկի համարժեք գործողություններ՝ միջնաժամկետ հորիզոնում գնաճի 4% մակարդակի և գների կայունության նպատակի ապահովման համար:

- Ռուս-ուկրաինական հակամարտությունը և Ռուսաստանի դեմ կիրառված աննախադեպ պատժամիջոցները աշխարհում ստեղծել են նոր իրականություն, որի պայմաններում ինչպես աշխարհի և ՀՀ գործընկեր երկրների, այնպես էլ ՀՀ տնտեսական աճի կանխատեսումները իրենց մեջ կրում են մեծ անորոշություն: Այս պայմաններում, ինչպես աշխարհի և ՀՀ գործընկերների, այնպես էլ ՄԺԾԾ շրջանակում ՀՀ տնտեսական աճի կանխատեսումների համար առկա են երկկողմանի ռիսկեր, սակայն դեպի ներքև ռիսկերը համեմատաբար մեծ են:

Աղյուսակ 4. *ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարության հիմքում ընկած հիմնական ցուցանիշները 2022-2027 թվականներին*

	2022 փաստ.	2023 փաստ.	2024 կանխ.	2025 կանխ.	2026 կանխ.	2027 կանխ.
Տնտեսական աճ (%)	12.6	8.7	6.3	5.8	5.7	5.5
ՍԳԻ (ժամկետի միջինը, %)	8.6	2.0	0.7	3.5	4.0	4.0

	2022 փաստ.	2023 փաստ.	2024 կանխ.	2025 կանխ.	2026 կանխ.	2027 կանխ.
Հարկաբյուջետային հատված (% ՀՆԱ-ի նկատմամբ)						
Եկամուտներ և դրամաշնորհներ	24.7	25.4	25.7	25.9	26.5	26.8
Ծախսեր	26.8	27.3	30.5	31.4	31.0	30.3
Պակասուրդ (-)	-2.1	-2.0	-4.7	-5.5	-4.5	-3.5
ՀՀ կառավարության պարտք	46.7	48.1	50.5	53.7	55.0	55.0
Արտաքին հատված						
Ապրանքների և ծառայությունների արտահանում (մլն ԱՄՆ դոլար)	9,698.5	12,842.2	14,284.2	15,842.5	17,545.6	9,698.5
Ապրանքների և ծառայությունների ներմուծում (մլն ԱՄՆ դոլար)	10,117.5	13,488.0	15,021.3	16,727.5	18,629.5	10,117.5
Ընթացիկ հաշվի հաշվեկշիռ (% ՀՆԱ-ի նկատմամբ)	-0.9	-2.7	-3.5	-4.2	-4.9	-0.9
ՀՀ կառավարության պարտք (մլրդ դրամ)	3,969.7	4,572.0	5,173.0	6,017.5	6,774.8	7,430.3
Անվանական ՀՆԱ (մլրդ դրամ)	8,501.4	10,235	11,197	12,309	13,505	10,235

Աղբյուրը՝ 2025-2027 թվականների ՄԺԾԾ

1.4.2. Նպատակադրումներն ու իրականացվելիք միջոցառումները

Պարտքի կառավարելի մակարդակում պահպանմանը զուգահեռ ՀՀ կառավարությունը կշարունակի պարտքի պորտֆելի բարելավման ջանքերը՝ նպատակ ունենալով պահպանել դիմակայունությունը հնարավոր ցնցումներին, ապահովել պետական պարտատոմսերի շուկայի շարունակական զարգացումը և խորացումը, հասանելիությունը ներքին ու արտաքին ֆինանսական շուկաներին, ինչպես նաև ֆինանսավորման աղբյուրների ու գործիքների դիվերսիֆիկացումը:

Այս տեսանկյունից ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում ներքին արժույթով պարտքը կշարունակի պահպանվել պատմականորեն բարձր մակարդակներում, կշարունակվեն արտաքին ներդրողների մոտ պարտատոմսերի շուկայի բարձր գրավչության պահպանման ջանքերը, ինչպես նաև կընդլայնվի միջազգային ֆինանսական կառույցների հետ համագործակցությունը՝ ավանդական գործիքներին զուգահեռ ներգրավելով նոր թիրախային ֆինանսավորման գործիքներ ՀՀ կառավարության տարբեր ոլորտների ռազմավարությունների արդյունավետ իրականացման համար:

Մասնավորապես.

- ՀՀ ֆինանսների նախարարությունը կշարունակի պետական գանձապետական պարտատոմսերի հետգնումների, փոխանակումների իրականացումը՝ նպատակ ունենալով հարթեցնել պարտքի մարման գրաֆիկը և նվազեցնել վերաֆինանսավորման ռիսկը, ինչպես նաև բարձրացնել տեղաբաշխվող պարտատոմսերի իրացվելիությունը և նպաստել երկրորդային շուկայի զարգացմանը:

- Պետական գանձապետական պարտատոմսերի եկամտաբերության նվազման պայմաններում աստիճանաբար կավելացվի երկարաժամկետ պարտատոմսերի տեղաբաշխումների ծավալը՝ դրանք կենտրոնացնելով 10 տարի մարման ժամկետի շուրջ՝ որպես հիմնական ուղենիշ:

- Պետական գանձապետական պարտատոմսերի փոխանակման միջոցով կշարունակվի շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի կոնսոլիդացիան՝ կրճատելով դրանց քանակը:

- Կիրականացվի գնաճով ինդեքսավորվող պարտատոմսերի դեբյուտային թողարկում:

- Պետական բյուջեով նախատեսված որոշակի ոլորտներում առանձին նախագծերի ֆինանսավորման նպատակով կդիտարկվի նպատակային պարտատոմսերի թողարկման հնարավորությունը:

- Կարևորելով պետական գանձապետական պարտատոմսերի մանրածախ շուկայի զարգացումը՝ կընդլայնվի մանրածախ առցանց հարթակի (gp.minfin.am) հասանելիությունը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ևս ապահովելու և ոչ ռեզիդենտների մուտքը պետական գանձապետական պարտատոմսերի շուկա առավել մատչելի դարձնելու համար: Կառավարության նկատմամբ վստահության ամրապնդման ուղղությամբ քայլերին զուգահեռ, կշարունակվեն հանրային իրազեկման աշխատանքները պոտենցիալ ներդրողների շրջանում:

- Համագործակցությունն արտաքին վարկատուների հետ կշարունակվի՝ նախապատվությունը տալով վարկավորման առավել բարենպաստ պայմաններով և ազատ փոխարկելի արժույթով փոխառու միջոցներ տրամադրող վարկատուների հետ համագործակցությանը, և աստիճանաբար անցում կկատարվի շուկայական գործիքներով պակասուրդի ֆինանսավորմանը: Նախատեսվում է նաև արտաքին վարկատուների հետ համագործակցության շրջանակներում իրականացնել «Ծրագիր արդյունքի դիմաց» ֆինանսավորման գործիքի կիրառմամբ նոր ծրագրեր՝ ջրային, առողջապահության և այլ ոլորտներում:

- Սույն ռազմավարությամբ նախատեսվել է 2025 թվականին մարվող եվրապարտատոմսերը վերաֆինանսավորելու նպատակով իրականացնել նոր եվրապարտատոմսերի տեղաբաշխում: Սակայն, միջազգային ֆինանսական կառույցներից առավել նպաստավոր պայմաններով փոխառությունների ներգրավման հնարավորության առկայության կամ ներքին շուկայում բարենպաստ պայմանների առկայության դեպքերում, կառավարության կողմից կդիտարկվեն այդ աղբյուրներից յուրաքանչյուրի կամ դրանց համատեղման միջոցով 2025 թվականին մարվող եվրապարտատոմսերը վերաֆինանսավորելու նպատակահարմարությունը:

- Կբարելավվի Բլումբերգ տեղեկատվական հարթակում ՀՀ շուկաների վերաբերյալ ներկայացվող տեղեկությունների կազմն ու որակը՝ ընդգրկելով ցուցանիշների լայն շրջանակ:

- ՀՀ կառավարության ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգի մշակման շրջանակներում կներդրվի ՀՀ կառավարության պարտքի հաշվառման, սպասարկման և այլ գործընթացների կազմակերպման նոր էլեկտրոնային համակարգ:

- Միջազգային լավագույն փորձին համապատասխան վերանայված «Պետական պարտքի մասին» նոր օրենքի ընդունումից հետո՝ միջոցներ կձեռնարկվեն կմշակվեն ոլորտը կարգավորող ենթաօրենսդրական ակտեր:

- Կվերանայվեն պետական գանձապետական պարտատոմսերի շուկայում գործող առաջնային դիլերների նկատմամբ կարգավորումներով նախատեսված պարտականությունները՝ ստեղծելով լրացուցիչ խթաններ:

- Պարտքի արդյունավետ կառավարման կարևորագույն գործոններից է թափանցիկության ու հասարակության հետ մշտական հաղորդակցության ապահովումը: Այդ նպատակով կառավարությունը կշարունակի ներդրողների և հանրության հետ բաց ու հրապարակային աշխատանքները և պարտքի վերաբերյալ հաշվետվությունների ներկայացումը:

- Պարբերաբար կիրականացվեն իրազեկման արշավներ՝ ներքին և արտաքին ներդրողներին ներկայացնելով ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացումների վերաբերյալ օպերատիվ տեղեկություններ:

- Կայունացման հաշվի օրենսդրական կարգավորումների համաձայն՝ կապահովվի Հայաստանի Հանրապետության կառավարության տվյալ տարվա բյուջետային ուղերձում այդ տարվա համար կանխատեսված համախառն ներքին արդյունքի առնվազն մեկ տոկոսի չափով միջոցների առկայությունը: Ներքին և արտաքին շուկաներում անցանկալի գործընթացների դեպքում այն կապահովագրի կառավարության պարտքի գծով վճարումների անխափան իրականացումը և հարկ եղած դեպքերում կաջակցի ՀՀ պետական բյուջեի կատարմանը:

1.4.3. ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարության ընտրությունը

ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարության մեջ կիրառված մակրոտնտեսական և հարկաբյուջետային ցուցանիշները համադրելի են 2025-2027 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով կանխատեսված մակրոտնտեսական և հարկաբյուջետային շրջանակին: ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարությամբ նախատեսվել է, որ «ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ» ցուցանիշը միջնաժամկետ հատվածում կկայունանա 55%-ի շուրջ: Տոկոսավճարների բեռը միջնաժամկետ հատվածում էական չավելացնելու, ինչպես նաև պետական բյուջեի արտարժութային մուտքերի կարիքն ապահովելու նպատակով, ներքին պարտքի և դրամային պարտքի մասնաբաժինները պարտքի կառուցվածքում միջնաժամկետ հատվածում կնվազեն միջինում համապատասխանաբար 1.3 և 1.6 տոկոսային կետով՝ սակայն կպահպանվեն պատմականորեն բարձր մակարդակներում::

Ներքին փոխառու զուտ միջոցների հաշվին դեֆիցիտի ֆինանսավորումն իրականացվելու է մինչև մեկ տարի մարման ժամկետով պետական գանձապետական կարճաժամկետ պարտատոմսեր, 3 և 5 տարի մարման ժամկետով միջնաժամկետ արժեկտրոնային պարտատոմսեր, 10 և 30 տարի մարման ժամկետով երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսեր, ինչպես նաև 6 ամիս, 1, 2 և 3 տարի մարման ժամկետով խնայողական արժեկտրոնային պարտատոմսեր տեղաբաշխելու միջոցով:

Արտաքին փոխառու զուտ միջոցների հաշվին դեֆիցիտի ֆինանսավորումն իրականացվելու է երկկողմ և բազմակողմ միջազգային վարկատուներից նպատակային, բյուջետային աջակցության վարկեր ներգրավելու և արդյունքի վրա հիմնված ոլորտային թիրախային, ինչպես նաև միջազգային կապիտալի շուկայում եվրապարտատոմսեր թողարկելու միջոցով:

Ռազմավարության ընտրությունը կատարվում է ծախսերի և ռիսկերի ցուցանիշների մի ամբողջ համակարգի ուսումնասիրության և վերլուծության արդյունքում: ՀՀ կառավարության պարտքը

բնութագրող ծախսերի և ռիսկերի ցուցանիշների համալիր ուսումնասիրության արդյունքում ընտրվել է այնպիսի ռազմավարություն, որը կնպաստի ներքին պարտքի շուկայի զարգացմանը, կապահովի ՀՀ կառավարության պարտքի գծով ռիսկերի չափավոր մակարդակ, միաժամանակ, միջնաժամկետ հատվածում հնարավորինս կսահմանափակի պետական պարտքի գծով ծախսերի աճը:

Ներքին փոխառու զուտ միջոցների հաշվին դեֆիցիտի ֆինանսավորման կառուցվածքը նախատեսելիս հաշվի են առնվել տնտեսությունում մակրոմիջավայրի զարգացումներն ըստ կանխատեսումների բազային սցենարի, իրացվելիության առկա մակարդակը, պետական գանձապետական պարտատոմսերի նկատմամբ ձևավորված կայուն պահանջարկը և պարտքի սպասարկման մեծությունը:

2025-2027 թվականների համար պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորումը փոխառու զուտ միջոցների հաշվին նախատեսվում է արտաքին փոխառու զուտ միջոցների հաշվին իրականացնել ավելի մեծ ծավալներով, քան ներքին փոխառու զուտ միջոցների հաշվին:

Աղյուսակ 5. *Պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորումը փոխառու զուտ միջոցների հաշվին 2023-2027 թվականներին (մլրդ դրամ)*

	2023 փաստ.	2024 պետբյուջեի ծրագիր	2024 կանխ.	2025 կանխ.	2026 կանխ.	2027 կանխ.
Պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորումը փոխառու զուտ միջոցների հաշվին	287.0	490.8	490.8	664.9	593.6	574.4
որից՝						
Ներքին փոխառու զուտ միջոցներ (առանց մուրհակների)	360.3	350.8	350.8	294.0	277.0	192.0
Արտաքին փոխառու զուտ միջոցներ	(73.3)	140.0	140.0	370.9	316.6	382.4

Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ

Գծապատկեր 7. *Ներքին և արտաքին փոխառու զուտ միջոցների հաշվին դեֆիցիտի ֆինանսավորման կառուցվածքը 2023-2027 թվականներին*



Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ

Միջնաժամկետ հատվածում, ՀՀ պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման կառուցվածքում ներքին և արտաքին փոխառու զուտ միջոցները բաշխվել են այնպես, որ պահպանվի ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում ներքին պարտքի տեսակարար կշռի նվազագույն 40% ուղենիշը, միաժամանակ, հաշվի են առնվել 2025-2027թթ. հարկաբյուջետային շրջանակի առանձնահատկությունները, այդ թվում արտարժութային ելքերի առկայության պայմաններում առաջացող արտարժույթի կարիքը և աճող ֆինանսական կարիքի պայմաններում ներքին շուկայի հագեցվածություն չառաջացնելու մղումը: Վերջինիս պայմաններում, չնվազեցնելով ներքին պարտքի շուկայում ակտիվությունը, անհրաժեշտություն է առաջանում փոքր-ինչ ճշգրտել տարեկան զուտ թողարկումների ծավալը:

Ֆինանսավորման կարիքը բավարարելու նպատակով միջնաժամկետ հատվածում նախատեսվում է միջոցներ ներգրավել ինչպես արտաքին վարկերով և փոխառություններով, այնպես էլ պետական գանձապետական և արտարժութային պարտատոմսերի տեղաբաշխումների միջոցով:

Աղյուսակ 6. *Ֆինանսական կարիքի բավարարումը փոխառու միջոցների հաշվին 2023-2027 թվականներին (մլրդ դրամ)*

	2023 փաստ.	2024 կանխ.	2025 կանխ.	2026 կանխ.	2027 կանխ.
Ընդամենը ֆինանսավորում	708.7	970.9	1,393.9	1,218.3	1,202.8
որից					
արտաքին վարկեր և փոխառություններ	124.6	315.0	489.5	512.6	542.3

	2023 փաստ.	2024 կանխ.	2025 կանխ.	2026 կանխ.	2027 կանխ.
պետական գանձապետական պարտատոմսեր	584.1	655.9	702.5	701.1	656.5
արտարժութային պետական պարտատոմսեր	-	-	201.9	-	-

Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ

Աղյուսակ 7. *Ֆինանսական կարիքի բավարարումը արտարժութային փոխառու միջոցների հաշվին 2023-2027 թվականներին (մլն ԱՄՆ դոլար)*

	2023 փաստ.	2024 կանխ.	2025 կանխ.	2026 կանխ.	2027 կանխ.
Ընդամենը ֆինանսավորում	316.4	783.1	1,711.9	1,269.1	1,342.8
որից					
արտաքին նպատակային վարկեր և փոխառություններ	158.2	330.3	611.9	669.1	942.8
բյուջետային աջակցության վարկեր	158.2	452.7	600.0	600.0	400.0
արտարժութային պետական պարտատոմսեր	-	-	500.0	-	-

Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ

1.4.4. Ընտրված ռազմավարության ծախսերի և ռիսկերի վերլուծությունը

Կանխատեսված մակրոտնտեսական միջավայրի՝ 2025-2027 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի հիմնական մակրոտնտեսական սցենարի պայմաններում, որտեղ հաշվի են առնվել կանխատեսվող ներքին ու արտաքին պարտքային շուկաների վարքագիծը, իսկ ՀՀ կառավարության ֆինանսական կարիքը 2025թ-ին աճում է 2024թ-ի նկատմամբ մոտ 44%-ով, ՀՀ կառավարության պարտքի տոկոսավճարների բեռն աստիճանաբար ավելանում է և կայունանում միջնաժամկետ հատվածի վերջում:

Աղյուսակ 8. *ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի ծախսերի ցուցանիշների կանխատեսումները*

	2023 փաստ.	2024 պետբյուջեի ծրագիր	2024 կանխ.	2025 կանխ.	2026 կանխ.	2027 կանխ.
Տոկոսավճար/ՀՆԱ (%)	2.7	3.1	3.1	3.5	3.6	3.6
Տոկոսավճար/պետական բյուջեի եկամուտներ(%)	10.7	11.9	11.9	13.6	13.5	13.5
Տոկոսավճար/պետական բյուջեի ծախսեր (%)	9.9	10.1	10.1	11.2	11.6	12.0

Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ

Ընդհանուր առմամբ, կանխատեսվում է, որ միջնաժամկետ հատվածում՝ հիմնական մակրոտնտեսական սցենարի դեպքում, «ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ» ցուցանիշը կաճի 2025-2026 թվականներին, իսկ 2027 թվականի տարեվերջին կկայունանա 55% մակարդակում: ՀՀ կառավարության պարտքի տոկոսավճար/ՀՆԱ, ՀՀ կառավարության պարտքի տոկոսավճար/պետական բյուջեի եկամուտներ և ՀՀ կառավարության պարտքի տոկոսավճար/պետական բյուջեի ծախսեր ցուցանիշները միջնաժամկետ ժամանակահատվածի վերջում կանխատեսվում են համապատասխանաբար 3.6%, 13.5% և 12.0%: Ընտրված պարտքի ռազմավարությունը, մակրոտնտեսական հիմնական սցենարի պայմաններում հաշվի է առել ֆինանսավորման պոտենցիալ աղբյուրների հնարավորությունները, ծախսերի և ռիսկերի ցուցանիշների համախումբը՝ ձգտելով ֆինանսավորման աճող կարիքները բավարարելիս ռիսկերի ընդունելի մակարդակի պայմաններում հնարավորինս զսպել պարտքի տոկոսավճարների բեռի աճը:

Ռիսկերի կառավարման տեսակետից կարևորվել են փոխարժեքի, վերաֆինանսավորման և տոկոսադրույքի ռիսկերը:

Փոխարժեքի ռիսկ

«Ներքին պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ» ցուցանիշի մակարդակը միջնաժամկետ հատվածում կնվազի չափավոր տեմպով՝ տարեկան միջինում 1.3 տոկոսային կետով, և կգտնվի սահմանված ուղենշային տիրույթում՝ ժամանակահատվածի վերջում կազմելով 43.3%: Ներքին պարտքի մասնաբաժնի նվազման այս տեմպը համապատասխանում է ֆինանսական շուկայում պետական պարտատոմսերի համար ակնկալվող պահանջարկին համահունչ տեղաբաշխումների ծավալի, ինչպես նաև՝ տոկոսավճարների բեռի աճը միջնաժամկետ հատվածում զսպող մակարդակի հետ:

Աղյուսակ 9. *ՀՀ կառավարության ներքին պարտքի և ՀՀ դրամով ներգրաված պարտքի տեսակարար կշիռներն ընդամենը պարտքում*

	2023 փաստ.	2024 պետբյուջեի ծրագիր	2024 կանխ.	2025 կանխ.	2026 կանխ.	2027 կանխ.
Ներքին պարտք/Ընդամենը պարտք (%)	47.3	45.2	48.1	45.7	44.6	43.3

	2023 փաստ.	2024 պետբյուջեի ծրագիր	2024 կանխ.	2025 կանխ.	2026 կանխ.	2027 կանխ.
ՀՀ դրամով ներգրավված պարտք/Ընդամենը պարտք (%)	45.9	44.3	47.5	46.5	45.1	43.6

Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ

Փոխարժեքի ռիսկի կառավարման և տոկոսավճարների աճը զսպելու նպատակով «ՀՀ դրամով ներգրավված պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ» ցուցանիշի մակարդակը միջնաժամկետ հատվածում կնվազի միջինում տարեկան 1.6 տոկոսային կետով:

2027 թվականի վերջին արտարժութային պարտքի տեսակարար կշիռը միջնաժամկետ հատվածում աճում է՝ կազմելով 56.7%, ուստի ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի փոխարժեքի ռիսկը առաջիկա տարիներին դեռևս կմնա որպես հիմնական ռիսկ:

Աղյուսակ 10. *ՀՀ կառավարության արտարժութային պարտքի կառուցվածքը 2023-2027 թվականներին տարեվերջի դրությամբ (%)*

	2023 փաստ.	2024 պետբյուջեի ծրագիր	2024 կանխ.	2025 կանխ.	2026 կանխ.	2027 կանխ.
USD	57.2	59.2	58.8	64.6	67.4	69.4
SDR	22.5	17.5	17.5	12.5	9.7	7.6
EUR	17.7	21.0	21.5	21.1	21.4	21.7
JPY	2.3	2.0	2.0	1.6	1.4	1.1
AED	0.0	0.0	0.0	0.0	0.0	-
CNY	0.3	0.2	0.2	0.2	0.1	0.1

Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ

ՀՀ կառավարության արտարժութային պարտքի կառուցվածքում SDR-ով արտահայտված պարտքն աստիճանաբար կնվազի: Եթե SDR-ը, որը կազմված է հինգ արժույթներից, տարանջատում ենք այդ արժույթների կշիռներին համապատասխան՝ USD – 43.38%, EUR – 29.31%, GBP – 7.44%, JPY – 7.59% և CNY – 12.28%, ապա միջնաժամկետ ժամանակահատվածի ավարտին ՀՀ կառավարության արտարժութային պարտքի կառուցվածքում ԱՄՆ դոլարով պարտքի կշիռը 69.4%-ի փոխարեն կկազմի 72.7%, իսկ եվրոյով պարտքի կշիռը 21.7%-ից կաճի և կկազմի 23.9%:

Աղյուսակ 11. *ՀՀ կառավարության արտարժութային պարտքի կառուցվածքը 2023-2027 թվականների տարեվերջի դրությամբ՝ SDR-ի տարանջատմամբ (%)*

	2023 փաստ.	2024 պետբյուջե ի ծրագիր	2024 կանխ.	2025 կանխ.	2026 կանխ.	2027 կանխ.
USD	67.0	66.8	66.4	70.0	71.6	72.7
EUR	24.3	26.1	26.6	24.8	24.2	24.0
GBP	1.7	1.3	1.3	0.9	0.7	0.6
JPY	4.0	3.3	3.3	2.6	2.1	1.7
AED	0.0	0.0	0.0	0.0	0.0	-
CNY	3.0	2.4	2.4	1.7	1.3	1.1

Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ

Փոխարժեքի ռիսկի նվազեցման և արդյունավետ կառավարման նպատակով արտարժութային շուկայի զարգացմանը զուգահեռ կօգտագործվեն հեջավորման տարբեր մոտեցումներ (օրինակ՝ արտարժութային սվոփներ):

ՀՀ կառավարության արտարժութային պարտքի կառուցվածքում կանխատեսվող ժամանակահատվածի վերջում 2023 թվականի փաստացի ցուցանիշի նկատմամբ SDR–ի կշիռը նվազում է 14.8 տոկոսային կետով, քանի որ SDR–ով վարկերն աստիճանաբար մարվում են և նոր վարկեր չեն ներգրավվում, քանի որ միջազգային կազմակերպություններն այդ արժույթով վարկեր տրամադրում են եկամտի ցածր մակարդակ ունեցող երկրներին, իսկ հիմնական արժույթներից ԱՄՆ դոլարի և եվրոյի նույն ցուցանիշներն աճում են համապատասխանաբար 12.1 և 4.1 տոկոսային կետով:

Գծապատկեր 8. *ՀՀ կառավարության արտարժութային պարտքի մարումների և տոկոսավճարների կշիռը նախորդ տարվա վերջի դրությամբ ԿԲ արտաքին ակտիվներում 2023-2027 թվականներին*



Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ, ԿԲ և ԱՄՀ

ՀՀ կառավարության տվյալ տարվա արտարժութային պարտքի մարումների և տոկոսավճարների կշիռը նախորդ տարվա վերջի դրությամբ ՀՀ ԿԲ արտաքին ակտիվներում ցուցանիշը 2025 թվականին էապես կաճի և կկազմի 28.3%՝ պայմանավորված 2025 թվականին մարվող եվրապարտատոմսերի մարմամբ: Ընդ որում, 2023թ. իրականացված 2025 թվականին մարվող եվրապարտատոմսերի մասնակի մարման արդյունքում այդ ցուցանիշը նվազել է 2.2 տոկոսային կետով 2024-2026թթ. ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարությամբ գնահատված ցուցանիշի համեմատությամբ: Միաժամանակ, ԿԲ արտաքին ակտիվների ցուցանիշի գնահատականը նույնպես նվազել է նախորդ ռազմավարությամբ կանխատեսված մակարդակի համեմատությամբ: Եթե վերջինիս ազդեցությունը չեզոքացնենք, ՀՀ կառավարության արտարժութային պարտքի մարումների և տոկոսավճարների կշիռը նախորդ տարվա վերջի դրությամբ արտարժութային արտաքին ակտիվներում ցուցանիշը 2025 թվականին կկազմեր 27.2%, այսինքն, արտարժութային պարտատոմսերի հետգնման ազդեցությունը կկազմեր 3.3 տոկոսային կետ: 2026 թվականին այդ նույն ցուցանիշը կտրուկ կնվազի և կկազմի 23.1%: Դա նշանակում է, որ միջնաժամկետ հատվածում արտարժութային ակտիվների ավելի քան մեկ հինգերորդն ուղղվում է ՀՀ կառավարության արտարժութային պարտքի մարումներին և տոկոսավճարներին, ինչն էական գործոն է հանդիսացել ՀՀ կառավարության նոր պարտքի ներգրավման արժույթների սցենարը մշակելիս:

Վերաֆինանսավորման ռիսկ

Վերաֆինանսավորման ռիսկը կարևորվում է՝ պայմանավորված առաջիկա տարիներին ՀՀ կառավարության պարտքի մարումների ծավալներով և միջազգային ու ներքին ֆինանսական շուկաներում հնարավոր բացասական զարգացումներով: Նոր պարտքի ներգրավման ֆինանսական պայմանների բանակցման և որոշումների կայացման ժամանակ ՀՀ կառավարությունը ձգտում է հարթեցնել պարտքի մարումների գրաֆիկը՝ մեղմելով վերաֆինանսավորման ռիսկը: Վերաֆինանսավորման ռիսկի նվազեցման նպատակով կիրառվում են նաև հետգնումներ:

Աղյուսակ 12. *ՀՀ կառավարության պարտքի վերաֆինանսավորման ռիսկի ցուցանիշները 2023-2027 թվականներին*

	2023 փաստ.	2024 կանխ.	2025 կանխ.	2026 կանխ.	2027 կանխ.
ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը, (տարի)	**7.4**	**7.0**	**7.5**	**7.5**	**7.4**
ՀՀ կառավարության արտարժութային պարտքի մինչև մարում միջին ժամկետը, (տարի)	6.8	6.8	7.5	7.5	7.3
ՀՀ կառավարության դրամային պարտքի մինչև մարում միջին ժամկետը, (տարի)	8.0	7.3	7.4	7.5	7.5
Առաջիկա երեք տարվա ընթացքում մարման ենթակա պարտքի տեսակարար կշիռ, (%)	**28.6**	**29.2**	**24.6**	**27.5**	**26.2**
Առաջիկա երեք տարվա ընթացքում մարվող ՀՀ կառավարության արտարժութային պարտքի կշիռը արտարժութային պարտքի մեջ, (%)	25.2	24.2	18.3	20.2	20.2

	2023 փաստ.	2024 կանխ.	2025 կանխ.	2026 կանխ.	2027 կանխ.
Առաջիկա երեք տարվա ընթացքում մարվող ՀՀ կառավարության դրամային պարտքի կշիռը դրամային պարտքի մեջ, (%)	32.6	34.2	31.8	36.3	33.9
Մեկ տարվա ընթացքում մարվող ՀՀ կառավարության պարտքի կշիռը (%)	**9.1**	**12.7**	**9.5**	**8.5**	**8.1**
Մեկ տարվա ընթացքում մարվող ՀՀ կառավարության արտարժութային պարտքի կշիռը արտարժութային պարտքի մեջ (%)	6.8	11.4	6.2	4.6	4.2
Մեկ տարվա ընթացքում մարվող ՀՀ կառավարության դրամային պարտքի կշիռը դրամային պարտքի մեջ (%)	11.8	11.2	13.3	13.4	13.2

Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ

«ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի մինչև մարում միջին ժամկետի» ցուցանիշը 2027 թվականի վերջին կկազմի 7.4 տարի և կմնա ուղենիշով սահմանված միջակայքում: «Արտարժութային պարտքի մինչև մարում միջին ժամկետի» ցուցանիշի աճը 2025 թվականին պայմանավորված է նախատեսվող մեծ ծավալով արտաքին վարկերի և փոխառությունների ներգրավմամբ: «Դրամային պարտքի մինչև մարում միջին ժամկետի» ցուցանիշն աճում է՝ պայմանավորված նվազող տոկոսադրույքների միջավայրում թողարկվող պարտատոմսեր կառուցվածքում երկարաժամկետ պարտատոմսերի ծավալների ավելացմամբ:

«Երեք տարվա ընթացքում մարվող ՀՀ կառավարության պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ» ցուցանիշը 2027 թվականի տարեվերջին կկազմի 26.2%, ընդ որում, երեք տարվա ընթացքում մարվող ՀՀ կառավարության արտարժութային պարտքի կշիռը արտարժութային պարտքում կկազմի 20.2%, իսկ երեք տարվա ընթացքում մարվող ՀՀ կառավարության դրամային պարտքի կշիռը դրամային պարտքում՝ 33.9%: Երեք տարվա ընթացքում ՀՀ կառավարության արտարժութային պարտքի կշիռը արտարժութային պարտքում փոքր-ինչ ավելանում է կարճաժամկետ հատվածում՝ պայմանավորված արտաքին վարկերի որոշ մասի արտոնյալ ժամկետի ավարտմամբ: Առաջիկա երեք տարվա ընթացքում մարվող ՀՀ կառավարության դրամային պարտքի կշիռը դրամային պարտքի մեջ պայմանավորվում է նախկինում թողարկված ուղենշային պարտատոմսերի մարման տարիներով:

Վերաֆինանսավորման ռիսկի կառավարման շրջանակներում «Մեկ տարվա ընթացքում մարվող ՀՀ կառավարության պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ» ցուցանիշը աստիճանաբար կնվազի միջնաժամկետ հատվածում և 2027 թվականի տարեվերջին կկազմի 8.1%: Ընդ որում, մեկ տարվա ընթացքում մարվող ՀՀ կառավարության արտարժութային պարտքի կշիռը արտարժութային պարտքում կկազմի 4.2%, իսկ մեկ տարվա ընթացքում մարվող ՀՀ կառավարության դրամային պարտքի կշիռը դրամային պարտքում՝ 13.2%:

Ստորև ներկայացվում է նաև ՀՀ կառավարության պարտքի գծով վճարումների կանխատեսումային ցուցանիշները, որոնք իրենցից ներկայացնում են տարվա ընթացքում մարումների և տոկոսավճարների հանրագումարը:

Գծապատկեր 9. ՀՀ կառավարության պարտքի գծով վճարումները 2022-2027 թվականների ընթացքում (մլրդ դրամ)



Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ

ՀՀ կառավարության պարտքի գծով վճարումների ցուցանիշը միջնաժամկետ հատվածում աճում է՝ 2027 թվականին կազմելով 1,119 մլրդ դրամ: 2025 թվականին ՀՀ կառավարության պարտքի գծով վճարումների կտրուկ աճը պայմանավորված է մարման ենթակա եվրապարտատոմսերով:

Աղյուսակ 13. *ՀՀ կառավարության պարտքի գծով վճարումներն ըստ գործիքակազմի (մլրդ դրամ)*

	2023 փաստ.	2024 պետբյուջեի ծրագիր	2024 կանխ.	2025 կանխ.	2026 կանխ.	2027 կանխ.
ՀՀ կառավարության պարտքի գծով վճարումներն ըստ գործիքակազմի, որից՝	675.1	803.2	803.2	1,122.4	1,060.5	1,118.5
արտաքին վարկեր և փոխառություններ	186.8	259.0	259.0	290.6	322.8	316.7
տոկոսավճար	62.3	84.0	84.0	107.0	126.8	156.7
մարում	124.5	175.0	175.0	183.6	196.0	160.0
պետական գանձապետական պարտատոմսեր	381.2	515.0	515.0	661.7	701.0	765.1
տոկոսավճար	157.4	209.9	209.9	253.2	276.9	300.6
մարում	223.8	305.1	305.1	408.5	424.1	464.5

արտարժութային պետական պարտատոմսեր	107.2	29.2	29.2	170.1	36.7	36.7
տոկոսավճար	33.8	29.2	29.2	33.5	36.7	36.7
մարում	73.4	-	-	136.6	-	-

Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ

ՀՀ կառավարությունը պարտքի և կանխիկ հոսքերի կառավարման գործիքների (հետգնումներ, փոխանակումներ, ՀՀ կենտրոնական բանկում միջոցների ավանդադրում և այլն) կիրառմամբ վերահսկում է վերաֆինանսավորման հետ կապված ռիսկերը:

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի հետ կապված ռիսկերը արժանի են մեծ ուշադրության, քանի որ շուկայական պայմաններով ներգրավվող փոխառու միջոցների կշիռը գնալով աճում է: Տոկոսադրույքի ռիսկի կառավարման նպատակն է ապահովել կառավարության պարտքի այնպիսի կառուցվածք, որի դեպքում ֆինանսական շուկաներում տոկոսադրույքների փոփոխությունը հնարավորինս քիչ ազդեցություն կունենա կանխատեսվող տոկոսագումարների մակարդակի վրա: ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի տոկոսադրույքի ռիսկի ցուցանիշները կանխատեսվող ժամանակահատվածում մնում են կառավարելի:

Ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշիռը 2027 թվականի տարեվերջին, ըստ կանխատեսման, կկազմի 81.3%: Ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշիռը ուղենշային միջակայքում պահպանելուն կնպաստեն ինչպես կանխատեսվող ժամանակահատվածում ՀՀ կառավարության կողմից տեղաբաշխվող ֆիքսված տոկոսադրույքով պետական գանձապետական պարտատոմսերը, այնպես էլ արտաքին ֆինանսական շուկաներում տոկոսադրույքների հնարավոր նվազմանը զուգահեռ՝ ֆիքսված տոկոսադրույքով արտաքին վարկերի ներգրավումը: Անհրաժեշտության դեպքում, տոկոսադրույքի ռիսկը կառավարելու նպատակով, արտաքին վարկատուների կողմից սահմանված ընթացակարգերի համաձայն, կիրականացվի լողացող տոկոսադրույքով ներգրավված վարկերի տոկոսադրույքի ֆիքսում:

Աղյուսակ 14. *ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում ֆիքսված և լողացող տոկոսադրույքով վարկերի տեսակարար կշիռը 2023-2027 թվականներին (տոկոս)*

	2023 փաստ.	2024 պետբյուջեի ծրագիր	2024 կանխ.	2025 կանխ.	2026 կանխ.	2027 կանխ.
ՀՀ կառավարության պարտք,	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
այդ թվում						
Ֆիքսված տոկոսադրույքով	84.1	82.0	83.2	82.7	81.0	81.3
Լողացող տոկոսադրույքով	15.9	18.0	17.6	18.6	19.4	19.7
ՀՀ կառավարության արտարժութային պարտք	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0

	2023 փաստ.	2024 պետբյուջեի ծրագիր	2024 կանխ.	2025 կանխ.	2026 կանխ.	2027 կանխ.
այդ թվում						
Ֆիքսված տոկոսադրույքով	70.5	67.7	66.2	67.6	65.4	66.8
Լողացող տոկոսադրույքով	29.5	32.3	33.8	32.4	34.6	33.2
ՀՀ կառավարության դրամային պարտք	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
այդ թվում						
Ֆիքսված տոկոսադրույքով	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
Լողացող տոկոսադրույքով	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0

Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ

«ՀՀ կառավարության պարտքի մինչև վերաֆիքսում միջին ժամկետի» ցուցանիշը ժամանակահատվածի վերջում կկազմի 5.9 տարի, իսկ մեկ տարվա ընթացքում վերաֆիքսվող ՀՀ կառավարության պարտքի մասնաբաժինը՝ 26.1%:

Աղյուսակ 15. *ՀՀ կառավարության պարտքի տոկոսադրույքի ռիսկի ցուցանիշները 2023-2027 թվականներին*

	2023 փաստ.	2024 պետբյուջեի ծրագիր	2024 կանխ.	2025 կանխ.	2026 կանխ.	2027 կանխ.
ՀՀ կառավարության պարտքի մինչև վերաֆիքսում միջին ժամկետը, (տարի)	6.4	5.9	5.7	6.1	5.9	5.9
ՀՀ կառավարության արտարժութային պարտքի մինչև վերաֆիքսում միջին ժամկետը, (տարի)	5.1	4.2	4.4	5.0	4.8	4.9
ՀՀ կառավարության դրամային պարտքի մինչև վերաֆիքսում միջին ժամկետը, (տարի)	8.0	7.3	7.0	7.3	7.3	7.2
Մեկ տարվա ընթացքում վերաֆիքսվող ՀՀ կառավարության պարտքի կշիռը (%)	21.6	29.3	28.0	25.8	26.8	26.1
Մեկ տարվա ընթացքում վերաֆիքսվող ՀՀ կառավարության արտարժութային պարտքի կշիռը արտաքին պարտքի մեջ (%)	29.9	40.6	41.5	37.9	38.8	36.9
Մեկ տարվա ընթացքում վերաֆիքսվող ՀՀ կառավարության դրամային պարտքի կշիռը ներքին պարտքի մեջ (%)	11.8	15.0	14.7	12.1	12.2	12.1

Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ

1.4.5. Ուղենշային ցուցանիշները

ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի արդյունավետ կառավարման նպատակով անհրաժեշտ է բացահայտել և գնահատել ՀՀ կառավարության պարտքի պորտֆելին բնորոշ ռիսկերը: Այդ պատճառով ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարությունը սահմանում է պարտքի պորտֆելի ռիսկերի ուղենշային ցուցանիշներ, որոնց նպատակն է

որոշակի սահմանափակումների միջոցով պահպանել փոխարժեքի, տոկոսադրույքի և վերաֆինանսավորման ռիսկերը վերահսկելիության շրջանակներում: Ուղենշային ցուցանիշները սահմանվել են՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության պարտքի կառավարման միջավայրին բնորոշ առանձնահատկություններն ու սահմանափակումները:

Աղյուսակ 16. *ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի 2024-2027 թվականների ուղենշային ցուցանիշները (տարեվերջին)*

	Ուղենիշ
Վերաֆինանսավորման ռիսկ	
Մինչև մարում միջին ժամկետը	7– 10 տարի
Առաջիկա երեք տարիների ընթացքում մարվող պարտքի կշիռը ընդամենը պարտքի մեջ	առավելագույնը 35%
Առաջիկա տարվա ընթացքում մարվող պետական գանձապետական պարտատոմսերի (ՊԳՊ) կշիռը ՊԳՊ-երի ծավալի մեջ	առավելագույնը 20%
Տոկոսադրույքի ռիսկ	
Ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ	առնվազն 80%
Փոխարժեքի ռիսկ	
Ներքին պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ	առնվազն 40%
ՀՀ դրամով ներգրավված պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ	առնվազն 40%

Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ հաշվարկներ

ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2024-2026 թվականների ռազմավարության համեմատությամբ պարտքի պորտֆելի ուղենշային ցուցանիշներում փոփոխություն չի նախատեսվել: Դա նշանակում է, որ ՀՀ կառավարության պարտքի կառավարման քաղաքականութայն մոտեցումները և քանակական նպատակադրումները կայուն են միջնաժամկետ հատվածում:

1.4.6. Զգայունության վերլուծություններ

Մինչ այժմ կատարված ծախսերի և ռիսկերի վերլուծությունը հիմնված է եղել կանխատեսված մակրոտնտեսական և հարկաբյուջետային ցուցանիշների վրա և իրենից ներկայացնում է ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարության հիմնական սցենար: Ներկայացվում է շուկայական փոփոխականների նկատմամբ կիրառված տարբեր շոկերի արդյունքում ծախսերի և ռիսկերի ցուցանիշների շեղման չափը հիմնական սցենարի, այսինքն ընտրված ռազմավարության արդյունքներից:

Գծապատկեր 10. ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը 2024-2027 թվականներին



Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ

Գծապատկեր 11. Տոկոսավճար/ՀՆԱ ցուցանիշը 2024-2027 թվականներին



Աղբյուրը՝ ՀՀ ՖՆ հաշվարկներ և կանխատեսումներ

Փոխարժեքի շոկ

ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի փոխարժեքի ռիսկը դեռևս զգալի է: Կիրառելով ՀՀ դրամի արժեզրկման պատմական առավելագույն մեծությանը հավասար 23% շոկ՝ 2024 թվականին արժեզրկելով ՀՀ դրամը ԱՄՆ դոլարի, եվրոյի և SDR-ի նկատմամբ, «ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ» հարաբերակցությունը 2027 թվականի տարեվերջին հասնում է 61.4%-ի, որը հատում է «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքով սահմանված սահմանային շեմը:

Եթե ՀՀ կառավարության պարտքի փոխարկման հիմքում ընկած ԱՄՆ դոլարի նկատմամբ բազային կանխատեսումները յուրաքանչյուր փոխարժեքի գծով ավելանան տարեկան 1%-ով, ապա 2025-2027 թվականների ընթացքում ՀՀ կառավարության արտարժութային պարտքը կավելանա ՀՆԱ-ի 0.3%-ով:

Տոկոսադրույքի շոկ

